

ԱՐՈՒՄՅԱԿ ՍԱՀԱԿՅԱՆ

«ՍԱՍՆԱ ԾՌԵՐԻ»
ՊԱՏՈՒՄՆԵՐԻ
ՔՆՆԱԿԱՆ
ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРУСЯК СААКЯН

**СРАВНИТЕЛЬНОЕ ИССЛЕДОВАНИЕ
ВАРИАНТОВ „САСНА ЦРЕР“**



ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1975

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՈՒՍՅԱԿ ՍԱՀԱԿՅԱՆ

«ՍԱՍՆԱ ԾՌԵՐԻ» ՊԱՏՈՒՄՆԵՐԻ
ՔՆՆԱԿԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԷԳԻՏ
11
A



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1975

Աշխատության մեջ քննության է առնված «Սասնա ծռեր» ժողովրդական վնայի տպագիր պատումների գրառման ժամանակի և պատմական-հասարակական իրադրության կայր, գրառման վայրը, ստեղծման ու գոյատևման հայրենիքը, տարածումն ու տեղայնացումը, ճյուղերի քանակը, ներճյուղային հարաբերությունը, վիպական կառուցվածքային հիմքը վնայում ընդհանրապես և առանձին ճյուղերում մասնավորապես:

Պատասխանատու խմբագիր
Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

Ե Ր Կ Ո Ւ Խ Ն Ո Ս Ք

Ներկա ուսումնասիրության նպատակն է «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի տպագիր տարբերակների համեմատական ֆենոթիպամբ պարզել մի ֆանի խնդիրներ, որոնք նախորդող հայ ժողովրդական վիպագիտության մեջ հատուկ հետազոտության չեն արժանացել, չեն բարձրացվել բանագիտական առանձին և որոշակի խնդրի մակարդակի կամ առկա են միայն աղբյուրներ հարցադրման ձևով:

Ուսումնասիրության նյութը կազմում են վեպի ֆառասունյոթ պատումները, որոնք ամփոփված են «Սասնա ծռեր» խորագիրը կրող երկհատոր ժողովածուի մեջ՝ հրատարակված 1936 (հատոր Ա), 1944 (հատոր Բ, մաս Ա) և 1951 (հատոր Բ, մաս Բ) թվականներին:

Առանձնացված և ըստ կարելիության լուծված է չորս խնդիր. ա. վեպի գրառման ժամանակը և հասարակական պայմանները.

բ. տարածումը և տեղայնացումը (վեպի գրառման վայրը, վերջինիս հարաբերությունը վեպի հայրենիքի հետ).

գ. նյութերը (դրանց ֆանակային ընդգրկումը և ներքին հարաբերությունը).

դ. կառուցվածքը:

Հեղինակի կողմից կազմված համադրական տախտակները ծառայում են որպես հիմք խնդիրների պարզաբանման համար: Գրքին կցված է նաև տպագիր պատումների համակարգված նկարագիր ցանկ:



ՎԵՊԻ ԳՐԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1874 թ. Կ. Պոլսում լույս է տեսնում հայ ժողովրդական «Սասնա ծռեր»¹ վեպի առաջին պատումը: Դրա գրառողը և լույս աշխարհ բերողը Գարեգին Սրվանձտյանն էր: Գրառումը կատարված էր 1873-ին. 1874-ը վեպի հասարակական հայտնության տարեթիվն է:

Սրվանձտյանը ժողովրդական կենդանի գոյատևող վեպի մասին մի փոքր ավելի վաղ գիտեր: «Այժմ իբրև բուն նյութ այս գրքույկիս պիտի կցորդեմ «Դավիթ Սասունցի կամ Մհերի գուռ» վեպը, զոր երեք տարի հետամուտ եղա ձեռք բերելու և ոչոք գտա, որ ամբողջապես գիտեմար, մինչև 1873 թ. հունիս ամսույն Մշո Առնիստ գեղի երեսփոխան պ. Կրպոն ներկայացավ ինձ արժ. Օհան վարդապետի միջոցով»²: Որտեղի՞ց և ե՞րբ է հայտնի եղել Սրվանձտյանին վեպը, որ նա երեք տարի հետամուտ է եղել գտնելու: Իսկ «պ. Կրպոն ներկայացավ ինձ արժ. Օհան վարդապետի միջոցով» տողերը ենթադրել են տալիս, որ թերևս Սրվանձտյանը վեպի գոյության

¹ «Սասնա ծռեր» ընդհանուր խորագիրը, որպես այդպիսին, վիպասացների մոտ չի հանդիպում. այն առաջարկվել է Մ. Արեղյանի կողմից. տե՛ս նրա «Մատենագրություն «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական վեպի մասին» աշխատությունը (Մ. Արեղյան, Երկեր, Ա. հ., Երևան, 1966, էջ 534): Ընդհանրապես, սկսած Սրվանձտյանի պատումից, ներառյալ «Սասնա ծռեր» երկհատորյակի տարբերակների խորագրերի մեծ մասը բանագետ-բանահավաքներինն է:

² Գ. Սրվանձտյան, Գրոց ու Բրոց, Կ. Պոլիս, 1874, էջ 127:

մասին հայտնել է նաև իր ծանոթ-բարեկամներին, և նրանք նույնպես հետաքրքրվել են գտնելու վեպն իմացող: Այս հարցերը լուսաբանող այլ վկայություններ չունենք ձեռքի տակ. միայն կամենում ենք ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ 1873-ը վեպի պատահական հայտնաբերման թվականը չէ, որ Սրվանձտյանը երեք տարի դրանից առաջ փնտրել է ոչ թե ընդհանրապես հայ ժողովրդական որևէ վեպ¹, այլ հենց «Սասունցի Դավիթը»: Ուրեմն, նա արդեն լսել էր այն, բայց փնտրում էր մեկը, որ «ամբողջապես գիտենար»:


Վեպը գտնված էր այլևս, և դրա նոր պատումների գրառումը հայ մտավորականության շրջաններում դառնում է նպատակային գործ: Այն շարունակվում է մինչև մեր օրերը:

Գրառման ժամանակը բանագիտական հասկացություն է, և այն կարելի է քննել տարբեր մոտեցումներով: Այս հարցը հայ վիպագիտության մեջ բարձրացվել է քանիցս և՛ առանձին, որպես գրառման պատմություն, և՛ տարբեր խնդիրների առնչությամբ, և՛ գիտական ամփոփում ստացել Մ. Աբեղյանի «Մատենագրություն «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական վեպի մասին» աշխատությամբ: Մեզ մոտ այն դառնում է խնդրառու՝ դրվելով պատմա-հասարակական իրադրությունների ընդհանուր տեսադաշտի վրա, այսինքն՝ հատուկ քննության է առնվում գրառման ժամանակը (թվականը) պատմական ժամանակի մեջ: Նման մոտեցման դեպքում հնարավոր է դառնում բացահայտել հիշյալ հասկացության և պատմական ժամանակաշրջանի հարաբերակցությունը, վերհանել նրանց կապի որոշ օրինաչափություններ:

Դարաշրջանի առումով հարցի ընդգրկման սահմաններն ընկնում են XIX դարի կեսերից մինչև մեր օրերը (տե՛ս գրառ-

¹ Նախքան Սրվանձտյանը և նրա օրերի ըմբռնումներում վեպ հասկացության սահմաններն ավելի լայն էին: Սրվանձտյանն իր «Մանանայում» նյութի դասակարգման մեջ «Վեպը հայրենյաց» բաժնի տակ դնում է. «Հեքիաթներ, առասպելներ» («Մանանա», Կ. Պոլիս, 1876, էջ 7):

ՎԵՂԻ ԳՐԱԴՄԱՆ ՓԱՐԱՆԱԿԸ



ման ժամանակի տախտակը, Տախտ. 1)¹: Պատմական ընդհանուր տեսադաշտի վրա գրառման ժամանակը դադարում է սոսկ թվական լինելուց, դառնում է բանագիտական հասկացություն և կանխանշում գրառման պատմության որոշակի փուլեր, վերընթաց և վայրընթաց ժամանակաշրջաններ: Այդ շրջափուլերը համընկնում են պատմա-հասարակական կարևորագույն իրադարձությունների հետ կամ նշանակում են հայ բանագիտության որոշակի աստիճան: Սրա համեմատ գրառման ողջ ժամանակաշրջանը բաժանվում է հետևյալ շրջափուլերի՝ 1873—1914, 1915—1916, 1920—50, 1960—70-ական թվականներ:

Առաջին շրջան (1873—1914 թվականներ).—1873 թվականը ոչ միայն վեպի գրառման առումով, այլ ընդհանրապես հայ բանագիտության մեջ ելման կետ է: Այդ տարեթիվը սկիզբն է բանահյուսական բուն ժողովրդական նյութերի գրառումների և բանասիրական ուսումնասիրությունների մի վերընթաց ժամանակաշրջանի: Եվ այդ սկիզբը կապվում է Գարեգին Սրվանձտյանի անվան հետ: Նրանով «փաստորեն սկսվում է ժողովրդական կենդանի բանահյուսության նմուշների կարգավորված հավաքումն ու հետազոտությունը»²:

Ինչո՞ւ Սրվանձտյանն է համարվում սկիզբ, երբ մինչև ա ժողովրդական բառ ու բանը Աբովյանով մտել էր գրականության մեջ և խոր արմատներ գցել. երբ Մկրտիչ էմինն ու Հովսեփ Գաթրըճյանը՝ մեկը արևելահայ, մյուսը արևմտահայ հատվածներում, գրեթե միաժամանակ հաստատում էին

¹ Գրառման տախտակը ներառում է միայն «Սասնա ծռեր» ժողովածուի մեջ տպագրված պատումները: Եթե գրառման ժամանակը հայտնի չէ, դրվում է առաջին տպագրության թվականը: Պատումները ժողովածուի մեջ կրում են տառային համարներ, ըստ որում՝ երկրորդ հատորը նորից սկսվում է Ա. տառով: Շփոթից խուսափելու համար պատումների համարների տառային ձևը վերածել ենք թվային ձևի՝ 1—47 հաջորդականությամբ:

² Ս. Հարությունյան, Մանուկ Աբեղյան, Երևան, 1970, էջ 148 (ընդգրծումը՝ Ա. Ս.):

հայոց հին վիպական բանահյուսության գոյությունը՝ ըստ դրավոր աղբյուրների, իսկ Ստ. Պալասանյանը դրանց կողքին ուշադրություն էր հրավիրում նաև բանավոր աղբյուրների, այսինքն՝ բանահյուսության բուն ժողովրդական գրառումների վրա։ Դրանք սկիզբ չէին, այլ Սրվանձտյանի մուտքը նախապատրաստող ժամանակաշրջան, որովհետև՝ եթե ժողովրդական կենցաղն ու մտածելակերպը, նրա ստեղծագործության որոշ նմուշներ թափանցել էին գրականության մեջ—դա գրականության զարգացման շրջափուլ էր, գրականության տեսությանը զբաղեցնող երևույթ, բայց ոչ առանձին գիտություն, ինչպիսին բանագիտությունն է, շնայած, դա կարող է ուսումնասիրության նյութ դառնալ նաև բանագիտության համար։ Եթե առանձին հետազոտության նյութ էր դառնում մատենագրության մեջ պահպանված ժողովրդական ստեղծագործության նմուշները—դա արդեն բանագիտության սկիզբ էր, բայց՝ միակողմանի, որովհետև հետազոտության առարկան միայն դրավոր աղբյուրներն էին։ Եթե մինչև Սրվանձտյանը կային էլ բուն ժողովրդական գրառումներ, ապա դրանք բանահյուսական հատուկենտ նմուշներ էին։

Սրվանձտյանն, անշուշտ, գիտեր այս ամենի տեղն ու դերը. նա ժամանակակիցն էր գրական ու գիտական այդ ողջ անցուդարձի, և նրա գործունեությունն, ինչ խոսք, պայմանավորված էր նախորդող ժամանակահատվածով։ Բայց Սրվանձտյանով է նախանշվում հայ բանագիտության և ազգագրության մեջ առաջին շրջափուլը, որովհետև նախ. նա նախորդներից տարբեր և ավելի ամբողջական պատկերացումներ ու պահանջներ ուներ այդ գիտությունների նկատմամբ¹։

¹ Գ. Սրվանձտյանն իր օրերում իր արած գործի չգնահատվելու ու չհասկացվելու առարկայական մտավախությունն ուներ։ Երբ հրատարակության էր պատրաստում բանահյուսական նյութերի իր առաջին ժողովածուն, «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» պատումի առաջաբանում գրում է. «Այս գործիս հրատարակությունը հասկացողին համար արժեք կունենա».

Նրա այստեղ-այնտեղ ցրված հատուկտոր տեսական դրույթների, մտորումների ու խոհերի միատեղումից պարզվում է, որ Սրվանձտյանն իր գործունեության հենց սկզբում զգում էր մեղանում այն գիտության բացը, որը որոշակիորեն ձևակերպվում է որպես ժողովրդագիտություն: Նա իր գրառումների բազմաթանր ու բազմաթեմա ընդգրկմամբ հող էր նախապատրաստում ժողովրդագիտության համար: Նյութի դասակարգման մեջ նա համակարգ էր դնում, գրառման մեջ՝ սկզբունք—հավաքել, հավաքել այն ամենը, ինչ վաղվա հետ ենթակա է կորստյան, վեր հանել մեր ժողովրդի երեկն ու այսօրը:

Երկրորդ. Սրվանձտյանը ոչ միայն մեծ ճաշակով ու բանագետի բնատուր տաղանդով հրապարակ հանեց ժողովրդի հոգևոր մշակույթի մինչ այդ անհայտ նմուշները, այլև հասարակական վերաբերմունք ստեղծեց այդ մշակույթի և դրա կրողների նկատմամբ¹:

բայց կարծեմ, արհամարհողներ ավելի պիտի լինին և այսպանողներ, ոչ միայն այս գրվածին կտորը, այլ ամբողջ սույն գրքույկը, ընդոր և իմ անձը: Ասոնք չհասկացողներն են: Բայց մեր փուլեր չէ: Քաջալերված կհամարիմ զիս, եթե համրանքով քսան հոգի ևեթ լինին հավանող այս գործոյն, և կշարունակեմ, խրախույս տալով այլոց, որ հետևին, աշխատասիրեն ձեռք բերել, ի լույս ածել այսպիսի գրվածքները» («Գրոց ու Բրոց», էջ 131): Չնայած առաջին ժողովածուն հայ մտավորականության կողմից շատ լայն ընդունելություն գտավ, Սրվանձտյանի անհանգստությունը չվերացավ. այն հաջորդող ժողովածուի մեջ դարձավ քննադատություն՝ իր ժամանակի մտավոր ու հասարակական կյանքի վերաբերյալ. «Կզարհուրիմ ասել՝ գրող և ընթերցողներ ունինք բավական շատ, սակայն անոնցմե շատերն անգետ են ազգային հին պատմության և ներկա կենցաղավարության. ներվի ինձ ասել, թե անգետ են անոնցմե շատերը, որ այսօր ազգային օրենսդրի կամ կառավարչի պաշտոն ունին» («Մանանա», էջ 36): Սա քննադատություն լինելուց բացի, առաջին հերթին ցույց է տալիս մինչ Սրվանձտյանը և նրա ժամանակի հայ բանագիտության և բանահավաքչական գործի վիճակը:

¹ Սրվանձտյանի ժամանակակից Ս. Մանգինյանը գրում է. «...մեզ, որ ավելի ճաշակ ունենալն էինք երևակայում, բայց և այնպես խսկույն խոստովանեցինք Սրվանձտյանի մեծ ծառայությունը... Միթե՞ մեզ համար դոքա այնքան նորություն էին, որ Սրվանձտյանին այնքան երկինք բարձրացուցինք, միթե՞ մեզ հայտնի չէին եթե ոչ մյուս մասերը, գոնե հեքիաթ-

Երրորդ. նրա ի ցույց դրած բանահյուսական ու ազգագրական նյութը ընդհանուր ու լայն տեսադաշտ էր «Սասունցի Դավիթ» վեպի ընկալման, գնահատման և ուսումնասիրության համար: Սրվանձտյանը պատումին կից մի քանի էջանոց «Առաջաբանով» նշեց նաև վեպի հետադոտման հետաքրքիր ու ճիշտ ուղիներ:

Ուրեմն, Սրվանձտյանը տալիս էր համակարգված առատ ու գունեղ նյութ, ստեղծում վերաբերմունք դրա նկատմամբ, նշում ուսումնասիրության ուղիներ: Սրանով է պայմանավորված ոչ միայն Սրվանձտյանի տեղն ու դերը հայ բանագիտության մեջ որպես ռահվիրայի, այլև նրան հաջորդած բանահավաքչական գործի ու բանագիտության վերընթաց շրջանը: Վեպի առաջին հրապարակումը ազդակ էր հանդիսացել բանագիտության մեջ մի մեծ շարժման ու վերելքի, իսկ այդ վերելքն էլ իր հերթին ազդակ էր նոր պատումների հայտնաբերման ու հրապարակման: Սրան մեծապես նպաստում էր այդ ժամանակների հայ մտավոր կյանքի ընդհանուր վերընթացը, ազգային ինքնաճանաչման ու ինքնահաստատման, արտաքին ու ներքին պայքարի ուղիով գնացող վերընթացը:

Ընդհանուր հետաքրքրության պայմաններում, սակայն, տաաներեք տարի վեպի նոր պատում երևան չեկավ: Երկ-

ները: Անշուշտ հայտնի էին. բայց ցավն այն էր՝ մինչդեռ տեսականապես մենք գիտեինք, թե որքան հարգ ունի ժողովրդական բանաստեղծական երգերը քաղաքակիրթ ազգերի մեջ, մինչդեռ Գրիմմի հոշակը մեզ էլ էր հասել, մենք չէինք կարող գործով ցույց տալ գոնե մի հեքիաթ մեզանում, որ այն զվարճությունը պատճառեր, ինչ որ տեսականապես ցնորում էինք, թե դոքա պետք է զարթեցնել կարողանան: Ուստի և կամ սկսում էինք այն հարգը անտեղի անհամություն համարել, կամ կարծում էինք, թե մեր ազգը ղուրկ է լավ հեքիաթներից, և մենք պատրաստ էինք ազգային բանաստեղծության հրապույրներից հրաժարվելով հրաժարվիլ... Սրվանձտյանի մեծ ծառայությունը և ճաշակը հենց նորանումն է, որ մի հարվածով անհավատներին հավատքի բերեց՝ այն հրապույրներն իրանց առաջ իբր օրինակ դնելով... Դոքա անհերքելի ապացույց են, թե ժողովրդական բանաստեղծության անփոխարինելի ազդեցությունն որքան կախված է հավաքողի շնորհից...» («Համով-հոտով», Կ. Պոլիս, 1884, էջ է—Ը):

րորդ գրառումը 1886-ին էր, Մանուկ Աբեղյանի կողմից: Սա հրատարակվեց 1889-ին: Այս պատումը ևս կից ունեւր քննական մի առաջաբան:

Մինչև 1900-ական թվականների սկիզբը վեպի գրամանը բնորոշ է մի երևույթ՝ պատումը գրառվում էր և հրատարակվում նախնական հետազոտությամբ հանդերձ: Նախ՝ դա նորից Սրվանձտյանից եկող մի տեսակ ավանդույթ էր արդեն, երկրորդ՝ պատումները գրառվում էին հայտնի մտավորականների կողմից, որոնք ոչ միայն բանահավաք էին, այլև ժամանակի լավագույն կրթությամբ մասնագետ-բանասերներ—Մանուկ Աբեղյան, Գարեգին Հովսեփյան, Բագրատ Խալաթյան, Արտաշես Աբեղյան: Այսինքն, վեպը մըշտապես գտնվում էր նորաստեղծ բանագիտության ուշադրության կենտրոնում: Բանահավաքչական գործը դրվում էր մասնագիտական հիմքերի վրա: Այդ գործի համար գրվում է նաև ուղեցույց-ձեռնարկ¹: Չնայած չկային բանահավաքչական գործը կազմակերպող և նյութապես ապահովող հիմնարկներ և ամեն ինչ արվում էր անհատական նախաձեռնությամբ, այնուամենայնիվ, այդ գործն արդեն պատահական բնույթ չէր կրում: Անհատների եռանդը ընդհանուր հասարակական բնույթ տվեց այդ գործին:

Երկրորդ շրջան (1915—16 թվականներ).—Պատմահասարակական տարբեր իրադրության հիմունքով այս թվականները կազմում են առանձին շրջափուլ: Երկու տարվա ընթացքում գրառվել է տաս պատում, 1915-ին՝ վեց և 1916-ին՝ չորս: Պատումների այս մեծ քանակը կապված է հասարակական այլ տեղաշարժերի հետ:

1915 թ. կոտորածից փրկված արևմտահայերը հավաքվել էին էջմիածնում: Քառասուն տարվա ճանապարհ էր անցել հայ բանագիտությունը, ազգագրությունը, ազգային նյութական ու հոգևոր մշակույթի հավաքման գործը: Կորստյան վտանգի առաջ էր կանգնած և՛ հայ ժողովուրդը, և՛

¹ Գրիգոր Խալաթյան, Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների, Մոսկվա, 1887:

նրա հոգևոր հարուստ մշակույթը: Հայ մտավորականու-
 թյունը բարբարոսության ուժին հակադրեց քաղաքակրթու-
 թյան ուժը, և ջարդի ու սովի, մահվան ու ավերի տարիներին
 գրառվեցին հերոսական վեպի տաս պատում: Կա այս
 երևույթի գործնական կողմը ևս: Մինչև այդ հղած գրառման
 փորձը ցույց էր տվել, որ վեպ կարելի է փնտրել Արևմտա-
 հայաստանում կամ Արևելահայաստան տեղափոխված արև-
 մրտահայերի միջավայրում: Բանահյուսական նյութերի
 գրառման, հրատարակության ու ուսումնասիրության գործն-
 իրենց ձեռքն էին վերցրել արևելահայ մտավորականները:
 Նրանք, սակայն, նյութական, քաղաքական և այլևայլ հան-
 դամանքների պատճառով հնարավորություն չունեին շրջա-
 գայելու Արևմտյան Հայաստանում և դրանցումներ կատա-
 րելու: Բանահավաքները չէին կարողանում գնալ բանասաց-
 ների մոտ, բանասացներին սոցիալական (պանդխտություն)
 և քաղաքական (կոտորած) աղետները բերում էին բանահա-
 վաքների մոտ: 1915-ից հետո Արևելահայաստանը լցվել էր
 դադթական արևմտահայերով, և մտավորականության կենտ-
 րոններին մոտ գտնվող վայրերում (էջմիածնում, Երևանում,
 Աշտարակում) տիֆի ու համաճարակի պայմաններում բա-
 նահավաքներն անձնուրաց գործ էին կատարում՝ գրառելով
 բանահյուսական ու ազգագրական նյութեր, այդ թվում և
 վեպը: Այս իմաստով բացահայտ և բացարձակ է այդ տաս
 պատումի և դրանց գրառման թվականների կապը, կապ, որը
 կարելի է քննել պատմական, աշխարհագրական, հասարա-
 կական, հոգեբանական կողմերով:

Երրորդ շրջան (1920—50 թվականներ).—1932 և
 1933 թվականներ՝ ինը պատում: Այս թվականներն արտա-
 հայտում են պատմական ու հասարակական բոլորովին այլ
 իրադրություն—իր ապրելու և ստեղծագործելու իրավունքը
 վերագտած հայ ժողովուրդ, գործող ուսումնական բարձրա-
 գույն հաստատություններ, պետության կողմից ֆինանսա-
 վորվող և խրախուսվող բանահավաքչական գիտարշավներ,
 ազգային մշակույթի հանդես պետական մտածողություն և

հովանավորություն: Կուլտուրայի պատմության ինստիտուտի կողմից Կ. Մելիք-Օհանջանյանի գլխավորությամբ կազմակերպված գիտարշավների ընթացքում են գրառվել հիշյալ ինը պատումներից ութը: Հայ իրականության մեջ դա առաջին գիտարշավը չէր, անշուշտ: Տարբեր ժամանակներում և տարբեր անձնակազմերով բանահավաքչական գործի էին ելել նաև XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին: Տարբերությունը ո՛չ թե բանահավաքների և բանահավաքչական գործի մեջ է, այլ՝ հասարակական այն պայմանների, ուր գործում էին բանահավաքները և գիտարշավները: Մինչև հեղափոխությունը արդեն գրառվել էր տպագրված պատումների մեծագույն մասը՝ երեսուներեք պատում: Բայց հեղափոխությունից հետո բանահավաքչական, այդ թվում և վեպի դրաման, գործը դադարից առանձին անհատների եռանդուն նախաձեռնություն լինելուց և դարձավ պետական գործ, շնայած այստեղ նույնպես մեծ էր կազմակերպող անհատների դերը:

Վեպի տարբերակների հրատարակման, նորերի գրառման 30-ական թվականների վերընթացը կապվում է Եղիշե Չարենցի անվան հետ: Այդ տարիներին Չարենցը պետհրատի գեղարվեստական բաժնի վարիչն էր: Նա առաջարկում է Մ. Աբեղյանին վեպի տպագիր ու անտիպ պատումները համախմբել մի գիտական հրատարակության մեջ: Չարենցի առաջարկությամբ ու աջակցությամբ, Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի ջանադիր աշխատանքի արդյունքն են այժմ այն երեք սովորածավալ ժողովածուները, որոնք ամփոփում են վեպի քառասունյոթ պատում: Հենց այս գործի սկզբին նոր պատումներ հայտնաբերելու նպատակով կազմակերպվեց հիշյալ արշավախումբը՝ Կ. Մելիք-Օհանջանյանի ղեկավարությամբ: Նույն այդ շարժման տարիներին՝ 1933 և 36 թվերին, Արամ Ղանալանյանը գրառեց երկու պատում:

Չարենցի մտահղացումը պատեհ առիթ էր, բայց ոչ պատահական: Վեպի պատումների մի առանձին ժողովա-

Ժուլի գիտական հրատարակության հարցը նախապատրաստված էր վաղուց, գուցե, դեռևս 1892-ից, երբ դարձյալ Աբեղյանի խմբագրությամբ լույս տեսավ Գ. Հովսեփյանի կազմած «Սասմա ծուխ» ժողովածուն: Բազրատ Խալաթյանը 1898-ին, իր գրառած պատումի առաջաբանում նպատակ է հայտնում հրատարակելու մինչ այդ շտպված և տպագրված պատումների մի միասնական ժողովածու, որը, ցավոք, չկարողացավ իրականացնել¹:

Բազում տարբերակների անհրաժեշտությունը վեպի ուսումնասիրության համար երևան եկավ երկրորդ պատումի գրառումից սկսած: Աբեղյանի առաջին հոդվածը վեպի մասին Սրվանձտյանի և իր գրառած պատումների համագրությունն էր²: Սրանով իսկ սկիզբ էր դրվում վեպի տարբերակների համեմատական ուսումնասիրության: Բազրատ Խալաթյանը տեսականորեն ավելի ուղղակի դրեց այդ հարցը. «Միայն այն ժամանակ, երբ մենք ամփոփ կունենանք աչքի առջև մեր դյուցազնական վեպի վարիանտները (գեթ նորա մեծ մասը), ցրված այստեղ և այնտեղ, երբ վերջիններս դասակարգված կլինեն ըստ նյութին, և մենք ավելի հարուստ տեղեկություններ կունենանք սոցա ժողովրդի մեջ գոյության պայմանների մասին, այն ժամանակ միայն կարելի կլինի ձեռնարկել վեպիս լուրջ ուսումնասիրության, որի կարևորությունը մեզանում շատ զգալի է»³: Բազում տարբերակներ և նրանց ի մի հավաքման կարևորությունը շեշտվում է դեռևս XIX դարի վերջին, այսինքն, վեպի ուսումնասիրությունը մեղանում դրված էր ճիշտ հիմքերի վրա՝ նոր տարբերակ-

¹ «Ավելորդ չենք համարում հաղորդել ի լուր հայ ժողովրդական բանահյուսություն սիրողների, որ մենք դիտավորություն ունենք ամենամոտ ապագայում մի ժողովածուի մեջ ամփոփել մեր ժողովրդական դյուցազնական վեպի վարիանտները, որոնք զանազան ժամանակ և զանազան հանդեսների էջերում կամ առանձին հրատարակությամբ լույս են տեսել...» (Բ. Խալաթյան, Սասմա փահլիվաններ կամ Թըլոր Դավիթ և Մհեր, Վարչապատ, 1899, էջ 2):

² «Նոր-Դար», 1889, № № 137, 140, և 141:

³ Բ. Խալաթյան, Սասմա փահլիվաններ..., էջ 2:



ների գրառման և դրանց համեմատական ուսումնասիրության վրա:

Պատումների գրառման, հրատարակման և ուսումնասիրության բավականին հարուստ փորձը հող հանդիսացավ Չարենցի մտահղացման: Դրան նպաստեց նաև Չարենցի մտադրությունը՝ բանաստեղծական վերամշակման ենթարկել «Սասունցի Դավիթ» ճյուղը: Այդ առիթով նա ուսումնասիրեց վեպի մինչ այդ հրատարակված բոլոր տարբերակները¹: Պատումների գիտական ժողովածուի հրատարակությունը հնարավոր եղավ իրականացնել միայն նոր կարգերում:

1940—60-ական թվականներին վեպի ուսումնասիրությունը չդադարեց, մինչդեռ գրառման գործն ինչ-ինչ մոտեցումներով համարվեց ավարտված: «Սասնա ծռեր» գիտական ժողովածուի հրատարակությունը մի տեսակ թուլացրեց վեպի գրառման գործը, և այդ թվականների դատարկությունը մասամբ բացատրվում է կատարված ու ավարտված գործի հանգստությամբ:

Մյուս կողմից, որոշ շրջանում, այն, ինչ մի ժամանակ իրական պատմություն էր և ազգային ճակատագիր, համարվեց ազգայնական: Այս իմաստով, 30-ական թվականներից սկսած որոշ չափով դժվարացավ բանահավաքչական գործը: Ասացողը չէր վստահում անժանոթ բանահավաքին: Այս բոլորը անդրադարձավ 30—50-ական թվականների գրառած բանահյուսական նյութի քանակի և որակի վրա: Եթե չլիներ արհեստականորեն ստեղծված այդ արգելքը, նոր կարգերում, նման բանահավաքչական կազմակերպված գործունեության պայմաններում վեպի նոր պատումների թիվն, անկասկած, ավելի շատ կլիներ, քան է: Մանավանդ որ կենդանի բանահյուսական նյութի և վարպետ ասացողների առումով նույնպես պայմանները բարենպաստ էին—խաղաղ տարիներ,

¹ «Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին» (Կ. Մելիք-Օհանջանյանի հուշերից), Երևան, 1961:

վերջնականապես Արևելահայաստանում հաստատված արևմրտահայության ամբողջական զանգվածներ, «երկիրը» (Արևմտահայաստան) տեսած ասացողներ, չխաթարված հիշողություններ «երկրից», համեմատաբար անաղարտ բարբառ և գոյատևող ավանդույթներ:

Չորրորդ շրջան (1960—70 թվականներ).—1962-ին բանագետ Գր. Գրիգորյանը գրառում է վեպի մի նոր պատում¹. մինչև այսօր հետամուտ լինում նոր տարբերակների, և նա այժմ ձեռքի տակ ունի մոտ տասնոր գրառումներ: Այդ նոր պատումի գրառումն ու հրատարակումը նորից հետաքրքրություն առաջացրեց վեպի դեռևս կենդանի գոյատևման նկատմամբ:

1970 թ. ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արշավախումբը գրառեց երկու պատում (արշավախմբի ղեկավար՝ Սարգիս Հարությունյան, գրառողներ՝ Սարգիս Հարությունյան և Արուսյակ Սահակյան): Նույն արշավախումբը 1971 թ., այս անգամ արդեն վեպի նոր տարբերակներ գրառելու և հայտնի պատումների հետքերով գնալու հատուկ նպատակով, երեք ամսում, ներկայիս Հայաստանի յոթ շրջաններում գրառեց քառասունից ավելի պատումներ:

Այս գիտարշավի ժամանակ հավաքվեցին մի շարք վկայություններ, ըստ որոնց, որոշ ասացողներից 20—40-ական թվականներին գրառվել են պատումներ, որոնք առայժմ մեր ձեռքի տակ չկան, դրանց ասացողներն էլ վախճանվել են, և անհնար է արդեն երկրորդ գրառումը: Հետագա պրպտումները գուցե պարզեն որոշ մութ հարցեր և ի հայտ բերեն նոր պատումներ: Կարևորն այն է, որ ըստ այդ վկայությունների, հիշյալ թվականներին վեպի ավելի շատ տարբերակներ են գրառվել, քան հայտնի է, այսինքն՝ այդ ժամանակամիջոցում ուշադրությունը վեպի գրառման նկատմամբ ավելի մեծ է եղել, քան դա երևում է տախտակից:

¹ Այս պատումը հրատարակվեց 1969 թ., «Գարուն» ամսագրում, № 7:

Բանագիտությունը մեր օրերում առաջադրում է հարցեր, որոնք մի ժամանակ թվում էին անկարևոր, դանց էին առնվում կամ քիչ էին լուսաբանվում. դրանց առաջադրման պահանջը նախկինում գուցե հասունացած չէր: Օրինակ, ինչպե՞ս է գոյատևում վեպը մեր օրերում՝ իր առաջին գրառումից հարյուր տարի անց, ասացողների ո՞ր խումբն է պահել կամ պատմում վեպը, տպագրության և գրականության միջոցով գտած տարածումը ինչքանո՞վ է ազդել վեպի վրա, այժմյան պատումները բանավո՞ր աղբյուրից են գալիս, թե՞ գրավոր, ժամանակը և հեռավորությունը վեպի բուն հայրենիքից ինչպիսի՞ փոփոխություններ են բերել իրենց հետ և այլն: Այս հարցերի հասունացումը այն կապն է, որ գոյություն ունի «1971 թվական» և «քառասունից ավել պատումների գրառում» հասկացությունների միջև: Մյուս կողմից, ի տարբերություն 30—50-ական թվականների, մեր օրերում բացարձակ հնարավորություն կա գրառելու բանահյուսական տարբեր ժանրերի այնպիսի ստեղծագործություններ, որոնցից այն ժամանակների ասացողը կարող էր կըտրուկ հրաժարվել: Սա է նաև պատճառներից մեկը, որ մեր օրերում, երբ ժողովրդական վեպն արդեն դադարել է կենդանավարելուց, երբ պատմում են միայն ի պատասխան հարցմանը, երբ պրոֆեսիոնալ ասացողներն արդեն եզակի են, գրավեցին այնքան պատումներ, որպիսի քանակ բաժին չէր ընկել գրառման և ոչ մի տարեթվի: Այս քանակը սերտ կապի մեջ է և՛ իր դրդապատճառի (բանագիտության զարգացման աստիճան), և՛ հասարակական իրադրության (Գիտությունների ակադեմիայի համակարգում բանահյուսության առանձին բաժնի գոյությունը հնագիտության և ազգագրության բաժինների հետ կողք-կողքի, մեծ ուշադրություն ժողովրդի հոգևոր մշակույթին, ամենամյա պարբերական բանահավաքչական գործուղումներ), և՛ նույնիսկ գրառման տեխնիկական կողմի հետ (արագ շրջագայելու և ձայնագրման սարքերի հնարավորություններ): Վեպի գրառման 100-ամյա հոբելյանը նորից պատեհ առիթ էր, բայց

նորից ոչ պատահական. բանագիտական և հասարակական նախադրյալները հասունացրին վեպի նոր գրառումների հարցը:

Բանագիտության արդի պահանջով գրավում էին ոչ միայն ամբողջական ու լիարժեք պատումներ, այլև՝ յուրաքանչյուր պատառիկ, ավանդություն, կապված վեպի հետ, որևէ վկայություն, որ կարող էր լույս սփռել վեպի պատմը վեպի վայրի և ժամանակի վրա. փորձ էր արվում վերականգնել որոշ ասացողների վարպետ-աշակերտ, համագյուղացի, համերկրացի, ազգակից կամ պարզապես ունկնդիր հարաբերությունը, գտնել նախկինում գոյություն ունեցած վիպասական դպրոցների ծայրը: Այս վկայություններով ու հավաքած ողջ նյութով լայնացավ պատկերացումը վեպի աշխարհագրական տարածվածության մասին, վեպի աշխարհագրական քարտեզն իր մեջ առավ նորանոր տեղավայրեր թե՛ Արևմտյան և թե՛ Արևելյան Հայաստանում:

* * *

Այն, որ հետաքրքրությունը ժողովրդական վեպի նկատմամբ, դրա գնահատումը, արժեքավորումը, պահպանումն ու ուսումնասիրությունը պայմանավորված է պատմա-հասարակական, նույնիսկ քաղաքական իրադրությամբ, որ գրաված պատումների քանակն անգամ սերտ կապի մեջ է իր գրառման թվականի հետ—սա դեռ գրառման ժամանակ հասկացության մի կողմն է միայն: Այն ավելի կարևոր և որոշիչ դեր է խաղում վեպի կրողների՝ վիպասացների, հասարակական կազմի վերլուծության դեպքում: Վիպասացների սեռի, տարիքի, զբաղմունքի, գրագիտության աստիճանի մասին տվյալների հասարակագիտական վերլուծությունը վեպի գրառման ժամանակից դուրս և դրանից անկախ լինել չի կարող: Եթե վիպասացների հասարակական կազմը ներկայացնում է մի որոշակի դարաշրջան, ապա այդ կազմի նկարագիրը և բանագիտական վերլուծությունը կարող է ճիշտ լինել միայն տվյալ դարաշրջանի համար:

«Սասնա ծռեր» վեպի ժամանակագրությունը և վիպասացների հասարակական կազմը արտացոլում են դրա գոյատևման ամենավերջին շրջանը՝ XIX դարի վերջ և XX դար մինչև մեր օրերը: Ավելի վաղ գրառումներ չունենք: Ուրեմն, վեպի ժամանակագրական և հասարակական վերլուծությունը սահմանափակվում է այդ ժամանակահատվածի շրջանակներում և վեպի գոյատևման բազմադարյան ողջ ընթացքի վրա չի տարածվում:

Այս իսկ պատճառով, վիպասացի սեռ, տարիք, դբադմունք բանագիտական հասկացությունները քննվում են միայն իրենց գրառման ժամանակի մեջ: Ասացողների հետ միասին վերլուծության է ենթարկվում նաև բանահավաքների հասարակական կազմը, որովհետև որոշ օրինաչափություններ վեր են հանվում ասացող-բանահավաք փոխադարձ կապի բացահայտմամբ միայն:

Ս ե ու.—Բանահավաքները բացառապես տղամարդիկ են, ոչ մի կին բանահավաք: Կնոջ մուտքը գիտության, առավել ևս՝ բանահավաքչական ասպարեզ, գրեթե անհնար էր: Հասարակական ավանդական կարգ ու կանոնով կինը չէր կարող շրջել գյուղերը, մտնել անժանոթ տներ, խոսել իրենից տարեց տղամարդու հետ: Այս պարզ բացատրությունն է պատճառը, որ մինչ հեղափոխությունը կին բանահավաք չկա¹:

Նույն ձևով, անժանոթ տղամարդ բանահավաքին գրեթե անմատչելի էր կին ասացողների հասարակությունը: Նաև սրանով է բացատրվում այն հանգամանքը, որ քառասունյոթ վիպասացներից միայն չորսն են կին: Նրանց պատումների համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կանայք տղամարդկանցից ոչ պակաս վարպետ վիպասացներ են: Բայց նրանց թիվը քիչ է նախ՝ հիշյալ պատճառով և երկրորդ՝ եթե բանահյուսական մյուս ժանրերը, հատկա-

¹ Այս անվերապահ եզրակացությունը վերաբերում է միայն վեպին, իսկ բանահյուսական այլ նյութերի գրառման գործում հայտնի է որոշ կին բանահավաքների մասնակցությունը:

պես քնարական, ծիսական և փոքր տեսակաները, կենցաղ էր բոլորի համար—բոլորն էին պարում և պարելիս երգում, բոլորն էին օրհնում, անիծում, երգվում, աղոթում—մինչդեռ վեպ ոչ միայն հատուկենտ վիպասացներ էին պատմում, այլև ոչ բոլորը կարող էին ունենդիր լինել: Վեպ և մեծ ժանրի այլ ստեղծագործություններ պատմվում էին հատուկ հավաքատեղիներում՝ օդաներում, ուր երիտասարդների, կանանց ու երեխաների մուտքը արգելվում էր: Կանանց մեծ մասը կարող էր լինել հիանալի ասացող, հեքիաթասաց, բայց վեպ չիմանալ՝ լսած չլինելու պատճառով: Հետաքրքիր է, որ հիշյալ շորս կին-վիպասացներն էլ վեպը լսել և սովորել են իրենց տոհմի որևէ ասացողից, հորից, պապից, հորեղբորից, այսինքն՝ տանը, տան պայմաններում: Այստեղ դեր է խաղում ոչ միայն լսելու, այն էլ հաճախակի լսելու պահը, այլև այն, որ պատմելու բնատուր շնորհքը, կարծես, անցնում է ժառանգաբար: 1971 թ. հատուկ դիտարկումները, գրառումներն ու վկայությունները նույնպես հաստատեցին այն, որ վեպը մտապահել և լավ են պատմում նրանք, ում ազգի մեջ եղել է վարպետ ասացող՝ հայրը, պապը, հորեղբայրը, քեռին և այլն: Սա դիտված օրինաչափություն է, բայց ոչ բացարձակ, անշուշտ:

Մեր օրերում բանահավաք-ասացող հարաբերության մեջ սեռային սահմանափակությունների գրեթե չկան, և գրառված նյութի քանակը կամ որակը միայն դրանով պայմանավորված լինել չի կարող, չնայած մեր ժամանակներում անգամ կանանցից բանահյուսական նյութ համեմատաբար քիչ է գրառվում:

Տ ա ր ի ք. — Բանահավաքների տարիքն առանձնապես կապված չէ գրառման ժամանակի կամ հասարակական պայմանների հետ, և դրան հատուկ անդրադառնալը տվյալ դեպքում անիմաստ է: Իսկ ասացողների տարիքային տվյալներն այս մոտեցմամբ որոշ օրինաչափություններ տեսնելու հնարավորություն են ընձեռում:

Ասացողների տարիքային խմբերն են.				
1-ին խումբ՝	20—30 տարեկան	1	ասացող	
2-րդ »	30—40 »	5	»	
3-րդ »	40—50 »	4	»	
4-րդ »	50—60 »	10	»	
5-րդ »	60—70 »	6	»	
6-րդ »	70—80 »	2	»	
7-րդ »	80—90 »	5	»	
Անհայտ տարիքի՝		14	»:	

Ընդգրկումը լայն է, ներառում է տարիքային բոլոր խմբերը, բացի մանկական և պատանեկան խմբերից: Սրա պատճառն ինքնըստինքյան պարզ է. վեպը մանկական բանահյուսությունն չէ:

Խմբերի միայն ներքին քանակային հարաբերության մեջ որևէ օրինաչափություն տեսնելը կլինի միակողմանի, նաև՝ սխալ: Իսկ երբ տարիքային խմբերը քննում ենք դարձյալ իրենց գրառման ժամանակի և հասարակական պայմանների մեջ, այստեղ արդեն տարիքը խոսում է:

Եթե նայելու լինենք թվային ցուցիչին, պիտի ասենք, որ վեպ ամենից շատ պատմում են 50—60 տարեկան ասացողները, իսկ 70—80 տարեկանը՝ ավելի քիչ: Բոլոր ասացողները վկայում են, որ վեպը լսել և սովորել են իրենց մեծերից, «հալիվորներից», «սպիտակամորուս ծերունիներից»: Ո՞ւր են այդ ծերունի վիպասացները, ինչո՞ւ նրանց թիվը քիչ է տարիքային տախտակի վրա, այնինչ 3-րդ և 4-րդ խմբերը գերակշռող են: Սա բացատրվում է նախ այն հիմնական պատճառով, որ վեպը պատմելու բուն վայրում, ասացողի բուն հայրենիքում, այնտեղ, ուր վիպասացներ և վիպասանական ավանդների գոյություն ունեին, գրառումներ շատ քիչ են եղել: Գրառումները կատարվել են մեծ մասամբ վեպի գոյատևման բուն վայրերի սահմաններից դուրս: Որոշ պատումներ գրավել են պանդուխտ արևմտահայերից: Պարզ է, որ հայրենի տանից հեռու աշխատանք փնտրող

պանդուխտը երիտասարդ պիտի լիներ, մինչև 50—60 տարեկան, ծերունին պանդխտության չէր գնա։ Դրա համար էլ այդ ասացողների տարիքը միջինն է։ 1915-ին գաղթած արևմտահայ ասացողների տարիքը նույնպես միջինն է՝ 40—60 տարեկան։ Սա ևս բնական է նրանով, որ կոտորածից ծերունիները քիչ են փրկվել, քչերն են դիմացել արհավիրքին ու գաղթի ճանապարհներին։ 30-ական թվականների ասացողների տարիքային խմբերը, որոնք դարձյալ արևմտահայ գաղթականներ են, 5—7-րդն է։ Բայց նրանք նույնպես 1915-ին եղել են միջին տարիքի. պարզապես նրանցից գրառումներ ուշ են կատարվել։

Վեպի տեղահանումն իր պատմվելու բուն վայրերից փոփոխություն է մտցնում բանագիտական այնպիսի մի հասկացության մեջ, ինչպիսին ասացողի տարիքն է։ Անհրճար է, նույնիսկ սխալ կլինի այդ հարցը քննել պատմաքաղաքական և հասարակական տեղաշարժերից անկախ։

Ապա. ասացողների մեծ մասը ոչ միայն պրոֆեսիոնալ վիպասաց չէ, այլև ընդհանրապես ասացող չէ. պարզապես նա լսել և մտապահել է վեպը, իր շնորհի ուժով պատմում է լավ կամ վատ։ Շատերը այդ իսկ պատճառով հրաժարվել են վեպը պատմելուց, պատճառաբանելով, որ իրենք վիպասաց չեն և միշտ մի առանձին ակնածանքով են խոսել իրենց տեսած վիպասացների մասին։ Նման վերաբերմունքը խոսում է ոչ միայն վիպասանական դպրոցի ավանդույթների, այլև ժողովրդի կողմից վեպի ժանրային գիտակցման մասին, այսինքն՝ ամեն մի ասացող չի կարող վիպասաց լինել։

Այս վերաբերմունքը նաև խախտում է մտցնում տարիքային խմբերի մեջ։ Եթե որոշ ասացողներից կատարված գրառումները պատահական են այն իմաստով, որ նրանք իսկական վիպասացներ չեն, անընդհատ չեն պատմել վեպը, շրջապատին հայտնի չեն եղել որպես այդպիսին, ապա նրանց տարիքն այս դեպքում ոչ մի դեր չի խաղում։

1971 թ. գիտարշավի ժամանակ գրաված պատումների ասացողների մեծ մասը վիպասաց չէ. նրանք վեպը պատ-

մել են բանահավաքի խնդրանքով միայն: Դրանք այն ծե-
րունիներն են, որոնք 1915-ի գաղթից առաջ, շատ երիտա-
սարդ հասակում, «երկրում» լսել են վեպը: Պարզ է, որ
նրանց տարիքն այժմ պիտի անցնի 70-ից. պարզ է նաև, որ
այս տարիքը չենք կարող քննել իր բուն՝ վեպ պատմելու,
առումով:

Այսպիսով, ասացողների տարիքային խմբերը վեպը
պատմելու իմաստով կայուն չեն, հարաբերական են, իրենք
իրենց ներսում օրինաչափ չեն: Այդ խմբերը օրինաչափ են
ոչ թե վեպի, այլ՝ հասարակական երևույթների նկատմամբ:

Միայն երիտասարդ տարիքի ասացողների դեպքում
նկատելի է մի ներքին օրինաչափություն. դրանք մեծ մա-
սամբ այն ասացողներն են, որոնք վեպը լսել և սովորել են
իրենց ազգակից ասացողից:

Զբաղմունք.— Բանահավաքներն իրենց զբաղմուն-
քով բացառապես մտավորականներ են՝ հոգևորական, ուսու-
ցիչ, հայագետ, որոնցից շատերը կրթություն էին ստացել
ժամանակի լավագույն ուսումնական հաստատություններում՝
Վարազա վանքում, էջմիածնում, Ռուսաստանում, Եվրոպա-
յում: Նրանք մեծ մասամբ հայտնի անուններ են, ազգային
մշակույթի մեջ իրենց մեծ երախտիքով, և նրանց ներկա-
յացնելն այստեղ ավելորդ է, մանավանդ որ հարցի առումով
մեզ այստեղ հետաքրքրում է ոչ թե նրանց տեղն ու դերը
հայագիտության մեջ, այլ միայն նրանց զբաղմունքը որպես
հասարակագիտական հետազոտության տարր:

Ասացողները հիմնականում հողագործ կամ արհեստա-
վոր գյուղացիներ են, որոնք աշխատանքի ընթացքում կամ
դրանից հետո հավաքվել են օդաներում, լսել համագյուղա-
ցի վիպասացներին կամ հեռու տեղից եկած աշուղներին:
Նրանք մեծ մասամբ անգրագետ են կամ հազիվ գրաճանաչ:
Կան մի երկու գրագետ ասացողներ՝ տիրացու Հակոբ Նըր-
գեյանը և Սարգիս Հակոբյանը: Սրանց մոտ գրագիտության
աստիճանը խիստ վատ է անդրադարձել վեպի վրա. նրանք

վեպը խճողել են անհարկի գրական բառերով, Աստվածաշնչից և այլ գրքերից վերցրած պատմություններով:

Գյուղական արհեստավորները թաղիքագործ, շալ գործող, գզրար, հյուսն, ջրաղացպան վարպետներ են, որոնք իրենց աշխատանքի բերումով շատ էին շփվում մարդկանց հետ, շրջում էին գյուղերը, սովորում վեպը կամ, ընդհակառակը, պատմում, տարածում: Սրանք այնքան հմուտ ասացողներ էին, որ բանահավաք Սարգիս Հայկունին հակված է կարծելու, թե «Սասնա Դավիթ և Մհեր գյուցազնական վեպը Մոկացի գզրարներ տարածած են հեռու գավառներ, նաև փոքր մասամբ՝ Կումանցի և Ողմեցի գզրարներ»¹: Սա մասնավոր փաստերից հանված հետևություն է, իհարկե, բայց ճշմարտությունն այն է, որ վիպասացների մեջ մեծ թիվ են կազմել արհեստավոր գյուղացիները:

Ասացողի զբաղմունքը, գրագիտության աստիճանը համախոս է իր ժամանակի և հասարակական պայմանների հետ: Հայ ժողովրդի մեծագույն մասն այն ժամանակ կազմում էր գյուղացիությունը (հողագործ և արհեստավոր), որի մոտ գրագիտության աստիճանն այնքան էլ բարձր չէր:

Բացի վերը բերված տվյալներից, կան վկայություններ, որոնց միատեղումից կարելի է պատկերացում կազմել մի փոքր ավելի վաղ ժամանակաշրջանի՝ գրառված պատումների ասացողների նախորդ սերնդի մասին: Ըստ այդ վկայությունների, դեռևս XIX դարի երկրորդ կեսին գոյություն են ունեցել վիպասանական դպրոցներ, ուր վարպետ վիպասացը ուսուցանել է իր աշակերտներին վեպը և վիպելու արվեստը: Այս մասին առաջին հիշատակությունը տալիս է Տարոնցի Կրպոն՝ Սրվանձտյանի գրառած պատումի ասացողը: Տարոնցի Կրպոն «կը պատմեր, թե յուր վարպետը շատ ընդարձակն գիտեր այս պատմության, և թե մեջ ընդ մեջ շատ տեղեր ոտանավոր խաղեր կային, որ ձայնով կերգեր: Թե այդ վարպետն երկու վռշիկ աշակերտ ուներ, որոնք

¹ «Սասնա ծռեր», հատ. Ա, էջ 303:

շատ կատարյալ սորված էին, և թե ինքն՝ բավական երկար պատմած շինելով, շատ կտորներ մոռացած էր»¹։ Պրոֆեսիոնալ վիպասացի իմաստով Տարոնցի Կրպոն վեպի գրաված պատումների ասացողների մեջ առաջինն է և միակը, որ անցել է վիպասանական դպրոց։ Այն երկու վոշիկ աշակերտներն էլ, գուցե, վերադարձել են իրենց հայրենի բնակավայրերը և նպաստել Ռշտունիքում վեպի տարածմանը։

Վիպասանական մի յուրօրինակ դպրոց է ունեցել Ալաշկերտի խաստուր գյուղը։ № 33 և 34 պատումների ասացողներ Մանուկ Թորոյանը և Կարապետ Թամոյանն այդ գյուղից են։ Նրանք իրենցից առաջ հիշում են վարպետ վիպասացներ Ռես Գսպոյին և Քոչե Վարդանին։ Կարապետ Թամոյանը վկայում է, որ Ռես Գսպոն վեպը սովորել էր իր հոր պապից՝ Դրմեից, որ հռչակված պատմող է եղել։ 1971 թ. գիտարշավախումբը հանդիպեց խաստուրի դպրոցի վերջին վիպասաց ներկայացուցչին՝ Սեդրակ Քերոբի Աբաջյանին։ Սեդրակ Աբաջյանը Ռես Գսպոյին չի տեսել, նա վեպը սովորել է Փրե Աբրո (Աբրահամ) անունով մի վիպասացից, դարձյալ խաստուրից։ Ճանաչում է Մանուկ Թորոյանին և Կարապետ Թամոյանին, լսել է նաև նրանց, բայց իր ուսուցիչը նա համարում է Փրե Աբրոյին։ Որոշումները տարան Փրե Աբրոյի որդու՝ Սմբատ Աբրահամի Գևորգյանի մոտ, որը հիշում է իր հոր պատմածը, բայց, ցավոք, նրա վիպասանական արվեստը չի ժառանգել։ Նա լրացուցիչ տեղեկություններ հաղորդեց իր հոր և խաստուրցի նախորդ վիպասացների մասին։ Բոլոր վկայությունների միատեղումից ստացվում է վիպասացների շորս սերնդի պատկերը՝ 1. Դրմե — 2. Ռես Գսպո և Քոչե Վարդան — 3. Մանուկ Թորոյան, Կարապետ Թամոյան և Փրե Աբրո — 4. Սեդրակ Աբաջյան և Սմբատ Գևորգյան։ Դրմեից, Ռես Գսպոյից, Քոչե Վարդանից և Փրե Աբրոյից գրաված պատումներ չկան։ Մյուսների պատումների բացարձակ նույնությունը թույլ է տալիս վեպի ավանդական այս փոխանցումը կոչել խաստուրի վիպասանական դպրոց։

¹ «Մասնա ծոեր», հատ. Բ, Ա մաս, էջ 3։

Վիպասանական նման ավանդույթներ կարելի է նշել Մոկսում, Կարկառում, Մուշում, Սասունում: Սրանք, ճիշտ է, վիպասանական դպրոցների հետքեր են միայն, բայց ենթադրել են տալիս վեպի գրառման ժամանակաշրջանի նկարագրից մի փոքր տարբեր պատկեր: Բոլոր ասացողներն իրենց առաջ հիշում են ավելի վարպետ վիպասացների, որոնք իմացել են ավելին, քան իրենք գիտին, ընդարձակն ու կատարյալը, բազում ճյուղերով, երգերով, շափածո հատվածներով, ողորմիսներով: Եթե վեպի գրառման ժամանակամիջոցում վիպասացների պրոֆեսիոնալ դպրոցներ և պրոֆեսիոնալ վիպասացներ չեն եղել (կամ այդպիսիներից վեպ չի գրառվել), ապա անխտիր բոլոր ասացողների մոտ եղած խիստ ավանդապահ վերաբերմունքը իր լսածի և պատասխանատվության զգացումը իր պատմածի նկատմամբ դառնում է վեպը պահելու և ավանդելու մի ուրույն դպրոց, այսինքն՝ վեպը մի ստեղծագործություն է, որի մեջ ոչինչ չի կարելի փոխել, ավելացնել կամ պակասեցնել, նույնիսկ վատ պատմելը մեղք է: Հաջորդող սերունդը՝ ներծծելով նախորդի ամբողջ իմաստությունը և փորձը, միշտ մի խորին ակնածանքով ու խոնարհումով վարպետացնում է նախորդ սերնդին, համարելով իրեն աշակերտ, մինչև հաջորդ նոր սերնդի հերթափոխությունը: Նախորդող և հաջորդող սերունդների այդ մշտական վարպետ-աշակերտ, սովորեցնող-սովորող շվավերականացված հերթափոխությունը, որ կոչվում է ավանդույթ, բոլոր տաղանդավոր ասացողների առաջին և հիմնական դպրոցն է: Սրանով հանդերձ, յուրաքանչյուր ժամանակաշրջան ունի ասացողների հասարակական իր բնորոշ կազմը և նկարագիրը, որը չի կարելի տարածել վեպի գոյատևման ու պահպանման երկարատև ընթացքի վրա: Առավել ևս սխալ կլինի վեպի XIX—XX դարերի հասարակագիտական հետազոտության տվյալները դարձնել միջոց վիպաստեղծման բարդ խնդիրը լուծելու համար: Այդ դարերի ասացողների միայն հասարակական կազմը չի կարող բացարձակ որոշիչ դեր խաղալ այն հարցում, թե ժողովրդի ո՞ր խավի ընդերքում կարող էր ստեղծվել վեպը:

ՎԵՊԻ ԳՐԱՌՄԱՆ ՎԱՅՐԸ, ՏԱՐԱԾՈՒՄ, ՏԵՂԱՅՆԱՑՈՒՄ

Բանահյուսության մեջ գրառման վայր հասկացությունը մեծ կարևորություն ունի, երբ համընկնում է բանահյուսական ստեղծագործության հայրենիք հասկացության հետ: Երբ չեն համընկնում այս երկու հասկացությունները, գրառման վայրն ունի երկրորդական նշանակություն: Այս հարցադրումը հայ բանագիտության մեջ ունի մի առանձնահատուկ կարևորություն, որովհետև հայ բանահյուսության մեջ գրառման վայր և հայրենիք հասկացությունները մեծ մասամբ չեն համընկնում: Սա բացատրվում է հայ ժողովրդի պատմական ճակատագրով, քաղաքական ու հասարակական իրադարձությունների հետևանք բռնի զանգվածային տեղահանումներով ու վերաբնակեցումներով, երկվույթներ, որոնք անընդհատ խառնել են հայ ժողովրդի ազգագրական ու բանահյուսական քարտեզը:

Հարցը մասնավորելով ժողովրդական վեպի վրա, այստեղ փորձ է արվում բացահայտել վեպի գրառման վայրի կապը նրա ստեղծման և գոյատևման բուն հայրենիքի հետ:

Վեպի բուն հայրենիքի խնդիրը վաղուց արդեն լուծված է հայ բանագիտության մեջ Մանուկ Աբեղյանի կողմից և հաստատված մյուս բանագետների համապատասխան աշխատություններում: Դա Սասունն է, ուր պատմական որոշակի հիմքի վրա ստեղծվել են վիպական զրույցներ, ժամանակի ընթացքում այդ զրույցները միացել են և կազմել վեպ:

Մեզ հասած պատումները ցույց են տալիս, որ վեպը դարեր առաջ դուրս է եկել Սասունի սահմաններից, տարած-

վել Արևմտյան Հայաստանի մյուս շրջաններում՝ ընդգրկելով Մշո դաշտավայրը, Ալաշկերտն ու Բայազետը, Ռշտունիքն ու Վասպուրականը։ Աբեղյանի կողմից նշված են նաև այդ տարածման ուղիները. «Գիտենք, որ վեպն սկիզբ առնելով Սասունում, պատմվում էր Բաղեշի և Մշու կողմերում, Խլաթում և Բուլանըխում, որտեղից անցել էր դեպի Հյուսիս-Արձեշ և Կաղզվան, ուր 18-րդ դարում արդեն կապված է եղել որոշ տեղի հետ։ Այնուհետև դա մտել է Ալաշկերտ և Այրարատ, էջմիածնի գավառը, ուր տեղացիներն արդեն յուրացրել են և արևելյան բարբառով են պատմում։ Վեպն ընտանի է և Արագածի լանջերում, Ապարանում և Քավառում։ Մյուս կողմից՝ Շատախի, Ռշտունիքի ու Մոկաց կողմերում վեպն ավելի կենդանի է եղել և անցել վան՝ կապվելով Մհերի դռան հետ, և այստեղից Աբաղայի դաշտով մտել Պարսկահայք, հատկապես Խոյի, Սալմաստի և Մակվա կողմերը ուր նույնպես ցույց են տալիս վեպի գործողության տեղերը»¹։

Գոյություն ունի վեպի տարածման երկու ըմբռնում.

ա. վեպը դուրս է գալիս իր ստեղծման բուն վայրից, տարածվում, այլ վայրերում և տեղայնանում.

բ. վեպը դուրս է գալիս իր ստեղծման բուն վայրից, տարածվում այլ վայրերում և չի տեղայնանում։ Այս դեպքում տարածումը մնում է սոսկ աշխարհագրական հասկացություն։

Վեպի անցումը Մուշ, Ալաշկերտ, Մոկս, Գավաշ, Շատախ, վան տեղայնացման իմաստ ունի, որովհետև այդ շրջանները ոչ միայն յուրացրել են վեպը, այլև ամենագործուն մասնակցություն ցուցաբերել վիպաստեղծման և պահպանման ընթացքին։ Վեպը ձուլվել է այդ շրջանների բնակչության հոգևոր մշակույթին, դարեր շարունակ եղել նրա հոգևոր սնունդը և կրում է իր վրա հոգևոր կերտվածքի, նաև պատմական, աշխարհագրական ու ազգագրական կնիքը։ Հիշյալ շրջաններից գրառած պատումներն իրենց թե՛ քանակական, թե՛ որակական առումով իրավունք են տալիս

¹ Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Ա, Երևան, 1966, էջ 328—329 (ընդգծումները մերն են—Ա. Ս.)։

Մշո դաշտավայրին, Ռշտունիքին ու Վասպուրականին Սասունի հետ հավասարապես կրելու վեպի հայրենիք կոչվելու պատիվը:

Վեպը՝ կապված լինելով հայ ժողովրդի պատմական ճակատագրի հետ, զանգվածային տեղաշարժերի և գաղթների միջոցով Արևմտյան Հայաստանից անցել է նաև Արևելյան Հայաստան: Անցումը կատարվել է տարբեր ժամանակներում (տե՛ս Տախտակ-քարտեզ 2):

Կարիքը արևմտահայությանը զանգվածաբար դարձնում էր պանդուխտ և գցում երկրե-երկիր: Պանդուխտ հայերին մի առանձին ուժով ձգում էր էջմիածինը: Նրանց մեջ լինում էին վարպետ ասացողներ, որոնք իրենց ինչպես իրենց ձեռքի ուժն ու բնիկ տարազը, բերում էին նաև իրենց էության անբաժան մասը կազմող հոգևոր մշակույթը՝ բանահյուսությունը: Այդպիսի ասացողներից են գրառված վեպի մի քանի պատում՝ 1-ին (Մոկացի Նախո Քեռի, 1886 թ.), 2-րդ (Մոկացի Խապոյենց Զատիկ, 1898 թ.), 5-րդ (Մոկացի Հովան, 1892 թ.): Նշված երեք ասացողներն էլ Մոկսից են: Նրանց կապն էջմիածնի հետ ըստ մեզ հետաքրքրող խնդրի այնքանով է միայն, որ նրանք էջմիածնում են աշխատանք փնտրել, ինչպես և դրանից առաջ փնտրել եւ այլ վայրերում²: էջմիածինն այդ ասացողների համար պանդխտության միջանկյալ օղակներից մեկն է, ժամանակավոր կամ մշտական հանգրվան: Նրանց բուն հայրենիքը Մոկսն է. նրանց պատումների բուն հայրենիքն էլ Մոկսն է և ոչ մի կապ չունի էջմիածնի հետ: էջմիածինը նրանց պատումների համար գրառման վայր է, որն այս դեպքում ունի երկրորդական նշանակություն:

¹ «Սասնա ծռեր», հատ. Ա:

² «Զատիկը ևս քսան տարեկան հասակից կրել է երկարամյա պանդխտություն, երեք անգամ բախտ որոնելով Պոլսում, որտեղ նա անց է կացրել նախ 3, ապա 2 և, վերջապես, ամբողջ 8 տարի, բանելով ջրաղացում: Վերջին 4 տարին նա անց է կացրել հայրենի գյուղում, որտեղից նա եկել է էջմիածին 1898 թ. Զատիկին» (Բ. Խալարյան, Սասնա ծռեր, հատ. Ա, էջ 57—58):

1915 թ. հայկական եղևոնը կարճ ժամանակամիջոցում ոչնչացրեց հայ ժողովրդի մի ստվար հատված: Փրկվածները սփռվեցին աշխարհով մեկ: Նրանց մեծ մասի հույսն ու ապավենը նորից էջմիածինն էր, Արևելյան Հայաստանը: էջմիածնում, Աշտարակում ու Երևանում էին հավաքված մոկացին, գավազցին, սպարկերտցին, վանեցին, մշեցին, սասունցին և այլն: 1915—16 թվականներին այդ գաղթական արևմտահայերից են գրառված վեպի մի քանի նոր պատումներ՝ 11 (մոկացի վարդան Մուխսի-Բազիկյան), 14 (շատախցի Մանուշակ Զադոյան), 15 (շատախցի Գրիգոր), 20 (գավազցի Զարդար Տեր-Մխիթարյան), 21 (գավազցի Մարգարիտ Սարգսյան), 22 (գավազցի Գրիգոր Փոխան-Եղիազարյան), 23 (գավազցի Համբարձում-Խաչատրյան): Այս ասացողների, ինչպես և նրանց պատումների հայրենիքը Մոկսն է, Շատախը, Գավազը և ոչ թե էջմիածինը, Աշտարակը, Երևանը, ուր կատարված են գրառումները¹:

¹ Եթե գաղթականի բախտը նրանց տաներ այլ երկրներ, վեպը նրանց հետ կզնար այնտեղ, ուր նրանք կհանգրվանեին: Նույն տրամաբանությամբ կարելի է ենթադրել, որ գաղթականների հետ ո՞ր երկրները կարող է գնացած լինել վեպը՝ հայ ճակատագրի հետ թափառելով տարբեր մայրցամաքներում: Արտաշատում, սփյուռքում գրառած պատում մեզ հայտնի չէ, բայց «Սասնա ծռերի» հրատարակության առաջացրած արձագանքները սփյուռքի հայ մտավորականների շրջաններում լավագույն ապացույցն է այն բանի, որ օտար ափերում էլ վեպի նկատմամբ հայերի հետաքրքրությունը չի սառել: Ահա աշգրիտ արձագանքներից մեկը. ամերիկահայ Հովհաննես Ավետիքյանը նամակով Մանուկ Արեղյանին տեղեկացնում է վեպի մի նոր փոփոխակի մասին. «...Մանկությանս օրերին ես լսել էի այդ դյուցազններդական պատմվածքները և մտքումս պահել մինչև այսօրը, որ պարտք էի համարում լույս աշխարհ բերել, ուստի 1933—35 Ֆրեզնոյի «Ասպարեզ» շաբաթաթերթում գրեցի որպես թերթոն, որու վերնագիրն է՝ «Դյուցազն Դավիթ, Վասպուրականցի Սասնա ծռեր»: Արդ, եթե ուզում եք ունենալ զայն գետեղելու ձեր հավաքածոյի մեջը, ես սիրով տրամադրում եմ: Ձեզմե պատասխան առնելուն պես օղալին ճանապարհով ուղարկում եմ: Վասպուրականի կարկառ գավառի անդիր պատմություն է, որ գրի առած եմ: Այս դյուցազնագությունը պարունակում է 3600 բառեր կամ 250 էջեր»:

Այս նամակը պահվում է ԳԱԹ Մ. Արեղյանի ֆոնդում 132 համարի տակ:

1932 թ. սկսած ՀՍԽՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի կողմից կազմակերպված բանահավաքչական գիտարշավների ընթացքում (ղեկավար՝ Կ. Մելիք-Օհանջանյան) Թալինի, Աշտարակի, Վեդու շրջաններում գրավում են մի քանի պատումներ: Դրանք գրաված են 1915-ին Մոկս, Սասուն, Շատախ, Ալաշկերտ գավառներից դաղթած ասացողներից: Նրանց, ինչպես և նրանց պատումների բուն հայրենիքը հիշյալ գավառներն են և ոչ թե Աշտարակ, Վեդի, Թալին շրջանները:

Վեպը Արևելյան Հայաստան է անցել դեռևս XIX դարի առաջին կեսին: 1828—29 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո ծայր է առնում հայերի զանգվածային դաղթը Կարսի, էրզրումի և Բայազետի փառալուստյուններից դեպի ռուսահայատակ վայրերը: Ասացողների հետ միասին դաղթում է նաև վեպը, նրանց հետ հաստատվում Ապարանում, նոր Բայազետում: Հիշյալ թվականներին դաղթած ալաշկերտցիների և բայազետցիների երկրորդ և երրորդ սերնդի ասացողներից XIX դարի վերջին և XX դարի սկզբներին գրավում են պատումներ: Սրանք նույնպես, չնայած սերունդների հաջորդականությանը և տեական ժամանակամիջոցին, մնում են Ալաշկերտի և Բայազետի պատումներ, և նրանց կապը Ապարանի ու նոր Բայազետի հետ դարձյալ արտաքին է: Այստեղ տարբերությունն այն է, որ այդ նոր բնակավայրերը պատմող սերնդի համար արդեն ծննդավայր են, հայրենիք, բայց նրանք իրենց պատմած վեպով ավելի շատ կապվում են իրենց հայրերի ծննդավայրի հետ, քան իրենց:

Վերահիշյալ բոլոր պատումների դեպքում գրառման վայրը, որն աշխարհագրորեն ընկնում է Արևելահայաստանի սահմաններում, ունի երկրորդական նշանակություն վեպի բուն հայրենիքի նկատմամբ:

Երբ համեմատում ենք տարբեր վայրերում և տարբեր ժամանակներում գրաված պատումներն ըստ շրջանների, նույն շրջանի պատումները հանդես են բերում բացարձակ

նմանություն, որը բացառում է գրառման վայրն ու ժամանակը: Էական ոչ մի դեր չի խաղում այն հանգամանքը, թե մոկացին Մոկսում է պատմել վեպը, թե՝ էջմիածնում, մշեցին Մուշում, թե՝ Ապարանում, բուն մոկացին ու մշեցին են պատմողը, թե Արարատյան դաշտավայրում կամ Արագածի փեշերին ծնված նրանց երկրորդ սերնդի ասացողները, որոնց վեպն անցել է իրենց մոկացի և մշեցի հայրերի ու վարպետների միջոցով:

Որ վեպի գրառման վայրը նրա հայրենիքի հանդեպ ունի երկրորդական նշանակություն, կարելի է հաստատել նաև, այսպես կոչված, արտաքո կարգի փաստերով, որոնք դարձյալ բխում են վեպի ներքին էությունից:

«Սասնա ծռերի» Ա հատորում կողք-կողքի 10 և 11 համարների տակ զետեղված են երկու պատում, գրաված միևնույն ասացողից՝ մոկացի վարդան Մուխսի-Բազիկյանից: Գրառումներն իրարից բավական հեռու են և՛ ժամանակով, և՛ վայրով: 1911 թ. Մոկս գյուղաքաղաքում մոկացի ուսուցիչ Հարություն Գիլանյանը վարդանից գրի է առնում մի պատում: 1915-ի կոտորած, ավեր, գաղթ՝ և ընտանիք, հարազատներին ու համերկրացիներին կորցրած բնավեր վարդանն ապաստանում է էջմիածնի շրջանի Մուղանջըղ գյուղում: 1916 թ. այդ գյուղում Սենեքերիմ Տեր-Հակոբյանը, անտեղյակ Հարություն Գիլանյանի գրառմանը, նորից է պատմել տալիս վարդանին վեպը և գրի առնում: Միևնույն ասացողի այս երկու պատումներն իրենց սյուժետային ու զեղարվեստական կառուցվածքով գրեթե տողացի նույնն են: Նկատվող տարբերությունները կապված են ասացողի մոռացության, տրամադրության, գրառման հետ՝ պայմանավորված բանավոր ստեղծագործության բնույթով, կարող են ուղեկցել դրան միշտ և ամենուր և ոչ մի կապ չունեն գրառման տեղի ու ժամանակի հետ: Հակառակ սյուժետային ու արտահայտչամիջոցների նույնությանը, բավական մեծ են այդ երկու պատումների գրառման տեղի ու ժամանակի տարբերությունները՝ 1911 թ., հայրենի Մոկս, համեմատաբար

խաղաղ ժամանակներ արևմտահայության համար, համերկ-
րացի բանահավաք և 1916 թ., հայության ընդհանուր ջարդի
և սարսափի տարիներ, հայրենիքից հեռու, օտար գյուղ, օ-
տար միջավայր, անժանոթ բանահավաք: Այս բոլորով հան-
դերձ, վարդան Մուխսի-Բաղիկյանն առաջին անգամ պատ-
մել է համեմատաբար ավելի վատ և անտրամադիր, երկրորդ
անգամ՝ մեծ ոգևորությամբ, ներշնչանքով, հավելյալ դր-
վագներով, շափածո և հրգային հատվածներով: Այս դեպ-
քում, թվում է, հակառակը պիտի լիներ, բայց փաստը մնում
է փաստ: Իսկ փաստը ցույց է տալիս, որ պատումը երբեմն
կարող է պայմանավորված չլինել գրառման տեղով, ժամա-
նակով, ծանոթ և անծանոթ լսարաններով:

Մի պատում հայտնի է որպես արարատյան՝ № 38 (Բ
հատոր, Բ մաս): Այս պատումը նկատի ունի Մ. Աբեղյանը,
երբ գրում է, թե վեպը մտել է Այրարատ, ուր տեղացիներն
արդեն յուրացրել են այն և պատմում են արևելյան բար-
բառով: Արդյո՞ք արարատյան է այս պատումը: Որպես ասա-
ցող նշված է՝ այրարատցի Մուրադ Հովսեփյան: Համաձայն
բանահավաք Սարգիս Հայկունու տեղեկությունների, Մու-
րադ Հովսեփյանի հայրը Մոկսի Գոմանից գյուղից էր, որ
1840-ական թ. գաղթել է հայրենի գյուղից և բնակություն
հաստատել սկզբում Գառնիում, հետո էջմիածնի շրջանում,
ուր և ծնվել է Մուրադը: Մուրադը վեպը սովորել է Բարսամ
անունով մի աշուղից, որը նույնպես Մոկսի նանընից գյու-
ղից էր՝ նույն ժամանակներում գաղթած¹: Այս պատումը,
չնայած Արարատյան դաշտավայրում ծնված, արարատյան
բարբառով խոսող մի ասացողից է գրաված, բայց պատ-
կանում է Մոկաց պատումներին, որովհետև նախ՝ այն իր
սյուժետային ու գեղարվեստական ողջ կառուցվածքով ոչըն-
չով չի տարբերվում մոկաց պատումներից, երկրորդ՝ այրա-
րատցի Մուրադը ծնվել է մոկացի Հովսեփի ընտանիքում և
վեպը սովորել է մոկացի աշուղ Բարսամից: Այս դեպքում

¹ «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Բ, էջ 233—34:

շէին կարող ներքին և արտաքին տվյալները շհամընկնել, պայմանավորված չլինել մեկը մյուսով: Ուրեմն՝ վեպը Մոկսից XIX դարի 40-ական թթ. անցել է Արարատյան դաշտավայր, պատմվել այնտեղ բազում գյուղերում և փոխանցվել հաջորդ սերնդին: Բայց այդ սերունդը ոչ թե տեղացի է, բուն Արարատյան դաշտի բնակիչ, այլ՝ նորից մոկաց շառավիղ:

Պատումն իր հայրենի Մոկսից դուրս է եկել անցյալ դարակեսից էլ առաջ, բայց մնացել է անաղարտ, ոչ մի փոփոխության չի ենթարկվել: Այն իր անաղարտ տեսքով պարտական է Մուրադի վարպետին՝ Բարսամ անունով աշուղին, որը բնատուր ասացող էր, շատ հմուտ ժողովրդական ավանդություններին ու հեքիաթներին, ընտանեկան ապրուստը հայթայթում էր հեքիաթներ ու երգեր ասելով, վեպը սովորել էր իր հորից՝ Մանասերից. իսկ Մանասերի մասին վկայում են, որ տաղանդավոր ասացող է եղել: Երբ ասացողը վարպետ է, բնատուր շնորհքով օժտված, երբ պատմելը նրա համար մասնագիտություն է, մանավանդ ապրուստի միջոց, երբ նա միևնույն ստեղծագործությունը կրկնում է բազում անգամներ և արդեն անգիր արածի նման, երբ անցել է պատմելու հատուկ դպրոց, առավել ևս աշուղ է և աշուղի որդի, ուրեմն, նա հատուկ վերաբերմունք ունի այն ավանդների նկատմամբ, որոնց ժառանգորդն է ինքը: Այդ այն ավանդապահությունն է, երբ վիպասաց աշուղն ինքը, լինելով ազատ ստեղծագործող, իրեն իրավունք չի վերապահում ստեղծագործական միջամտությամբ խախտելու որոշ ժանրերի, օրինակ՝ վեպի, ավանդական կարգ՝ ու կանոնը: Նա նույնպիսի նախանձախնդրությամբ փոխանցում է վեպը և վերաբերմունքը վեպի նկատմամբ նաև իր հաջորդներին: Ահա թե ինչու, ծնունդով արարատցի Մուրադը, ապրելով հեռու վեպի հայրենիքից, անժանոթ լինելով վեպում հանդիպող տեղավայրերին, այնպիսի հարազատությամբ է վերարտադրում իր լսածը, կարծես, հենց այդ վայրերից է եկել:

¹ Տե՛ս նույն տեղում:

Այստեղ է, որ արտահայտվում է ավանդապահության ուժը: Մուրադի պատումի վրա երևում է աշուղ Բարսամի, նրանից էլ առաջ՝ աշուղ Մանասերի ազդեցությունը: Դա երևում է երգային հատվածների առատությունից, աշուղական որոշ բանաձևային արտահայտություններից, տողերի հանգավորման ձգտող վերջավորություններից, աղոթք-օրհնանքների առատությունից: Եթե ասում ենք երգային հատվածների առատություն, դա չի նշանակում, թե մյուս պատումների հետ համեմատած հավելյալ հատվածներ կան, աշուղ Բարսամը չեղած մասեր է մտցրել իրենից կամ այլ վիպերգերից ու երգերով ուղեկցվող հեքիաթներից, մի բան, որ նա կարող էր հեշտությամբ անել, եթե չլիներ ավանդապահական վերաբերմունքը վեպի նկատմամբ: Պարզապես Բարսամն իր խառնվածքով ու մասնագիտությամբ ավելի զգայուն է եղել երգվող հատվածների հանդեպ, ավելի սիրով է յուրացրել դրանք և ավելի մեծ ներշնչանքով կատարել: Վեպի երգվող մասերը երգել իմացող և երգ սիրող ասացողի մոտ երբեք չեն կարող կորչել, եթե երգերով են փոխանցվել նրան: Այս բոլորից ենթադրում ենք, որ Բարսամի պատումում երգերը մեծ տեղ են դրավել: Արդյոք Մուրադն էլ երգել է այդ հատվածները, թե՞ միայն երգերի տեքստն է մտապահել կամ անգիր ասել: Բանահավաքն այս մասին համապատասխան նշումներ կամ տեղեկություններ չի թողել: Երգային հատվածները վեպի կայուն, փոփոխության քիչ ենթարկվող ավանդական մասերն են: Դրանցով հարուստ են հատկապես մոկաց պատումները: Այս իմաստով ևս Մուրադի պատումը հարազատ անդրադարձումն է ընդհանրապես մոկաց և մասնավորապես աշուղ Բարսամի պատումի: Մուրադի Արարատյան դաշտավայրում ծնվելը, ապրելը անդրադարձել է պատումի միայն բարբառային կողմի վրա, այն էլ մասամբ: Մուրադի պատումի լեզուն մոկաց և արարատյան բարբառների մի հետաքրքիր խառնուրդ է: Բանաձևային արտահայտությունների, երգային ու չափածո հատվածներում դիրիժխում է մոկաց բարբառը, իսկ այնտեղ, ուր ազատ պատ-

մըվածք է, գերիշխում է արարատյանը: Սա նույնպես խոսում է այդ հատվածների ավանդականության մասին, ինչպես նաև ապացույց է մոկաց պատումների հետ սերտ կապի ու հարադատության:

Մուրադն իր դբադմունքով նույնպես մոկացի է՝ դզրար և շալ գործող: Արհեստի բերումով նա շրջել է Արևելյան Հայաստանի գրեթե բոլոր շրջանները՝ Արարատյան դաշտավայր, Ասլարան, Շիրակ, Փամբակաձոր, Լոռի, Ախալքալաք, և ամենուր պատմել է վեպը. նրա ասելով՝ հարյուր գյուղի մեջ պատմել է¹: Այս տեղեկությունն է նկատի ունեցել Մ. Աբեղյանը, երբ 1906 թ. գրել է. «Հիշատակություն կա, որ վեպը մտած պիտի լինի և Շիրակա, Փամբակաձորի, Լոռվա ու Ախալքալաքի գյուղերը, բայց այդ տեղերում պատմվածք գրող դեռ չի եղել... Մեր գիտեցածն, անշուշտ, վերջնական չէ. գուցե վաղը կամ մյուս օրը իմանանք, որ մեր երկրի ուրիշ կողմերում ևս, ինչպես՝ Կարս, Կարին, գուցե Սյունիք ու Արցախ, պատմում են վեպը, և այս կամ այն ձևով կապված է որևէ տեղի հետ»²: Սակայն մինչև այժմ՝ 1970-ական թթ., նշված տեղերից ոչ մի պատում գրառած չունենք, չնայած 1906 թ. հետո գրի են առնվել բազում պատումներ, բայց դարձյալ արևմտահայերից, որոնք տարբեր ժամանակներում հաստատվել են Արևելյան Հայաստանում: 1946 թ. Ասլարանի Սարալանջ գյուղում ազգագրագետ Վարդ Բդոյանը գրի է առնում մի պատում Մկրտիչ Պետրոսյանից, որի հայրը դադթի է Մշո Հացիկ գյուղից, հորից էլ Մկրտիչը սովորել է վեպը³: 1962 թ. Գրիգոր Գրիգորյանը Ղուկասավան գյուղում գրառում է մոկաց մի պատում Կակո բիձայից⁴: 1970 թ. Ախուրյանի շրջանի Հովունի գյուղում 85-ամյա մշեցի Քոչե Վարդանյանից Սարգիս Հարությունյանը և Արուսյակ Սահակ-

¹ Տե՛ս նույն տեղում:

² Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, «Ազգագրական հանդես», 13-րդ դիրք, Թիֆլիս, 1906, էջ 18—19:

³ «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Բ:

⁴ Տե՛ս «Դարուն», 1969, № 7:

յանը գրի են առնում Մշո մի պատում: Ե՛վ Կակո բիձան, և՛ Քոչե Վարդանյանը 1915-ի գաղթածներից են: 1971 թ. նպատակային դիտարշավի գրառած պատումների ասացողները բացառապես արևմտահայեր են: Այս բոլորը ցույց է տալիս, որ հետաքրքրությունը վեպի նոր պատումների նկատմամբ մինչև մեր օրերը չի սառել, բայց արևելահայ հատվածից դեռ ոչ մի պատում չունենք գրառած: Արևմտահայ և արևելահայ հատվածների այսպիսի ուժեղ և կենդանի կապի դեպքում անգամ վեպն արևելահայ հատվածին չի անցել, տարածում չի գտել, առավել ևս՝ չի տեղայնացել:

Մուրադն այդքան շատ գյուղերում պատմել է, նույնիսկ որոշ գյուղերում՝ կրկնել. նրանից առաջ պատմել է վարպետ Բարսամբ. այդպես բազում գյուղերում պատմել են նաև սարալանջեցի Մկրտիչ Պետրոսյանն ու իր թափառական հեքիաթասաց մուրացիկ հայրը՝ մշեցի Պողոսը. այդպես նոր Բայազետի գավառի բոլոր գյուղերի մեջ անուն հանած վիպասաց է եղել Մուխսի Ավդալ Հազրոյանը, որ բուն Սասունի Իշխանաձոր գյուղից էր. այդպես շրջակա գյուղերում անընդհատ պատմել է վեպը քավառցի Հակոբ Նրդեյանը, նրանից էլ առաջ՝ նրա վարպետը, համագյուղացի տիրացու Հակոբ Տեր-Մարտիրոսյանը, որը Նրդեյանի ծնողների հետ 1829-ին գաղթել է Ալաշկերտի խաստուր գյուղից: Նման փաստեր կարելի է շատ հիշել, բայց և սրանց կողքին կա մի փաստ՝ մինչև այժմ ոչ մի ապացույց չունենք, որ արևելահայ հատվածը յուրացրել է վեպը և ինքն ևս պատմել: Ընդհակառակը, Արևելյան Հայաստանում անգամ վեպը փոխանցվել է մոկացուց՝ մոկացուն, սասունցուց՝ ալաշկերտցուն, սասունցուց՝ բայազետցուն և այլն: Արևելահայ հատվածը վեպի ունկնդիրներ տվել է, բայց վիպասացներ՝ առայժմ ոչ¹:


¹ Անվերապա կարծիքից խուսափելու համար նշենք, որ վեպը պատմելը որպես ավանդույթ նկատի ունենք. արևելահայ հատվածում նման ավանդույթ գոյություն չունի: Հնարավոր է, որ հատուկենա պատմողներ կան, մահաժամանդ մեր օրերում, երբ վեպը համընդհանուր ճանաչում ունի:

ՄԱՍՏԱՆՈՐ

- Գետակամ
- Բնական կարգավորված հանգրվան, մարզի և մարզի
- Թաղանթի միջանկյուն
- Հասարակ հանգրվանի ըստ «Մեծագույնի» (1917)

ԲԱՍՏԱՆՈՐ

- ԵՐԿԱՆ
- Երկր
- Երկր





Ուրեմն՝ վեպի տեղափոխությունն իր բուն հայրենիքից՝ Արևմտյան Հայաստանից Արևելյան Հայաստան միայն աշխարհագրական տեղափոխություն է, որը կապվում է այդ հատվածի պատմական ճակատագրի հետ: Այդ դեպքում վեպի տարածվածությունը աշխարհագրական հասկացություն է:

Այժմ տեսնենք՝ ի՞նչ դեր է խաղացել պարսկահայ հատվածը վեպի բախտում: Խնդրի նույն մոտեցմամբ քննենք նաև այն երկու պատումները, որոնք հիմք են տվել Աբեղյանին գրելու, թե վեպը մտել է նաև Պարսկահայք, հատկապես Խոյի, Սալմաստի և Մակվա կողմերը, ուր նույնպես ցույց են տալիս վեպի գործողության տեղերը:

Խաչիկ վարդապետ Դադյանը 1895 թ. Մակվա Թադեոս Առաքյալի վանքի գյուղում հյուսն ուստա Դավթից գրառում է մի պատում, որը նույն տարին տպագրվում է «Արարատ» ամսագրի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների համարներում՝ «Տղա դավթի և Աղջիկ Խանդութի հեքիաթը» վերնագրով: Պատումի վերջում Դադյանը տալիս է տեղեկություններ ասացողի և աշխարհագրական այն տեղանունների մասին, որոնց հիշատակությունը հանդիպում է վեպում:

Թադեոս Առաքյալի վանքի գյուղը, ուր ծնվել է ասացողը և ուր գրառված է պատումը, ազգագրական և բարբառային մի հետաքրքիր պատկեր է ներկայացնում: 28 տուն փոքրիկ գյուղում հավաքված են հայեր զանազան տեղերից, այն է՝ Հայոց ձորից, Ալաշկերտից, Կարինից, Խառակոնիսից, Վանից, Նախորկից, Գուլասարից, Գործոտից, Մուշից, Մակվից և այլն¹: Ընդամենը 28 տուն, և ազգագրական այդպիսի խաչտաբղետ ու հարուստ մի պատկեր: Խիստ հայկական մի երևույթ, որը հիմա էլ քիչ չի պատահում ներկայիս Հայաստանի այն գյուղերում, ուր կողք-կողքի ապրում են տեղացիներ և Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից տարբեր ժամանակներում գաղթած վերաբնակիչներ:

¹ «Արարատ», 1895, դեկտեմբեր, էջ 487. նույնը՝ «Սասնա ծռեր», Բ հատ., Բ մաս, էջ 321:

Պատումիս ասացող ուստա Դավիթն այդ գյուղում ներկայացնում է վանա դավառը: Ուստա Դավթի պապ Հովհաննեսը վանից եկել է Սոքման ավանի Ղայնար գյուղը XIX դարի սկզբներին, իսկ նրա որդի Ալլահվերդին, Թադեոս Առաքյալի վանքի գյուղը փոխադրվելով, ունեցել է ուստա Դավթին²:

Մի անհայտ բանահավաքի կողմից 1913 թ. նույն Թադեոս Առաքյալի վանքի գյուղում գրի է առնվել մի պատում հյուան Ալո Դավթյանից: «Երևում է, որ այս պատումի ասացող նաջար (հյուան) Ալոն եղել է ԺԴ պատումի ասացող ուստա (հյուան) Դավթի որդին և ուստա Ալլահվերդու (իմա Ալոյի) թոռ»¹, — ավելացնում է խմբագրությունը բանահավաքի տված կցկտուր տեղեկությունը: Այս ենթագրությունը ճշտվում է մի քանի փաստարկներով: Նախ՝ ուստա Դավթի և Ալո Դավթյանի պատումների բացարձակ նույնությամբ: Երկրորդ՝ 1895 թ. ուստա Դավիթը եղել է 50 տարեկան, իսկ Ալո Դավթյանը 1913 թ.՝ 30 տարեկան: Տարիքային հարաբերությամբ հնարավոր է, որ Ալոն Դավթի տղան լինի: Երկուսն էլ հյուան են՝ հոր արհեստն անցել է որդուն: Ալոն զբղովում է հոր անունով և կրում է պապի՝ Դավթի հոր, Ալլահվերդի անունը, որը շատ տարածված և հարգված սովորություն է հայերի մեջ: Կարելի է ենթադրել, որ այս բոլոր զուգադիպությունները պատահականություն են, բայց և նման պատահականություններ 28 տուն ունեցող փոքրիկ գյուղում քիչ են պատահում:

Եթե ապացուցվում է, որ Ալո Դավթյանը Դավթի որդին է, հնարավորություն է ստեղծվում հետևելու վեպի սերնդից սերունդ անցնելու ընթացքին:

Չորս սերնդի հաջորդականություն կա՝ Հովհաննես-Ալլահվերդի-Դավիթ-Ալո (Ալլահվերդի): Առաջին երկու սերնդի վեպն իմանալու մասին հիշատակություն կա միայն: Ուստա Դավիթը հիշում է. «էսիկ խեփաթ սորվեցի իմ խո-

² Տե՛ս նույն տեղում:

¹ «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Բ, էջ 353:

րից, ուստա Ալլախովերդուց, իմ խերն էլ՝ իմ պապ Վանցի Օհանեսից. Աստված օղորմի նրանց խոգուն»²: Դժվար է ճշգրտաբար ասել, թե ինչպես է պատմել վանեցի Հովհաննեսը և թե ինչ փոփոխությունների է ենթարկվել վեպը մինչև շորորդ սերունդը, որն իր ծննդավայրով արդեն հեռու է Վանից: Վերջին երկու սերնդից գրաված պատումների համեմատության հիման վրա կարելի է միայն ենթադրել, թե ինչպիսին կարող էր լինել առաջին պատումը և ինչ հնարավոր փոփոխությունների կարող էր ենթարկված լինել ժամանակի և տարածության մեջ: Այս հարցի որոշ պարզաբանումը կարևոր և հետաքրքիր է վեպի մեկդարյա կենսագրությունը տեսնելու առումով:

Այս երկու պատումները մյուսների հետ համեմատած, ունեն ուշադրության արժանի տարբերություններ՝ կապված ժամանակի և տարածության հետ, մի բան, որ չէր նկատվում վերոհիշյալ դեպքերում: Այսինքն՝ եթե վերը նշված պատումներում վեպի աշխարհագրական հեռավորությունն ու ժամանակը նրա ստեղծման և դրսևանման բուն վայրերից աննշան դեր էր խաղացել հայրենական ավանդների պահպանման գործում, այս երկու պատումի հարցում՝ մեծ դեր:

Ուստա Դավթի և Ալո Դավթյանի պատումները, պահպանելով հանդերձ վեպի ծանոթ և ավանդական սյուժետային արտաքինը, կորցրել են մի շատ կարևոր բան՝ վեպի ներքին էությունը, հեռացել են վեպի ժանրային նկարագրից, մոտեցել հեքիաթի ժանրին:

Հենց սկզբից տեղի է ունեցել սյուժետային մի փոփոխություն: Մհերը Մսրա թագավոր է և ունի երկու կին: Կանանցից մեկը դավաճանում է Մհերին, և ծնվում է Մսրա Մելիքը: Մհերը գիտե այդ մասին և երեխային կոչում է Շուն Մելիք: Մհերից և մյուս կնոջից ծնվում է Դավիթը: Ավագության իրավունքը ծնունդով Մելիքինն է, և Մհերն իր կտակը գրում է նրա թեի վրա.

² «Արարատ», էջ 487:

«Շո՛ւն Մելիք, Դավիթ քո պատի ախպեր,
Դու ընտոր ճոշ ախպեր,
Դավիթ քեզի ծառա»:

(Հատ., Բ, մաս Բ, էջ 325, տող 60)

Մյուս պատումների մեծ մասում ևս Մելիքը ապօրինի ծնունդ է: Բայց եթե մյուս դեպքերում այդ ապօրինի կապը Սասնա Մհերի և Մսրա խանումի միջև է որպես վերջինիս քաղաքական ու պետական դիտավորություն, հանուն զորեղ ժառանգի, ապա այս երկու պատումներում դա մի սովորական դավաճանություն է ամուսնական առաջաստին: Փաստորեն ոչ մի բանով Մելիքը Մհերի սերնդից չէ: Եթե մյուս դեպքերում Մելիքի ուժն ու զորեղությունը բացատրվում էր Մհերից սերված լինելու հանգամանքով, այստեղ դա կորել է, և ժառանգ-օջախ վիպական շեշտված գաղափար-թեման իր տեղը զիջել է հավատարիմ-անհավատարիմ կնոջ մոտիվին: Այստեղից սկսած՝ թուլացել է հաջորդող միջադեպերի իմաստն ու դերը: Հրեշտակն այստեղ էլ գալիս է Մհերին աստծու պատգամն հայտնելու: Մյուս պատումներում դա ժառանգ ունենալու ավետիքն է Մհերին, որից հետո Մհերը մահն ընդունում է ուրախությամբ և խաղաղ հոգով, որովհետև այդ մահը հատուցվում է Սասնա տան հզոր ժառանգով: Իսկ այստեղ.

«Ընձի մե քառասուն օր մոհլաթ տու, շատ մեղք եմ արե:
Շատ վիզզարկութեն եմ արե, թաքավոր եմ,
Իմ մեղաց դառնամ, էնով էն յան կամքը քոնն ա.
Ե՛կ, քո ամանաթը տար»:

(Հատ. Բ, մաս Բ, էջ 325, տող 80)

Սովորական մահկանացուի վախ և պայման աստծու հետ մահվանից առաջ:

Եթե չկա ժառանգ-օջախ հասկացությունը, չկա հայրենիք գաղափարը, չկա և Մսր-Սասուն տեղանունների գաղափարական իմաստը: Եթե չլինեին մյուս պատումները և նրանցից մեզ հայտնի հիմնական գաղափարը, եթե լինեին միայն այս երկու պատումները, ապա վեպի ավանդական ուրվագիծը կարտահայտեր այս իմաստը—ապօրինի եղբայրը, բայց ավագության իրավունքով և հայրական պատգամով, պահանջում է հարազատ, բայց փոքր եղբորից հրնազանդություն: Փոքր եղբայրն ավելի ուժեղ է (ինչպես միշտ լինում է հեքիաթներում) և չի ցանկանում հնազանդվել:

Մեծ եղբայրը հալածում է նրան, ի վերջո պարտություն կրում նրանից: Այստեղ Մսրը և Սասուն տեղանունները կարող են լինել, կարող են և չլինել: Այս պատումները կորցրել են ոչ միայն ավանդական տեղանունների հիշողությունը, այլև դրանց արտահայտած գաղափարական իմաստը: Հոր պատումում դրանցից պահպանվել են միայն երեքը՝ Մսրը, Սասուն և Մարութա Պանցր Աստվածածին: Մարութա Պանցր Աստվածածին անվան հիշատակությունը հանդիպում է միայն Դավթի հայտնի աղոթք-երգման մեջ.

«Յա խաց-գինի, Տեր կենդանի,
Մարութա Պանցր Աստվածածին,
Որ բազմեցավ վեր մեր թևին»:

(նույն տեղում, էջ 338, տող 336)

Տեղանունն այստեղ պահպանվել է միայն աղոթքի բանաձևային ուժով. ուրիշ ոչ մի տեղ չկա Մարութա Աստվածածնա վանքի հիշատակությունը: Չկան և վանքի ավերման ու վերաշինման միջադեպերը, որոնք Դավթի կողմից հայրենական կործանված տերության ու պետականության վերականգնման խորհրդանիշ են, նախապատրաստում և սրում են բախումը Դավիթ և Մելիք ուժերի միջև: Եվ իզուր չէ, որ որդին՝ Ալո Դավթյանը, կորցրել է Մարութա տեղանունը, և աղոթք-բանաձևը նրա մոտ հնչում է այսպես.

«Խաց-գինին, Մայր Աստվածածին,
Որ բազմեցավ վեր մեր թևին»:

(էջ 365, տող 340)

Մայր Աստվածածին հիշում է, որովհետև այդ անունով վանքեր շատ են եղել, բայց Մարութա սար և վանք եղել է մեկը, որը շատ հեռու է ասացողից, գուցե և անծանոթ:

Հոր պատումում նշվում է, որ Մհերը Մսրա թագավոր է, իսկ որդու մոտ Մսրա բառը չկա: Այստեղ կարևոր չէ այն հանգամանքը, որ պատումների մեծ մասում Մհերը Մսրա թագավոր չէ, այլ՝ Սասնա. սա այլ կարգի աղավաղման հետևանք է: Կարևորն այն է, որ նրա հաջորդն արդեն Մսրա Մելիքն է, որը պիտի հանդես գա որպես Դավթի թշնամի:

Հոր պատումում այդ գիծը համեմատաբար խորանում է շնորհիվ այն բանի, որ մի քանի տեղ նշվում է Մելիքի Մսրա թագավոր լինելը. նա հանդես է գալիս նաև իր անվան Մրս-րամելիք վիպական ձևով: Իսկ որդու մոտ ոչ մի տեղ չի նշվում այդ բանը և ոչ մի անգամ չի հանդիպում Մսրամելիք անունը: Մելիքը հանդես է գալիս միայն այս երկու պատում-ներում հանդիպող Շուն-Մելիք որոշիչ-մականունով կամ պարզապես թագավոր, առանց անվան հիշատակման, ինչպես մեծ մասամբ հեքիաթներում է լինում: Սասնա ծռու կամ Սասնա Դավիթ արտահայտությունը ևս երկու պատումներում ոչ մի տեղ չի հանդիպում, փոխարինված է Տղա Դավիթ ձևով: Հոր պատումում Մսրը և Սասուն որպես առանձին և թշնամի երկրների գիտակցումը թեև թույլ, բայց կա, որդու պատումում՝ չկա:

Հոր պատում.

«Բերեց ուրան մալ, ուրան կին, ուրան Թուրն ի Կեծակին,
Ղրկեց Դավթի քեռիքի տուն ի Սասում»:

(էջ 325, տող 90)

Որդու պատում, նույն տեղը.

«Ուրան վրայի շորերն էր, թե փափախն էր, թե մեջկապն
էր,

Ուրան չահման էր, քուրն էր, ձիան խետ
Բրբխկեց գնաց Դավթի քեռու տուն»:

(էջ 357, տող 70)

Հոր պատում.

«Հտոնք գնացին, խասան Սասում...

Հտոր ախպերներ ելան վեր —

Հտոնք էլ Սասումա տերերն էին»:

(էջ 333, տող 340—350)

Որդու պատում.

«Խետ ուրան մոր, որ գալըմ ին, հասավ ֆեռու ֆավշան»:

(էջ 366, տող 390)

Հոր պատում.

«Ասաց.— Գնա, ընդոր քեռիքին ասա,
Կամ Դավթին զլոխ տան,
Կամ քառսուն կուս աղջիկ զրկին Մար:»
Չեն իտա, ասա՝ Սասունա խողը, ջուրը,
Չիան տոպրակով կը քաշեմ, կը բերեմ Մար»:
(էջ 335—336, տող 420)

Որդու պատում.

«Ասաց.— Գնա, Տղա Դավթի քեռիքին ասա՝...
Յա Տղա Դավթի զլոխ տան,
Յա քառսուն կուս ախշիկ տան»:
(էջ 369, տող 490)

Մինչև այստեղ որդու պատումի մեջ ոչ մի անգամ Մարը, Սասուն տեղանունները հանդես չեն գալիս: Առաջին անգամ հանդիպում է աղջիկներ գերեվարելու միջադեպում, և պետք է ուշադրություն դարձնել, թե հատկապես որտեղ:

Հոր պատում.

«Տեսավ՝ մեկ պառավ, ձեռները դրած ծոցը,
Կը լա, կը մոմռա, կ'էթա, կը կա, կ'ասե.
— Ավեր, ավրվի՛ս,
Սասում մեկ աղջիկ ունի, էն էլ գնաց Մարա եսիր»:
(էջ 336, տող 450)

Որդու պատում.

«— Ավերվի՛ս, Սասունի՛կ, ավերվի՛ս,
Մե ախշիկ ունեմ, գնաց Մարա եղսիր»:
(էջ 370, տող 520)

Պառավի ուղղակի խոսքն է սա և այն էլ հանգավորված, դարձել է անփոփոխ, քարացած բանաձևային մի արտահայտություն, որը հեշտ է հիշել: Բանաձևային այս տեսքը պարտադրում է ասացողին շմոռանալ: Այստեղ արդեն Սասունիկն ու Մարը որպես որոշակի պատմական տեղանուններ առավել ևս թույլ են դիտակցվում:

Հետաքրքիր է, որ Սասունի Սասունիկ ձևը հանդիպում է միայն այս պատումում և միայն այս եզակի անդամ: Հեշտ է կռահել դրա պատճառը՝ նայելով Սասունին նախորդող և հաջորդող բառերին:

Հոր պատում.

«— Ավեր, ավերվիս,
Սասում՝ մեկ աղջիկ ունի...»

Որդին գուցե միասին է լսել այս երկու բառը, ընկալել է Սասունիկ, չնայած նրա համար պարզ է նաև պառավի մեկ աղջիկ ունենալու հանգամանքը:

«— Ավերվիս, Սասունիկ, ավերվիս,
Մե ախշիկ ունեմ...»

Հոր պատում.

«Գանք էն փահլավանին, որ գնաց Մսրա
Մելիֆին...

Մելիք կանչեց վաքիլ-վազիր.
Ջաջ կանչեցին, որ ղոշուն խավքեն, էթան վեր
Սասումա»:
(էջ 338, տող 510—520)

Որդու պատում.

«էտի քեշից, խասավ թագավորի ամառաթի տակը:
Թագավոր իշկաց, տեսավ...
Չեռ տվեց ղոշուն ժողվել»:
(էջ 371—372, տող 580—600)

Երկրորդ անգամ որդու պատումում Մսրը և Սասուն անունները պատահում են Մելիքի մոր երազի հետ կապված: Պարզ է, որ այստեղ էլ երազի այլաբանական պատկերի բանաձևային ուժն է պահել այդ անունները:

¹ Սասում բառը, գուցե, առաջին տողի հետ պիտի լինի և ոչ թե հաջորդ տողի, որովհետև պառավն անիծելիս Սասունին է դիմում:

Հոր պատում.

«Մսրբա Մելիքի մեր քնել էր.
Երազում տեսավ՝ մե ճոշ աստղ Մսրբա ելավ,
Մե պատի աստղ էլ Սասումա ելավ,
Եկան, դբան իրար»:

(էջ 338, տող 520)

Որդու պատում.

«էն գիշեր մերն երազ տեսավ՝
Երկու հատ աստղ ելավ, մեկ՝ Սասնա, մեկ՝ Մսրբա»:

(էջ 372, տող 600)

Հոր պատում.

«Ժողվեց զոշուն, թավիլ արեց,
Երմիշ ելավ դեպի Սասում,
Դնաց, Սասնա մոտ օրդուն զարկեց»

(էջ 374, տող 650)

Որդու պատում.

«Շուն Մելիք զոշուն քաշեց, եկավ,
Տղա Դավթի ֆեռու ֆավշնին զարկեց»:

(էջ 374, տող 650)

Հոր պատում.

«Յա Դավթի զլոխ տվեք, յա կոխվներս կոխվ ա.
Սասում պտի ավրեմ»:

(էջ 339, տող 550)

Որդու պատում.

«Յա Դավթի զլոխ տուր,
Յա թաշպիր տես՝ կոխվներս կոխվ է»:

(էջ 374, տող 650)

«Սասում պտի ավրեմ» սպառնալիքը չկա որդու պատումում: Անունների կորուստը որդու մոտ, նույնիսկ այս մի

տողի պակասը, որը սովորական մոռացության հետեանք չէ, նեղացնում է կռիվը, Մսրրա և Սասունի միջև եղած կռիվը դառնում է Շուն Մելիքի և Դավթի միջև եղած կռիվ, նսեմանում է և այդ կռիվի ու հաղթանակի արժեքը: Սա նաև այն դեպքը չէ, երբ առանց այդ երկրների անունների հիշատակման, Մելիքն ու Դավիթն ընկալվում են որպես երկու երկրների թշնամության խորհրդանիշ:

Որդու պատումում հայրենիքի գաղափարը չկա: Ո՞րն է Դավթի հայրենիքը—սլարզ չէ: Ինչի՞ համար է կոչվում Դավթը Մելիքի հետ, ի՞նչ է պաշտպանում:—Իր գլուխը, որ պահանջում էր Մելիքը: Սասունի մասին, որպես Դավթի հայրենիքի, հիշատակություն անգամ չկա: Դավիթն սկզբում Մսրում է՝ իր հոր տանը, հետո Շուն Մելիքի հալածանքից փախչում է քեռանց տուն, հետո սպանում է Մելիքին, նըստում Մսրում թագավոր, այսինքն՝ վերացնում է մեջտեղից իր հոր ապօրինի զավակին, տեր կանգնում իր իրավունքներին, իր հայրենական թագավորությանը: Այն Դավթյանի պատումի գրառողը նշում է. «Ըստ պատմողի (իմա Այն Դավթյանի) Մհերը եղել է հայ թագավոր՝ Մսրում նստած»¹: Ո՞վ է այդ դեպքում Մելիքը—Մհերի ապօրինի զավակ, ինքնակոչ թագավոր, բռնի ուժ: Չկա հայրենիքի գաղափարը, կա բռնի, շար ուժ (Շուն Մելիք) և բռնությանն ընդդիմացող բարի ուժ (Տղա Դավիթ):

Երրորդ անգամ Մսրը անունը որդու պատումում հանդիպում է որպես Դավթի թագավորության անուն: Խանդութը, լսելով Դավթի համբավը, աշուղին ուղարկում է Մսրը.

«Ասաց.—Որ էթաս Մսրը՝ Դավիթ թագավորի մոտ...»:
(էջ 379, տող 860)

Ճիշտ այս նույն գիծը կա նաև հոր պատումում: Տեղանվան հիշատակությունն այստեղ ոչ մի դեր չունի, այն հիշվում է որպես փեսացուի քաղաք կամ երկիր (ինչպես հեքիաթներում):

¹ «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Բ, էջ 353:

Այսպիսով, մի հետաքրքիր ընթացք է ապրել վեպը: Կա՛վեպը և չկա՛ վեպը: Կան Դավթի ճյուղի հիմնական միջադեպերը, չկա հիմնական նպատակը: Կորել են պատմական որոշակի հետքերը, քաղաքական որոշակի շահերն ու դիտավորությունները կորցրել են իրենց սրությունը և ընդհանրացման ուժը, դարձել սովորական, մարդկային, թուլացել է այդ շահերի բախումը, և Դավթի կռիվն ու հաղթանակը վեր է ածվել ասպետական կամ հեքիաթային հերոսի քաջագործության: Սա վեպի ուշ շրջանի արդյունք է: Եվ ուշ շրջանն էլ ոչ թե XIX դարի վերջն է և XX դարի սկիզբը, այսինքն՝ Դավթի և Ալոյի սերունդը, այլ ավելի վաղ՝ վանեցի Հովհաննեսի սերունդը: Այս կորուստները խորացել են հաջորդ երեք սերնդի մոտ, որովհետև նրանք ոչ թե մոտեցել են վեպի հայրենիքին, այլ հեռացել, ոչնչով չի խթանվել նրանց հիշողությունը, այլ ընդհակառակը՝ հարթվել են տեղերն ու դեպքերը հեռավորության ու անժանոթության ստիպմունքի տակ, վեպը որոշակիությունից դարձել է ընդհանուր, ցայտունությունից՝ մսկերեսային:

Եվ ահա, շորրորդ սերնդի՝ Ալո Դավթյանի պատումն ավելի հեռու է վեպ լինելուց, մյուս պատումների հետ համեմատած, ավելի մոտ է հեքիաթի, քան նույնիսկ իր նախորդի՝ հոր պատումը: Որդու մոտ կորել է այն հիմնականը, ինչը ամենատարածված հեքիաթային սյուժեն կարող է դարձնել վեպ կամ հակառակը, դրա բացակայությունը վեպը կարող է դարձնել հեքիաթ: Պատմական որոշակիությունն է դա, պատմական հիմքը և պատմական արժեքը: Կա սյուժետային միջուկը, չկա պատմական կեղևը: Այդ միջուկը կարող է դալ դարերի խորքից, անհայտ ժամանակներից: Պատմական, աշխարհագրական և ազգագրական կեղևն է, որ այդ միջուկը կապում է որոշակի ժամանակաշրջանի, երկրի ու ժողովրդի հետ: Առաջին հայացքից աննշան թվացող տեղանունների, հերոսների կամ այլ հատուկ անունների մեջ պահպանված պատմական հիշատակությունների, բանաձևային դարձած որոշ արտահայտությունների, զենք ու զրահի, ար-

տաքինի ու հագուստի, որոշ սովորությունների նկարագրութ-
յունների առկայությունը շափազանց մեծ նշանակություն
ունի վեպի համար և դրանց բացակայությունը կարող է նշա-
նակել վեպի կորուստ, քայքայում¹:

Վանքերի ու եկեղեցիների ամիր, հարկահանություն ու
գերեվարում, անկախության կորուստ, օտարի լուծ և ազա-
տություն Հայաստանն ապրել է բազում անգամներ և բա-
զում դարերում: Եվ ո՛չ միայն Հայաստանը: Բաղդադի խա-
լիֆ, Մսրա Մելիք, Սասնա Մհեր ու Դավիթ, Մսրը, Սասուն,
Մարութա Աստվածածին, Ծովասար, Ճապաղջուր, Բաթմա-
նա կամուրջ, Աղթամար, Վանն ու Կաղզվանն են, որ վեպը
(գոնե երրորդ՝ Դավթի ճյուղը) կապում են արաբական ար-
շավանքների, Սասունի հերոսական դիմադրության և ազա-
տագրական պայքարի հետ: Հրեղեն քուռակ ու հրեղեն թուր
կան բոլոր ժողովուրդների հրաշապատում բոլոր հեքիաթ-
ներում, բայց Քուռկիկ Ջալալին և Թուր Կեծակին ծանոթին,
անմիջապես հուշում են վեպը: Բոլոր դյուցազունները, հե-
րոսները խենթության աստիճան անձնազոհ են ու քաջ, բայց
Սասնա ծուռը ուրիշ որակ է, ազգային որակ: Նման շատ
բաներում արտահայտվող ազգային այս յուրահատուկ որա-
կը վեպի շատ կարևոր և պռաջնային (եթե ոչ առաջին) հատ-
կանիշներից է, որ վեպը դարձնում է ազգային, միջազգային
սյուժեներով և մոտիվներով հանդերձ:

Հոր պատումում նախկին տեղավայրերի հետ միասին
կամ նրանց փոխարեն հանդես են եկել աշխարհագրական
նոր անուններ, որոնք միայն Սոքման գավառինն են և միայն
այդ պատումինը. ուրիշ ոչ մի պատումում չեն հանդիպում և

¹ Խաչիկ վ. Դադյանի գրառած պատումի առաջին տպագրությանը կից
կա Նիկողայոս Քարամյանի առաջաբանը, որտեղ Քարամյանը ուշադրություն
է հրավիրում այդ պատումի մյուսներից ունեցած տարբերությունների վրա:
Հոդվածը արժեքավոր է նրանով, որ Դավթի պատումի օրինակով (այն ժա-
մանակ Ալո Դավթյանի պատումը դեռ հայտնի չէր) նշվում է վեպի հեքիա-
թին անցնելու ընթացքը և պատճառները (տե՛ս «Արարատ», Նոյեմբեր,
1895, էջ 429—431):

չէին էլ կարող հանդիպել: Պարզ է, որ այդ անունները ավանդաբար չեն անցել Թադեոս Առաքյալի վանքի գյուղացի Դավթին: Վանեցի Հովհաննեսի պատումում այդ տեղանունները լինել չէին կարող: Նա վանից եկել է Սոքման ավան արդեն հասուն մարդ, իմացել և պատմել է վեսլը: Դժվար թե նա անմիջապես մոռանար հայրենի վանը կամ վանում լսած, վանից հետը բերած ավանդական անունները փոխարինելը Սոքման ավանի տեղանուններով: Պատահում է, որ ասացողը վիպական կամ հեքիաթային դեպքերը պատմելիս ունենդիրներին հասկանալի դարձնելու կամ հեռավորության տարածական չափը ցույց տալու համար օգտագործվում է մոտիկ տեղավայրերի անունները: Դրանք, իհարկե, տեղանունների պատահական մուտք են վիպի մեջ և հրեք ավանդական ուժ չեն ստանում, ավանդաբար չեն անցնում հաջորդ սերնդին: Ունենդիրն այդպես էլ ընդունում է այդ տեղանունը պայմանականորեն և չի շփոթում հիմնական վիպական տեղանունների հետ: Կարող էր և վանեցի Հովհաննեսը այդպիսի պայմանական տեղանունների օգտագործմանը դիմել, որոնք կարող էր վերցնել Սոքման ավանի ծանոթ վայրերից: Բայց դժվար թե նրա որդի Ալահվերդին՝ բանասաց հաջորդ սերունդը, այդ անունները միամտաբար վիպական ընդունել և փոխանցել իր որդի Դավթին: Ասացույց՝ Ալո Դավթյանը ճշտորեն չի օգտագործում նաև այն նոր տեղանունները, որ կան հոր պատումում:

Հոր պատում.

«Ասաց.— Ղուրբան, օխտ փահլավան,

էկած Նալբայթանի՝ կադուկի վրեն նստած են»:

(էջ 345, տող 740)

¹ «Շավարշան, որ և Արտաղ զավառի մի մասը, հնումն անվանվում էր Քիլիսե, հետո փոխարկվել է Սոքման ավան կոչումով. Նալբայթան դյադուկը, Խանդութ-Խանում Գալասին, Դաստակյարի դյադուկը, գտնվում են Սոքման ավան զավառում, իսկ Փեռա գյուղը՝ Հեր-Խոյ զավառում» (տե՛ս «Արարատ», 1895, դեկտեմբեր, էջ 487):

Որդու պատում.

«Ասաց.—Վալլահ,

Կոեսաձոր յոթ խատ փահլիվան է էկել ինձի խամար»:
(էջ 381, տող 920)

Հոր պատում.

«Ասաց.—Դավիթ, որ կ'էրթաս, գնա Կոեսաձոր,
Դաստարաբի կաղուկի տակ մե մեծ գող ծառ կա,
Գնա, քո թե, քո թուր էն գողի ծառի վրեն ջըրբի»:
(էջ 347, տող 790—800)

Որդու պատում.

«Տղա Դավիթն էլ ասաց, քի
Ճամբի վրա մե խատ ծառ կա,
Քո թեվն ծառի վրեն ջըրբի»:
(էջ 383, տող 980)

Հոր պատում.

«Խաթունն ասաց.—Հեյրան, ասեմ քեզիկ՝
Լանդբաբ թաքավեր էկած է Փեռա գեղ»:
(էջ 347, տող 780)

Որդու պատում.

«Ասաց.—Վալլահ, Լանդբա թաքավոր էկել,
Զիմ գինա՝ քանի խաղար ջանով Զորավին Զիման
թափա»:
(էջ 382, տող 950)

Ինչպես երևում է մեջբերումներից, որդու համար հոր
բերած ծանոթ տեղանունները ավանդական չեն. նրա մոտ
վիպական դեպքերը չեն կապվել այդ տեղավայրերի հետ,
ինչքան էլ ծանոթ լինեն ու հարազատ. եթե ուզում էլ է նշել
տեղավայրեր, նշում է հորից տարբեր տեղանուններ:

Իսկ Սոքման ավանի հետ կապված գեղեցիկ ստուգա-
բանություն-ավանդությունը, որ բերում է հայրը, բոլորո-
վին չկա որդու պատումում:

«Աղջիկ հանդուժ փախավ,
 Տղա Դավիթ ետեւ ընկավ:
 Ընկավ ետեւ՝ Դավթի ձիի պոչէն կապած դուրդ՝
 Գետին պատռելով՝ գնում է:—
 Էնօրէն էսօր հանդուժ խանումի երկրի անուն
 Փոխեց Սոքման ավան՝ Ճեղքված-Քանդված երկիր»:
 (էջ 350, տող 890—900)

Ուրեմն՝ հինը մոռացվել է, նորն էլ ավանդական չի դարձել, չի մերվել վեպին: Այնպես որ, վեպի այս երկու պատումների կապը նոր տեղավայրերի հետ արտաքին է, թույլ և չի արտահայտում տեղայնական իմաստ:

Այս բոլորից կարելի է ենթադրել, որ դեռևս վանեցի Հովհաննեսի պատումը հարուստ չի եղել պատմական տեղանուններով և այդ վայրերի հետ կապված միջադեպերով. նրա որդի Ալլահվերդու մոտ սկսվել է պատմական-ավանդական տեղավայրերի գիտակցման մթադնումը, խորացել Դավթի մոտ և գրեթե անհետացել Ալո Դավթյանի պատումում: Ավելին. եթե Հովհաննեսի մոտ լինեին օրինակ՝ վանքի ավերման ու վերականգնման միջադեպերը, այն անպայման կհասնէր Ալո Դավթյանին: Սյուժեն, այսինքն՝ հետաքրքիր պատմությունների, միջադեպերի մի շարան, ավելի դիմացկուն է, ավելի քիչ է ենթակա քայքայման, քան նրանով արտահայտվող գաղափարը, նպատակը, ժամանակաշրջանը, աշխարհայացքը: Չնայած, վանից սկսած մինչև Մակու վեպի մեջ տեղի են ունեցել, անշուշտ, նաև սյուժետային փոփոխություններ:

Մեզ հասած վեպի այս պատումներն ընդգրկում են երկու ճյուղ միայն՝ Մհեր և Դավիթ: Առաջին և շորրորդ ճյուղերը չկան: Վեպը շատ տեղերում և շատ պատումներում հանդիպում է այս տեսքով՝ Դավթի ճյուղը, քիչ թե շատ պահպանված իր ամբողջական, հիմնական տեսքով և Մեծ Մհերի ճյուղը ոչ որպես առանձին ճյուղ, այլ՝ կապված դարձյալ Մսրա Մելիքի և Դավթի ծննդի հետ: Այս դեպքում հե-

տաքըրքիրն այն է, որ այս պատումում հետքեր կան պահ-
պանված առաջին ճյուղից:

1. Մհերը մեռնելուց առաջ իր զենք ու զրահը, իր ձին
ուղարկում է Սասուն՝ քեռանց տուն: Դավթի հետ Մսը-
րից քեռանց տուն է փախչում նաև մայրը, որին Մելիքի
մտադրության մասին զգուշացնում են Մելիքի վաքիլ-վա-
զիրները: Այս քեռանց տուն, մայրական «հերանց» հասկա-
ցությունը գալիս է առաջին ճյուղից՝ կռապաշտ Թագավորի
ու խաչապաշտ աղջկա հակադրությունից: Այստեղից է առաջ
դալիս նաև այն շփոթը, որ Մենով Հովանը, Ցոան Վեդկեն
ոչ թե Դավթի հորեղբայրներն են, ինչպես մյուս պատում-
ներում, այլ Դավթի մոր եղբայրները, Թեաթորոսն էլ հեա-
ները: Դավթի մայրը մեկի հետ լուր է ուղարկում իր եղբայր-
ներին, որոնք Սասունա տերերն էին, թե.

«Գնա՛, իմ ախպերներին մուշտուլուղ տուր,
թե՛ քո քիրն էկավ»:

էտոնք էլ իրեք ախպեր էին.

Հստոնց անուններն՝ մեկինը Մենով Հովան,

Մեկինը Թեվաթորոս, մեկալինը Ցոան Վեդկեն»:

(էջ 333—334, տող 340—350)

2. Դավթը Մելիքի դեմ կռիվ գնալուց առաջ ոչ թե իր
հոր Կաթնաղբյուրում է լողանում և հզորանում, այլ հան-
դիպում է բարակ, բայց զորեղ առվին, ինչպես Սանասարը և
Բաղդասարը:

«Դավթ զնաց, կայնավ մե գետի ափ.

Տեսավ, որ էն մի յանհն մե պստի աղբուր կեր,

Աղբրի ջուր կը եր, մեծ գետի ջուր կը կտրեր,

Կանցներ էս զրաղ ու կը խառնվեր ի մեջ գետի ջրին»:

(էջ 341, տող 590)

Ինչպես պարզ երևում է, երկու մոտիվ խառնվել են
իրար—մեծ գետը կտրողը ոչ թե բարակ առուն է, այլ՝ աղ-
բյուրի ջուրը, աղբյուր, որն իր մեջ պահում է Մհերի Կաթ-
նաղբյուրի հիշողությունը:

Հիշողություններ կան նաև երրորդ ճյուղի այն միջադեպերից, որոնք չկան հիշյալ պատումներում:

3. Պառավը Դավթին նախատում է իր կորեկի արտում որս անելու համար և, ինչպես շատ այլ պատումներում, հայտնում նրան նրա հոր որսասարի մասին:

«Պառավն ասաց.— Դուրբան, հեյրան,
էսիկ տեղ ինչ կա, որ քեռիքիդ մոտ կը մնաս էս սարհր
Գնա էնա սար, քո խոր ավլադ,
Ավ կա, ջին-ջանավար կա, զարկիր, սպանիր»:
(էջ 338, տող 500—510)

Հոր որսասարի մասին պահպանված հիշողություն է միայն, որ մնացել է Պառավի ուղղակի խոսքի մեջ, իսկ հաջորդող միջադեպերը (Դավթի որսասար գնալը, բանտված գաղաններին արձակելը, հոր գերեզմանից բխող լույսը տեսնելը, վանքը վերաշինելը) ընկել են:

4. Մսրա Մելիքի մոր երազը հիշողություն է վեպի շատ պատումներում հանդես եկող Մսրա խաթունի ավարտված կերպարի: Ինչպես նաև այն, որ նա զգուշացնում է որդուն չգնալ Սասնա վրա կռիվ, ծանոթ է Սասնա ուժին:

«Ասաց.— Թե դու գիմ ծծի կաթին անկաջ կ'անես, շնա էթա:

Սասում գինք պստիկ ա, ամմա հոքմը շատ ա»:

(էջ 339, տող 530)

5. Մելիքի հարկահանության միջադեպը չկա ո՛չ հոր, ո՛չ որդու պատումում: Մելիքի պահանջը ոչ թե յոթ տարվա խարջն է Սասունից, այլ՝ Դավթի գլուխը կամ քառսուն կույս աղջիկ:

Սակայն, յոթ տարվա հարկի մասին մի հիշատակություն կա պահպանված բոլորովին մի այլ տեղում և բոլորովին այլ առիթով: Դավիթը, լսելով աշուղի գովքը Խանդութի մասին, հավաքել է տալիս Մսրա յոթ տարվա խարջը, ուղարկում Խանդութին նվեր:

«Երկու հատ նոքար խեծըցրեց —

Յոթ տարվա Մսրա խարջը չէր ժողվե հալա —

Ժողվեցին, բերին եկան:

Տվեց, մե դաստմալ լի տվեց աշըղին.

Աշըղն ընկավ ճամբախ»:

(էջ 380, տող 870—880)

Այս և նման հետքերը հուշում են այս պատումի հիմն ոչ նախնական տեսքի, ապա նրա կապի մասին նախնական, ավանդական պատումների հետ, կապ, որը ժամանակի և վեպի տեղաշարժի պատճառով մթազնվել է, թուլացել:

Վեպը Վանի վրայով XIX դարի սկզբներին անցել է Պարսկահայաստան, Մակվա շրջան, չորս ազգակից սերունդների միջոցով ասլրել մեկ դար: Չնայած նրա այս մեկդարյա կյանքին, այն չի դարձել Մակվա տարբերակ, այլ մնում է Վանա տարբերակ: Վանա այս տարբերակը դեռևս վանեցի Հովհաննեսի մոտ բավական հեռու է եղել Մուշ—Սասուն—Մոկս տարբերակներից: Վեպն արդեն տարրալուծված է եղել և շատ բան կորցրած: Մեծ Մհերի կերպարը զրկվել է իր ողջ վեհությունից ու դերից, խառնվել են երկրները, կորել է Սասնա տան ու ծռերի՝ սերնդի հասկացությունը (օջախ-ժառանգ), թուլացել է պայքարի ու հաղթանակի գաղափարը: Վեպի այս տարրալուծման ընթացքը խորացել է հաջորդող երեք սերունդների մոտ, և չորրորդ սերնդի պատումն արդեն վեպ չէ, այլ՝ պատմա-աշխարհագրական որոշակիությունից հեռացող և ընդհանուր հեքիաթային ժանրին մոտեցող մի միջին որակ:

Ուրեմն՝ Պարսկահայաստան տեղափոխությունը ևս ոչինչ չի ավելացրել վեպին: Ավելին, վեպն իր այդ տեղափոխությունից միայն տուժել է: Այս դեպքում նույնպես վեպի տեղաշարժը աշխարհագրական հասկացություն է:

Հայ ժողովրդական վեպն իր էությունը է համազգային և ո՛չ իր տարածական ընդգրկմամբ: Եվ իր էությամբ համազգային լինելով հանդերձ, վեպն իր ընդգրկմամբ կարող է մնալ տեղային: Ուրիշ բան, որ այդ տեղային հասկացու-

թյունը շատ էլ նեղ չէ, ընդգրկում է Արևմտյան Հայաստանի շատ դավառներ: Բայց եղել են նաև բանահյուսական ավանդույթներով հարուստ էրզրում, Բասեն, Կարս, Շիրակ, Արարատյան դաշտավայր, Սյունիք, Արցախ, որոնց դերը պատմական և մշակութային իմաստով պակաս չի եղել Մուշից, Սասունից, Վասպուրականից: Սակայն, դրանք ոչ վեպն են յուրացրել, տեղայնացրել, ոչ էլ նման մի վեպ ստեղծել. համենայն դեպս, մեզ այդ մասին վկայություններ չեն հասել:

1890 թ. ամռանը Մ. Աբեղյանը վեպը գտնելու հույսով շրջում է Նախիջևանի Աստապատ գյուղում, Երնջակի մի քանի գյուղերում՝ Փորադաշտ, Նորս, ապա գնում Հին Զուղա, Ազա, Ագուլիս, Քաղաքիկ, կարծելով, թե հին Գողթան վիպասանների սերունդներ կգտնի այնտեղ: Անցնում է Մեղրի, Ղափանի մի քանի գյուղերը, լինում Հալիձորում՝ հույս ունենալով, թե քաջերի համբավ վայելող այդ վայրերում կգտնի հայ ժողովրդական վեպը: Բայց ոչ մի տեղ դրա հետքը չի գտնում¹:

Երբ վեպը պատմելու տվյալ վայրում գտնում է համապատասխան հող և արմատ գցում, երբ առաջին պատմողից անցնում է տեղացիներին և փոխանցվում սերնդից-սերունդ, երբ հիմնականում պահելով իր նախկին կերպարանքը, դառնում է այդ վայրի, ազգագրական այդ գոտու սեփական հոգևոր մշակույթը, այդ դեպքում միայն կարող է խոսք լինել տեղայնացման մասին: Վեպի Արարատյան դաշտավայրում, Ապարանում, Պարսկահայաստանում գրառված պատումները նման տեղայնացման օրինակներ չեն. դրանք արևմտահայ հատվածի հետ աշխարհագրորեն անցել են Արևելյան Հայաստան:

¹ Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Ա, էջ 533:

ՎԵՊԻ ՃՅՈՒՂԵՐԸ

Վեպը կազմված է չորս ճյուղից: Ճյուղ հասկացությունը վեպում նշանակում է սյուժետային ամբողջություն, մի սերնդի հետ կապված վիպական ավարտված պատմություն: Վեպը «ոչ թե կենտրոնանում է մի եղելության շուրջ, այլ բաժանված է երեք-չորս, երբեմն և ավելի սերունդների մեջ, որոնցից յուրաքանչյուրի վրա պատմվում են երկու-երեք վեպեր կամ տարբեր-տարբեր սյուժետներ: «Սասնա ծռերն», ուրեմն, կազմված է բազմաթիվ վեպերից, որ ասացողներն անվանում են «ճուղ»¹: Այս բազմաթիվ վեպերը և տարբեր սյուժեները «Սասնա ծռերի» մինչև այժմ գրաված պատումներում պատմվում են չորս ազգակից սերնդի շուրջ՝ 1. Սանասար և Բաղդասար (երկվորյակ եղբայրներ), 2. Մեծ Մհեր (Սանասարի որդին), 3. Դավիթ (Մեծ Մհերի որդին), 4. Փոքր Մհեր (Դավթի որդին): Բացի հիշյալ չորս ճյուղից, գրանումներում վեպի այլ սերունդ կամ ճյուղ գոյություն չունի:

Վեպի ճյուղերի քննությունը, որպես բանագիտական առանձին խնդիր, ունի հետևյալ հիմունքը. նախ՝ վեպի պատումների ճյուղային տարբեր ընդգրկումը. երկրորդ՝ ասացողների և բանահավաքների վերաբերմունքը ճյուղերի քանակի նկատմամբ:

Վեպի առաջին («Սանասար և Բաղդասար») և երրորդ («Դավիթ») ճյուղերն ըստ պատումների պատմվել են և՛ առանձին, և՛ մյուսների հետ մի ամբողջության մեջ, իսկ երկրորդ («Մեծ Մհեր») և չորրորդ («Փոքր Մհեր») ճյուղերը

¹ Մ. Աբեղյան, Երկեր, հատ., Ա, էջ 466:

գրատումներում առանձին չեն հանդիպում, միշտ հանդես են գալիս մյուսների հետ միասին: Ճյուղերի միացությունները մի քանի տարատեսակներ ունեն.

ա. առաջին-երկրորդ-երրորդ-չորրորդ,

բ. առաջին-երկրորդ-երրորդ,

գ. առաջին-երրորդ-չորրորդ,

դ. երկրորդ-երրորդ-չորրորդ,

ե. երկրորդ-երրորդ,

զ. երրորդ-չորրորդ:

Եվ առաջին ճյուղը, մյուսներից բոլորովին անկախ, որ հանդիպում է միայն հինգ պատումներում (տե՛ս Տախտ. 2): Դավթի ճյուղն անդամ այսպիսի անկախ տեսք չունի, չնայած համառոտ և ուրվագծորեն, այնուամենայնիվ, նրան միշտ նախորդում կամ հաջորդում են Մեծ և Փոքր Մհերները, առաջինը որպես Դավթի ծնող, երկրորդը՝ ժառանգ: Այսպիսի դեպքերում, որը գերակշռող է պատումներում, Մհերները ճյուղ ըմբռնման ամբողջականութունը չունեն. այս բանը ճյուղային տախտակի վրա արտահայտված է փակագծերով:

Առկա պատումները մեկ այլ ճյուղի գոյության հիմք չեն տալիս: Այս փաստն ընդունելով որպես հլակետ, քննվում են այն բոլոր վկայությունները, որոնք վերաբերում են ճյուղերի քանակին:

Որոշ ասացողների վկայությամբ՝ վեպի ճյուղերի թիվը եղել է յոթ, նույնիսկ՝ քառասուն: Ռենչպես երևում է, այս նշանավոր վեպը մեծ ընդարձակութուն ունի և չէ ամփոփվում հրեք ծնունդի՝ Աբամելիքի, Դավթի և Մհերի պատմությամբ, այլ Սասնու տերերի ցեղի պատմությունն է դա, Աբամելիքից և Սանասարից սկսած մինչև անժառանգ և անմահ Մհերը, որով վերջանում է վեպը: Դավթից ոչ թե Աբամելիքի որդին է հանդիսանում, այլ՝ նրա սերունդ պայազատներից մեկը, և պատմողի ասելով, 39-րդ զարմը, որովհետև Աբամելիքից մինչև Մհեր ֆառասուն զարմ են և ունին իրենց ֆառասուն ճյուղ առանձին պատմությունը, որ քառասուն դիշեր կը նստեն և կը պատմեն»¹:

¹ «Սասնա ծռեր», հատ. Ա, էջ 3 (ընդգծումները մերն են—Ա. Ս.):

Ոչ միայն փնտրել, գտնել, վերականգնել, այլև այժմյան տվյալներով անհնար է ենթադրել անգամ, թե ինչ են պատմել այդ քառասուն գիշերների ընթացքում, և ինչ են իրենցից ներկայացրել այդ քառասուն ճյուղերը: Ասացողները և ունկրնդիրները ի՞նչ են համարել քառասուն ճյուղ:

Վեցերորդ պատումի ասացող Հովակիմենց Ղազարի մասին գրառող Ա. Աբեղյանը գրում է. «Ղազարն այս «Նաղըլը» սովորել է յուր համագյուղացի Պողոս անունով մեկից: Ղազարի ասելով՝ այդ Պողոսը գիտեր այս նաղըլի յոթ ճյուղն էլ, այն ևս՝ լավ»¹: 7-րդ պատումի ասացող Մոկացի Սախոն (բանահավաք՝ Սարգիս Հայկունի) ասում է, որ վեպը սովորել է իր պապ Պողոսից, որը «Դավթի յոթ ճյուղն խիստ մեծ հաջողությամբ կասեր»²: Հովակիմենց Ղազարը և Մոկացի Սախոն համագյուղացիներ են, Մոկաց Առինջ գյուղից: Ամինայն հավանականությամբ, Ղազարի վկայած Պողոսը Սախոյի պապ Պողոսն է: Սախոն վկայում է նաև, որ իր հորեղբայրը, այսինքն՝ Պողոսի որդին, նույնպես պատմում էր վեպը և սովորել էր հորից: Ուրեմն, երեք ասացող նշում են միևնույն աղբյուրը՝ Պողոսը, որից լսել և սովորել են վեպը: Սակայն, այս շորս ասացողները պատմել են վեպը ճյուղային տարբեր ընդգրկմամբ—Պողոս՝ յոթ ճյուղ, Պողոսի որդի՝ շորս ճյուղ, Ղազար՝ երեք ճյուղ, Սախո՝ մեկ ճյուղ: Փաստորեն, Պողոսի աշակերտ երեք ասացողներն էլ պատմում են ավելի քիչ, քան լսել են: Ղազարից գրաված է (Մհեր)—Դավիթ—Մհեր ճյուղերը, Սախոյից՝ Սանասար և Բաղդասար: Պողոսի պատումի մասին կարող ենք մոտավոր պատկերացում կազմել՝ միացնելով այս երկու, տարբեր ասացողներից գրաված պատումները: Սա միաժամանակ այն շորս ճյուղն է, որ պատմել է Սախոյի հորեղբայրը և որը բնորոշ է Մոկաց բոլոր ամբողջական պատումներին:

Ի՞նչ բովանդակություն և տեսք են ունեցել Պողոսի պատմած մյուս երեք ճյուղերը: «Սախոն Դավթի ցեղեն և

¹ Նույն տեղում, էջ 249:

² Նույն տեղում, էջ 305:

Ճյուղերեն կը համարեն «Բալաք աշառ», «Շիրին շահ ու Բարակ շահ», որ մենք այլ վեպերու շարքը դասած ենք»¹։ 8-րդ պատումի ասացող Մոկացի վարդանը (գրառող՝ Ս. Հայկունի), շնայած պատմում է (Մհեր) — Դավիթ — Մհեր ճյուղերը, բայց և «որպես Սանասար և Բաղդասար պատմող Սախոն՝ Դավթի պորտերեն կը համարեն. 1. Սանասար և Բաղդասար, 2. Դավիթ և Մելիք, 3. Մհեր, 4. Սաֆար փաշեն, 5. Սամ, 6. Բալաք աշառ, 7. Շիրին շահ և Բարակ շահ։ Վերոհիշյալները բացի «Սամեն» ամբողջն ևս գրի առած են»²։ Այս վերջին երեքը, եթե ոչ ամենուր, ապա գոնե Մոկսում, հավանաբար շատ տարածված և սիրված են եղել։ Հայտնի են դրանց բաղմաթիվ գրառումներ, որպես առանձին վեպեր։ Դրանց մասին մի այլ առիթով հիշատակում է նաև 2-րդ պատումի ասացող Խապոյենց Զատիկը։ Այս պատումի գրառող Բագրատ Խալաթյանը գրում է. «Մհերի գետի վրա կամուրջ կապելը և ճանապարհորդներին արգելք լինելը (ինչպես պատմել է Նախոն) Զատիկի ասելով՝ ուրիշ «նաղըլի» է պատկանում, որը երեք ճյուղից է բաղկացած՝ ա. Բարակ Շախ, բ. Շիրին Շախ և գ. Դյուլուն Շախ (երեքն էլ մենք գրի առած ունենք)³։ Ուրեմն, մի այլ վիպասացի՝ Խապոյենց Զատիկին, նույնպես հայտնի են եղել այս «ճյուղերը», բայց դրանք նա համարել է ուրիշ «նաղըլ»։

Հնարավոր է, որ Պողոսի պատմած յոթ ճյուղի մեջ մեզ հայտնի չորս ճյուղի հետ միասին մտել է նաև այս երեք ճյուղը՝ Բարակ Շահ, Շիրին Շահ և Դյուլուն Շահ։ Հնարավոր է, որ հարակից կամ վիպական հանգունատիպ զրույցներն ու հեքիաթները մի տաղանդավոր ասացող-հանպատրաստից հնարողի մոտ միացվեն նշված չորս ճյուղերին, հարմարեցվեն սյուժետային հիմնական գծին և պատմվեն որպես մի ամբողջականություն, մանավանդ որ վեպը հակված է ներառելու հարակից վիպական զրույցներ։

¹ «Սասնա ծռեր», հատ. Ա, էջ 305։

² Նույն տեղում, էջ 329։

³ Բ. Խալաթյան, Սասնա փահլիվաններ..., էջ 51—52 (տե՛ս ծանոթությունը)։

Պատումների մեծ մասն ունի ողորմիս-նախերգանք, որի մեջ ողորմի է տրվում Սասնա տան բոլոր ներկայացուցիչներին՝ Սանասարից Փոքր Մհեր (հաճախ նաև կանանց)։ Ողորմիսները ևս տարբեր ընդգրկում ունեն։ Հիշվում են նաև քեռիներ և հորեղբայրներ, մայրական պապ, քահանա։ Ողորմիս-նախերգանքները երգեր են, վեպի երգվող հատվածներից, որոնք որոշ պատումներում մեղեդին պահել են և երգվում են, մյուսներում էլ ասվում են առանց մեղեդու։ Երգվող հատվածները վեպի ամենահաստատուն և փոփոխության քիչ ենթարկվող մասերն են։ Եթե եղել են քառասուն զարմ իրենց քառասուն ճյուղ պատմությամբ, ապա ինչո՞ւ ողորմիսները չեն պահել գոնե նրանց անվան հիշատակությունը։ Կան պատումներ, որոնք ունեն միայն մեկ կամ երկու ճյուղ, բայց իրենց ողորմիսում պահում են բոլոր սերունդների անունների հիշատակությունը։ Անունների հիշատակության հաջորդականությունը խիստ ավանդական է և նշանակում է սերունդների հաջորդականություն։ Ողորմիսները տալիս են Սասնա տան տոհմաժառը, ծննդաբանությունը։ Անունների ու նրանց հաջորդական կարգի ավանդականությունն ապացույց է չորս ճյուղի գոյության և ո՛չ ավելի։

Սրվանձտյանի գրառած առաջին պատումը ողորմիս-նախերգանք չունի։ Երբ Աբեղյանը գրի առավ երկրորդ պատումն իր ողորմիսով և որոշակի տարբերություններով, առաջ եկավ այդ պատումները համադրելու պահանջը։ Աբեղյանը նկատեց, որ նոր պատումը «լրացնում է Սրվանձտյանցի հրատարակածի թերի կողմերը... և փոխել տալիս վեպի ծավալի մասին մինչ այդ եղած հայացքը։ Երևաց, որ վեպը, կազմված լինելով բազմաթիվ «ճյուղերից», ավելի ընդարձակ է, քան կարծում էին»¹։

Բացի այն, որ երկրորդ պատումում կային հավելյալ հատվածներ և կերպարներ, ողորմիսում հիշատակվում էին երկու բոլորովին անծանոթ անուններ՝ Բաղդասար և Մելիք-

¹ Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Ա, էջ 525։

սեթ քահանա: Այդ անունների առկայությունը Աբամելիֆից և Սանասարից հետո և Դավթից առաջ ենթադրել էր տալիս, որ նրանք կամ առանձին ճյուղեր պիտի ունենան (ինչպես Աբամելիֆ և Սանասարը, Դավթը) կամ կենտրոնական կերպարներ պիտի լինեն, ինչպես նույն ողորմիսում հիշատակվող Ձենով Հովանը և Ցուան Վերդոն: Դրա համար էլ Աբեղյանն աստուծոյ է, որ ասացող Նախո Քեռին հրաժարվում է պատմել իր լավ շիմացած հատվածները, «թեպետև շատ ցանկալի էր, որ գոնե մի-մի կտորներ ևս Բաղդասարի և Մելիֆսեթ փահանայի ճյուղերից ունենային»¹:

Հետագա պատումները պարզեցին Բաղդասարի տեղը և դերը վեպում. նա առանձին ճյուղ չէր կազմում, նույնիսկ նոր կերպար էլ չէր, երկվորյակ եղբայրներից մեկն էր և որոշ պատումներում անունն էր միայն փոխվում: Իրականում նա Նախո Քեռու ողորմիսում հիշվող նույն Սանասարն է:

«Դառնամ զողորմին տը տամ Աբամելիֆին.

Դառնամ զողորմին տը տամ Սանասարին.

Դառնամ զողորմին տը տամ Բաղդասարին...»

(հատ. Ա, էջ 9, տող 10)

Աբամելիֆ, Սանասար, Բաղդասար երկվորյակ եղբայրների անուններն են: Որոշ պատումներում այդ անունները Աբամելիֆ և Սանասար է (Բաղդասար չկա), մյուսներում՝ Սանասար և Բաղդասար է (Աբամելիֆ չկա): Երկու եղբայր երեք անուն ունենալ չեն կարող: Նախո Քեռու ողորմիսում այդ երեք անունների մի հետաքրքիր և եզակի անգամ հանդիպող համադրություն է, որ ենթադրում է այլևայլ պատճառներ, բայց ոչ Բաղդասարի առանձին ճյուղի գոյություն: Միայն այժմ, երբ պատումների թիվը բավական շատ է, կարելի է դրանց համեմատությամբ ժխտել Բաղդասարի, ինչպես նաև Մելիֆսեթ քահանայի ճյուղերի գոյությունը: Այն ժամանակ, երբ պատումները միայն երկուսն էին, Աբեղյանի ենթադրությունը տեղին էր:

¹ «Սասնա ծռեր», հատ. Ա, էջ 4 (ընդգծումը մերն է—Ա. Ս.):

Ամենայն հավանականությամբ, Մելիքսեթը խաչապաշտ աղջկան կռապաշտ թագավորի տուն ուղեկցող քահանան է: Գուցե նրա դերը երբևէ ավելի կարևոր է եղել, ավելի մեծ տեղ է գրավել վեպում, մանավանդ որ նա անմիջականորեն առնչվում է առաջին ճյուղի հիմնական գաղափարներից մեկի՝ կրոնական հակամարտության, հետ և հանդես գալիս որպես անհրաժեշտ մեկը կռապաշտ շրջապատում քրիստոնեության պահպանման, եղբայրներին քրիստոնյա կնքելու և կրթելու գործում: Երևի հետզհետե նվազել է այդ դերը ճիշտ այնպես, ինչպես որոշ պատումներում բոլորովին դուրս է մնացել:

Աբեղյանի գրառած պատումի տպագրությունից երեք տարի հետո, 1892 թ., Թիֆլիսում հրատարակվում են Գարեգին Հովսեփյանի գրառած մի քանի տարբերակները «Սասնա ծռեր» ընդհանուր խորագրով: Չնայած այդ գրքում զետեղված էին շորս պատումներ, որոնք տողատակերին ուղեկցվում էին մի քանի այլ պատումներից քաղված հատվածներով¹, Հովսեփյանը դրանք խմբավորել է «երկու նոր վա-

¹ Նշված շորս պատումներից երկուսը՝ Ապարանցի Մուրադի և Մոկացի Հովանի, տողատակերին ունեն Ա և Բ համարակալումներով տարբերակներ, որոնք Հովսեփյանը գրառել է բոլորովին այլ ասացողներից: «Մեր վարիանտներից մեկը գրած ենք Ապարանի Չամբուլու գյուղում, պատմել է մեզ նույն գյուղի ժամհար Մուրադը. այդ վարիանտի հետ համեմատել ենք երկու ուրիշ վարիանտ (Ա-ը՝ Ափնա և Բ-ը՝ Ղազանֆար գյուղում ենք գրել), նշանակելով միայն այն մասերը, որ Չամբուլի վարիանտում չկան կամ տարբեր են պատմված» (Գ. Հովսեփյան, «Սասնա ծռեր», էջ Ը—Թ, ընդգործումները մերն են—Ա. Ս.): Ապարանցի Մուրադի պատումի տողատակերում, բացի Ա և Բ պատումներից (Ափնա և Ղազանֆար գյուղերում գրառած), կա նաև այսպիսի մի հիշատակություն. «Մի պանդուխտ Սպարկերտցու ասելով՝ Խանդութի հայրենիքը «Բերդ Կապոտին» էր կոչվում: Մի քանի տող հետո նորից հիշվում է սպարկերտցու անունը. «Սպարկերտցին շար Աստղիկ էր անվանում» (նույն տեղում, էջ 40 և 56): Ուրեմն, մի այլ տարբերակ Հովսեփյանին պատմել է նաև մի սպարկերտցի: Մոկացի Հովանի պատումը ևս ուղեկցվում է Ա և Բ պատումներից տողատակերին բերվող հատվածներով: Սրանց ասացողների մասին ոչ մի հիշատակություն չկա: Առաջին հրատարակության ժամանակ, դանադան պատճառներով Հովսեփյանը հարկ չի համարել առանձին-առանձին զետեղել այդ պատումները. հիմա դրանցից կան միայն որոշ հատվածներ:

րիանտ» անվան տակ՝ նկատի ունենալով, որ Սրվանձտյանի պատումը «Մշո վարիանտ» է, իսկ Աբեղյանինը՝ «Մոկաց վարիանտ»։ «Այդ հայտնի վարիանտներին են պատկանում նաև մեր գրած երկու նոր վարիանտները, Ապարանի բարբառովը՝ Մշո վարիանտին (Սրվանձտյանի), իսկ Մոկաց բարբառովը՝ Մոկաց վարիանտին (Աբեղյանի)»¹։ Այդ պատումներն են՝ Ապարանցի Մուրադ, Մի Մոկացի, Մի ուրիշ Մոկացի և Մոկացի Հովան ասացողներից² գրառածները։ Ապարանցի Մուրադի պատումը Հովսեփյանն իրավացիորեն համարում է Մշո տարբերակ, որովհետև Ապարանի բնակիչները գաղթել են Մշո դաշտավայրից և Բուլանըխից։

Սրվանձտյանի պատումն ուներ երեք ճյուղ՝ 1. Աբամելիք, 2. Դավիթ, 3. Մհեր, Աբեղյանի պատումը՝ երկու ճյուղ,

¹ Գ. Հովսեփյան, Սասմա ծոեր, էջ Ը։

² Ընդհանրապես, Հովսեփյանը մանրամասն տեղեկություններ չի հաղորդում վիպասացների, գրառման ժամանակի, վայրի և պայմանների մասին, տեղեկություններ, որոնք այնքան կարևոր են դանազան հարցեր պարզաբանելու համար։ «Մի Մոկացի», «Մի ուրիշ Մոկացի», «Այս կտորը երգում էր Մոկացի Հովանը՝ վարիանտիս պատմողը».— այսքանը միայն ասացողների մասին։ Հովսեփյանն իր գրառած «Ռոստամ Զալ» ժողովրդական վեպի վերջում (Թիֆլիս, 1905) տեղեկություններ է հաղորդում վեպիս ասացողի մասին. «Ռոստամ Զալը» գրի ենք առել 1890 թվին, Մայր Աթոռի ճեմարանում։ Այդ տարին գիշերապահության պաշտոն էր կատարում Մոկաց նորավանց գյուղացի Ուստենց Հովանը, ժողովրդական բանահյուսության մի կենդանի շտեմարան։ «Փշրանքների նյութի մի մասը... նորանից էնր գրի առել նաև Ռոստամ Զալը։ Հովանը դարմանալի ընդունակություններ պատմելու համար։ Հեռու ավելորդաբանությունից, համառոտ և կենդանի լեզվով։ Նա կլինեիր մոտավորապես հիւսուն տարեկան. կաղ էր, այդ պատճառով էլ շատերի կողմից «Կաղ Հովան» կոչված, բայց սրտոտ և կտրիճ։ Կարդալ և գրել չգիտեր, բայց յուր պանդուխտ հայրենակիցների շրջանում համարվում էր որպես բանիմաց մարդ։ Մի քանի տարուց ի վեր վախճանված է արդեն յուր հայրենի գյուղում»։ Կարծում ենք, սա «Դավիթ և Մհեր» պատմող նույն Մոկացի Հովանն է։ «Փշրանքներում» Ավանդություններ բաժնի նյութերի առնչությամբ տալիս է որոշ տվյալներ. «Առաջինը պատմել է «Բաղդասարի» ճյուղը պատմող Մոկացին, իսկ երկրորդը՝ Մոկացի Հովանը, Մոկաց վարիանտի պատմողը... Այս երգը ասել է մեզ «Սանասարի և Բաղդասարի ծնունդը» պատմող Մոկացին»։

1. Դավիթ, 2. Մհեր և ողորմիսն երկու նոր անուններով (Բաղդասար և Մելիքսեթ քահանա)։ Կար նաև Աբեղյանի հնթադրությունը նոր ճյուղերի գոյության մասին։ Այն ժամանակ հատուկ հետաքրքրություն կար վեպի ամբողջական տեսքը վերականգնելու և նոր ճյուղեր հայտնաբերելու նկատմամբ։ Եվ ահա, Հովսեփյանը գրի է առնում Մշո մի նոր տարբերակ, որը մի ամբողջ ճյուղով ավել էր Սրվանձտյանի և Աբեղյանի պատումներից, ուներ շորս ճյուղ՝ Ասլիմելիք (իմա Աբամելիք) — Առյուծաձև Մհեր — Դավիթ — Մհեր։ Ավելացել էր Առյուծաձև Մհերի ճյուղը։ Ուրեմն՝ Մշո թեին պատկանող Ապարանցի Մուրադի պատումը եղածների մեջ ամենաամբողջականն էր։ Հովսեփյանն այս պատումի ընդհանուր վերնագիրը դրել է «Սասմա ծոեր» Ապարանի բարբառով։ Չորս ճյուղերը համարակալված են և առանձին-առանձին վերնագրված՝ Ա. Սանասար և Ասլիմելիք, Բ. Առյուծաձև Մհեր, Գ. Դավիթ, Դ. Պզտիկ Մհեր։

Ապարանցի Մուրադի պատումին հաջորդում է նորից «Սասմա ծոեր» ընդհանուր վերնագիրը, այս անգամ՝ Մոկաց բարբառով։ Սա նույնպես շորս ճյուղ է, իր առանձին համարակալումներով և վերնագրերով՝ Ա. Սանասարի և Բաղդասարի ծնունդը, Բ. Բաղդասար, Գ. Դավիթ, Դ. Մհեր։ Որպեսզի Մոկաց տարբերակը ևս ունենար շորս ճյուղից բաղկացած ամբողջական տեսք, Հովսեփյանը միացրել է երեք տարբերասացողներից (Մի Մոկացի, Մի ուրիշ Մոկացի և Մոկացի Հովան) գրառած պատումները և դրանք համարել մի տարբերակ։

«Սանասարի և Բաղդասարի ծնունդը» ճյուղի վերջում, տողատակին Հովսեփյանը գրում է. «Այս ճյուղը պատմել է մեզ տասնյակ տարի մեր կողմերում ապրած մի Մոկացի»¹։ «Բաղդասար» ճյուղի վերջում, նորից տողատակին գրում է. «Այս ճյուղը պատմել է մի ուրիշ Մոկացի... Բացի սուրանից այդ Մոկացին պատմել է և Դավթի, և Մհերի մասին, բայց մեծ նմանություն ունենալով հետևյալ ճյուղի հետ (իմա

¹ Դ. Հովսեփյան, Սասմա ծոեր, էջ 67։

Մոկացի Հովանի պատում—Ա. Ս.), ավելորդ համարեցին՝
այստեղ զետեղել»¹:

Ուրեմն՝ Հովսեփյանը այս «Բաղդասար» կոչվող ճյուղը
հանել է մի պատումից, որն ունեցել է և՛ Սանասար և Բաղ-
դասար, և՛ հաջորդող Դավիթ, Փոքր Մհեր ճյուղերը: Եթե չի-
նիր էլ բանահավաքի վերոհիշյալ վկայությունը, հենց «Բաղ-
դասար» ճյուղից առանձին վերցրած երևում է, որ այն ար-
հեստականորեն կրճատված է սկզբից և վերջից: Պատումն
սկսվում է անսպասելիորեն. ողորմիսին անմիջապես հաջոր-
դում է Սանասարի և Բաղդասարի բերդաշինության միջա-
դեպը.

«Վարդապիտ Սանասար, Բաղդասար առից,
էկավ, մե սարի մեջ բնակվավ...»:

(հատ. Ա, էջ 141, տող 10)

Բացի սրանից, ուրիշ ոչ մի պատում չունենք, որ սկսվի
այս միջադեպով: Պետք է ենթադրել, որ սրան նախորդել է
այն մասը, որ դրված է Ա համարի տակ «Սանասարի և Բաղ-
դասարի ծնունդը» վերնագրով: Բայց այս պատումը գրի է
առնված մի ուրիշ ասացողից: Իսկ վերջում պատումն ընդ-
հատել է այնտեղ, որտեղից նախընտրել է դնել Մոկացի
Հովանի պատումը: Նման ընտրության հետևանքը եղել է
այն, որ Մի ուրիշ Մոկացու պատումը կորցրել է իր նախ-
նական տեսքը:

Բանն այն է, որ «Սասնա ծռերի» Ա հատորում (1936 թ.)
այդ «Բաղդասար» հատվածը հանդես է գալիս որպես մի
առանձին պատում (№ 4): Եվ ստացվում է այն տպավորու-
թյունը, որ դա անկախ պատում է և, որ ամենակարևորն է,
վկայի այդ հատվածը նույնպես առանձին գոյություն է ունե-
ցել և պատմվել ժողովրդի մեջ, այսինքն՝ միայն Բաղդասա-
րի ամուսնության միջադեպերը²: Իրականում այդ հատվածը

¹ Նույն տեղում, էջ 79 (ընդգծումը մերն է—Ա. Ս.):

² Այս իսկ պատճառով «Սասնա ծռերի» 1936 թ. հրատարակության մեջ
պատումը կրում է «Բաղդասարի ամուսնությունը» վերնագիրը:

նման տեսքով անհավանական է, որ պատմվեր. տրամա-
բանական չէ, որ ասացողը մի ուրիշից լսեր միայն այդ հատ-
վածը, կամ իր լսած ամբողջական վեպից մտապահեր միայն
այդքանը: Մյուսների հետ համեմատության ժամանակ պետք
է նկատի ունենալ այս պատումի սկզբից և վերջից կրճատ-
ված վիճակը:

Ինչո՞ւ Գ. Հովսեփյանը «Սանասարի և Բաղդասարի
ծնունդը» առաջին ճյուղից հետո դրել է «Բաղդասար» հատ-
վածը որպես առանձին, երկրորդ ճյուղ: Նախ՝ այդ երկու
ճյուղերը Սրվանձտյանի և Աբեղյանի պատումների համե-
մատությամբ նոր, ընդարձակ միջադեպեր շատ ունեին՝
կապված հատկապես եղբայրների ծննդի և ամուսնության
հետ: Երկրորդ՝ ենթադրվում էր, որ Բաղդասարը նոր կեր-
պար է և առանձին ճյուղ պիտի ունենա: Եվ երրորդ՝ Մոկաց
պատումներն ունեին երեք ճյուղ, Մեծ Մհերը կամ բոլորովին
չկար (ինչպես նախո Բեռու պատումը, որտեղ նրա անվան հի-
շատակությունն անգամ պահված չէ), կամ էլ ամբողջական
ճյուղի տեսք չուներ և միացած էր Դավթի ճյուղին (ինչպես
Մոկացի Հովանի մոտ է): Որպեսզի Մոկաց տարբերակը ևս
Մշո տարբերակի նման ունենար շորս ճյուղ, Բաղդասարն
զբաղեցրել է առանձին ճյուղ: Սրան նպաստել է նաև մի այլ
հանգամանք:

Պատումների հետ առաջին ծանոթությունից ստացվում
է այն տպավորությունը, որ վեպում կերպարների, սրանց
անունների և տեղերի շփոթ կա: Այդ թվացող շփոթն իր հիմ-
քերն ունի, անշուշտ, բայց բոլոր տարբերակների համա-
դրումն ու համեմատությունը յուրաքանչյուր կերպար դնում
է իր տեղում, իր որոշակի դերով:

Երկվորյակ եղբայրները վեպի պատումներում հանդես
են գալիս երկու կարգի անուններով: Մշո թևում՝ Աբամելիք
և Սանասար, Մոկաց թևում՝ Սանասար և Բաղդասար: Եղ-
բայրներից մեկը թե՛ ֆիզիկական, թե՛ բնավորության և թե՛
մտավոր կարողություններով ավելի կատարյալ է, քան մյու-
սը: Ասացողների բնորոշմամբ՝ մեկը լիքը բուռ ջուր է,

մյուսը՝ կիսատ: Այս երկու եղբայրների կերպարները կարե-
վոր են իրենց միասնության մեջ. սա երկվորյակ եղբայրների
վիպական մոտիվն է: Սրանց դերը պատումներում միշտ
մնում է անփոփոխ, այսինքն՝ մեկը միշտ կատարյալ է, մյու-
սը՝ միշտ մի քիչ ծուռ: Բայց երբեմն փոխվում են սրանց
անունները: Սա շատ քիչ է պատահում, բայց պատահել է
հենց Հովսեփյանի գրառած հիշյալ «Բաղդասար» հատվածում:
Եթե մեծ մասամբ Սանասարն է կատարյալը, Բաղդասարը՝
ծուռը, այս հատվածում հակառակն է—Բաղդասարն է մեծ
եղբայրը և կատարյալը: Անունների այսպիսի մի պատահա-
կան տեղափոխությունը Հովսեփյանին հիմք է տվել Բաղդա-
սարի ամուսնության միջադեպերն առանձնացնելու որպես
ճյուղ: Հովսեփյանը չի նկատել, որ եղբայրներից մեկի դերի
առաջնայնության իմաստով, իր միացրած երկու պատում-
ները հակասության մեջ են. «Սանասարի և Բաղդասարի
ծնունդը» պատումում առաջնայնությունը Սանասարինն է, իսկ
«Բաղդասար» հատվածում առաջնայնությունը Բաղդասարինն
է: Այդ հակասությունը նկատվում է նաև հենց իր՝ «Բաղդա-
սար» հատվածի ներսում: Մի առիթով արդեն նշել ենք, որ
ողորմիս-նախերգանքներում անունների թվարկման հաջոր-
դականությունը նշանակում է սերնդաբանություն, իսկ եղ-
բայրների դեպքում՝ կերպարի առաջնայնություն, ավագու-
թյուն: Եթե ողորմիսում հիշվում է Սանասար, հետո Բաղդա-
սար, ուրեմն ավագության և առաջնայնության իրավունքը
Սանասարինն է: «Բաղդասար» հատվածի ողորմիսն ունի այս-
պիսի հաջորդականություն.

«Ողորմի տը տամ՝ ողորմի էն Վարդապետին.

Ողորմի տը տամ՝ ողորմի էն Սանասարին.

Ողորմի տը տամ՝ ողորմի էն Բաղդասարին...»:

(հատ. Ա, էջ 141, տող 10)

Ուրեմն՝ ավագը Սանասարն է: Սյուժեում նույնպես անուն-
ների հաջորդականությունը արտահայտում է նույն իմաստը.
եթե պատումը ողորմիս չունի, այդ հաջորդականությունը երե-
վում է սյուժեի ավանդական կարգից:

«Մեկի անուն դրից Սանասար,
Մեկին՝ Բաղդասար...»:

Ուրեմն՝ Սանասարն է ավագ հղբայրը: «Բաղդասար» հատվածի սյուժեում, ինչպես և ողորմիսում, անվան առաջնությունը Սանասարինն է.

«Վարդապիտ Սանասար, Բաղդասար առից,
էկավ, մե սարի մեջ բնակվավ:
Սանասար զնաց հարեվելի կողմ քար բիրիլու,
Բաղդասար՝ հարեվմտյան:
Սանասար զԲաղդասարի պատ քակից,
Բաղդասար՝ Սանասարի...
Սանասար ասաց.

— Հա՛յր սուրբ, մի՛ր տան անուն ի՞նչ տը դնինք...

Վարդապիտն էր, Սանասարն էր, Բաղդասարն էր...»:


(Հատ. Ա, էջ 141—142, տող 10—20—30)

Ինչպես հրեում է մեջ բերված հատվածներից, անվան, հետևապես և դերի առաջնությունը Սանասարինն է: Բայց Պղնձե քաղաքի թագավորի աղջկա նամակից սկսած՝ Բաղդասարն է ստանձնում առաջնային դերը, Սանասարին մնում է ծուռ և փոքր հղբոր դերը: Բաղդասարին է ուղղված աղջկա նամակը, նա է այդ նույն աղջկա կախարդանքը վերացնողը և նրա հետ ամուսնացողը, այսինքն այն, ինչ մյուս պատումներում կապվում է Սանասարի հետ: Այս պատումի մի դրվագում կա այսպիսի հակասություն: Պղնձե քաղաքի աղջկա նամակաբերները չեն կարողանում ջոկել հրեում հղբայրներից Բաղդասարին, որին հասցեագրված էր նամակը, և թուղթը դցում են այն տղայի անկողնու վրա, որը մյուսից տասնապատիկ ավելի գեղեցիկ էր: Եվ այդ «տասնապատիկ աղեկ» տղան ո՛չ թե Բաղդասարն է, այլ Սանասարը, որը փոքր հղբայրն է և ավելի կատարյալ շախտի լինելու իր մեծ հղբորից:

Անունների շփոթությունն, հրեի, առաջացել է այն բանից. որ Պղնձե քաղաքի աղջիկն իսկապես նամակը գրում է Բաղդասարի անունով, բայց ոչ որպես իր փեսացուի, այլ՝ տագ-







րոջ, որ դա, իրեն տանի Սանասարին կին: Այսպես է Մոկացի Սախոյի պատումում (№ 7).

«— Քամի՛, նա թուղթ կը տանըս,
Կը տաս իմ տեղը Բաղդասարըն,
Գա, ձը տանը Սանասարըն...»:

(Հատ. Ա, էջ 319, տող 370)

Գուցե նման մի դրվագ հայտնի է եղել նաև «Բաղդասար» հատվածի ասացողին, որը և շփոթության պատճառ է դարձել: Ուրեմն, «Բաղդասար» հատվածը ոչ միայն առանձին ճյուղ չէ, այլև Բաղդասարի առանձին և առաջնային կերպարի գոյության ասացույց չէ: Վեպի քառասունյոթ տարբերակներից միայն հինգը ունեն «Սանասար և Բաղդասարի» առանձին, անկախ ճյուղ. և այդ հինգից մեկը այս «Բաղդասար» հատվածն է, որը Գ. Հովսեփյանի խմբագրական մասնատման հետևանքով լիարժեք տարբերակ էլ չէ: Միևնույն ժամանակ, միայն այս հատվածն է, որ ներկայացնում է Բաղդասարը որպես առանձին ճյուղ: Հենց այս և մյուս պատումներն ասացուցում են, որ Բաղդասարը Սանասարի հետ միասին կարող էր հանդես գալ և իր առանձին ճյուղն ունենալ չէր կարող:

Մի հետաքրքիր հատված կա Մոկացի Հովանի պատումում: Բաղդատ քաղաքի անունն ստուգաբանվում է Բաղդասար անունով: Փոքր Մհերն իր թափառումների ճանապարհին ուղում է անպայման մտնել Բաղդադ. «Իմ խորոխպոր գերեզման,—էսաց,—գեո Բաղդատա քաղաքն (ինչ Բաղդասար Պղնձե քաղքեն էկիր էր, կեացիր էր էնգեղ մեռիր էր. քաղաք շինիր էր, անուն դրիր էր Բաղդատ, զինք Բաղդասար էր)»¹: Հովսեփյանն ուշադրություն է հրավիրում այս հատվածի վրա. «Այս և հետևյալ հատվածները ցույց են տալիս, որ Բաղդասարի ճյուղը շատ ավելի ընդարձակ պիտի լինի և պաամական ակնարկներով ավելի առատ»²: Հաջորդ երկու հատվածները

¹ Գ. Հովսեփյան, Սասմա ծոեր, էջ 143:

² Նույն տեղում, էջ 143, տե՛ս ծանոթությունը (ընդգծումը մերն է՝ Ա. Ս.):

հետևյալներն են. «Բաղդասար,—էսաց,—մի ազգեն ի, Սասման տնեն ի, էնու գերեզման քնձը շանք կտա՞ս»¹: «Բաղդասարը գերեզմանի վերա քեառսուն խորան ժամ շինեցին, անուն դրին սըփ Սարգիս (մկա էլ անուն սըփ Սարգիս ք)»²: Սրանք հետաքրքիր հատվածներ են, բայց ոչ այն բանի ապացույց, ինչի համար մատնանշում է Հովսեփյանը: Ավելի հավանական է, որ սա մի ստուգաբանական ավանդույթն է, որը կապվել է Բաղդասար անվան հետ, մանավանդ որ վերոհիշյալ հատվածները հանդիպում են միայն Մոկացի Հովանի պատումում և, միևնույն ժամանակ, կապվում նաև սուրբ Սարգսի անվան հետ:

«Ազգագրական հանդեսի» 20-րդ գրքում (1910 թ.) հրատարակված է վեպի պատումներից մեկը հետևյալ խորագրով. «Սասնա Տուն» յոթ ճյուղ (Վանա դավառաբարբառով): Այդ պատումն արտատպված է «Սասնա ծռեր» ժողովածուի Բ հատորի Բ մասում «Սասնա տուն» (Վանա դավառաբարբառով)» վերնագրով: Խմբագրությունն իրավացիորեն հանել է «յոթ ճյուղ» բառերը, որովհետև այդ պատումի ենթագրյալ յոթ ճյուղերը բոլորովին էլ նոր ճյուղեր չեն, ոչինչ չեն ավելացնում վեպին, իսկ հավելյալ հատվածներն ու անունները ոչ մի կապ չունեն վեպի հետ:

Պատումն սկսվում է Սանասար և Բաղդասար ճյուղով և ավարտվում Մհերի Ազռավու քարում փակվելով: Սյուժեում ավելացել է մի կերպար՝ Զոջ Մելքոն, որը ոչինչ նոր բան չունի իր մեջ: Նրա հետ կապված սյուժեն կազմված է Դավթի ճյուղի բազմիցս կրկնվող միջադեպերից: Պատմության ընթացքն արհեստականորեն ձգձգված է, միևնույն միջադեպերն ու դրվագները վերագրվում են տարբեր կերպարների: Նույնիսկ, հավելումներով, այս պատումը յոթ ճյուղ չի կազմում: Պատումում սերունդների ճյուղագրությունն այսպիսին է. 1. Սանասար և Բաղդասար, 2. Զոջ Մելքոն, 3. Զոջ Մհեր, 4. Դավթի, 5. Մհեր: Այստեղից-այնտեղից հավաքված Զոջ

¹ Գ. Հովսեփյան, Սասնա ծռեր, էջ 144:

² Նույն տեղում, էջ 146:

Մեկքոնի կերպարը ոչնչով չի տարբերվում Սանասարի և Ջոջ Մհերի կերպարներից։ Այնինչ այդ կրկնությունների մեջ կորել են շատ ավանդական հատվածներ բուն Սանասարի ճյուղից։ Ջանփուլադ և մյուս դեերի կերպարները շինծու են և ավելորդ։ Դրանք փոխ են առնված այլ հեքիաթներից և ո՛չ ամբողջությամբ, դրա համար էլ կորցրել են այն համն ու հոտը, ինչ ունեն հեքիաթում։ Սա ցույց է տալիս, թե ինչպես, երբ հեքիաթային հատվածներն ու մոտիվները մեքենայորեն մտցվում են վեպի մեջ, դունադրկվում է հեքիաթը և ոչինչ չի շահում վեպը՝ բացի ճապաղվելուց։

Եթե գրառված շիներ այս պատումը և պահպանված լիներ սոսկ հիշատակություն, թե եղել է վանա գավառաբարբառով յոթ ճյուղից բաղկացած մի պատում, պիտի փնտրեինք այդ ենթադրյալ երեք ճյուղերը։ Այս պատումն ևս ցույց է տալիս, որ նման փնտրատուքներն անօգուտ են և ինքնանպատակ։

Յոթ կամ ավել ճյուղերի փնտրատուքներն ու դրանք գտնելու նպատակադրումը հասցնում է վեպն այն տեսքին, ինչ ունի այն Տիգրան Չիթունու կազմած և խմբագրած «Սասունականի» մեջ¹։

Բանահավաք Տիգրան Չիթունին 1907 թվականին, վանում, մեծ խանդավառությամբ հետամուտ է լինում վեպի նոր տարբերակների հայտնաբերմանը և քրդերի վայրագություններից հալածված ու վանում ապաստանած Կարկառի, Սպարկերտի գաղթականներից գրի է առնում վեպի երեք նոր տարբերակ, որոնք հետագայում ներկայացնում է յոթ ճյուղ տեսքով։ Պատումների գրառումը կատարված է հարազատությամբ, բարբառային տառադարձության ու նրբությունների պահպանմամբ։ Ասացողները՝ Կարկառի Բերկրի գյուղից Խուղոն և Կծկուկ-Ակոբը և Սպարկերտի Ճաթվան գյուղից Կանչոն, վարպետ վիպասացներ են, երգիչներ։ Նրանցից գրառածները լավագույն պատումներից հիմնականում ոչ մի շեղում ու տարբերություն չունեն, ավելին՝ ապացույց են այդ

¹ Տ. Զիրունի, Սասունական, Փարիզ, 1942։

ավանդականութեան: Դրանք կազմված են շորս ճյուղից: Սակայն, Չիթունու միտումն այդ պատումներին տվել է յոթ ճյուղի տեսք: Այդ յոթ ճյուղն ստանալու համար Չիթունին կամ երկատում է միենույն կերպարը (նման դեպքերում մշտապես տուժում է Մեծ Մհերի, մասամբ էլ՝ Դավթի, կերպարը), կամ էլ վեպի վերջում, Փոքր Մհերից հետո շարունակում է Սասնա տան սերունդների թիվը զանազան հեքիաթների ու մոտիվների հաշվին: Դրանք իրականում ոչ մի կապ չունեն վեպի հետ, եթե նույնիսկ ասացողը վկայում է, որ այդ կերպարները Սասնա տանից են:

«Սասունականի» մեջ Չիթունին յոթ ճյուղի փոխարեն յոթն անգամ ավելացրել է այն շփոթը, որ երևան է գալիս բոլոր պատումների համեմատական քննութեան ու համադրման ժամանակ: 1941 թ. նա արդեն ձեռքի տակ ուներ բավական թվով հրատարակված պատումներ: Ցանկանալով կազմել համահավաք մի տեքստ և, ավելին, հնթարկելով այն դրական «վերամշակման», Չիթունին անխտիր օգտագործել է բոլոր պատումների բոլոր միջադեպերն ու փոքրագույն դրվագները: Փոխանակ համադրելու, գիտական քննութեան միջոցով զատելու և զտելու համեմատաբար նախնական, ավանդական միջադեպերը, նա կողք-կողքի շարել է բոլոր հատվածները: Պարզ է, թե այս դեպքում ինչքան կրկնութեւոյններ, հակասութեւոյններ, տարբերութեւոյններ, աղավաղումներ ու շփոթ կարող էր առաջանալ: Առանձնացվել, երկփեղկվել են տարբեր անուններով հանդես եկող միենույն կերպարները՝ մի Մհերը, մի Դավթիթը դարձել են բազում Մհերներ ու Դավթիթներ: Այդպես վարվելու դեպքում, եթե Չիթունին իր ձեռքի տակ ունենար ոչ թե 35 պատում, այլ մինչ այժմ հայտնի բոլոր տպագիր ու անտիպ պատումները, «Սասունականի» ծավալը պիտի որ կրկնապատկվեր:

«Սասունականը» ևս իր գոյութեամբ մի նոր ապացույց է վեպի յոթ ճյուղի շփոթութեան:

Այսպիսով, ձեռքի տակ եղած պատումներից ոչ մեկը՝ ներառյալ Չիթունու 1907 թ. գրառած երեք պատումները, բա-

ցի հայտնի շորս ճյուղից, մի այլ, առանձին ճյուղի հիշատակությունը կամ հիշողությունն անգամ պահած չունի։ Ընդհակառակը, դրանք հնարավորություն են տալիս հաստատելու, որ վեպն ունեցել է և ունի շորս ճյուղ միայն, որ յոթ և քառասուն ճյուղի վկայությունները վիպական շափազանցություն է։ Ասացողների վկայությունների մեջ, անշուշտ, մեծ դեր են խաղացել տարբեր ժողովուրդների կողմից այնքան սիրված և ընդունված հրեք, յոթ, քառասուն թվերը։

ՎԵՊԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

1889 թվականին, իր գրառած պատումի առաջաբանում Աբեղյանը, խոսելով վեպի ոտանավորի մասին, գտնում է, որ «արդի ժողովրդական վեպի ձայնական տաղաչափությունը, որ բոլորովին նոր է մեր բանահյուսության մեջ, շատ մոտ է մեր հին հեթանոսական վեպերի շափերին («Երկներ երկին» և մյուս հատվածները խորենացու պատմության մեջ)»¹։ Երկուսի մեջ էլ տեսնելով նույն շափը, Աբեղյանը բացահայտում է մեր հին ու նոր վեպերի մեջ գոյություն ունեցող ձևական հարաբերությունը։ Նույն թվին, Նիկողայոս Մառը Աբեղյանի պատումի գրախոսականում առաջ է քաշում այս հարցի մյուս կողմը՝ մեր հին ու նոր վեպերի բովանդակության կապի խնդիրը²։

Խնդրի ծայրն արդեն գտնված էր, և Աբեղյանը հին ու նոր վեպերի հետազոտման ողջ ընթացքում մնաց դրանց համադրման ու համեմատական ուսումնասիրության սկզբունքին։

Աբեղյանն իր «Հայ վիպական բանահյուսություն» աշխատության երկրորդ՝ «Վիպասանք» բաժինն սկսում է «Մեծ Տիգրանի վեպով»։ Խորենացու «Հայոց պատմության» մեջ պահպանված այս վեպի և նրա աղբյուրների վերականգնման հետ է կապված Աբեղյանի տեսական մեծագույն հայտնագործություններից մեկը։ Նա քննական պատմական և բանագիտական խորաթափանցությամբ և կուռ տրամաբանությամբ նախ ապացուցում է.

¹ Մ. Աբեղյան, Դավիթ և Մհեր, Շուշի, էջ Ը։

² Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա, էջ 524—526 (ընդգծումները՝ Մ. Ա.)։

1. Տիգրան Մեծի վեպի համար Խորենացին ձեռքի տակ ունեցել է գրավոր մի աղբյուր, որը պատմահայրը կոչում է «Պատմութիւն հիւսման պիտոյից» կամ «Հիւսումն պիտոյից»: Այդ գիրքը եղել է բանաստեղծական կամ բանահյուսական մի գրվածք, որի մեջ հյուսված են եղել զանազան բանահյուսական կամ ճարտասանական օրինակներ, այդ թվում և մի ընդարձակ պատմութիւն Տիգրանի մասին: Խորենացին, Տիգրանի պատմական ժամանակաշրջանի մասին գրելիս օգտվել է այդ պատմութիւնից, այս մասին ինքը՝ Խորենացին է վկայում իր «Հայոց պատմութեան» Ա գրքի ԺԹ գլխում: Նույն Ա գրքի ԻԱ գլխում Խորենացին իր այդ գրավոր աղբյուրը, որի վրա հիմնվել է Տիգրանի պատմութիւնը գրելիս, կոչում է «Չորս հագներգութիւն»: Սա նույնպես բանաստեղծական գրվածք է եղել, մի վիպական բանաստեղծութիւն, որի մեջ էական մաս պիտի կազմեր պատմականը: Հենց այս պատմական մասն էլ օգտագործել է Խորենացին իր Հայկազանց թագավորների, հատկապես Տիգրանի պատմութիւնը գրելիս: Ուրեմն, Խորենացին Տիգրանի պատմութիւնը վերցրել է երկու տարբեր անուններով կոչվող մի գրվածքից, այսինքն՝
2. «Հիւսումն պիտոյիցն» ու «Չորս հագներգութիւնը» միևնույն աղբյուրն է: Այդ գիրքը Խորենացու ժամանակ «հայերի մեջ հանրածանոթ եղած պիտի լինի, հանրածանոթ՝ և նրա հեղինակը. ուստի և Խորենացին բավականանում է գրքի անունը տալով միայն և գովելով նրա «իմաստուն հեղինակին» և կոչելով նրան «արգասաւոր ի բանս»:
3. Խորենացին հիշատակում է նաև, որ «ի հինսն» երգեր ու գովեստներ են եղել Տիգրանի մասին, ժողովրդական ավանդական երգեր, որոնք և մշակել է «Հիւսումն պիտոյից» կամ «Չորս հագներգութիւնը» գրքում «իմաստուն հեղինակը», այսինքն՝
4. Այդ գրավոր աղբյուրի համար հիմք են ծառայել ժողովրդական ավանդական երգերը:

Եվ այսպես, լույս սփռելով «Մեծ Տիգրանի վեպի» դրավոր ու բանավոր աղբյուրների և նրանց առնչակցության վրա, Աբեղյանն անցնում է այդ վեպի և մի այլ աղբյուրի համադրմանը և հանում բանագիտական առանձնահատուկ կարևորություն ունեցող հետևություն: Այն է.

1. Խորենացու ժամանակ հայտնի է եղել մի «Պիտոյից գիրք», որի մեջ հյուսված են եղել բանահյուսական կամ ճարտասանական կանոններ, այդ կանոնների բացատրությունները և օրինակներ: Այդ «Պիտոյից գիրքը» վերագրվում է Խորենացուն¹: Գրքում կա «Սահման ներբողինի» վերնագրով մի գլուխ: «Սահման ներբողինը» պատմական անձնավորությունները գովաբանելու տեսական կանոններ էին: Տեսական կանոններից հետո որպես համապատասխան օրինակ դրված է «Ներբողեան Մովսեսի»:

2. «Մեծն Տիգրանի վեպը» որպես պատմական բանաստեղծություն իր ձևով ու բովանդակությամբ ամբողջությամբ համապատասխանում է «Սահման ներբողինի» տեսական կանոններին: «Տիգրանի պատմության մեջ պահված են «Պիտոյից գրքի» ներբողյանի ճարտասանական կանոնները, այն էլ մեծ մասամբ նույն կարգով, ինչ կարգով որ «Պիտոյից գիրքն» է պահանջում»:

Իսկ որո՞նք էին այդ տեսական կանոնները, որոնց համապատասխանում էր Տիգրանի վրա ստեղծված «Զորս հաղներգությունը» մասնավորապես և նման քերթվածներն ընդհանրապես:

Ա. Նախ՝ փառաբանել այն դեպքը կամ անձը, որը նյութ է դարձել նման մի պատմության:

Բ. Անել այդ անձի ազգի, հայրենիքի, նախածնողի, նախահայրերի պատմությունը:

Գ. Ներբողելի անձի ծնունդը, սնվելը, կրթությունը, մանկական կյանքն ու վարմունքը:

¹ Տե՛ս «Մովսեսի Խորենացույ մատենագրութիւնք», Վենետիկ, 1865, էջ 341—579:

Դ. Ներբողելի անձի գործերը. այս մասը ամենաընդարձակն ու գլխավորը պիտի լինի: Այստեղ պետք է մտնեն.

ա. ներքին բարձր հատկանիշների նկարագիր,

բ. արտաքին կատարելության նկարագիր,

գ. գործերը, որոնք պիտի ճոխություն ու ընչեղություն պատճառեն և սիրելի դարձնեն նրան:

Ե. Ներբողելի անձին դնել բաղդատության մեջ այլ գովելի անձերի հետ և նրան ավելի մեծ համարել:

Զ. Ինչպես ընդհանուր գովեստներով սկսված էր, այնպես էլ ներբողելի անձի վրա արած գովեստն ամփոփել և վերջացնել¹:

Եթե լայնացնելու լինենք ճարտասանական այս կանոնների շրջանակները, մի՞թե սրանք չեն ընկած մեր բոլոր հին ու նոր վեպերի և ընդհանրապես բոլոր ազգերի վեպերի կառուցվածքային հիմքում: Եվ ո՞ր վեպը չի կառուցված այսպիսի ուրվագծի վրա—հերոսի ծնողներ, հայրենիք, ծնունդ, մանկություն, պատանություն, գործեր, ամուսնություն, ժառանգ, մահ: Այս ուրվագիծն ընդհանուր է, որովհետև ընկած է մարդկության պատմության և յուրաքանչյուր անհատի կյանքի հիմքում:

Եվ ահա հենց այս նույն կառուցվածքային հիմքի վրա է, որ սերտ կապի ու առնչակցության եզրեր կան մեր հին ու նոր վեպերի միջև: Եվ այդ կապի բացահայտման պատիվը հայ բանագիտության մեջ պատկանում է դարձյալ Մանուկ Աբեղյանին:

Սկիզբ առնելով անհիշելի ժամանակներից և հանդես դալով մեր յուրաքանչյուր վեպի մեջ, այդ կառուցվածքային ուրվագիծը դարձել է ա վ ա ն դ ա կ ա ն: Ուրվագիծը մնում է նույնը, փոխվում են պատմական դարաշրջանն ու դեպքերը, պատմական անձինք ու պատմական հայեցողությունը, հինը գոյատևում է նորի հետ միասին, կամ նորոգվում նոր մեկ-

¹ Այս ամբողջ համակարգը տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Ա, էջ 97—115:

նություններով, կապվում նոր անձանց ու նոր ժամանակաշրջանի հետ, և ահա, հին ուրվագծի վրա ստեղծվում է նոր ստեղծագործություն:

Հայկական ժողովրդական բոլոր վեպերը՝ սկսած «Վիպասանքից», «Պարսից պատերազմ» և «Տարոնի պատերազմ» մինչև «Սասնա ծռեր», կառուցված են դասականավանդական միևնույն ուրվագծի վրա: Այս վեպերի պահպանման տարբեր բնույթը (գրավոր՝ հատվածաբար, դրական վերամշակման ենթարկված, վերասպատմված, և բանավոր) չի խանգարում դրանց բոլորի մեջ տեսնելու վիպական միևնույն ուրվագիծը:

Վիպական կառուցվածքային ուրվագիծը հենվում է որոշակի և սակավաթիվ թեմաների վրա: Սրանց շուրջն են համախմբվում բազմաթիվ մոտիվներ, որոնցով և կազմվում են միջադեպերը. իսկ այս բոլորի հիման վրա ստեղծվում են վիպական սյուժեներ: Այս սյուժեները ժամանակի ընթացքում հարում են միմյանց, այդ նույն ուրվագծի համաձայն համախմբվում մի միասնության մեջ, և ստացվում է վիպական մի ամբողջություն:

Այժմ, միշտ աչքի առաջ ունենալով վիպական ավանդական համընդհանուր ուրվագիծը, մասնավորենք հարցը հայ ժողովրդական վեպերի և հատկապես «Սասնա ծռերի» վրա:

ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐ

1. Կռապաշտ և խաշապաշտ թագավորներ, որոնք ներկայացնում են երկու հակոտնյա, թշնամական երկրներ, այսինքն՝ կռվի իրադրություն:

2. Ամուսնություն.

ա. բռնի՝ հիմնված քաղաքական և դիվանագիտական նպատակների վրա,

բ. հիմնված սիրո և հավասար պայմանների վրա:

3. Հզոր ժառանգ, որը հանդես է գալիս որպես.

ա. երկրի հիմնադիր, նախահայր,

բ. երկիրը օտար նվաճողներից պաշտպանող, ազատագրող:

4. Շինարարություն (բերդաշինություն, եկեղեցաշինություն և այլ կառույցներ), որը խորհրդանշել է.

ա. երկրի հաստատման,

բ. պաշտպանության,

գ. խաղաղ սլայմաններում նյութական ու հոգևոր մշակույթի վերելքի:

Ո՛չ միայն տարբեր վեպերի, այլև մեկ միասնական վեպի տարբեր ճյուղերի հիմքում ընկած է վիպական կառուցվածքային միևնույն ուրվագիծը: Այս իսկ պատճառով, ուրվագիծը քննում ենք նախ՝ ըստ առանձին ճյուղերի, և հետո նոր միայն՝ շորս ճյուղի միասնական ամբողջության մեջ:

Սակայն, վիպական ուրվագծի նույնության դեպքում, ո՞րն է այն տարբերությունը, որ վեպի ամբողջության մեջ ոչ մի ճյուղի գոյությունը ավելորդ չի դարձնում, այսինքն՝ ուրվագիծը կրկնվում է, բայց ճյուղերը տարբեր են:

Հիմքում լինելով նույնը, վիպական ուրվագիծը տարբեր ճյուղերում հանդես է գալիս արտահայտման տարբեր ձևերի մեջ. հիմնական թեմաները յուրաքանչյուր ճյուղում դրսևավորվում են յուրովի, փոխվում են սրանց տեղերը, դերն ու նշանակությունը: Այս թեմաներից մեկն ու մեկը տվյալ ճյուղում դառնում է կենտրոնական, մյուսները պատվում են սրա շուրջը: Հաջորդող ճյուղում այն կորցնում է իր կենտրոնական նշանակությունը, դառնում հարակից՝ իր տեղը զիջելով մյուս թեմաներին: Այսինքն՝ ճյուղից-ճյուղ փոխվում է թեմաների ներքին հարաբերությունը: Հիմնական թեմաների այս ներքին, անկայուն հարաբերությունը վիպական մի ամբողջության մեջ ճյուղերի և՛ միանալու, և՛ միմյանցից տարբերվելու առաջին պատճառն է:

Ապա, միևնույն թեման տարբեր ճյուղերում ստեղծվում է տարբեր մոտիվներով ու նրանցով կազմված միջադեպերով, այսինքն՝ միևնույն թեման արտահայտվում է տարբեր

սյուժեներով: Սա էլ ճյուղերի միջև գոյություն ունեցող տարբերության երկրորդ պատճառն է:

Երրորդ պատճառն էլ այն է, որ միևնույն ուրվագծի դեպքում տարբեր են լինում նաև յուրաքանչյուր ճյուղի արտահայտած գաղափարական իմաստն ու դերը վեպի ամբողջական կառուցվածքի մեջ: Այս երրորդ պատճառը հանդես է գալիս որպես նախորդ երկուսի հետևանք:

Այս բոլորի համեմատ էլ վիպական առանձին սյուժեները և՛ ամբողջանում են մեկ միասնության մեջ, դառնում մեկ վեպի ճյուղեր («Սասնա ծռերի» շորս ճյուղերը միասին), և՛ առանձնանում մինչև անկախ գոյության աստիճան (առաջին՝ «Սանասար և Բաղդասար» և երրորդ՝ «Դավիթ» ճյուղերը): Իսկ կան ճյուղեր էլ, որ վեպի ամբողջության մեջ առանձին դեր ունեն, բայց հղած գրառումներում մյուսներից անկախ չեն հանդիպում (երկրորդ՝ «Մեծ Մհերի» և չորրորդ՝ «Փոքր Մհերի» ճյուղերը):

Այժմ քննենք վեպի հիմնական թեմաներն ըստ առանձին ճյուղերի:

Ա. Ռ. Ա. Զ. Ի. Ն. Ճ. Յ. Ո. Ի. Ղ.

Առաջին՝ «Սանասար և Բաղդասար» ճյուղը հանդիպում է քսանվեց պատումներում, որից հինգը ունեն միայն այս մի ճյուղը: Նման քանակը ցույց է տալիս, որ առաջին ճյուղը բավական լայն տարածում է ունեցել: Իսկ հիշյալ հինգ պատումները խոսում են այն մասին, որ «Սանասար և Բաղդասար» սյուժեն պատմվել է առանձին, գոյություն է ունեցել մյուսներից անկախ: Անկախ գոյությունի՞ց է գնացել միացել վեպին, թե՞ հակառակը՝ վեպից հետագայում է անջատվել—դժվար է ասել. սա առանձին քննության հարց է:

Ա. ա. ջ. ի. ն. թ. ե. մ. ա. — (կռապաշտ և խաչապաշտ թագավորներ. ի դեմս նրանց՝ երկու հակոտնյա, թշնամական երկրներ, բախում նրանց միջև):

Այս թեման հայ բանահյուսության մեջ «Հայկ ու Բելից» սկսած խիստ ավանդական է ու տարածված, թեմա, որ նույնանում է ժողովրդի պատմական ճակատագրին: Սրա ընդհանուր պատմական ատաղձը պարզ է: Մյուս կողմից, այս ընդհանուր ատաղձը ինչպես մյուս ճյուղերում, այնպես էլ առաջինում ձգտում է որոշարկման, կապվում պատմական որոշակի դարաշրջանների, անձնանունների ու տեղավայրերի հետ: Կռապաշտ և խաչապաշտ թագավորությունները, որոնք պատումների մեծ մասում հենց այդպես ընդհանուր անունով էլ հանդես են գալիս, որոշ պատումներում անվանավորվում են, դառնում այս կամ այն հանրահայտ երկրի թագավորներ, կամ կրում են առասպելական ու հեքիաթային անուններ:

Որովհետև կռապաշտ և խաչապաշտ ընդհանրացված ըմբռնումը տիրապետող հասկացություն է՝ գաղափարական խոր հագեցվածությամբ, դրա համար էլ պատումներում ամենից շատ հենց այդպես ընդհանուր անունով հանդես են գալիս (տե՛ս Տախտակ 3 և Տախտակ 4):

Մեծ հաճախականություն ունի նաև կռապաշտ թագավորի Սենեքերիմ անունն իր տարբեր տառադարձություններով՝ Սինաքերիմ, Սինամքարիմ, Սինամքար: Այդ անվան պահպանումը բավական թվով պատումներում օրինաչափ է նրանով, որ առաջին ճյուղում առկա Աստվածաշնչյան հայտնի պատմությունը Ասորեստանի թագավոր Սենեքերիմի և նրա որդիների մասին, հատուկ անունների հիշողությունը չի կորցրել: Վեպը մինչև XIX դար է հասցրել այդ պատմությունը՝ Սենեքերիմ թագավորի և նրա Սանասար ու Ադրամելեք որդիների անուններով: Պատումներում պահպանված է նաև նրանց հայրենիքի՝ Ասորեստանի անունը: Հաճախ կռապաշտը, առանց անձնանվան, գործում է որպես այլակրոն տարբեր երկրների թագավոր՝ Բաղդատի, Մսրա, Եգիպտոսի, Աջմու: Այս երկրանունների մեջ դրսևորվում են պատմական որոշակի դարաշրջանների հիշողություններ: Պատմական այս անաքրոնիզմները նույնպես օրինաչափ են վեպի

համար: Հանդիպում են նաև Հնդա Մելիք և Համդա Մհեր անվանածները, երկուսն էլ՝ եզակի անգամ. առաջինը մելիքությունների հետ կապվող հասարակ անվան հատուկ դարձած ձևն է՝ կապված Բաղդադի խալիֆայության և Եգիպտոսի տիրապետության ժամանակների հետ, ճիշտ այնպես, ինչպես Մսրա Մելիք. երկրորդը՝ երևի շփոթի արդյունք, որովհետև Մհերը բոլոր պատումներում անխտիր միայն և միայն Սասնա խաչապաշտ թագավոր է: Եզակի անգամ կուպաշտ թագավորին փոխարինում է Ոստանա քուրդ բեգը¹: Սա, հավանաբար, շատ ավելի ուշ ժամանակի շերտ է:

Անունների հեքիաթային ձևերը վեպին բնորոշ չեն, բայց և հանդիպում են, որովհետև վեպն իր գրառման ժամանակ արդեն անկման, հետևաբար և հեքիաթացման որոշ ընթացք էր ապրում:

Խաչապաշտ թագավորի համար ամենից շատ հանդիպողը Գագիկ անունն է: Գուցի դա, իրոք, իր մեջ պահում է հիշողությունների պատմական Գագիկ թագավորների մասին: Պապ անվանածը գուցի բանավոր ավանդամբ է պահպան-

¹ Ոստանա քուրդ բեգ հանդիպում է № 12 պատումում: Սրա ասացող Մանուկ Հարությունյանը և № 10, 11 պատումների ասացող Վարդան Մուխսի-Բազիկյանը համերկացիներ են՝ Մոկսից. ոչ միայն ծանոթ են եղել, այլև՝ գործընկեր, ս. Գևորգ Փոթկու վանքի փութկապաններ: Աշխատանքի բերումով միասին երկար ճանապարհ են կտրել, գիշերներ լուսացրել վեպը լսելով կամ ասելով և, որ ամենակարևորն է. «Մանուկ Բիծայի ասելով, նրանք հաճախ կնստեին միասին, և յուրաքանչյուրը մեկ ճյուղ կասեր» («Սասնա ծռեր», հատ. Ա, էջ 474, Կ. Մելիք-Օհանջանյան): Այս երկու ասացողների պատումների մեծ նմանության հետ միասին նկատվում են նաև ուշադրության արժանի տարբերություններ, որոնցից մեկն էլ սա է, և սրանից բխող հետագա միջադեպերը. Մանուկը հիշում է Ոստանա քուրդ բեգ, Վարդանը՝ կուպաշտ (անանուն) թագավոր: Երկուսի մոտ էլ խաչապաշտի անունը Գագիկ է:

Ինչպե՞ս են համաձայնության եկել այս հարցում երկու ասացողները, երբ միասին են պատմել: Լավագույն ասացողները խիստ նախանձախնդիր են իրենց ասածի ճշմարտությանը՝ հատկապես անունների: (Մանուկ Հարությունյանի և Վարդան Մուխսի-Բազիկյանի պատումները տե՛ս «Սասնա-ծռեր», հատ. Ա):

վել, նորից կապված Պապի թագավորության օրերի հետ, գուցե և գրավոր աղբյուրների ազդեցությամբ հետագա մուտք է վեպի մեջ¹: Գումրիկ, Ղումրիկ, Գորդիկ, Աստղիկ, Խաչիկ անունների մասին ենթադրություններ չենք ուզում անել, որովհետև ձեռքի տակ օժանդակ վկայություններ չունենք, մանավանդ որ դրանցից յուրաքանչյուրը հանդիպում է միայն մեկական պատումում, այսինքն՝ համեմատության հնարավորություններ չի տալիս: Բնական է, որ խաչապաշտ թագավորը նույնպես կապվում է որոշակի տեղանունների հետ՝ Վանա, Սասնա, Հայաստանի, Կապուտկողի:

Վերը բերված անվանումներով սպառվում է առաջին ճյուղում կռապաշտ և խաչապաշտ թեմայի արտաքին ձևավորումը: Բովանդակության համար անվանումները ձև են, բայց ժողովրդական վեպի համար՝ ոչ ձևական: Այս անունները վեպի համար պատահական չեն. եթե որոշակի պատմական էլ չեն, ապա բավարարում են վեպի ժանրային պահանջմունքը՝ կապվել պատմական անձնանունների և տեղանունների հետ: Ըստ վեպի այդ պահանջմունքի և ասացողների ժանրային ընկալման, երբ որևէ դեպք, զրույց, պատմություն՝ պարուրված թեկուզ ոչ արժանահավատ առասպելական շղարշով, կապվում է որոշակի անձնանունների ու տեղանունների հետ, դառնում է հավաստի: Հենց այս հավաստի, էական մասը, որը կազմում է վեպի պատմականը, արտահայտվում է դարաշրջանի և տեղավայրերի որոշակիությամբ: Այս հիմնական էությունն էլ վեպը դարձնում է «պատմական բանաստեղծություն»²: Սրա մեջ է վեպի ժան-

¹ Պապ անունը հանդիպում է միայն մեկ անգամ, բայազետցի Առաքել Շակոյանի պատումում (№ 36, «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Բ): Առաքելը վեպը լսել է № 35 պատումի (նույն տեղում) ասացող Հակոբ Նրդեյանից, որը, ինչպես վկայում է բանահավաքը, Աստվածաշունչը, «Հայոց պատմությունը» և Բաֆֆու վեպերը յուրօրինակ բեմականացման էր ենթարկում և խաղալով պատմում: Գուցե անդրադետ Առաքելի հիշողության մեջ մի անկյունում պահպանվել է Պապ անունը որպես վեպի հայոց թագավորի անուն, որը, սակայն, չի հանդիպում իրեն՝ Հակոբի պատումում:

² Մ. Արեղյան, Երկեր, հատ. Ա, էջ 94:

րային տարրերակման հիմքը վիպասացների ըմբռնումն էրում: Նրանք որոշակիորեն սահմանադատում են վեպը հեքիաթից և անհավաստի այլ ստեղծագործություններից, անվանելով այն իրական «պատմություն», որի մեջ ոչինչ չի կարելի փոխել¹:

Վեպն իր ժանրային ստիպմունքով ձգտում է պատմական ու աշխարհագրական որոշարկման: Վեպի այս ձգտման հետևանքը լինում է անունների այն արտաքին շփոթը, որ կա վեպում և նկատվում է հենց անունների տախտակի վրա: Բայց և երբեմն իրական, երբեմն թվացող այս շփոթը կարող է պահել պատմական անգնահատելի հիշողություններ:

¹ «Դավթի պատմութենը հեքաթ-նաղըլ չէ, պատմութեն ա, եղելութեն ա: Հեքաթ ընդուր կ'ըսենք, որ սուտ բան կա, էդիկ հեքաթ չէ, եղելութեն ա, պատմութեն», — ասում է վիպասացներից մեկը՝ Մանուկ Թորոյանը («Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Ա, էջ 250):

Վեպի ժանրային տարրերակման հարցում վեպ ստեղծողների, պահպանողների և խորենացու տեսակետները զարմանալիորեն համընկնում են: «Մեր պատմագիրը նման պատմություններից ճշմարիտ է համարում ոչ միայն այն, որ Ս. Գրքի համեմատ է, այլև այն, որ «ոճով» է գրված... «Ոճով պատմել» նշանակում է՝ հայտնել տեղը, ժամանակը, պատճառը, գործող անձերը և «պերճ և ողորկ» ձևով մանրամասն հորինել: Բայց զի ոչ ճշմարտութեամբ և ոճով պատմէ և ոչ զանուանան նշանակե, կամ տեղիս կատարմանցն՝ ոչ ինչ կարևորագույն համարեցաք երկրորդել» (Բ. 75): Տե՛ս Մ. Արեղյան, հատ. Ա, էջ 296:

Այս հիմնական մոտեցմամբ էլ խորենացին անհավաստի առասպելներից առանձնացնում է Մեծն Տիգրանի պատմությունը և օգտվում դրանից իր «Հայոց պատմությունը» գրելու համար: Խորենացու գրքում «վեպ» նշանակում է «պատմություն», և նա այդ բառը միշտ գործածում է գրավոր պատմական հիշատակարանների համար (տե՛ս Արեղյան, նույն տեղում, էջ 94): Այստեղ նույնպես համընկնում են պատմահոր և լավագույն վիպասացների տեսակետները: Վիպասացները հավաստում են, որ Դավթի պատմությունը եղել է գիրք: № 30 պատումի ասացող Թամո Դավթյանը «համարում է այս «բաղմությունը» եղելություն: «Դավթի մասին պատմածները «գրքից է բաղած», — ավելացնում է նա: «Դավթի գիրքը» գոյություն է ունեցել, «ինքը տեսել է» — մեկ լիտր կը քաշեր և պահվում էր Գոմաց վանքում: Հետագայում կոփվների ժամանակ քրդերը գիրքն այրել են» (տե՛ս «Սասնա ծռեր», հատ. Ա, մաս Բ, էջ 156):

Առաջին ճյուղում կռապաշտ-խաշապաշտ թեման թե-
պիտ բռնություն, թշնամական վիճակ արտահայտում է,
բայց չկա հիմնական մասը՝ կռվի իրադրություն: Խաշա-
պաշտ թագավորը հարկատու է կռապաշտ թագավորին, իրա-
վիճակը հավասար չէ, անշուշտ, բայց խաշապաշտի կողմից
դիմադրությունը, ըմբոստությունը թույլ է, վիճակների հա-
վասարիցման փորձ չկա: Բախումը կա, բայց առանց կռվի
իրադրության: Կռապաշտի հարկահանները տեսնում են խա-
շապաշտի գեղեցիկ աղջկան, նրա մասին պատմում իրենց
թագավորին. վերջինս խաշապաշտին պարտադրում է նրա
աղջկան կնություն առնելու իր կամքը: Խաշապաշտը հաճույ-
քով չպիտի ընդուներ այդ առաջարկը: Բախումը նախապատ-
րաստվում է, բայց մի ուրիշ վիպական մոտիվ՝ անձնագո-
հություն, լուծում է տալիս այդ իրադրությանը: Աղջիկը հա-
մաձայն է բռնի ամուսնությանը, միայն թե զոհ չգնա մի
ամբողջ ազգ: Աղջկա անձնագոհ արարքը, իհարկե, լուծում
չէ կռապաշտ-խաշապաշտ հակամարտության համար. ընդ-
հակառակը, հենց նրա ու նրա ժառանգների միջոցով խորա-
նում է այդ հակամարտությունը մինչև իր բնական լուծումը՝
կռվի իրադրությունը:

Բոլոր պատումների առաջին ճյուղում կռապաշտ-խա-
շապաշտ թեման այսպիսի դրսևորում ունի: Վիպական առան-
ձին մանրամասները թեմայի էությունը չեն փոխում:

Ուրեմն, այս թեման առաջին ճյուղում հիմնական,
կենտրոնական չէ, որովհետև իր հիմնական ուղին ու նպա-
տակը չունի:

Երկրորդ թեմա.— Սա հանդես է գալիս իր ա մա-
սով՝ բռնի ամուսնություն, հիմնված քաղաքական ու դիվա-
նագիտական նպատակների վրա: Ինչպես տեսանք, երկրորդ
թեման դործում է առաջինի հետ միաձուլվել, դառնում մի յուր-
օրինակ բախում կռապաշտի և խաշապաշտի միջև: Սա նույն-
պես առաջին ճյուղի համար հիմնական թեմա չէ:

Հետաքրքիր է, որ որոշ պատումներ բռնի ամուսնու-

Թյանը տալիս են քաղաքական դիտավորությունների երանգ։ Քաղաքական-դիվանագիտական նկատառումները կարևոր տեղ են բռնում ամուսնության թեմայում։ Հիշենք՝ Տիգրանուհու ամուսնությունը Աթա հակի հետ («Վիպասանք»), Տարունի ամուսնությունը («Աղջիկ Տարուն»)։ «Սասնա ծռերում» քաղաքական-դիվանագիտական նպատակների հետապնդող ամուսնական կապի թեման հանդես է գալիս երկրորդ ճյուղում։ Սակայն, այդ երանգը որոշ պատումներում առկա է նաև առաջին ճյուղում. կռապաշտ թագավորը ոչ միայն խելքահան է եղել աղջկա գեղեցկությունից կամ անպայման ուզում է օգտվել իր գերիշխող դիրքից և հարկի դիմաց տանել աղջկան, այլ՝ նաև ուզում է անպայման փեսա դառնալ խաչապաշտ թագավորին, իր համար մեծ պատիվ ու պատեհություն համարելով նրա հետ ազգակցական կապը¹։ Ամուսնական թեմայի այս կողմի ցուցադրումը վիպում կմընար առկախ, մի թռուցիկ հիշողություն նախորդ վիպերից, եթե այն շխորացվեր հաջորդող երկրորդ ճյուղում. այս մասին իր տեղում։

Երրորդ թեմա.—Առաջին ճյուղում ժառանգ թեման դրսևորվում է իր ա՝ երկրի հիմնադիր, նախահայր մասով։

Թեման կառուցվել է երկվորյակ եղբայրների մոտիվի վրա։ Վիպական այս մոտիվը վիպ է մտել աստվածաշնչյան հայտնի պատմության ձևով։ Բայց սա աստվածաշնչյան պատմությունից անկախ մոտիվ է, ավելի շուտ՝ աստվածաշնչյան պատմությունը երկվորյակ եղբայրների վիպական մոտիվի դրսևորումներից մեկն է։ Եթե շղիմենք այլ ազգերի մեջ այդ մոտիվի նույնանման դրսևորումներին և բավարարվենք միայն հայկական զուգահեռներով, իրար մոտ կգան Սանասար և Ադրամելիք = Դեմետր և Գիսանի = Մամիկ

¹ «Կըսը (կռապաշտը).—Ջանը՛մ, համա տու քու ախճիկ տու ձի. Իմ անուն վար քու ախճկան թըխ իլնը,

Զի թըխ ըսին՝ Կակիզ թաքավորի փեսին՝ բաժ ը»։

(հատ. Ա, էջ 476, տող 30)

և Կոնակ հիմքերը, և ընդհանրությունները կհանգեցնեն մի հիմնական դժի՝ երկվորյակ եղբայրների փախուստ և հաստատում Հայաստանում, այն էլ խիստ որոշակի մի տեղավայրում՝ Տարոնում: Երեք զույգ եղբայրներն էլ հաստատվում են Տարոնում. բնօրրանի հիշողություն չէ՞, արդյոք, սա, և բոլոր դեպքերում սա չէ՞ հիմնականը և ոչ այն, որ վեպի առաջին ճյուղում հանդես եկող եղբայրները կապվում են աստվածաշնչյան Սանասարի և Ադրամելեքի հետ: «Վիպական զրույցների մեջ «կապն անունի և մոտիվի մեջ շատ թույլ է. անունները հաճախ փոխվում են, մոտիվներն ավելի կայուն են»: Անունների այսպիսի փոփոխություն տեսնում ենք մեր նոր վեպի մեջ: Մամիկոնյանների ծագումն ըստ Բուզանդի, Խորենացու և Սեբեոսի՝ շինական է, բայց այստեղ երկու եղբայրները Հնդկաստանից են: Երկու դեպքում էլ այդ պետք է առնվի ոչ իսկական իմաստով: Հնդկաստանն ու Զինաստանն իբրև արևելյան հեռավոր երկրներ միշտ իրար տեղ դուրս են գալիս մեր հեքիաթների մեջ: Մեր նոր վեպի մեջ հենց, օրինակ, երկու եղբայրները՝ Սանասար և Բաղդասար, կամ մի կռապաշտ թագավորի որդիք են, կամ...»¹ զանազան հայրենիքներ են հիշվում եղբայրների համար: Թե ինչու նույն վեպի տարբեր պատումներում տարբեր երկրներ են հիշվում՝ այլ հարց է և ցույց է տալիս մի ստեղծագործության վրա պատմական ու վիպական տարբեր շերտերի դարսվածք: Սա ցույց է տալիս նաև, որ որոշ պատումներում հանդիպող Ասորեստանի Սինեքերիմ թագավորի հիշողությունը, ինչպես նաև նրա որդիների անունները, ինչքան էլ նրանք սերտաճած լինեն վեպին, ունեն երկրորդական նշանակություն իրենց հիմքի, այսինքն՝ երկվորյակ եղբայրների մոտիվի նկատմամբ: Իսկ եղբայրների մոտիվում հիմնականը երկրորդ մասն է՝ Հայաստանում հաստատվելը: Այս հարցում համախոս են բոլոր պատումները: Մոտիվի առաջին մասը՝ որտեղի՞ց փախան, ինչ-

¹ Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Գ, Երևան, 1968, էջ 449:

պե՞ս փախան, ինչո՞ւ փախան, երկրորդ մասի նկատմամբ ունի երկրորդական նշանակություն: Եվ հենց սա է պատճառը, որ եթե մոտիվի երկրորդ մասում բոլոր պատումները համախոս են, ապա առաջին մասում դրանց միջև նկատվում են ծանրակշիռ տարբերություններ:

1. Հայրն ուզում է իր որդիներին զոհ մատուցել կոքերին: Պատումները տալիս են տարբեր պատճառներ՝ ա. կոքերն են պահանջում այդ մեծագույն զոհը հորից և բ. հայրը նեղության մեջ է և իր փրկության համար կոքերին խոստանում է մեծ փրկագին՝ զոհել իր որդիներին (տե՛ս Միջադեպերի տախտակը, Տախտ. 6, միջադեպ 4 ա և բ): Այս երկու տարբեր մեկնակետերն իրենց հետ բերում են, իհարկե, սյուժետային տարբերություններ. այսինքն՝ սրանց վրա կառուցված միջադեպերը տարբեր են: Առաջին մեկնությունը դերակշռող է Մոկաց պատումներում, երկրորդը՝ Մշո:

Վ Ն 32՝ Խլաթ («Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Ա), 35 և 37՝ Ալաշկերտ և 47՝ Մուշ (հատ. Բ, մաս Բ) պատումները շեղվում են այս երկու հիմնական մեկնություններից: Շեղումները հետաքրքիր են ոչ թե սյուժետային առումով, այլ՝ բանահյուսական: Ն 47 պատումն իր հիմքով կապվում է Մշո պատումների հետ, բայց դրաման վայրով (Ապարան) և ժամանակով (1946 թ.) բավական հեռու է Մուշից: Տարածությունը և ժամանակը խաղացել են իրենց դերը որոշ միջադեպերի, առանձին հատվածների ընկնելու կամ փոփոխվելու հարցում: Մշո պատումներում ընդարձակ միջադեպերով պատմվում է Սենեքերիմի կողմից Նրուսադեմը պաշարելու, Նրուսադեմի սովի, աստծո միջամտության, Սենեքերիմի պարտության մասին: Այստեղ է, որ Սենեքերիմը Ջոջ կուռքին խոստանում է զոհ մատուցել իր որդիներին (կամ մեկին): Ն 47 պատումում այս միջադեպերը չկան. թաղավորը մի օր կնոջն հայտնում է, որ ինքն իրենց որդիներից մեկին խոստացել է զոհել: Այս շպատհառարանված խոստումը այն պատճառարանված խոստման հիշողությունն է, անշուշտ: Միջադեպն ընկել է, մնացել է հիշողությունը: Սա էլ պահպանվել է հաջորդող միջադեպերի ստիպմամբ՝ հայրը պիտի զոհի իր որդուն, որ որդին էլ կուստան մեջ սպանի իր հորը և փախչի:

Ն 32 Խլաթա պատումը տալիս է մի նոր մեկնություն. ժողովուրդը բողոքում է թաղավորին, թե. «Ամեն օր մեր տղեկներ կը մորթես կոքան, յես օր լե մեր ալիդ օրն ա, յես օր լե քու տղեն պտի բերես մորթես» (հատ. Բ, մաս Ա, էջ 229): Այստեղ՝ կամ կոքերի պահանջը մոռացվել է, դարձել է ժողովրդի պահանջ, կամ՝ դեր է խաղացել հեքիաթային տարածված մի

2. Եղբայրները կռատան մեջ սպանում են իրենց հորը։ Այս հիմքի վրա են կառուցվում երկու (Մովսես և Մշո) թևում էլ համասպատասխան միջադեպերը։ Եթե նախորդ դեպքում տարբերություններն առաջանում են միևնույն հիմքի տարբեր մեկնություններից, այստեղ ինքը՝ հիմքը, տարբեր մեկնությունների հնարավորություն չի տալիս՝ սպանում են։ Ինչո՞ւ են սպանում—այս հարցը կապվում է նախորդ հիմքի հետ՝ հայրն էր ուզում զոհել իր որդիներին, որդիները սպանեցին իրենց հորը։ Բուն սպանության հիմքի հետ կապվում են որտե՞ղ սպանեցին, ինչպե՞ս սպանեցին, ե՞րբ սպանեցին հարցերը։ Միջադեպերը կառուցվում են սրանց վրա, տարբերություններն էլ կապվում են սրանց հետ, հատկապես՝

մոտիվ, այն է. ջրի դեմն առնող վիշապին օրական մի աղջիկ են տալիս, ժողովուրդը պահանջում է, որ տան նաև թագավորի աղջկան, կամ պարզապես հերթը հասնում է նաև նրան։

Եթե վերոհիշյալ երկու դեպքում դեր են խաղում բանահյուսական առարկայական պատճառներ՝ ժամանակ և տարածություն, ապա № 35 և 37 (Ալաշկերտ) պատումների շեղման հիմքը բանահյուսական անհատական պատճառներն են։ Այս երկու պատումի ստացողները՝ Հակոբ Նրդեյանը և Սարգիս Հակոբյանը, համադյուզացի են, նաև՝ փեսա ու աներձագ, վեպը լսել և սովորել են միևնույն անձնավորությունից՝ տիրացու Հակոբ Տեր-Մարտիրոսյանից, որն առաջինի աներն է, երկրորդի հայրը։ Այս տիրացու Հակոբ Տեր-Մարտիրոսյանը վեպը, հատկապես նրա առաջին ճյուղը, խճողել է աստվածաշնչյան դոնադան մոտիվներով ու անուններով։ Այդպես էլ անցել է Հակոբ Նրդեյանին և Սարգիս Հակոբյանին։ Առաջինի մոտ այս գիծն այնքան է խորացել, որ խմբագրությունն ստիպված է եղել առաջին ճյուղից ամբողջական հատվածներ դուրս թողնել, որպես աստվածաշնչյան մոտիվների վերապատմումներ, որոնք կապ չունեն վեպի հետ (տե՛ս հատ. Բ, մաս Բ, էջ 9—11)։ Այս երկու պատումներում եղբայրները, որոնց ուզում են զոհել կոթերին, ոչ թե կռապաշտ թագավորի ու խաչապաշտ աղջկա որդիներն են, այլ՝ կռապաշտ թագավորի երկրում ապրող մի քրիստոնյա իշխանի։ Այն, որ սա ազավաղում է, երևի տիրացու Հակոբ Տեր-Մարտիրոսյանից եկող, երևում է ոչ միայն այն բանից, որ սրանք միակ շեղումն են մնացած բոլոր պատումներում հանդիպող միևնույն միջադեպից (տե՛ս միջադեպ 3 Ա), այլև՝ այս երկու պատումն իրենց ներսում ևս համաձայն չեն՝ նույն միջադեպը նրանք պատմում են տարբեր մանրամասներով, տարբեր անուններով։

ե՞րբ սպանեցին հարցի հետ: Որոշ պատումներ իրենց սյու-
 ժետային գծի հաջորդականությամբ համապատասխանում
 են աստվածաշնչյան պատմության այդ մասին՝ սպանեցին,
 հետո փախան (տե՛ս միջադեպ 11): Մշո շորս պատում մի
 հետաքրքիր շեղում են տալիս այդ գծից (տե՛ս միջադեպ 12):
 Մոր խորհրդով եղբայրները փախչում են, դնում, հաստատ-
 վում Սասունում, նույնիսկ ամուսնանում, հետո եղբայրնե-
 րից մեկին կռքերը երազում անընդհատ տանջում են. այդ
 մղձավանջից ազատվելու համար նա վերադառնում է հոր
 մոտ, սպանում նրան (նույն տեղում՝ կռատանը, նույն ձևով,
 ինչ մյուս բոլոր պատումներում), փշրում կռքերը, ազատվում
 նրանց հետապնդումից: Այս տարբերության, ինչպես նաև
 կռքերի հետ կապված բոլոր միջադեպերում, պահպանված
 են հեթանոսական հավատալիքների որոշ տարրեր: Հետա-
 քրքիր են ոչ միայն այդ տարրերը, այլև՝ XIX դարի ասա-
 ցողի վերաբերմունքը դրանց նկատմամբ: XIX դարի քրիս-
 տոնյա ասացողը չի հավատում կռքերի զորությանը, և
 ավանդության ուժով պահպանված այդ հատվածներն ասա-
 ցողների մոտ ստացել են երգիծական մեկնություն և երանգ:
 Ծաղրվում են կենդանակերպ կուռքերը (ասացողները պարզ
 պատկերացում չունեն նաև նրանց արտաքին տեսքի ու կեր-
 պի մասին), նրանց զորությունը, դրան հավատացող ու
 ապավինող կռապաշտ թագավորը: Այս ծաղրը՝ ընդհանուր
 վերաբերմունք լինելով, կապվում է մերթ այս, մերթ այն
 միջադեպի հետ, երբեմն դառնում է միջադեպի լուծում: Օրի-
 նակ. կռապաշտ թագավորը հավատում է, որ իր կնոջ հղիու-
 թյունը կռքերի (կամ իր շնչի) զորությունից է: Այս երգիծան-
 քը որոշ դեպքերում հասնում է զավեշտի, որովհետև աղջիկն
 է թագավորին ներշնչում այդ հավատը և դրանով իսկ թաք-
 ցրնում իր հղիության իսկական պատճառը՝ ջուրը: Ժողո-
 վուրդը մի դեպքում պահում է բնության երևույթների՝ ջրի
 տարերքի, ամպրոպի ու կայծակի, հեթանոսական հավատ-
 քը, մյուս դեպքում ծաղրում բաներ, որոնց հավատացել է
 դարեր շարունակ: Վեպի գրառման ուշ շրջանը՝ XIX դարը,

իրեն զգացնել է տալիս հատկապես առասպելական, հեթանոսական կամ պատմական հնագույն շերտերին վերաբերող հատվածներում, այսինքն՝ այնտեղ, որտեղ մարդկային երևակայության, պատկերացումների, կյանքի ու կենցաղի որոշ երևույթների նախնական իմաստը դարերի մեջ մթադնրվել է և XIX դարի ասացողի համար դարձել անծանոթ ու անհասկանալի։ Ավանդության ուժով պահպանված այդ հատվածներն ասացողների մոտ գտնում են նոր մեկնաբանություններ, ձևավորվում նոր պատկերացումներով։ Կոքերի ու կռապաշտության մասին հեթանոսական պատկերացումները վեպում ներկայանում են XIX—XX դարերի մեկնություններով, որոնք և նույնանման լինել չէին կարող։

Հայրասպանության հետ կապված որոշ միջադեպեր՝ հորն սպանելուց հետո եղբայրներից մեկի նրա տեղ թագավոր նստելը կամ շնատելը բոլորովին անկարևոր են վեպի համար, որովհետև դրանք մնում են ինքնին ու առկախ, անհետևանք, ավելի շուտ, հետևանքը մնում է նույնը՝ նրանք թողնում են կռապաշտի երկիրը, թագավորությունը և գնում, մի ամայի վայրում հիմնում իրենց հայրենիքը։

Ահա եղբայրների փախուստի մեկ այլ մեկնություն, որը բոլորովին կապ չունի կոքերի, զոհողության և հայրասպանության հետ։ Փախուստն ունի անկախ վիպական հիմք, կապվում է այլ մոտիվների հետ։ Այսպես, թագավորը (կռապաշտ կամ այլ) չի հավատում իր կնոջ անապական հղիությանը, չի ներում նրան և չի հանդուրժում իր տան մեջ ապօրինի ծնունդ, հրամայում է դահձին սպանել եղբայրներին (ինչպես և մորը) (տե՛ս միջադեպ 6)։ Կամ՝ մայրը չի հաշտվում կռապաշտ թագավորի հողում ապրելու մտքի հետ, պատմում է որդիներին իր հայրական երկրի մասին, և միասին վերադառնում են մոր երկիրը (տե՛ս միջադեպ 15)։ 6-րդ միջադեպին է հարում նաև 8-րդը, որը որպես առանձին տարբերակ է հանդես գալիս. այստեղ էլ խաչապաշտ հայրը չի հավատում իր աղջկա անմեղությանը, աղջիկը հոր պատժից փախչում է Սասնո կողմերը, ուր և ծնվում են երկվորյակ եղբայրները։

Եթե հիշատակություն չկա կռքերի, եղբայրներին նրանց զոհելու, հորն սպանելու մասին, ինչպե՞ս պետք է վերաբերվել այս պատումներին. ինչի՞ հետ է կապվում այս տարբերությունն աստվածաշնչյան հայտնի մոտիվից: Եթե ընդունենք, որ առաջին ճյուղի հիմքում ընկած է աստվածաշնչյան մոտիվը, այս տարբերությունները պետք է համարենք հետևանք մոռացության կամ աղավաղման: Իսկ եթե սրանք անկախ, առանձին, հավասարազոր վիպական մոտիվներ են և կապ չունեն աստվածաշնչյան պատմության հետ: Նման մոտեցումն այս պարագայում ավելի ճիշտ է, քան՝ առաջին ճյուղի հիմքում ընդունել մեկ մոտիվ, պատումներում եղած տարբերությունները համարել այս մեկի տարբեր դրսևորումները կամ մասնակի աղավաղումները: Ուրեմն՝ որոշ պատումներ առաջին ճյուղի իրենց նկարագրով ցույց են տալիս, որ երկվորյակ եղբայրների մոտիվը կարող է կապ չունենալ աստվածաշնչյան պատմության հետ և հանդես գալ առանձին, իր դրսևորումը գտնել վիպական այլ մոտիվների կապակցության մեջ: Երկվորյակ եղբայրների մոտիվը կարող է փոխառած լինել միայն անուններ՝ Սանասար և Ադրամելիք, և այն ևս ենթարկել փոփոխությունների, Ադրամելիքը՝ Բաղդասար և այլն:

Ինչո՞ւ աստվածաշնչյան պատմության առաջին մասն երկրորդի հանդես ունի պակաս կարևորություն, և որո՞նք են առաջին մասի հետ կապված տարբերությունների ծնող պատճառները:

Նախ. վեպի առաջին ճյուղի ժառանգ թեմայի հիմքում ընկած է երկու եղբայրների վիպական մոտիվն իր պատմական հավաստի կամ անհավաստի հիմքով, իսկ աստվածաշնչյան պատմությունն այդ մոտիվի դրսևորումներից մեկն է միայն, որից վեպն երբեմն ամբողջությամբ է օգտվում, երբեմն՝ մասամբ: Ընդունված է, որ վեպի առաջին ճյուղի հիմքում ընկած է այդ պատմությունը: Աբեղյանը նույնպես ընդունում է այս հիմքը, բայց և գրում է. «Առասպելաշեն ժողովուրդը Ս. Գրքի այս միջադեպն առել, իր ձևով մշակել,

Հայացրել է՝ մեջ խառնելով հայոց պատմական կյանքի դեպքեր, ինչպես և շատ կենցաղական, դիցազնական գծեր, այնպես որ, եթե շլիկներն Սենեքերիմ և Երուսաղեմ անունները (նաև՝ Սանասար և Ադրամելիք՝ Ա. Ս.), ինչպես և երկու եղբայրներին՝ իրենց հորը կռատան մեջ սպանելը, դժվար կլիներ այս երկու պատմությունը նույնացնել¹ (ընդգծումը մերն է—Ա. Ս.): Սա շատ կարևոր դիտողություն է, որովհետև իրականում աստվածաշնչյան պատմությունը ոչ թե առաջին ճյուղի հիմքն է, այլ՝ հիմնական մոտիվներից մեկը միայն:

Երկրորդ. առաջին ճյուղում զոհաբերության և հայրասպանության միջադեպերը կայուն են, հիմնական, բայց ոչ առանցքային: Հիմնականը և առանցքայինը այս պատմության մեջ, ինչպես և ողջ առաջին ճյուղում, շորրորդ թեման է:

Չորրորդ թեմա.—(շինարարություն): Առաջին ճյուղում սա մի անժամոթ, ամայի, բայց զորավոր վայրում հաստատվելու՝ բերդաշինության թեման է: Բերդաշինությունն այստեղ ունի օջախ-տուն - հայրենի քիմաստը: Այս հարցում համախոս են բոլոր պատումները: Սա նաև առաջին ճյուղի հիմնական գաղափարն է: Ուրեմն՝ բերդաշինությունն այն միջուկն է, որի շուրջը պտտվում է երկվորյակ եղբայրների մոտիվն իր հարակից մոտիվներով: Այդ մոտիվների ուրվագիծն այսպիսին է. սկսենք բերդաշինության թեմայից.

ա. եղբայրների փախուստ ինչ-որ երկրից, ինչ-որ մեկից ինչ-որ պատճառով և հաստատվելը որոշակի տեղավայրում.

բ. նրանց ծնունդը մոր գծով դարձյալ կապվում է այդ տեղավայրի հետ՝ մոր հայրենական տուն, մոր կրոնի հետ՝ խաչապաշտ.

գ. նրանց մոր բռնի ամուսնություն՝ այլակրոն մեկը

¹ Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Ա, էջ 381:

կնության է առնում հայազգի աղջկան. նրա հետ կենակցում է աղջիկը կամ չի կենակցում.

դ. նրանց ծնունդը՝ առասպելական կամ իրական.

ե. նրանց մանկությունը, պատանեկությունը, գործերը, ամուսնությունը:

Հիմնական ուրվագիծն այս է: Սրանցից յուրաքանչյուրը կարող է լինել և՛ շատ հին, նախնական, և՛ հետագա շերտերի արդյունք, կարող է ունենալ պատմական որոշակի հիմք, կարող է լինել զուտ վիպական, կարող է մնալ կայուն, կարող է առաջացնել փոփոխականի:

Բերդաշինության միջադեպը գրեթե տողացի նույնն է բոլոր պատումներում, բացի № 30-ից (Սասուն) և 28-ից (Մուշ): Այս վերջին պատումի գրառումը հարազատ չէ և փոփոխություն է զգացվում նաև սյուժետային գծի, հատկապես հաջորդականության, մեջ: Այս պատումն սկսվում է Դավիթ թագավորի մահով, որն ավագ եղբայրն է Մհերի, Բաղդասարի և Ջենով Հովանի: Դավթին փոխարինում է Բաղդասարը. սրա կինն է Խանդութ խանումը: Բաղդասարն սպանվում է Մսրա Մելիքի հետ մենամարտում (կովի պատճառը նշված չէ), Մելիքը հղի Խանդութին գերում է և առնում կնության: Մտրում ծնվում է Թլոֆ Դավիթը: Այս բոլորը պատմվում է ճիշտ այսպիսի ուրվագծային հիշատակամբ միայն, առանց ամբողջական միջադեպերի: Ինչպես պարզ հրևում է, սրանք այն միջադեպերի աղավաղված արձագանքներն են, որոնք մյուս պատումներում վերագրվում են Մեծ Մհերին: Երրորդ ճյուղին վերաբերող միջադեպերն իրենց տեղում են, ավանդական հաջորդականությամբ: Թլոֆ Դավիթն ամուսնանում է Կապուտկողի Խանդութ խանումի հետ, ծնվում են Մհերը և Միհրանը: Փոքր Մհերի ավանդական վախճանը, որով և վերջանում է վեպը, չկա. հոր վրեժը լուծելուց հետո նա այլևս հանդես չի գալիս: Երկրորդ որդին՝ Միհրանը, Տեվլաթ ղուշի ընտրությամբ դառնում է մի ինչ-որ Պետրիխանա երկրի թագավոր: Սրա աղջրկան է, որ կռապաշտ թագավորը բռնի առնում է կնու-

թյան: Այս աղջիկն է հղիանում ջրից, ծնվում են Բաղդասարը և Սեղնասարը: Ուրեմն, ըստ այդ պատումի սյուժետային գծի, հրկվորյակ եղբայրները Դավթի թոռներն են:

Եվ սյուժետային գծի, և անունների մեջ պարզորոշ շփոթ է զգացվում, որի պատճառները կարող են լինել և ասացողի պատմությունը, և գրառման թերությունները՝ գրառողի միջամտությունը ինչպես ոչ բառացի գրառելու, այնպես էլ սյուժեն խառնելու հարցում: Բառացի բերված որոշ ավանդական չափածո և երգային հատվածներից հրևում է, որ պատումն սկզբնապես շատ ավելի լավ է եղել, քան իր գրառված վիճակում, և ասացողն էլ՝ շատ ավելի վարպետ ու գիտակ, քան գրառողը: Որ սա շփոթ է և ուշադրության ոչ արժանի տարբերություն մյուս պատումներից, հաստատվում է նաև հենց այդ պատումի ողորմիսով: Այս պատումի ողորմիսն իր անուններով և դրանց հաջորդականությամբ չի համապատասխանում սյուժետային գծի հաջորդականությանը: Ողորմիսի մեջ հաջորդաբար հիշվում են՝ Դավիթ թագավոր—Բաղդասար—Ջենով Հովան—Ջոշ Մհեր—Թլոֆ Դավիթ—Խանդուկ խանում—Մսրա Մելիք: Ինչպես հրևում է ողորմիսից, Ջոշ Մհերը Թլոֆ Դավթի հայրն է, իսկ սյուժեում Մհեր անունը միայն մի տեղ է հիշվում (առանց Ջոշ հատուկ որոշչի), այն էլ որպես Թլոֆ Դավթի հորեղբայր: Խանդուկ խանումի անունը Դավթից հետո հիշելը նշանակում է, որ Դավթի կինն է սա, իսկ որպես մայր՝ Խանդուկ խանում չի հիշվում. մինչդեռ սյուժեում Թլոֆ Դավթի և՛ մայրն է Խանդուկ խանում, և՛ կինը: Սա այն դեպքը չէ, երբ միևնույն միջադեպը պատմվում է տարբեր կերպարների վրա, կամ տարբեր կերպարների միջադեպերի ու բնավորության գծերի հետ միասին նախորդներից ժառանգում են նաև անուններ: Սա

¹ Այս պատումը գրառել է Հայրապետ Հ. Համամճյանը: Պատումի առաջին հրատարակիչը տալիս է մի այսպիսի տեղեկություն (առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք» ամսագրի 1933 թ. № 3). «Ամենն վերջ Հ. Համամճյան ծանոթություն մը գրած է, ուր կ'ըսես. «Տեղ-տեղ հեթաթի խոսքերը, բառերը, ոճերը նույնությամբ գործածված են»:

պարզապես շփոթ է: Դավթի տղա Փոքր Մհեր և Միհրան և սրա էլ թոռներ՝ Բաղդասար և Սեղնասար, ողորմիսում չի հիշվում. նորից անհամապատասխանությունն սյուժեի հետ:

Այսպիսով, № 28 պատումում բերդաշինության միջադեպը չկա, որովհետև առաջին ճյուղի տեղն ու բովանդակությունը ընդհանրապես խախտված է: Երկվորյակ հղբայրների հետ կապվում է ընդամենը երկու միջադեպ. կռապաշտ հոր սպանությունը և այս առիթով մենամարտ հղբայրների միջև՝ Բաղդասարը չի կարողանում ներել Սեղնասարի հայրասպան արարքը, մինչև որ մայրը բացատրում է, որ կռապաշտը նրանց հայրը չէ՝: Հենց այստեղ էլ վերջանում է պատումը: Եվ բնականաբար, Սասնա բերդի հիմնադրումը չկա, որովհետև Սասնա տունը Մելիքից պաշտպանող Դավթի ծոռները չէին կարող նոր միայն հիմնադրել Սասունը:

Սասնա պատումում (№ 30) բերդաշինության միջադեպն իր տեղում չէ. այն կապվում է Մեծ Մհերի անվան հետ, իսկ առաջին ճյուղում դրա հետքն անգամ չկա²: Ընդհանրապես, Սասնա այս պատումի առաջին ճյուղը միջադեպերի ընդգրկմամբ հետաքրքիր դիրք է գրավում Մոկաց և Մշո խմբավորումների միջև: Նախ. միջադեպերի թիվը չափազանց քիչ է, չորս միջադեպ, որոնցից իրականում միայն առաջինն է միջադեպ իր ծավալով ու ընդարձակությամբ: Մյուս երեքը խիստ հակիրճ հիշատակություններ են միայն, որոնք մյուս պատումներում ունեն իրենց ծավալուն և մանրամասն պատմությունները: Ըստ այսմ էլ, ծավալային հարաբերությամբ սրա և մյուս պատումների միջև տարբերությունները մեծ են. եթե Մոկաց պատումներում այդ ճյուղն ունի 580 չափածո տող և պատմվել է մյուս ճյուղերից անկախ (օրինակ՝ № 7 պատումը, Ա հատոր), ապա սա ունի

¹ Մի օրինակ ևս այն բանի, թե ինչպես, երբ միջադեպերը մոռացվում են և նրանցից մնում են միայն հիշողություն, այդ հիշողությունը պարուրվում է նոր մեկնաբանություններով, առաջացնում նոր միջադեպեր:

² Այս մասին մանրամասն խոսք կլինի երկրորդ՝ Մեծ Մհերի, ճյուղի քննության ժամանակ:

50 տող միայն և այդ տեսքով երբեք առանձին գոյություն ունենալ չէր կարող:

Սասունից միայն երկու պատում է մտել «Սասնա ծռեր» երկհատորյակի մեջ՝ հիշյալ № 30-ը և № 31 (հատ. Բ, մաս Ա.): № 31-ը շունի առաջին ճյուղը և սկսվում է Մեծ Մհերով: Ուրեմն, Սասնա պատումների մեջ ներքին համեմատության հնարավորությունը բացառվում է. համեմատության և հետևությունների համար պահանջվում են մեծ թվով պատումներ¹:

Այսպիսով, առաջին ճյուղում հիմնականը, կենտրոնականը շորրորդ թեման է, իսկ նախորդ երեքը նախապատրաստում են այն:

Երկրորդ և երրորդ թեմաներն առաջին ճյուղում ունեն կրկնակի դրսևորում:

Երկիրը հիմնված է, երկու եղբայրներն արդեն հաստատել են իրենց իրավունքը, այսինքն՝ կատարել են մեծ գործեր, որոնք սիրելի են դարձրել նրանց անձը: Սրան, ըստ կյանքի և վիպական շղթայի, պիտի հաջորդի ամուսնությունը: Այս թեման այս դեպքում արդեն հանդես է գալիս իր բմասով, այսինքն՝ ամուսնություն, հիմնված սիրո և հավասար պայմանների վրա:

Մի գեղեցկուհի, դյուցազնուհի, նաև կախարդուհի լսում է Սանասարի համբավը և սիրո նամակով ամուսնության առաջարկ անում նրան: Սանասարը զանազան դժվարությունների, փորձությունների միջով բերում է աղջկան:

Եղբայրների ամուսնությունն ընդարձակ պատմությամբ առկա է միայն Մոկաց թևի պատումներում: Այն իր մեջ է ներառնում առասպելական ու հեքիաթային մոտիվներ: Սրանք վիպական ընդհանուր հենքի մեջ ստանում են վիպական խառնվածք, համեմվում հավատալիքային, ծիսա-

¹ Արխիվներում և 70-ական թվականների գրառումներում կան Սասնա բաղմաթիվ պատումներ, որոնք ընձեռում են նման համեմատության հնարավորություն. դա առայժմ դուրս է մեր նպատակից և ընդգրկած նյութի շրջանակներից:

կան, կենցաղային մանրութներով և հեշտությամբ սերտա-
ճում վեպին: Հեքիաթային մոտիվների ու միջադեպերի մուտ-
քը վեպ, վեպի ներքին պահանջմունքից չի բխում և կասկ
շունի նրա ժանրային նկարագրի հետ: Բայց եթե միջադե-
պերն իրենք վեպի պահանջով չեն առաջանում, ապա դրանց
վիպականացումը, պատմական ու աշխարհագրական երան-
գավորումը լինում է վեպի ստիպմունքով, որպեսզի դրանք
արտաքին հարդարանքով ևս ձուլվեն վեպին: Ահա թե ինչու,
որոշ պատումներում հեքիաթային միջադեպերը նույնպես
երանգավորվում են պատմական որոշակիությամբ՝ կասկ-
վում պատմական տեղավայրերի հետ: Մեծ մասամբ վեպը
ներառնում է ոչ թե պատրաստի հեքիաթային միջադեպեր,
այլ՝ միայն հեքիաթային մոտիվներ, որոնց վրա իր ոգուն
համաձայն կառուցում է վիպական միջադեպեր:

Հեքիաթային մոտիվների առկայությունը վեպում ունի
մի բացասական կողմ. դրանք հեշտությամբ իրենց են ձգում
նման այլ մոտիվներ, խայծ են հեքիաթային՝ այլ տարրերի
համար, իրենց հետ բերում են հեքիաթային բանաձևերի ու
բանաձևային արտահայտությունների առատություն, ունե-
նում են հեքիաթային ավանդական բանաձևային սկիզբ ու
վերջ: Օրինակ. այն հինգ պատումները, որոնք ունեն միայն
«Սանասար և Բաղդասար» ճյուղը, վերը ասվածի լավագույն
ապացույցներ են: Հեքիաթային տարրերը՝ մոտիվներ, բա-
նաձևային արտահայտություններ, հեքիաթային սկիզբ ու
վերջ, այդ պատումներում գերիշխողը դարձնում է հեքիա-
թային հոգեբանությունն ու խառնվածքը: Դրանք, բացի մե-
կից, շունեն ողորմիս-նախերգանք, որը վեպի բնորոշ հատ-
կանիշներից մեկն է: Դրա փոխարեն ունեն հեքիաթային
ավանդական բանաձևային սկիզբ.

«Կար չկար մի ժամանակ՝
Մի կռապաշտ թագավոր կար,
Մի խաչապաշտ թագավոր...»:

(N 3 պատում, հատ. Ա, էջ 127, տող 10)

«ժամանակով կ'ըլլեր, չէր ըլլեր՝
Մեկ խաշապաշտ թագավոր...»:

(N 7 պատում, հատ. Ա, էջ 307, տող 10)

«ժամանակով կ'ըլնի մե խայու թաքավոր...»:

(N 44, հատ. Բ, մաս Բ, էջ 557, տող 10)

Վերջանում են.

«Յոթ օր խարսնիս արիցին,
Քեֆ-ուրախութուն արիցին,
Կեր ու խում արիցին,
Մե մի բան շտվեցին:
Համա Աստծուց իրեք խնձոր իրե՝
Մեկ ականջ արողին...»:

(N 3, էջ 135—136, տող 270)

«Անունք խասան ուրինց մուրազ...
Երկնուց իրեք խնձոր իրի...»:

(N 7, էջ 325, տող 580)

«Նրանք խասան ուրենց սրտի մուրազին...
Երկնքից հիրեք խնձոր իջավ...»:

(N 44, էջ 560, տող 30)

Այս հինգ պատումներից N 4 պատումը, որ կրում է «Բաղդասարի ամուսնությունը» վերնագիրը, բանահավաք Գարեգին Հովսեփյանի կողմից սկզբից և վերջից արհեստականորեն կրճատվել է՝ հարմարեցվելով նրա կազմած «Սասմա ծոեր» ժողովածուի պահանջմունքներին: Այս մասին մի այլ առիթով մանրամասն խոսվել է: Պարզ է, որ սրա սկզբվածքի և վերջի մասին խոսք լինել չի կարող: Եվ հենց այս պատումն է, որ ունի ողորմիս: Հինգ պատումների մեջ է մտնում նաև N 20 պատումը (Գավաշ) («Սասնա ծոեր», հատ. Ա). սա բանաձևային սկիզբ ու վերջ չունի, սկսվում է սյուժետային անմիջական պատմվածքով, վերջանում սյուժետային դժի կտրուկ ավարտով՝ հղբայրների բերդաշինության միջադեպով:

Առասպելական-հեքիաթային մոտիվներով կազմված

միջադեպերի ու այլ տարրերի առատութիւնն է, որ հիմք է ստեղծել «Սանասար և Բաղդասար» ճյուղի առանձին, անկախ գոյութեանը: Եվ բնական է, որ առանձին տեսքով առաջին ճյուղը հանդիպում է միայն Մոկաց թեւում, իսկ Մշո թեւի պատումներում բոլորովին չի հանդիպում: Մշո պատումները, ի տարբերութիւն Մոկաց թեւի, ընտրում են ավելի իրական, վիպական մոտիվներ ու ձևեր:

Առասպելականի ու իրականի, հեքիաթայինի և վիպականի նախընտրութեան հարցում տարածայնութիւնները Մոկս և Մուշ խմբերի միջև սկսվում են հղբայրների ծնունդով: Մոկաց պատումներում հղբայրներն ունեն ջրային ծնունդ. երկվորյակ հղբայրների մոտիվին միացել է անապական հղիութեան և ջրային ծննդի հեթանոսական առասպելը: Իսկ Մշո պատումներում հղբայրների ծնունդն իրական է: Նույն տարբերութիւնը զգացվում է նաև ամուսնութեան միջադեպերում:

Ինչո՞ւ հատկապես Մոկաց պատումներում են պահպանվել առասպելական տարրերը կամ դրանք փոխվել հեքիաթային միջադեպերի. ինչո՞ւ հատկապես այդ պատումներում է նկատվում դրանց առատութիւնը:

«Արդեն Խորենացու ժամանակ Սանասարի պարզ զրույցը մշակված և ընդարձակված է եղել: Մեր պատմագիրը (Բ. է.) Արծրունի անունը «արծիվ ունի» ձևից բացատրելով՝ հիշում է Արծրունի անունը բացատրող մի առասպել, որ պատմում են Հադամակերտում. «Թողում զառասպելացն բաջադանս, որ ի Հադամակերտին պատմին մանկան նիրհելոյ անձրև և արև հակառակիալ; և հովանի թռչնոյ պատանւոյն թալկացելոյ»: Խորենացին, արհամարհելով առասպելը՝ դրանից շատ քիչ բան և շատ սեղմ ոճով է մեջ բերում, բայց երևւում է, որ Արծրունի անունը բացատրել են Արծրունյաց նախնուն, Սանասարին կամ իր հղբորը, հովանի անող արծիվից: Կնշանակի՝ Սանասարի զրույցն արդեն նյութ է դարձած եղել ժողովրդական բանաստեղծութեան»¹: Եթե Խորենացու

¹ Մ. Արեղյան, Երկեր, հատ. Ա, էջ 383:

[illegible]

[illegible]

ժամանակից սկսած, Վանա լճի ավազանում պատմվել է այդ առասպելը և նմանները, և եթե դրանց տարրերը Աբեղյանը ցույց է տալիս մեր վեպի ու այլ հեքիաթների մեջ իրենց զուգահեռներով, ապա բնական է, որ այդ առասպելները կամ դրանց տարրերը պահպանված լինեն հենց նույն տեղում՝ Վանա լճի շրջակայքում, այսինքն՝ Մոկաց թևի պատումներում: Բնական է նաև, որ դրանք շհանդիպեն Մշո պատումներում, որովհետև, ըստ երևույթին, այդ առասպելներն ի սկզբանե չեն միացել երկվորյակ եղբայրների զրույցին և չէին կարող պահպանվել: Ամպրոպային հերոսի կամ թռչուն-տոտեմի առասպելների միացումը եղբայրների զրույցին տեղական երևույթ է՝ հատուկ միայն Մոկաց թևին:

Ամուսնության թեմայի այս երկրորդ դրսևորումը առաջին ճյուղում բավարարում է վիպական ուրվագծի պարտադիր պահանջներից մեկը: Ամուսնությունը վեպում մշտական առկա թեմա է: Բայց այն կարևոր է վեպի համար ոչ հենց ամուսնանալու փաստով, այլ դա միջոց է երկրորդ սերնդի՝ Մեծ Մհերի ծննդի: Այս պատճառով էլ առաջին ճյուղում ամուսնությանը ուղեկցող միջադեպերը պատումների գերակշռող մասում բացակայում են, և միայն հիշատակություն կա երկվորյակ եղբայրների ամուսնանալու մասին: Պատահական չէ նաև, որ մեծ մասամբ ամուսնանում է եղբայրներից մեկը միայն, իսկ եթե մյուսն էլ է ամուսնանում, ապա մնում է անժառանգ: Առաջին ճյուղը բերդաշինությունից հետո նախապատրաստում է Մեծ Մհերի ծնունդը: Այդ նախապատրաստությունը որոշ պատումներում երկարում է, ձգձգվում, որոշ պատումներում էլ Մհերի ծնունդն անմիջապես հաջորդում է բերդաշինությանը, այսինքն՝ հիմնադրվեց Սասունը, Սասունին պետք է զորեղ ժառանգ: Որովհետև Մշո պատումներում հատկապես շեշտվում է զորեղ ժառանգի գաղափարը, դրա համար էլ եղբայրների ամուսնության մանրամասները վեպի նպատակներից դուրս են մնում: Ծրնվում է Մհերը, և վեպը հոգ չի տանում այն մասին, որ եղբայրներից մեկը մնում է անժառանգ: Իսկ եթե որոշ պա-

տումներ կատարում են ժառանգների բաժանումներ՝ Մհերը Սանասարի որդին է, Ջենով Հովանն ու Վերգոն՝ Բաղդասարի, կամ հակառակը, սա արդեն մեկ միջադեպի երկատում է, միևնույն հիմնական գաղափարի մասնակի կողմեր, որոնք էական նշանակութուն չունեն վեպի համար: Պատումներն իրենք իրենց ներսում լուծում են նման մասնատումների հարցը, այսինքն՝ պատումների ճնշող մասը զերծ է մասնատում-երկատումներից, վերապահումներից:

ԵՐԿՐՈՐԴ ՃՅՈՒՂ

Մեծ Մհերի ճյուղը, ինչպես արդեն նշել ենք, մեզ հասած գրառումներում առանձին և անկախ չի հանդիպում, բայց մյուսների հետ միացության մեջ բավական լայն տարածում ունի: Մեծ Մհերի մասին պատմվում է երեսունվեց պատումներում:

Այս ճյուղում նույնպես գործում է վիպական-ավանդական ուրվագիծն իր հիմնական թեմաներով: Սա տարբերվում է մյուս ճյուղերից նրանով, որ այստեղ թեմաներն ունեն մեծ մասամբ ուրվագծային պատկեր, այսինքն՝ դրանց շուրջ ամբողջական միջադեպեր չեն կառուցվում, վիպական հայտնի մոտիվները մնում են սոսկ որպես մոտիվ, սյուժեի տարր, նրանցով առանձին, ընդարձակ սյուժե չի կազմվում: Այս իսկ պատճառով Մեծ Մհերի վիպական ուրվագիծը վերականգնվում է ոչ թե մեկ միասնական ընդարձակ սյուժեի հիման վրա, այլ՝ տարբեր պատումներում պահպանված առանձին մոտիվների կամ դրանց թուղթիկ հիշատակությունների և սակավաթիվ ամբողջական միջադեպերի վրա:

Երկրորդ ճյուղը (համեմատաբար ամբողջական տեսքով, կամ թերի պատմված) պարունակող պատումների համադրումն ու համեմատությունը ցույց է տալիս, որ որոշ կարգի պատումներ պահել են առաջին թեման, մի այլ կարգը՝ երկրորդ թեման, մի մասը՝ շորրորդը (տե՛ս միջադեպերի տախտակը, Տախտ. 7): Բայց անխափր բոլոր պատումնե-

րում հիմնականը երրորդ թեման է: Տարբեր պատումներում ցրված բոլոր շորս թեմաների դոյության հանգամանքը թույլ է տալիս ենթադրել, որ երբեք Մեծ Մհերի ճյուղն ավելի ընդարձակ ու ամբողջական է եղել և հետագայում է մասնատվել, տարրալուծվել: Այդ է ապացուցում ոչ միայն համեմատական ուսումնասիրության միջոցով բոլոր պատումների հիման վրա վերականգնված վիպական-ավանդական ուրվագիծը, այլև Մեծ Մհերի ճյուղի ու կերպարի կարևոր դերն ու նշանակությունը վեպի ամբողջական կառուցվածքի մեջ:

Երկրորդ ճյուղի կառուցվածքային ուրվագծի քննությունը տալիս ենք առաջին ճյուղի համադրությամբ, որովհետև նախ. Մեծ Մհերի ճյուղը, որպես այդպիսին, վերակառուցում ենք տարբեր պատումներում ցրված առանձին թեմաների համախմբմամբ միայն: Ապա. առաջին և երկրորդ ճյուղերի համեմատական զուգադրությունը ցույց կտա, որ, իրոք՝

ա. վեպի տարբեր ճյուղերում հանդես է գալիս վիպական միևնույն ուրվագիծը.

բ. տարբեր ճյուղերում փոխվում է թեմաների ներքին հարաբերությունը:

Առաջին թեմա.—(կռապաշտ և խաչապաշտ թագավորներ, երկու հակոտնյա երկրներ, մշտական հակամարտություն, կովի իրադրություն):

Առաջին ճյուղ

Կռապաշտ և խաչապաշտ թագավորներ¹. մեկը զորեղ մյուսից, թույլը (խաչապաշտ) ենթակա և հար-

Երկրորդ ճյուղ

Մսրա թագավոր Մսրա Մելիք (մեծ) և Սասնա թագավոր Մհեր (Մեծ). որոշ պատումներում² Սասունը

¹ Առաջին ճյուղում առկա կռապաշտի և խաչապաշտի ու նրանց տերությունների անունների պատմական ու ժամանակագրական անախրոնիզմներն այստեղ զանց են առնվում:

² Պատումներ՝ № № 14, 17, 18, 22, 28, 30, 36:

կատու զորեղին (կռա-
պաշտ)։

Հարկատու է և ենթակա
Մսրրին, մյուսներում՝ Մս-
րրը ենթակա է և Հարկա-
տու Սասունին։

Երկրորդ ճյուղում կռապաշտ-խաչապաշտ հարաբերու-
թյունը պատմականորեն և աշխարհագրորեն ավելի որոշա-
կի է, քան առաջին ճյուղում։ Եթե առաջին ճյուղում այդ եր-
կու թագավորությունների ժամանակաշրջանն ու աշխարհա-
գրական սահմաններն անորոշ են, ապա երկրորդ ճյուղում
գրանք երկու հարևան տերություններն են՝ Սասունը և Մսր-
րը, իսկ ժամանակաշրջանը՝ միջին դարեր։

Բոլոր պատումներում Սասունը Մեծ Մհերի թագավո-
րության շրջանում ներկայանում է որպես հզոր տերություն։
Սա պատումներում արտահայտվում է և՛ պատմական որո-
շակի հիշողությունների, և՛ վիպական ձևով։ Շատախի Կա-
ճեա գյուղացի Հովան Զոհրաբյանի պատումում, որպես Մեծ
Մհերի կողմից նվաճված երկրներ, հիշատակվում են պատ-
մական որոշակի տեղավայրեր.

«Մհեր էլավ էտա երկրի թաքավոր.
Տիրեց շատ երկրներ, քավառներ։
Էնոր երկրի սահմաններ խասավ Ֆարկին.
Կնաց, խասավ շում Համիթի սահմաններ.
Տիրեց էտա տեղեր, նստավ...
Սասնա Մհեր կովու սկսեց.
Կնաց, խասավ մինչև Սեվարակ.
Սեվարակեն անցավ Բալաճուկ.
Կնաց, խասավ Մսրա երկիր,
Մսրա թաքավորին պոնեց...
Տարցավ, էկավ Համիթ նստավ.
Համիթ թաքավորութուն ընել սկսավ»։

(Հատ. Ա, էջ 1093, տող 60—70)

¹ Պատումներ՝ N N 15, 16, 17, 22, 23, 25, 26, 38։

Իսկ մոկացի Մանուկ Հարությունյանի մոտ Մհերի հզոր
թագավորության պատմական հիշողություններն արտահայտ-
վում են վիպական ձևով.

«Մհեր քառսուն տարի թագավորութուն արավ.
Մհեր ըսկո՛ն կը շախեր Սասուն,
Որ մարթ կը վախեներ, Սասուն մոտխասներ.
Չուրս պուլուր զաֆտեր էր, ուր ծեռաց տակ կը պախեր.
Հա՛վք շրր կանա էրթեր էնտեխ»:

(հատ. Ա, էջ 614, տող 210—220)

Միայն Մհերի մահից հետո է, որ Մելիքը կարողանում
է տիրել Սասունին, դարձնել իրեն հարկատու և գերեվարել
նրա կնոջն ու Դավիթ որդուն (տե՛ս Տ7, միջադեպ 25): Կամ
էլ ասվում է, որ Սասունը մինչև Մհերն է եղել Մսրից կախ-
յալ վիճակում, նրան հարկատու, իսկ երբ մեծանում է Մհերը
և դարձնում Սասունը հզոր, կտրում է Մսրա հարկը. ավելին,
հարձակվում է Մսրա վրա, սպանում Մելիքին, գերեվարում
նրա կնոջը (տե՛ս Տ7, միջադեպ 28): Երկու պատումում գոր-
ծում է (№ 18՝ Սպարկերտ¹ և № 28՝ Դատկու Մոճկոնց գյուղ²)
նաև խաբեությամբ սպանության վիպական մոտիվը, որը
դարձյալ իր մեջ պահում է պատմական որոշակի հիշողու-
թյուններ. Մելիքը խաբեությամբ որսի ժամանակ (կամ այլ
պարագայում) սպանում է Մհերին: Ալաշկերտցի Մանուկ Թո-
րոյանի պատումում (№ 33)³ Մհեր-Մսրա Մելիք (մեծ) հա-
րաբերությունն ավելի խաղաղ ընթացքի մեջ է. նրանք եղ-
բայրանում են՝ արյուն-արյան խառնելով: Իսկ Մշո թեև
պատկանող մի խումբ տալիս է Մհերի և Մելիքի միջև գո-
յություն ունեցող փոխադարձ պայմանի իրադրություն, որի
համաձայն մեկն ու մեկի մահից հետո մեռնողի որդիներին
մինչև շափահաս դառնալը պետք է պահի մյուսը (տե՛ս Տ7,
միջադեպ 34, 35):

¹ «Սասնա ծռեր», հատ. Ա:

² Նույն տեղում, հատ. Բ, մաս Ա:

³ Նույն տեղում, հատ. Բ, մաս Ա:

Միևնույն՝ Մհեր-Մսրա Մելիք, հարաբերության տարբեր մեկնությունները, վիպում հրկու տերությունների պատմական դարավոր իրավիճակի գեղարվեստական ընդհանրացված անդրապատկերումները լինելով հանդերձ, հուշում են երկրորդ ճյուղում առաջին թեմայի հրեմնի ավելի ծավալուն և միջադեպերով հարուստ վիճակ:

Երկրորդ թեմա.—(ամուսնություն):

Հիմքում լինելով նույնը՝ այս թեման առաջին և երկրորդ ճյուղերում ունի վիպական տարբեր դրսևորում և արտաքին ձևավորում:

Առաջին ճյուղում դործում են հետևյալ մոտիվները և դրանցով կազմված միջադեպերը:

1. Կռապաշտ թագավորի հարկահանները տեսնում են խաչապաշտի գեղեցիկ աղջկան, պատմում իրենց թագավորին աղջկա գեղեցկության մասին.

կռապաշտը խաչապաշտին պարտադրում է աղջրկան կնության առնելու իր կամքը.

2. Բոլոր պատումներում կռապաշտի այդ ցանկությունն ընդունվում է դժկամությամբ: Նրանց մեջ խոսում է կրոնական ինքնասիրությունը՝ իրենք խաչապաշտ, նա կռապաշտ:

Երկրորդ ճյուղում մոտիվները մի փոքր այլ են. այլ են նաև միջադեպերը:

1. Մսրա թագավորն անժառանգ է: Նրա կինը հրավերք է ուղարկում (աշուղ, նամակ, իր գըլխաշորը, գոտին) հարեվան Սասուն երկրի թագավոր Մհերին, առաջարկելով կենակցել իր հետ:

2. Բոլոր պատումներում Մսրա թագուհու հրավերքն ընդունվում է դրժկամությամբ: Դժգոհ են հատկապես Մհերի կինը, Ձենով Հովանը (Քեռի Թորոսը), որոնք հրավերքի հտևում տեսնում

են պետական նպատակ-
ներ: Շեշտվում է նաև
կրոնական տարբերու-
թյունը:

3. Խաչապաշտ հայրը խոր-
հուրդ է անում իր մեծա-
մեծների, ազգականների
(Քեռի Թորոս) և աղջկա
հետ՝ տալ, թե շտալ: Հա-
նում են մարդասիրական
ու դիվանագիտական
խոհեմ վճիռ՝ մի աղջկա
համար մի ազգ շկոտո-
րել: Այստեղ մեծ դեր է
խաղում աղջկա անձնա-
զոհության մոտիվը:

3. Մհերը խորհուրդ է ա-
նում իր կնոջ, ազգական-
ների, մեծամեծների հետ՝
գնալ, թե շգնալ: Հակա-
ռակ կնոջ ու ազգական-
ների կամքի, Մհերը հա-
նում է անխոհեմ վճիռ-
հաղթում է տղամարդկա-
յին ինքնասիրությունը:

Առաջին ճյուղում գործում է բռնությունը և ուժը, կռա-
պաշտի հզորության գերակշռությամբ, երկրորդում՝ խաբ-
դավանքը և տղամարդկային թուլությունը, խաչապաշտի
հզորության գերակշռությամբ:

Հիշյալ երկու թեմաները Մեծ Մհերի ճյուղում կարևոր
են, բայց ոչ կենտրոնական, հանգուցային: Դրանք նախա-
պատրաստում են հանգուցը, որը կառուցվում է երրորդ թե-
մայի վրա՝ հզոր ժառանգ: Այս մասին մի փոքր հետո:

Չ ո ր ր ո ր դ թ ե մ ա. — (շինարարություն):

Այստեղ արդեն թեմայի և՛ դրսևորման ձևն է տարբեր,
և՛ արտահայտած գաղափարը:

Առաջին ճյուղ
Երկվորյակ եղբայրները՝
փախչելով կռապաշտ հոր

Երկրորդ ճյուղ
Մհերը արդեն հաստատ-
ված Սասունում և նրա

¹ ՁԱՍԱԳ (Մհերը). — Խող տամ էնուր կուտիկ,

Որ կը տա կուտիկ, շառնը կուտիկ:

(հատ. Ա, էջ 332, տող 10)

երկրից, տարբեր ալլադգի
թագավորների մոտ ապաս-
տան խնդրելուց և երկար
թափառումներից հետո մի
ամայի, անառիկ վայրում
հիմնում են իրենց բերդը՝
Սասունը, շինում են գյուղ
իրենց համերկրացիների
համար։ Հիմք է դրվում
Սասնա մեծ տան։

շրջակայքում կառուցում է
բերդեր, ամրոցներ, եկեղե-
ցիներ, որսասար՝ Սասունը
օտար նվաճողներից պաշտ-
պանելու, իր հավատն ու
տերության սահմանները
հաստատ պահելու համար։
Պաշտպանվում է Սասնա
մեծ տունը։

Առաջին ճյուղում բերդաշինությունը կենտրոնական,
հանգուցային թեմա է և անխտիր բոլոր պատումներում ար-
տահայտվում է հղբայրների կողմից Սասնա բերդի հիմնա-
դրման միջադեպերով։ Երկրորդ ճյուղում այն հանգուցային
չէ, առանձին միջադեպեր շունի, բայց երկրորդ ճյուղի և Մեծ
Մհերի կերպարի համար ունի մեծ կարևորություն։ Մհերի
անվան հետ է կապվում բերդերի, Մարութա Բարձր Աստվա-
ծածնա և Ծովասարի շինությունը։ Մհերի բերդաշինությունը
առաջին ճյուղում հղբայրների կողմից Սասնա բերդի, Սասնա
տան հիմնադրումից տարբերվում է նրանով, որ եթե այնտեղ
բերդը խորհրդանիշ էր հայրենիքի որոնման, հիմնադրման
ու բնօրրանի, իսկ իր արտաքին նկարագրությամբ համա-
պատասխանում էր կիկլոպյան ամրոցների շինության ձևին
ու ժամանակին (երկու գետերի խառնուրդի ակունքում շին-
վելու հանգամանքը նույնպես լոկ խորհրդանշային պատկե-
րավորում չէ, այլ, իրոք, այն ժամանակների բնակության
համար հարմար դիրք), ապա այստեղ այն իր մեջ պահում
է միջնադարյան բերդաշինության պատմական արձագանք-
ները, երբ Հայաստանն ստիպված էր դիմելու բերդերի ու
ամրոցների պաշտպանական համակարգին¹։ Սա խորհրդա-

¹ Տե՛ս Ս. Վ. Հաբուրյունյան, Անբերդը 10—11-րդ դդ., «Լրաբեր», 1966, № 10 և Անբերդի պաշտպանական սիստեմը, «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 1։

նիշ է նաև խաղաղ ժամանակներում նյութական ու հոգևոր մշակույթի վերելքի: Եթե առաջին ճյուղում շորրորդ թեման հանդես է գալիս իր ա մասով (երկրի հաստատում), ապա երկրորդ ճյուղում՝ բ և գ մասերով (սլաշտականություն և խաղաղ պայմաններում նյութական ու հոգևոր մշակույթի վերելք): Մհերի դերը վեպում, եթե վերացարկված մոտենանք հարցին, արդեն հիմնադրված տան հաստատումն ու սլաշտականությունն է: Սասնա մի անտիպ պատումում այդ դերն այնքան է շեշտված ու որոշարկված, որ թվում է պատմական իրողությունների ու պատմական անձնավորության կատարած գործերի փաստագրում:

Սասնա այդ անտիպ պատումը, որը շունի առաջին ճյուղը, սկսվում է հենց Մհերի բերդաշինության ու եկեղեցաշինության նկարագրությամբ. իսկ նրա տիրապետության ժամանակները պատմականորեն առավել ճշգրտված են՝ արարական արշավանքների ժամանակաշրջան: Պատումն սկսվում է այսպես.

«Եսպար արապնին տեր եղան Հայաստանին,

Մեջ Սասունին կ'ապրեր Առյուծ Մհեր,

Ըր աղբեր Ձենով Օհան:

Մհեր գտրիճ ու խելացի մարդ էր:

Մեջ Սասունին շատ բերդիր դնեց.

Շինեց, ուար արապնու հճումի շաղ ասե (°)

էղնի մեջ իր շինած բերդերուն:

Շինեց աղկեցիք:

Մեկ հադդա միկա լե կը մնա

Սասունի ամենաբարձր սարի գլուխ:

էն ժամանակ, օր արապնին էկան հադա Հայաստան

Ու զամեն տեղ քարուքանդ էնձին,

Սասուն ազատ մնաց»:

Պատումը ոչ մի հասցե չունի, հայտնի չէ ո՛չ ասացողի, ո՛չ բանահավաքի անունը: Ձեռագիր տետրի կազմի վրա գրված է միայն. «Սասնո Հազդո գյուղաքաղաքի բարբառով»: Պատումը վերնագրված է՝ «Առյուծ Մհեր»:

Ահա մի այլ անտիպ պատում՝ գրաված Բաղեշի նահանգի Դատիկ գավառի Պաս գյուղացի ռես Մարգար Մանուկի Ստեփանյանից (գրության տեղ, թիվ և բանահավաքի անուն նշված չէ)։ Ծովասարն այս պատումում Մհերի որսասարը չէ միայն, այլ՝ Մսրա Մելիքի դեմ պաշտպանական մի կառույց։

«Ճոճ Մհեր ախպերտեքանց խոսավ, թե՛
— Խերիք չէ՞, օր Մսրա Մելիք գա,
Մեր մընեն տուրք ու խարաճ առնի։
Ախպերտիք ցավցին էնոր ասածից, թե՛
— Ախպեր, մենք ի՞նչ կարող ենք Մսրա Մելիքին էնել։
Մհեր ասաց.— էրթանք, Ծովասարին պարիսպ շինինք
Ու շորս տուռ թողնինք.
Մսրա Մելիք երբ գա միւր մընե տուրք-խարաճ առնի,
էն տոներուց մեկուց ներս մտնի,
Մենք էն ժամանակ իր առաջ կբռնենք,
Ուր կխոսինք, թե՛ խերիք է։

Շինեցին զպարիսպ Ծովասարի բոլորը։
Մսրա Մելիք արևմտյան տունեն ներս մտավ,
Առաջը բռնեցին։ Ճոճ Մհեր ասելով.— Խերիք է,
Թե քաղցած իս՝ կեր կերակուր,
Թե ծարավ իս՝ խմա ջուր։
Մսրա Մելիք տարցավ, գնաց։
Ասաց.— էլ ձեր երկիր չեմ իգա»։

Տպագիր պատումներում Մհերի կողմից վանքերի, բերդերի շինության նման ընդարձակ միջադեպեր չկան։ Միայն երկու պատումում պահպանվել են այսպիսի դրվագներ։
Գավառացի Գրիգոր Փոխան Եղիազարյան.

«Մհերին կըրեր Գանձասար, ամեն ըդտեղ էր.
Մեջն շինել էր Խաչ Մարութա Բանձր Ասվարածին.
էնոր սարն էր, էնոր ուխտատեղն էր»։

(Հատ. Ա, էջ 947, տող 250—260)

Կաճեացի (Շատախ) Հովան Զոհրաբյան.

«Մհեր պերեց, Արղնու վանք շինեց.
Ելավ էտա տեղ անգալներ տրավ.
Ելավ պերեց կուրեր, կաղեր,
Պերեց պակաս մարմին ունեցողներ.
Կանչեց, պերեց տերտերներ, վարտապետներ,
Մե խորոտ ճոշ վանք շինեց,
Իթող էլ մ' էլ էկավ Սասուն»:

(Հատ. Ա, էջ 1094, տող 80)

Այսպիսի բեկորները ենթադրել են տալիս Մհերի շինարարությունը արտացոլող ավելի ընդարձակ միջադեպեր: Սրանք են նաև այն բանի բանալին, որ Մհերը, որպես Սասնա տերության սահմանները հաստատող, հզորացնող ու շինարար, ուղղակիորեն հանդես չի գալիս, այլ դա բացահայտվում է հաջորդ ճյուղի մեջ: Դավիթն ամրացնում է իր հոր բերդերն ու վանքերը, որոնք քանդել էր Մսրա Մելիքը (մեծ), որս անում իր հոր պարսպապատած Մովսաարում, որը նույնպես զավթել էր Մելիքը Մհերի մահից հետո: Ամեն տեղ, հատկապես արտատեր Պառավի խրատական ու նախատական խոսքերում, վերակենդանանում է Մեծ Մհերի ժամանակների ու կերպարի հիշողությունը, այն, որ Մհերի թագավորության ժամանակ Սասունը հզոր տերություն էր: Այս հիշողությունը նույնպես պատմական ու գեղարվեստական ընդհանրացնող ուժ ունի: Կերպարի այս անուղղակի ամբողջացումը տիպականացման միջոց լինելուց բացի, իր մեջ պահում է պատմական որոշակի իրողությունների ու իրադարձությունների, ինչպես նաև Մհերի շուրջը հյուսված ծավալուն զրույցների արձագանքներ: Պատմական այս հիշողություններով Մեծ Մհերի դերն ու կերպարը դառնում է որոշակի պատմական իր վաղնջական առասպելական շերտերով հանդերձ: Մհերի նախնական կերպարից շատ քիչ բան է պահպանել վեպը, գրեթե աննշան տարրեր: Վեպն օգտորվել է այդ առասպելական կերպարից պատմական անց-

քերի ու անձանց դյուցազնական կերպավորման համար։ Միջնադարյան պատմական կյանքը հարթել է հին հիշողությունները, իր զորեղ կնիքը դրել հնի վրա, օգտվել բանահյուսական վիպական նյութից, ծառայեցրել եղածն իր նոր ապրածը, խոհն ու խոյանքը արտահայտելու համար։ Ահա թե ինչու, վեպն իր ամենահին տարրերով, իր ավանդական ուրվագծով հանդերձ, նորովի ձևավորվել է միջնադարում, միջնադարյան դեպքերի ազդեցության տակ։

Երրորդ թեմա.—(հզոր ժառանգ)։

Չորս ճյուղերից և ոչ մեկում հզոր ժառանգի հարցն այնպիսի սրությամբ չի դրված, ինչպես երկրորդ ճյուղում։

Կա երկու տերություն՝ Սասուն և Մսրը. շկան դեռևս դաժաժառանգների։ Եվ ժառանգի հարցը մշտապես ուղեկցում է առաջին (Մհեր—Մսրա Մելիք) և երկրորդ (Մհեր—Մսրա խանում) թեմաներին։ Այսինքն՝ 1. երբ Մհերը զավթում է Մսրը, դարձնում իրեն հարկատու, կենակցում է Մսրա խանումի հետ—ծնվում է Մսրա Մելիքը (փոքր), 2. երբ Մսրա խանումի հրավերով Մհերը կենակցում է նրա հետ—ծնվում է Մելիքը։ Մելիքը զորեղ ժառանգ է, նրա ծնունդը խորհրդանշում է Մսրա հզորացում, այն, ինչ ակրնկալում էր Մսրա խանումը։ Մհերը տեսնում է դա. Մսրա խանումն էլ այլևս չի թաքցնում իր դիտավորությունը.

«Մեր մեռնի քի, Մսրա Մելիք,
Մսրա օջախ կայնացրցիւ,
Սասնա օջախ փրճացրիւ»։

(հատ. Ա, էջ 492—493, տող 570)

Մհերն զգում է իր սխալի վտանգավորությունը, և նրա համար նոր միայն իմաստավորվում են իր կնոջ խոսքերը.

«էնիկ (Մսրա խանումը) չորղբա քու խորոտկութեն,
Կը որղբա քու հեգիթութեն, քու կտրրճութեն.
Քու կտրրճութեն լսիր ք, խասկըցիր ք։
Քի կը տանը՝ մեկ տղե մ՝ իլնը ուր խամար.

Իլնր, Մսրա օնախ կայնացրցր,

Սասնա օջախ փրնրցրցր:

Քի տղա չկա, մ'էրթա, կաց էստեղ,

Աստված բալքի տղե մ' տա քի,

Իլնր Սասնա օջխը վերա:

Սասնա օջախ մը փրնացրցր, Մսրա՝ կայնեցրցր»:

(Հատ. Ա, էջ 492, տող 540—550)

Անրնդհատ կրկնվող օջախ-հայրենիք գաղափարը միանում է ժառանգ գաղափարին և դառնում երկրորդ ճյուղի հանգույցը: Այսպիսով, Մեծ Մհերի ճյուղը ունի վիպական կառուցվածքային մեկ հիմնական թեմա՝ ժ առ ա ն գ - օ ջ ա խ: Առաջին երկու թեմաները պատմվում են սրա շուրջը, նախապատրաստում գաղափարական այս հանգույցը:

Նախքան Սասնա ժառանգի՝ Դավթի ծնունդը, այդ ծնունդը դառնում է անհրաժեշտություն: Միջանկյալ միջադեպերը՝ Մհերի խորհրդածությունները և վերադարձը, կնոջ երդումն ու երդմնազանցությունը, նրանց հաշտությունը, նախապատրաստում են Դավթի ծնունդը: Ծնվում է Դավիթը. հայի ճրագրն ու օջախը վառ է մնում:

Ժառանգ-ճրագ-օջախ-հայրենիք գաղափարը որոշ պատումներում ուղեկցվում է իր սերնդի մեջ իրեն տեսնելու ծնողի ու կյանքի հարատևության կենսափիլիսոփայությամբ: Հանուն ժառանգի ու Սասնա տան, Մհերի ու նրա կնոջ անձնազոհությամբ ու կյանքի հարատևության գաղափարով կնքված Դավթի ծնունդն ստանում է վիպական վեհ կերպարանք:

Վեպի երեք ճյուղերն ավարտվում են հզոր ժառանգի ծնունդով: Ծնվում է Մեծ Մհերը, ավարտվում է առաջին ճյուղը. ծնվում է Դավիթը, ավարտվում է երկրորդ ճյուղը. ծնվում է Փոքր Մհերը, ավարտվում է երրորդ ճյուղը: Չորրորդ ճյուղն այսպիսի ավարտ չունի: Սակայն չորրորդի համար նույնպես ժառանգը մնում է առաջնակարգ հարց՝ Փոքր Մհերին ժառանգ կլինի՞, կշարունակվի՞ Սասնա տան դյուցազունների սերունդը—հոր անեծքով Փոքր Մհերը մնում է

անժառանգ, և փակվում է Սասնա Տղոր տան դյուցազնական պատմության վերջին էջը:

Մեծ Մհերի ծնունդը, ուրեմն, ո՛չ թե երկրորդ ճյուղի սկիզբն է, այլ՝ առաջին ճյուղի վերջը: Դա բխում է վիպական կառուցվածքային ուրվագծի ավարտից: Վեպը հերոսի երջանիկ ամուսնությամբ չի սահմանափակվում: Նրա պահանջը ժառանգն է, ժառանգ, որ վիպական տրամաբանության համաձայն ամեն ինչով պիտի գերազանցի իր հորը՝ հետնորդ սերունդն ավելի ուժեղ պիտի լինի, քան նախորդը: Վեպի կառուցվածքային ուրվագծի ժառանգ պահանջի համաձայն է, որ առանձին գոյություն ունեցող տարբեր սյուժեները միանում են, դառնում ճյուղ. ճյուղերն էլ միանում, կազմում են մի ամբողջություն: «Սասնա ծռեր» վեպի շորս ճյուղերն իրար հետ կապվում են շորս սերունդների հաջորդականությամբ, սերնդակցությամբ¹:

Վիպական-ավանդական ուրվագծի համաձայն հերոսը պետք է ունենա վիպական ծննդի, մանկության, պատանեկության ու ամուսնության նկարագրություններ, իր ծնունդով պետք է կապվի աստվածների, բնության տարերքի, կամ մեծանուն, ազնվազարմ տոհմի հետ: Մհերն իր ծնունդով կապվում է առասպելական ծագումով Սանասարի հետ, որը միաժամանակ Սասնա տան հիմնադիրն է: Մոկաց պատումները (Մոկս, Շատախ, Գավաշ, Սպարկերտ, Հայոց ձոր, Վան)² Մեծ Մհերի մանկության և պատանեկության, ամուսնության մասին միջադեպեր չունեն: Սրանք տալիս են միայն Մհեր-Մսրա խանում և ժառանգ-օջախ թեմաների հետ կապված միջադեպեր, այն էլ՝ խիստ սահմանափակ թվով: Այս պատումներում է, որ Մեծ Մհերի ճյուղն ունի ուրվագծային պատկեր: Եվ այս ընդգրկմամբ Մեծ Մհերը Մոկաց թևում ամբողջական ու ինքնուրույն ճյուղի տեսք ու ծավալ չունի:

¹ Հերոսների սերնդակցության մասին տե՛ս Մ. Արեղյան, երկեր, հ. Ս., էջ 117, Հ. Օրբելի, Հայկ. հերոսական էպոսը, էջ 77—80:

² Մոկաց պատումներ՝ № № 2, 5, 6, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 21, 22, 23, 24, 25, 38, 41, 44:

Այն կազմում է Դավթի ճյուղի սկիզբը՝ նախապատրաստելով նրա և Մսրա Մելիքի ծնունդը: Պարզ է, որ այս տեսքով ու ծավալով Մեծ Մհերի ճյուղը Մոկաց պատումներում առանձին ու անկախ հանդես գալ չէր կարող: Իսկ Մշո պատումներն¹ ավելի ամբողջական են: Սրանք Մհեր-Մսրա խանում, Մհեր-Մսրա Մելիք և ժառանգ դժի հետ միասին լրացնում են նաև վիպական ուրվագծի մանկության ու պատանեկության պահանջը: Հատկապես Ալաշկերտի № 33 և 34 պատումները (ասացողներ՝ Մանուկ Թորոյան և Կարապետ Թամոյան) կերտում են կերպարին խիստ բնորոշ վիպական միջադեպեր: Մշո պատումներն են պարունակում նաև այն միակ միջադեպը, որ վիպում կապվում է միայն Մեծ Մհերի կերպարի հետ. նրա մենամարտը առյուծի հետ և առյուծին հաղթելը: Այստեղից էլ, ըստ պատումների մեկնաբանության, նրա Առյուծ Մհեր կամ Առյուծաձև Մհեր անունը: Սա հանդիպում է միայն հրեք պատումում (№ 27, 29, 45՝ Մուշ): Երկու պատումում պահպանված է Մհերի միայն Առյուծ անունը, առանց միջադեպի՝ № 12 (Մոկս, «Առյուծ Մհեր», էջ 614, տող 210) և № 34 (Ալաշկերտ, «Առյուծ Մհեր», էջ 375, տող 520): Սա նշանակում է. կամ՝ ա) առյուծ սպանելու միջադեպն այդ պատումներում ընկել է, մնացել է միայն անվան հիշողությունը, կամ՝ բ) անհայտ ժամանակներից եկող Առյուծ Մհեր անունը ենթարկվել է հետագա մեկնաբանության, և առաջացել է առյուծ սպանելու միջադեպը: Ամեն պարագայում, ուշադրության արժանի է, որ այդ անունը և միջադեպը կապվել է հենց Մհերի անվան հետ և ոչ ուրիշ կերպարի:

Բոլոր ճյուղերում գործող միևնույն վիպական ուրվագիծը երբեմն պատճառ է դառնում որոշ պատումներում առկա ներքին անաբրոնիզմների, հակասությունների:

Օրինակ. Սասնա № 30 պատումը²: Սասնա տպագիր

¹ Մշո պատումներ՝ № № 27, 29, 33, 34, 36, 42, 45:

² «Սասնա ծուր», հատ. Բ, մաս Ա:

պատումներին միայն սա ունի «Սանասար և Բաղդասար» ճյուղը, այն ևս խիստ համառոտ և մյուսներից բավական տարբեր։ Այստեղ հղբայրների հետ կապվող Սասնա բերդաշինության միջադեպը չկա, այսինքն՝ այդ ճյուղի հիմնական և կենտրոնական թեման։ Չկա նաև Սասուն տեղանվան հետ կապված վիպական ստուգաբանական ավանդությունը, որն առկա է անխտիր բոլոր պատումներում։ Այս պատումում Սասուն տեղանունն առաջին անգամ հանդիս է դալիս որպես արդեն գոյություն ունեցող երկիր։ Պատմվում է այսպես, երբ.

«Մեղիք զարգից, սպանից զՍոնասար,
Մսրը զավթից, էղավ Մսրա թակավուր։
Մհեր թողից, էգավ Սասուն։
Մեղքոն թակավուր գ'աբրեր Ախլաթ.
Քեռի Թորոս գ'աբրեր Մանզգիրդ.
Մհեր էգավ, նսդավ Սասուն.
Քառսուն դարի Սասուն էրից իշխանութին»։

(էջ 160—161, տող 50—60)

Եվ երբ Մհերն ամուսնանում է Քեռի Թորոսի աղջկա հետ.

«Առան զախճիկ, Թորոս լը ուրանց հիդ,
Կացին, հասան Մսրա Բաղափ։
Ժամանագ ըմ մանցին անդիխ, էղավ խլալի։
Թորոս ասից.—Մհեր, էդպես չէղնի,
Ելի էրթանփ, մըզի երգիւր ըմ կաշինփ։
Ելան էգան, հասան Սասուն։
Բըղըդեցին, ճրիր կիշըռեցին,
Ծովասըրու ճըրին հավնան։
Զարգեցին, շինեցին ատ ճրի գոխկին զուրանց պիրթի։
Ադդիխ Տավիթ էղավ»։

(էջ 161, տող 70—80)

Այստեղ բացահայտ վիպական անաբրոնիզմների կան։ Եթե Մհերը Մսրից թողել եկել էր Սասուն, քառասուն տարի

Սասունում իշխանություն արել, ամուսնացել Քեռի Թորոսի աղջկա հետ, որը նաև Մանազկերտի տերն էր, ինչո՞ւ Թորոսի հետ միասին գնում են նորից Մսրը, մնում այնտեղ մի ժամանակ, հետո նոր փնտրում իրենց մի հարմար բնակավայր, որը դուրս է գալիս դարձյալ Սասունը, ուր և հիմնում են իրենց բերդը։ Վեպն ընդհանրապես պատասխանատու չէ նման անաքրոնիզմների համար։ Բայց այստեղ, մի քանի տողում դրանք ակնառու հակասական են, և ասացողը պարտավոր էր պահպանել իր պատմածի տրամաբանական ընթացքը։ Հակասությունների պատճառը նույն շինարարության թեմայի երկու՝ ա և բ մասերի խառնվելն է, այսինքն՝ երկվորյակ եղբայրների կիկլոպյան բերդաշինության և Մհերի միջնադարյան ամրոցաշինության, եկեղեցաշինության։ Նըշված պատումում գերակշռում է բ մասը՝ Մհերին վերաբերող, միայն թե այն պահել է հիշողությունն նաև եղբայրների բերդաշինությունից։

Բայազետի № 36 պատումը՝ ակնհայտորեն շեղվում է երկրորդ ճյուղի հիմնական սյուժետային գծից։ Այստեղ, մյուս պատումների համեմատությամբ, խախտված է առաջին և երկրորդ ճյուղերի տեղն ու դերը—խաչապաշտ աղջկա ջրային հղիությունից ծնվում է Մհերը, իսկ երկվորյակ եղբայրները Մհերի որդիներն են, այսինքն՝ փոխվել է հայրերի և որդիների տեղերը։ Այս խախտման պատճառը նույնպես վիպական ուրվագիծն է։

Այլ պատումներ

Առաջին ճյուղ

1. Կռապաշտը բռնի խաչապաշտի աղջկան առնում է կնության. տանում է իր երկիրը. աղջիկը չի կենակցում նրա հետ. (տարբեր) տարի ժամա-

№ 36 պատում

Առաջին ճյուղ

1. Կռապաշտը բռնի խաչապաշտի աղջկան առնում է կնության. չի տանում իր երկիրը, ոռով-հետև աղջիկն անշափահաս է. ծնողները 12 տա-

՝ «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Բ։

նակ է խնդրում կռապաշտից, վերջինս թույլ է տալիս. աղջիկը հղիանում է ջրից, ծնվում են երկվորյակ եղբայրները:

2. Եղբայրները՝ խմելով նույն ջուրը, ինչից հղիացել էր իրենց մայրը, հզորանում են:

3. Եղբայրները սպանում են իրենց կռապաշտ հորը, փշրում կուռքերը և փախչում նրա երկրից:

4. Եղբայրներն իմանում են իրենց մոր վրա գործադրած բռնության մասին, սպանում են կռապաշտին, փախչում մոր հայրական երկիրը:

5.

չ ի ք

6. Եղբայրները ծառայության են մտնում տարբեր թագավորների մոտ:

7. (Որոշ պատումներում թագավորներից մեկն իր աղջկան տալիս է Աբամելիքին կնության):

8. Եղբայրները հիմնում են Սասնա բերդը:

րի ժամանակ են խնդրում կռապաշտից, վերջինս թույլ է տալիս. աղջիկը հղիանում է ջրից, ծնվում է Մհերը:

2. Մհերը՝ քնելով նույն մատուռում, ուր ջուր էր խմել և հղիացել իր մայրը, հզորանում է:

3.

չ ի ք

4. Մհերը Պառավից իմանում է, որ իր մայրը կռապաշտի նշանածն է, գնում, սպանում է կռապաշտին ու նրա որդուն:

5. Մհերի և Վանա աղջկա ամուսնությունից ծնվում են զույգ եղբայրները՝ Աբամելիք և Սանասար:

6. Եղբայրները ծառայության են մտնում Բաղդադի խալիֆի մոտ:

7. Բաղդադի խալիֆը իր աղջկան տալիս է Աբամելիքին կնության:

8. Եղբայրները հիմնում են Սասնա բերդը:

9. Սանասարից ծնվում է
Մհերը:

9. Աբամելիքից ծնվում է
Դավիթը:

Պատումների այժմյան վիճակով և դրանց ընդհանուր համեմատության մեջ հեշտ է տեսնել, որ այս միակ պատումում խառնվել են երկու ճյուղերը և կերտվել նորովի: Միայն փոխվել են կերպարների և միջադեպերի տեղերը, իսկ վիպական ուրվագծի մեջ փոփոխություն չի մտել:

Այն, ինչ մյուս պատումներում միայն Մեծ Մհերի ճյուղինն է, առկա է նաև այս պատումում՝ Մհերի ապօրինի կապը Մսրա թագավորի կնոջ հետ, Մսրա Մելիքի ծնունդը, Մելիքը Մհերի մահից հետո գերեվարում է սասունցիներին, Մհերի կնոջն ու որդիներին: Ուրեմն, պահպանվել են Մհերի ճյուղի հիմնական միջադեպերը, եղբայրների ճյուղից ավելացել են նորերը: Այս ընթացքի մեջ Մհերը շահել է, եղբայրները՝ կորցրել: Եղբայրների դերը խիստ նսեմացել է և փոքրացել:

Այս պատումում առավել ևս շեշտված է զորեղ ժառանգի գաղափարը. այդ մասին բարձրաձայն խորհրդածում է Քեռի Թորոսը: Նա խստագույնս ընտրություն է կատարում Աբամելիքի որդիների միջև. նրանց ծնունդը չի ուրախացնում Քեռի Թորոսին: Միայն Դավթի ծննդյան լուրն առնելիս.

«Թեևրը վեկալից խաղցավ:

Ասին.—Հը՞նչ ես խաղում:

Ասավ.—Սասունա ճրագ կպավ.

Ասուն փառք յըլնի»:

(էջ 117, տող 790)

Շեշտված է Մհերի ու Դավթի ծնունդը, Աբամելիքինը և Սանասարինը՝ շեշտադրված: Նրանք ոչնչով չեն ապացուցում իրենց հորն արժանի կամ նրան գերազանցող (ինչպես հատուկ է վիպական տրամաբանությանը) հետնորդ լինելու հանգամանքը:

Այս պատումի քննությունը պարզում է, որ վիպական ուրվագիծը ո՛չ միայն պարտադրում է սերունդների հաջոր-

դա փոխություն, այլև՝ հաջորդականություն, այսինքն՝ տվյալ դեպքում, «Սասնա ծռերում» գոյություն ունի սերունդների ավանդական հաջորդականություն՝ Սանասար—Մեծ Մհեր—Դավիթ—Փոքր Մհեր: Երբ խախտվում է այս ավանդական կարգը, խախտվում է նաև սերունդների տեղն ու դերը վեպի ընդհանուր կառուցվածքի մեջ:

Սասնատման պատճառով թափից ընկել է նաև նրանց միակ միջադեպը՝ Սասնա բերդաշինությունը: Սկզբում հղբայրները հիմք են դնում իրենց գյուղին, հետո թողնում գնում են, մտնում ծառայության Բաղդադի խալիֆի մոտ, Քեռի Թորոսին նույնպես տանում իրենց մոտ, ամուսնանում, Քեռի Թորոսի այն դառը մտքերից հետո, թե.

«Մենք հելեր ենք կնկա կնիկ...

Որ մեր դուշման թողեր ենք Կապուտկող,

Մենք էկե, խալիֆին ղուլլուղ ենք անում.

էս ջուրը զորեղ չի,

Ձեր էրեխեն ղոշաղ չյըլնի դուս».

(էջ 114, տող 710—720)

Թողնում գալիս են իրենց ընտրած վայրը, հիմնում իրենց գյուղը, շինում ժամ ու բերդ: Այստեղ բերդաշինության միջադեպն արժեքազրկվել է և մնացել առկախ: Նման պարագայում հղբայրների դերը հանգել է այն բանին, որ նրանք միջանկյալ և կապող օղակ են Մհերի և Դավթի միջև, օղակ, որը կարող էր լինել, կարող էր և չլինել:

Ինչո՞վ կարելի է բացատրել № 36 պատումում կատարված ճյուղերի տեղափոխությունը:

Պատումիս ասացող Առաքել Շակոյանն այս վեպը սովորել է իր հորից և ավագ հղբորից, որոնք գաղթել են Ղըշլաղ (Նոր Բայազետ) 1828 թվին Բայազետի Բարաքյաթ գյուղից, ուր վերաբնակվել էր նրանց պապը Դիդամից: Առաքելը, իր ասելով, վեպը մի քանի անգամ լսել է նաև Նոր Բայազետի գավառի Բաշքենդ գյուղի մշեցի Ավդալից, որ հրոշակված է եղել նրանց կողմերում որպես լավ հեքիաթասաց¹:

¹ «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Բ, էջ 91:

№ 35 պատումի ասացող Հակոբ Նրդեյանի մասին նույնպես հիշատակվում է, որ վեպը լսել է Բաշքենդ գյուղում Մուխսի Ավդալ Հզրոյանից՝ բնիկ Սասուն գավառի Իշխանաձոր գյուղից¹, որը եղել է 115 տարեկան: Ավդալ Հզրոյանը լսել է այս պատմությունը իր հորից կամ պապից և իր աշքերով տեսել պատմության մեջ հիշվող բոլոր նշանները, տեղանունները: Բանահավաք Նրվանդ Լալայանը նույնպես հաստատում է, որ Հակոբ Նրդեյանը սովորել է Բաշքենդցի նույն Ավդալից, ինչ որ Առաքել Շակոյանը: Այս Ավդալը մի րանահավաքի մոտ հիշվում է մշեցի, մյուսի մոտ՝ Սասունի Իշխանաձոր գյուղից: Ավելի հավանական է, որ սասունցի է: Մեծ Մհերի կերպարը թե՛ Սասնո, թե՛ Մշո պատումներում խիստ գործուն է և ամբողջական: Թերևս, այդպես է եղել նաև սասունցի Ավդալի մոտ: Հնարավոր է, որ Մհերի մեծ դերը վեպում խառնել է ասացող Առաքել Շակոյանի մտքի ընթացքը, մանավանդ՝ Սասնո պատումներն ապացուցում են, որ «Սանասար և Բաղդասար» ճյուղը մեծ տարածում չի ունեցել Սասունում: Բավական հարուստ է նաև այս պատումի աշխարհագրական կենսագրությունը—Առաքելի ապուլապալը՝ Դիդամից, հայրը՝ Բայազետից, ինքը՝ Նոր Բայազետից, Ավդալը՝ Սասունից: Ըստ այսմ էլ կարող էին տարբեր լինել վեպի վրա ներգործող և իրենց հետքը թողնող ազդակները:

Այս բոլորով հանդերձ, Բայազետի № 36 պատումը մյուսներից առանձնանում է հրկրորդ ճյուղի իր միջադեպերի տեղով ու դրոշյամբ, իսկ ներքին էությունամբ ու կառուցվածքով՝ նույնանում: Սա այն պատումն է, ուր Մեծ Մհերի ճյուղն ամենաընդարձակն է: Սակայն, այդ ընդարձակությունը, միջադեպերի հարստությունը սոսկ հրեության է, արտաքին, սեփական չէ, հարստացել է առաջին ճյուղի հաշվին:

Քննենք մի հրկու պատում ևս, որոնք շեղվում են սյուժետային ընդհանուր գծից:

¹ Նույն տեղում, էջ 10:

Շատախի № 14 պատումը, ասացող՝ Մանուշակ Զադոյան:

Մեկիքը, Վհաբը, Հովանը հղբայրներ են: Հավասարապես բաժանում են իրենց գյուղերը. Մեկիքն ու Հովանը հարստանում են, Վհաբը՝ աղքատանում. դալիս է հղբայրների մոտ, որ իրեն մի գործ տան, դուխը պահի: Կարգում են նախրորդ: Նախրի հետ գնալիս, նա հավաքում է տավարի ոտքերից ընկած պայտերը, տալիս վարպետին, սա հալում է դրանք, խփում փայտի ծայրը, շինում մի «զոմփ»:

Այստեղ գործող մոտիվները պարզ են և տարածված: Առաջին մոտիվ. հղբայրներից մեկն անշնորհք է, վատնում է իր բաժին հարստությունը և մնում հղբայրների հույսին: Երկրորդ մոտիվ. հղբայրներից մեկը նախրորդ է մյուսների մոտ: Նախրորդությունը վիպական, դյուցազնական կերպարին ուղեկցող գրեթե պարտադիր հատկանիշներից մեկն է. հիշենք՝ Մեծ Մհերը՝ նախրորդ, Դավիթը՝ նախրորդ: Մհերը և Դավիթը հենց նախրորդության ժամանակ է, որ պատահականորեն գտնում են երկնքից ընկած հրաշալի քարը, որից Քեռի Թորոսը նրանց համար պատրաստել է տալիս Թուր Կեծակին: Այստեղ էլ Վհաբը նախրորդ է և պայտերից պատրաստել է տալիս մի զոմփ: Այս մոտիվն, ուրեմն, ուղեկցում է միայն դրական, ուժեղ կերտվածքով օժտված հերոսներին: Սպասվում է, որ Վհաբն այդպիսին պիտի լինի պատումի հետագա շարադրանքի մեջ: Բայց պատումում զոմփ պատրաստել տալուն անմիջապես հաջորդում է.

«Անու (Վհաբին) երկու խուլամ կրեր.

Մեկ Կուղ Բահդին ք...պերան,

Մեկլի անուն Հասան Բակ էր»:

(հատ. Ա, էջ 706, տող 20)

Իր այս երկու ծառաների հետ Վհաբը նյութում է հղբայրների մահը: Ծառաներն սպանում են Մեկիքին (սպանության պարագաները բավական միամտորեն են պատճառաբանված): Հետո Վհաբը պահանջում է Մեկիքի կնոջն իրեն

կնության և յոթ տարվա հարկ: Հովանը հարկը տալիս է, հղբոր կնոջը՝ ոչ (տե՛ս միջադեպ 16):

Այս երկու հատվածները՝ Վհաբի նախորդությունը և հղբոր սպանությունը, հակասական են: Սրա պատճառը երկու տարբեր մոտիվների խառնվելն է և անտրամաբանական կապը՝ ընդհատվում է նախորդության մոտիվը, անսպասելիորեն սկսվում է Մսրա Մելիք—Մեծ Մհեր գիծը: Որ Մսրա Մելիքը խաբեությամբ սպանում է Մհերին, այս միջադեպը տարբեր հարասումներով հանդիպում է նաև երկու այլ պատումներում՝ № 18 (Սպարկերտ) և № 28 (Դատկու Մոճկոնց դյուղ), (տե՛ս միջադեպ 25): Իսկ որ Մհերի մահից հետո Մելիքը գերեվարում է Սասունը և Մհերի կնոջը՝ առկա է պատումների մեծ մասում (տե՛ս միջադեպ 25): Սրան հաջորդում է Դավթի ճյուղն իր ավանդական միջադեպերով՝ ծննդից մինչև Վհաբի պարտությունը:

Այս պատումի Մեծ Մհերի ճյուղում կա մոտիվների և անունների շփոթ: Մոտիվների մասին խոսվեց վերևում: Անունների շփոթն այսպիսինն է՝ Մհեր անվան հիշատակությունը ոչ մի տեղ չի հանդիպում. նրա փոխարեն հանդես է գալիս Մելիք անունը: Ավելացել է Վհաբ (նաև՝ Վհաբ Կոր) անունը, որը փաստորեն փոխարինում է այլ պատումների Մսրա Մելիքին: Այս անունը բոլորովին նոր է և հանդիպում է միայն այս մի պատումում: Դժվար է որևէ փաստարկով բացահայտել այդ անծանոթ անվան մուտքը վեպ: Հավանաբար, Շատախում պատմվող որևէ զրույցի, հեքիաթի հերոսի անվանում է, որ մեքենայորեն մտել է վեպի մեջ, մանավանդ որ վերը նշած առաջին մոտիվները նույնպես ներմուծված են վեպ և մնում են հզակի, այլ պատումներում չեն հանդիպում: Երևի, այդ մոտիվներն իրենց հետ բերել են նաև Վհաբ անունը:

Շատախի № 14 պատումի շեղումն ընդհանուր գծից պատահական է, թերևս, իր հիմքում ունի անհատական պատճառներ՝ կապված ասացող Մանուշակ Զադոյանի հետ:

Մանուշակ Զադոյանը Շատախի Հինենց գյուղից է,

Միրզո Զադո Զադոյանի աղջիկը: Այս գյուղից են նաև № 15 պատումի ասացող Շատախցի Գրիգորը և № 16 պատումի ասացող Ավո Զադոյանը: Այս երեք ասացողները ոչ միայն համագյուղացիներ են, այլ նաև ազգականներ՝ Զադու տներից են, հորեղբոր զավակներ՝: Սրանց ազգի մեջ եղել են նաև այլ վիպասացներ՝ սրանց մեծերը, որոնցից սովորել են վեպը Մանուշակը, Գրիգորը և Ավոն: Շատ հարցերի առնչությամբ հետաքրքիր է համեմատել ազգակից, միմյանց լսած, իրարից կամ ընդհանուր աղբյուրից սովորած ասացողների պատումները: Այժմ զբաղեցնող հարցն այն է, թե Գրիգորն ու Ավոն պատմում են նո՞ւյնը, ինչ Մանուշակը:

Մանուշակ Զադոյանի, Գրիգորի և Ավո Զադոյանի պատումներում նույնն է ճյուղերի քանակը՝ (Մհեր) — Դավիթ, այսինքն՝ դրանք առաջին և շորրորդ ճյուղերը շունեն, իսկ երկրորդ ճյուղը պատմված է թերի: Մանուշակի և Ավոյի պատումները վերջանում են նույն տեղում՝ Մելիքի դեմ Դավթի տարած հաղթանակով, իսկ Գրիգորը պատմում է նաև Դավթի և խանդութի ամուսնությունը, բայց խիստ համառոտ: Գրիգորի և Ավոյի մոտ նույնն է սկիզբը՝ Մսրա Մելիք-Մեծ Մհեր հարաբերությունը: Այս պատումներում Վհաբ անվան հիշատակությունն անգամ չկա: Մեծ Մելիքի ճյուղը բոլորովին չի համընկնում Մանուշակի պատումի Վհաբի (այսինքն՝ Մեծ Մհերի) ճյուղին. իսկ Գրիգորի և Ավոյի մոտ Մեծ Մհերի ճյուղը բացարձակապես նույնն է: Այս երեք պատումների նմանություններն սկսվում են Դավթի ճյուղից միայն: Ինչո՞ւ ազգակից այս երեք պատումները, մեծ նմանություններով հանդերձ, մի տեղում բացարձակապես տարբերվում են: Եթե Մանուշակի մոտ նկատվող շեղումը՝ Վհաբն իր մոտիվներով, հանդիպելու նաև նրա ազգակից երկու այլ ասացողների՝ Գրիգորի և Ավոյի պատումներում, հիմք կունենայինք ենթադրելու, որ Շատախում մի ինչ-որ նոր կերպար՝ Վհաբը, իր նոր մոտիվներով մտել է վեպ և գրավել Մեծ Մհերի տեղը: Բայց քանի որ դա չի հաստատվում, ապա

¹ Տե՛ս «Սասնա ծռեր», հատ. Ա, էջ 703—704, 723, 756:

մնում է ենթադրել, որ Մանուշակի մոտ հանդիպող եզակի շեղումը ունի անհատական սլատճառներ, այսինքն՝ միայն Մանուշակի մոտ են խառնվել վեպին խորթ մոտիվներ:

Գրիգորի և Ավոյի պատումների համադրությունից ևս պարզվում է, որ Շատախի Հինենց գյուղի ասացողների մոտ Մեծ Մհերի ճյուղը բավական խաթարված է եղել: Սրանց մոտ էլ նկատվում է մի այլ կարգի շփոթ: Միայն այս երկու պատումներում է, որ անորոշ է, թե ո՞վ է Մհերի այն կինը, որից ծնվում է Դավիթը: Մյուս պատումներում դա շատ որոշակի է և երբեք չի շփոթվում Մսրա խանումի հետ, իսկ այս երկու պատումում շփոթված են Մհերի կինը և Մսրա խանումը: Այս շփոթի հետևանքն եղել է այն, որ Դավիթը դարձել է Մհերի և Մսրա խանումի որդին: Որ սա պարզ շփոթ է, երևում է հենց Գրիգորի և Ավոյի պատումներից:

Գրիգորի ²⁹³պատում.— երբ Մհերը հարձակվում է Մսրա վրա և գերեվարում Մսրա Մելիքի կնոջը, այդ կինն իր հետ բերում է իր տղային՝ Մելիքին (փոքր):

«Հենց մնաց, ժամանակ վրեն անցավ,
Մհեր թաքստա մեռավ:
Որ Մհեր մեռավ, Մհերի կին ծոցվոր էր:
Էդո՞ր Սամանակ լցվավ, էդոր տղե մ' էլավ:
Անուն Դավիթ»:

(հատ. Ա, էջ 726, տող 20)

Այս հատվածից պարզ չէ, թե Մհերի կին կոչվածը նույն Մսրա խանումն է, թե այլ մեկը: Հաջորդ հատվածում, չնայած աղոտ, բայց պարզվում է, որ այդ կինը Մսրա խանումն է, և որ Դավիթը նրանից է (մի բան, որ ուրիշ ոչ մի պատումում չի հանդիպում): Մհերի մահից հետո Մելիքը (փոքր) վերադառնում է Մսրը, հզորանում, գալիս է Սասունը քարուքանդ անում, գերեվարելու ժամանակ նկատում է, որ

«Մելիքի մեռ ուր տղեն գրկել էր ուր սրտին,
Զինք պատի առաջն էր տվել:
Դավիթ հրեխա էր, էլաց:

Մեղիքն իմացավ, որ իր մեր Դավիթ գրկեր,

Պատի առաջ դադրեր էր,

Ասաց.—Մարե՛, արի էրթանք:

Մարե՛, ի՞նչ տղա է քու գիրկ:

Ասաց.—Մեղի՛ք, քու ախպերն է:

Դավիթ էտոր հետ գնաց, գնաց Մսրա տեղը»:

(Հատ. Ա, էջ 726, տող 30—40)

Այժմ համադրենք Շատախի մի այլ պատում, դարձյալ Հինենց գլուղից՝ № 17 (ասացող՝ Ազիզ Ղարիբջան): Երբ Մսրա Մեղիքը (մեծ) Մհերի մահից հետո հարձակվում է Սասունի վրա և քարուքանդ անում այն.

«Քաղքից որ տուա տ՛եղներ Մսրա Մեղիք,

Տեսավ, լսավ՝ մեկ էրեխի մ՝ ծեն փողնի մեջ կը գա.

Տեսավ Մեղիք Մհերի ընտանիք, ճանշըցավ:—

Մհերի ընտանիք առեր էր Տավթին,

Գնացեր էր, մտեր մեջ փողնին:—

Առեց Մհերի ընտանիք ու Տավիթ,

Ելավ, եղսիր տառավ Մսր»:

(Հատ. Ա, էջ 789, տող 10—20)

«Մհերի ընտանիք» արտահայտությունն այստեղ գիտակցվում է Մհերի կին: Պարզ է, որ Գրիգորի մոտ շփոթվել են Մհերի կողմից գերված Մսրա խանումն իր Մեղիք որդով և Մհերի խաչապաշտ կինն իր Դավիթ որդով:

Այս շփոթն իր նույն դրսևորմամբ հանդիպում է նաև Ավո Զադոյանի պատումում: Միայն թե Ավոյի մոտ շփոթը խորանում և միևնույն ժամանակ պարզվում է հետևյալ հատվածով: Մհերը գերում է Մսրա խանումին, բերում իրեն կին: Սրան անմիջապես հաջորդում է.

«Ելան ըսին.—Քառսուն տարին տը թումամի,

Նոր էրթանք մըր նըվին:

Երկուան էլ խալվորցեր են:

Սըցին.—Ախըր, մըր յաշ ընցիր ի.

Քառասուն տարին անինք քառասուն օր...
 Քառասուն դադիղան օր թըմըմավ,
 Գացին մե-մեկու կուշտ, քնան:
 Տարին չըթըմըմավ, Մհեր մեռավ:
 Կնիկ մնաց տղով:
 Կնիկ անտեր կնիկ էր, ապա շշախավ,
 Ելավ գնաց Մսրա Երկիր մատ ուր լան:
 Ասված էտու՝ վար ին ամսվան Տավիր էլավ»:

(Հատ. Ա, էջ 759, տող 10—20)

Ի՞նչ «քառասուն տարվա» մասին է խոսքը:— Այլ պատումների այն քառասուն տարին, որ Մհերի կինն երգվել էր շընդունել Մհերին՝ Մսրա խանումի հետ խաբվելու համար: Մեջբերված հատվածին հաջորդում է այն, որ Դավիթը չի բռնում Մսրա խանումի կուրծքը. եթե իր հարազատ մայրն էր Մսրա խանումը, ինչո՞ւ Դավիթը չի ընդունում իր մոր կուրծքը, և ի՞նչ են նշանակում Մելիքի՝ իր մորն ուղղված խոսքերը, թե.

«Ան խայ անօրա, տու քուրտ իս,
 Անօրա, քուրտ մե-մեկու էլ չպըռնի:
 Նոր՝ սաց.— Հորոդկի Սասուն մա Ծենով Հովան,
 Քառասուն տիկ մեղր, քառասուն տիկ կարաք
 Թըխ առնին, պիրին,— ուտի»:

(էջ 760, տող 20)

Պարզ է, որ սա էլ այն բանի հիշողությունն է, որ որքանացած Դավթին ուղարկում են Մսրա խանումի մոտ, և Դավիթը չի ընդունում նրա կուրծքը, սնվում է հայրենական Սասունից բերված մեղր ու կարագով:

Գրիգորի և Ավոյի պատումներն, ուրեմն, այս շփոթշեղման հարցում իրենք իրենց ներսում հակասական են, մյուս պատումների հետ համեմատության մեջ առավել ևս պարզվում է այդ շփոթը:

Մհերի ճյուղն աղավաղված է հանդես դալիս նաև № 39 և 40 պատումներում (տե՛ս միջադեպ 29): Այս երկու պատումները համարում ենք աղավաղման մեկ և միևնույն դեպ-

քը, որովհետև դրանք գրաված են հայր և որդի ասացողներից, և հոր պատմածը նույնությամբ փոխանցվել է որդուն: Այս երկու պատումների մասին խոսք է եղել մի այլ առիթով, և Մեծ Մհերի կերպարի հետ կապված փոփոխությունների պատճառները բացահայտված են այնտեղ¹: Վանա մի պատումի (№ 41) մասին նույնպես խոսվել է որպես հեքիաթային թափառիկ մոտիվներից առատորեն օգտվող, զանազան կրկնվող միջադեպերով ու կերպարներով պատումի: Մեծ Մհերի կերպարը այդ կրկնվողներից մեկն է²:

Այսպիսով, վերը նշած մասնակի շեղումները՝ Մեծ Մհերի ճյուղի հիմնական և ընդհանուր գծից, մնում են եզակի, չեն հաստատվում այլ պատումներով: Ճիշտ է, եզակի անդամ հանդիպելը չի կարող անվերապահ չափանիշ լինել միջադեպի համար: Կարող է որևէ միջադեպ հանդիպել միայն մեկ անգամ, մեկ պատումում, բայց լինել խիստ բնորոշ և տիպական տվյալ ճյուղի կամ տվյալ կերպարի համար: Ասվածի լավագույն օրինակն են № 8, 9, 10 միջադեպերը, որոնք հանդիպում են միայն Ալաշկերտի № 33 և 34 պատումներում, բայց խիստ բնորոշ են Մհերի կերպարին: Իսկ վերը նշված եզակի շեղումներն այդպիսի որակ չեն բերում Մհերի ճյուղին և կերպարին, ավելին, դրանք, ինչպես տեսանք, անհատական պատճառներով առաջացած աղավաղում-շփոթ-շեղումներ են կամ պատահական մոտիվների մուտք:

Աղավաղումները կարող են ունենալ նաև առարկայական պատճառ՝ վեպի փոփոխություն ժամանակի և տարածության մեջ: Բոլոր կարգի շեղումներն էլ, հարկավ, կապվում են ժամանակի ու տարածության հետ, որը մեծ գործոն է բանավոր ստեղծագործության ճակատագրում: Հարցն այն է, որ որոշ դեպքերում փաստարկներով կարելի է բացահայտել դրանց դերը և ազդեցությունը (ինչպես օրինակ՝ № 39 և 40 պատումների), որոշ դեպքերում՝ ոչ:

¹ Տե՛ս այս աշխատությունը, էջ 43:

² Նույնը, էջ 74:

Մեկ պատումի ներսում և բոլոր պատումների ներքին հարաբերության մեջ նկատվող վիպական անաբրոնիզմներն ու հակասություններն անգամ դալիս են հաստատելու վերջում մեկ հիմնական կառուցվածքային ուրվագծի գոյությունը:

Ե Ր Ր Ո Ր Գ Ճ Յ Ո Ւ Ղ

Երրորդ՝ Դավթի ճյուղը մյուսներից անհամեմատ ավելի տարածված է, ծավալուն և կայուն: Դավթի մասին չեն պատմում այն հինգ պատումները, որոնք ունեն միայն «Սանասար և Բաղդասար» ճյուղը, իսկ մնացած քառասուներկու պատումներում հիմնականը Դավթի պատմությունն է:

Ճյուղերի ներքին այսպիսի հարաբերությունը բխում է վիպական կառուցվածքի հետևյալ առանձնահատկությունից: Թեև վեպի բոլոր ճյուղերն իրենց կառուցվածքով նույնանում են, բայց համազոր չեն: Դրանցից մեկը վիպական ամբողջական ցիկլի մեջ դառնում է կենտրոնական, միջուկ: Այս ճյուղի գլխավոր կերպարի շուրջն են համախմբվում վիպական-ավանդական բոլոր թեմաներն ու մոտիվները: Ավելին, նա իր զորությամբ իրեն է ձգում այլ կերպարներից հատկանիշներ, նրանց վրա պատմվող միջադեպեր, հարստանում մյուսների հաշվին:

Թեմաների քննարկման ժամանակ պարզ կդառնա, թե ինչու է Դավթի ճյուղը կենտրոնական: Նախքան թեմաների քննությունը, այս ճյուղի միջադեպերի տախտակի հիման վրա կառուցենք դրա վիպական ուրվագիծը: Վեպում միայն Դավթի ճյուղի հիման վրա կարելի է վերականգնել նման մի ուրվագծի ամբողջական և մանրամասն տեսքը, որովհետև միայն այստեղ է, որ միջադեպերի ճնշող մասն ըստ պատումների ունի ծայրագույն խտություն, այսինքն՝ գրեթե բոլոր միջադեպերը խիստ կայուն են, փոփոխության քիչ են ենթարկվել, հանդիպում են բոլոր պատումներում և գրեթե տողացի նույնն են (տե՛ս Տախտակ 8): Նման խտու-

թյունը և հաստատուն վիճակը խոսում է հենց իր՝ միջադեպի, ավանդականության մասին: Իսկ այս ավանդականությունն էլ իր հերթին վիպական ուրվագծի կառուցման հնարավորություն է տալիս: Դրա համար էլ ուրվագիծը տալիս ենք միայն հրրորդ ճյուղի համար:

Ուրվագծում պահպանված է հիմնական թեմաների ստորաբաժանումը, սակայն խախտված է դրանց հաջորդականությունը: Խախտումը բնական է, որովհետև վիպական ուրվագիծն իր հաջորդական կարգով ավանդական է (հերոսի ծնողներ, ծնունդ, մանկություն, պատանեկություն, գործեր, ամուսնություն, ժառանգ, մահ), իսկ թեմաների հաջորդականությունը մեր հաստատածն է՝ ըստ նրանց գաղափարական դերի և կարևորության:

ԵՐՐՈՐԴ ՃՅՈՒՂԻ ՎԻՊԱԿԱՆ ՍՅՈՒԺԵՏԱՅԻՆ ՈՒՐՎԱԳԻԾ

Հ եր ո ս ի ծ ն ո ղ ն ե ռ և ծ ն ու ն դ

1. Ծնողները մտահոգված են ժառանգի ծնունդով.
ա. անժառանգ են,
բ. ժառանգ ունեն, բայց դա նրանց չի ուրախացնում, սպասվում է մի այլ ժառանգ:
2. Արտասովոր գուշակություն ժառանգի ծննդի մասին.
ծնողներից պահանջվում է մեծագույն զոհաբերություն.
ա. ժառանգի ծննդյան օրը կմահանան ծնողները:
3. Հերոսը ծնվում է որևէ նշանով:
Հ եր ո ս ի մ ա ն կ ու թ յ ու ն և պ ա տ ա ն ե կ ու թ յ ու ն
4. Հերոսն օրորոցում.
ա. կտրատում է թևակապիւրը,
բ. կուրծք ուտելիս սպանում է ստնատունիին:
5. Հերոսը ծննդյան օրից մնում է որբ.
ա. կարեկից վերաբերմունք նրա նկատմամբ,
բ. անկարեկից վերաբերմունք նրա նկատմամբ:
6. Հերոսը մեծանում է օտար, թշնամական միջավայրում, ոչ իր հայրենական տանը, այլ երկրում, այլազգիների մեջ.

ա. նրան նայում են շար աշքով, ցանկանում են բռնա-
նալ նրա վրա.

բ. հերոսն ընդդիմանում է բռնությանը, ցուցադրվում
է նրա դերբնական ուժը (գուրզ նետել, թրի տակով
շանցնել).

գ. հակառակորդ կողմի վախն ու զգուշավորությունը
հերոսից.

դ. օտար միջավայրում մեկը կարեկից և հովանավոր
հերոսին.

ե. հերոսին ենթարկում են փորձությունների (կրակ և
ոսկի).

զ. ուզում են ազատվել հերոսից, քանի դեռ փոքր է
(հանձնարարում են ճանապարհին սպանել, արյունից
բերել որպես ապացույց). հերոսն է հաղթում իրեն
սպանել ցանկացողներին:

7. Հերոսի վերադարձը հայրենիք.

ա. նրան դիմավորում են ուրախությամբ:

8. Հերոսի մանկական շարությունները.

ա. ժողովրդի դժգոհությունը և բողոքը:

9. Հերոսին դնում են որևէ գործի (գառնարած, նախորդ,
հովիվ, հորթարած).

ա. նրա վերաբերմունքն ընտանի կենդանիների և վայրի
զազանների հանդեպ.

բ. առտնին այլ աշխատանքներ (վար ու ցանք, արտ ու
արոր):

10. Հերոսը որսորդ.

ա. նրա առաջին շփումն ու ծանոթությունը զենք-զրահի,
ձիու հետ:

11. Գործի և որսորդության մեջ հերոսն ենթարկվում է զա-
նազան փորձությունների:

12. Հերոսն ենթարկվում է բարոյական փորձությունների
(որևէ կնոջ գայթակղություն):

13. Հերոսից թաքցնում են որոշ ճշմարտություններ. խրա-
տատու և հովանավոր մեկը, որը հերոսին իրազեկ է
պահում բոլոր անցուդարձերին:

14. Հերոսը հաստատում կամ վերականգնում է իր իրավունքները.
ա. ժառանգական,
բ. անձնական,
գ. շրջապատին ընդունում է հերոսի ուժն ու իրավունքները և ենթարկվում նրան:

Չ ո Ր Ր Ո Ր Դ Թ Ե Մ Ա

15. Հերոսը շինարար.
ա. վերականգնում, վերահաստատում է ժառանգություն ստացած շինությունները (ամրոց, վանք, որսասար).
բ. շինում նորերը (կամուրջ, իրեն նստավայր):

Ա Ռ Ա Ջ Ի Ն Թ Ե Մ Ա

16. Հերոսի ինքնահաստատումը և տերության գլուխ կանգնելն անհանգստացնում է հակառակորդ կողմին. նա ցանկանում է վերականգնել հերոսի և նրա երկրի վրա ունեցած իր երբեմնի իրավունքները.
ա. հարկահանություն,
բ. վանքերի ավեր,
գ. սպառնադին լուր՝ ուղղված հերոսին, ենթարկվելու պահանջով. կռվի իրադրության նախապատրաստում:
17. Հերոսի շրջապատը հակված է ենթարկվելու թշնամու կամքին և բռնությանը. շրջապատը զգուշանում է ընդհարումից. նա դեռ հերոսի մեջ չի տեսնում իր ազատարարին.
ա. հերոսից թաքցնում են թշնամու պահանջները (հարկ, հնազանդություն).
բ. հերոսից թաքցնում են հայրական ունեցվածքը (ղենք-զրահ, ձի, կախարդական զորություն):
18. Հովանավոր անձը հակադրվում է շրջապատին և շարունակում է բացահայտել հերոսի համար ողջ իրադարձությունները և դրանց ծնող պատճառները:

[illegible]

[illegible]

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՄ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	43	44	45	46	47			
53 Պատվին է Պատվին հաշվում է հանդուս թիվը								+																																									1	
54 Պատվին դիմում է Պատվին հաշվում է հանդուս թիվը																																																	1	
55 Համարը ձևում է աշխատանքին																												+								++	++	++	++			+		+			8			
56 Պատվին հաշվում է Պատվին հաշվում է հանդուս թիվը																		+																															3	
57 Պատվին հաշվում է Պատվին հաշվում է հանդուս թիվը																													+										+					+					3	
58 Քանի որ հանդուս թիվը է հանդուս թիվը								+																																									2	
59 Պատվին հաշվում է հանդուս թիվը								++	++																			+	++							+	+	+			+	+	+	+	+	+	+	+	13	
60 Պատվին ու հանդուս թիվը								++	+	++	+																+	+	++	+							+	+						+	+	+	+	17		
61 Սկզբնական								+					+															+																				4		
62 Պատվին հաշվում է հանդուս թիվը								++	++	++	++	++	++														+	+	++	+							++	++	++	++	++	++	++	++	++	++	++	++	++	28
63 Պատվին ու հանդուս թիվը								++	++	++	++	++	++														+	+	++	++							++	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	28	
64 Քանի որ հանդուս թիվը է հանդուս թիվը																													+																				6	
65 ու հանդուս թիվը																																																	1	
66 Պատվին իր հանդուս թիվը է հանդուս թիվը																																																	1	
67 հանդուս թիվը																																																	1	
68 Պատվին հաշվում է հանդուս թիվը																																																	1	
69 Պատվին ու հանդուս թիվը																																																	1	
70 Պատվին ու հանդուս թիվը																																																	1	
71 Պատվին ու հանդուս թիվը																																																	1	
72 Պատվին ու հանդուս թիվը																																																	1	
73 Պատվին ու հանդուս թիվը																																																	1	
74 Պատվին ու հանդուս թիվը																																																	1	
75 Համարը հանդուս թիվը																																																	1	
76 Պատվին ու հանդուս թիվը																																																		

19. Հերոսը ուժով հաստատում է իր իրավունքը՝ նա միակն է, որի հետ պետք է կապել ազատագրության հույսը.
ա. հերոսը պատուհասում է հարկահաններին, վանք ավերողներին.
բ. հերոսը պատասխան սպառնազին լուր է ուղարկում թշնամուն.
գ. շրջապատն իր վերաբերմունքով սրում է լարվածությունը երկու թշնամական կողմերի միջև (ծաղրում է հարկահաններին, թշնամու զորքը).
դ. հերոսն ուժով ստանում է իր հոր զենք-զրահը, ձին.
ե. հերոսին օրհնում են և հայտնում կախարդական որևէ զորության գաղտնիք:
20. Հերոսը փորձում է կախարդական զորությունը, հզորանում, հասնում և անցնում իր նախորդի (հոր) դյուցազնական արտաքին շափերից:
21. Հակառակորդ կողմը նույնպես հզորության գագաթնակետին է. նա հավաքել է իր ողջ զայրույթը, ատելությունը, զորքը և անհամար բանակով պաշարել հերոսի երկիրը. կռվի իրադրությունը ծայր աստիճան սրված է:
22. Հերոսի և իր շրջապատի ներքին կապը.
ա. նրա հրաժեշտի խոսքերը՝ ուղղված շրջապատին.
բ. շրջապատում մեկը, որ (նախանձից, շկամությունից) թերահավատ է հերոսի ուժի նկատմամբ և ծաղրում է նրան:
23. Հերոսի ներքին ուժի և բնավորության ցուցադրում.
ա. ասպետականություն (հերոսն զգուշացնում է թշնամուն հարձակումից առաջ).
բ. ողջախոհություն (որևէ մեկի խորհրդով կարողանում է ճիշտ գնահատել կռվի իրադրությունը և ելքը, խուսափել անտեղի արյուն թափելուց և զատել իր իսկական թշնամուն).
գ. անհեռատեսություն, դյուրահավատություն, օգնիվ, շիտակ խառնվածք (հերոսը չի կարողանում գուշակել հակառակորդի խարդավանքը, խաբվում է և դառնում նրա նհնգության զոհը):

24. Հերոսի մշտական կապն իր շրջապատի հետ (մեկը գուշակում է հերոսի նեղ վիճակը և հասնում օգնության)։
ա. մենամարտ հերոսի և նրա հարազատներից մեկի միջև։
25. Մեծահոգություն, անհիշաչարություն, հրախտադիտություն.
ա. հերոսը մոռանում է իր թշնամու նենգ վարմունքը.
բ. առաջինը հարվածելու իրավունքը զիջում է թշնամուն.
գ. ընդունում է նրա ինքնապաշտպանության բոլոր առաջարկները.
դ. առաջին հրկու զարկը բաշխում է թշնամու հարազատներին (մորը, քրոջը)։
26. Դյուցազնական ուժ.
ա. մի հարվածով սպանում է թշնամուն։
27. Հարգանք բոլոր ժողովուրդների (նույնիսկ իր թշնամու) անկախության հանդեպ.
ա. ազատ է արձակում թշնամու բանակը և նրանց հանձնում իրենց հրկրի տնօրինությունը։

Երկրորդ թեմա

28. Թշնամին պարտված է, հայրենիքը ազատագրված. հերոսի համբավը տարածվել է աշխարհով մեկ։
29. Որևէ դյուցազնուհի հայտնում է հերոսին (նամակով, աշուղի միջոցով) իր հիացմունքը և սերը։
30. Հերոսը գնում է հարսնացուին տեսության. փորձություններ ճանապարհին.
ա. խաբվում է մի այլ կնոջից.
բ. զանազան արարքներով ցուցադրվում է հերոսի ֆիզիկական ուժը և բնավորության գծերը (հանդիպում գութանավորների հետ, միամտություն, շատակերություն)։
31. Փորձությունների հարսնացուի տանը.
ա. հանդիպում հարսնացուի հետ, հարսնացուն ցուցա-

դըրում է իր ուժը, կանացի ներքին արժանապատվությունը և բնավորության գծերը:

բ. հանդիպում հարսնացուի այլ ուղնկանների հետ, մենամարտ, հաղթանակ նրանց հանդեպ. ուղնկանների քենը և վրեժխնդրությունը հերոսի նկատմամբ, թշնամանք կամ հաշտություն նրանց միջև:

դ. հերոսը կռվում է հարսնացուի թշնամիների հետ, հերոսի հաղթանակը:

32. Հերոսի և հարսնացուի մենամարտը. նրանք իրենց արտաքին և ներքին բարեմասնություններով արժանի են միմյանց:

33. Հերոսի ամուսնությունը:

Ծ Ր Ր Ո Ր Ղ Թ Ե Մ Ա

34. Մնվում է հզոր ժառանգ.

ա. հերոսը ներկա է ծնունդին, ինչ-ինչ նշաններից գուշակում է իր որդու արտասովորությունը.

բ. հերոսը, նախքան իր որդու ծնունդը, գնում է օտար երկիր (զանազան պատճառներով), որևէ նշան է թողնում կնոջը որդուն տալու համար:

35. Գժտություն հոր և որդու մեջ.

ա. տարբեր պատճառներով.

բ. նրանք չեն ճանաչում միմյանց. հայրը վերադառնում է օտարությունից և պատահաբար հանդիպում որդուն:

36. Հոր և որդու մենամարտը, հայրն անիծում է որդուն:

37. Հերոսի սպանությունը.

ա. սուտ երդման պատճառով.

բ. իր ապօրինի զավակի ձեռքով:

38. Հերոսի կինն ինքնասպան է լինում:

Սա է «Սասնա ծռեր» վեպի կենտրոնական ճյուղի վիպական հիմնական ուրվագծային պատկերն ըստ պատումների: Որոշ պատումներում նկատվող մասնակի շեղումները ուրվագծի մեջ փոփոխություն չեն մտցնում:

Ինչպես երևում է վիպական ուրվագծից, Դավթի ճյու-

դում միջադեպերի ճնշող մասը խմբված է առաջին թեմայի շուրջը: Այս կուտակումը պատահական չէ և պայմանավորված է այն բանով, որ առաջին թեման Դավթի ճյուղում կենտրոնական է, առանցքային:

Առաջին թեմա.—(կռապաշտ և խաչապաշտ թագավորներ, մշտական հակամարտություն նրանց միջև):

Այս հակամարտությունը և թշնամանքը Դավթի ճյուղում դառնում է պատերազմական իրադրություն, որը պահանջում է վերջնական լուծում: Հենց այս լուծումն է հերոսական վեպի կառուցվածքային և դադափարական առանցքը և հենց սա էլ Դավթի ճյուղը դարձնում է կենտրոնական:

Ինչպես պարզվեց վերևում, առաջին ճյուղում կռապաշտ-խաչապաշտ կողմերն ավելի շուտ վիպական են, քան պատմական, շնայած՝ վեպի ժանրային ստիպմունքով այդ վիպականը ձգտում է պատմական որոշարկման: Այսուհանդերձ, պատմական որոշակիությունն առաջին ճյուղում թույլ է արտահայտված և առանձնապես մեծ դեր չի խաղում: Հակառակ դրան, երկրորդ ճյուղում Մսրա Մելիք (մեծ)—Մեծ Մհեր հարաբերության հիմքում ընկած են առավելապես պատմական որոշակի իրադարձությունների հիշողություններ: Երրորդ ճյուղում Մելիք-Դավիթ կռիվը, թվում է, պատմականորեն ավելի է որոշարկվում՝ արաբական խալիֆայության ժամանակաշրջան: Բայց այստեղ արդեն դա այնքան կարևոր չէ, որքան Մելիք-Դավիթ կռիվը ընդհանրացված գաղափարը: Այս իսկ պատճառով, այդ կռիվն ավելի շուտ ընդհանրացված գաղափար է, քան պատմական որոշակի իրադարձությունների անդրապատկերում: Անշուշտ, առաջին և երկրորդ ճյուղերում ևս այն ընդհանրացված գաղափար է, բայց երրորդ ճյուղում է, որ այն հասնում է իր բարձրակետին և ստանում իր լուծումը՝ Դավիթն սպանում է Մելիքին, վերացնում իր երկիր ազատության և անկախության վրա բռնացող ուժը, այսինքն՝ կռապաշտ-խաչապաշտ մշտական հակամարտությունն ավարտվում է խաչապաշտի վերջնական հաղթանակով:

Այդ ընդհանրացված գաղափարն ուժեղ է իր ավանդականությամբ, իսկ ավանդականն էլ վեպում ուժեղ է պատմական որոշակիությամբ: Հայերի կռիվն այլազգի բռնակալների դեմ հայ ժողովրդի դարավոր պատմությունն է, ազգային ճակատագիր: Նաև՝ ավանդական և առանցքային թեմա հայ վիպական բանահյուսության մեջ: Այս թեման, ընդհանուր լինելով «Հայկ ու Բել» առասպելից մինչև «Սասնա ծռեր», ժամանակ առ ժամանակ հազել է պատմական որոշակի զգեստ՝ ասորեստանցիներ-հայեր («Հայկ և Բել»), մարեր-հայեր («Վիպասանք»), պարսիկներ-հայեր («Պարսից պատերազմ» և «Տարոնի պատերազմ»): Վերջին որոշարկումն է՝ արաբներ-հայեր («Սասնա ծռեր»):

Այստեղ ուշադրության պետք է առնել մի երևույթ: Հայ բանահյուսության մեջ վիպական ցիկլը «Սասնա ծռերով» ավարտվեց: Այլևս հին ավանդույթի վրա նոր վեպ չստեղծվեց, վիպական ցիկլը շնորոգվեց, շնայած հայ ժողովրդի պատմությունն արաբական տիրապետությունից հետո ընթացավ նույն արյունոտ բռնության ճանապարհով, տեսավ սելջուկյան և թաթարական տիրապետություն: Այս երևույթը բացատրվում է առաջին թեմայի վիպական կառուցվածքային հետևյալ առանձնահատկությամբ: Թեման է՝ կռվի իրադրություն երկու թշնամի երկրների միջև: Թեմայի պահանջըն է.

ա. այնպիսի կռվի իրադրություն, որը կազմի հերոսական ժամանակաշրջան.

բ. ունենա հաղթական ավարտ.

գ. նախանշի պետություն հաստատում կամ կորցրած պետականություն վերականգնում:

«Հայկ և Բելից» — «Սասնա ծռեր» վիպական ցիկլն անդրադարձնում է պատմական-հերոսական այնպիսի դարաշրջաններ, որոնք պսակվել են հայերի հաղթանակով, պետության հաստատումով կամ վերահաստատումով: «Սասնա ծռերի» պատմական ժամանակաշրջանին հաջորդած դարերը թեև տալիս են կռվի իրադրության ամենասուր ու ողբեր-

գական էջեր, ժողովրդի հերոսական դիմադրության օրինակներ, բայց չկա հաղթական ավարտ և կորցրած պետականության վերականգնում: Սա ժողովրդական վեպի կառուցվածքային խնդիր է, վիպաստեղծման առաջին և անհրաժեշտ պայման:

Ապա. ոչ միայն վիպական ցիկլը «Սասնա ծռերից» հետո չի նորոգվել, այլև հաջորդող պատմական ժամանակաշրջաններն ու իրադարձությունները վեպի վրա ազդեցություն չեն թողել, վեպ մուտք չեն գործել. եթե ինչ-որ ձևով էլ կըցվել են վեպին, ապա չեն մերվել, մնացել են ավելորդության վիճակում: Մուտք չեն գործել, որովհետև երրորդ ճյուղում Մսրր-Սասուն հակամարտությունն իր վիպական դասական ձևի մեջ է և՛ իր ընթացքով, և՛ իր լուծմամբ: Մսրր-Սասուն հակամարտության ընդհանրացված գաղափարն այնքան ուժեղ է, որ չի ընդունում հակամարտության մի այլ մասնակի դեպք, նույնիսկ բացասում է¹: Այս իսկ պատճառով,

¹ Օրինակ՝ 10 և 11 համարների տակ դրված միջադեպերն ունեն այսպիսի բովանդակություն:— Դավթին ու Վեգոյին տանում են Մսրր: Քրդերն սպառնում են Սասունին. քեռիները գնում են Մսրր, որ բերեն Դավթին ու Վեգոյին Սասունը քրդերից պաշտպանելու համար: Մելիքը Դավթին թաքցնում է, տալիս է միայն թուլակամ Վեգոյին: Վեգոն չի կարողանում պաշտպանել Սասունը: Քեռիները նորից են գնում Մսրր: Ձենով Հովանի կանչով Դավթին ելնում է ներքնատնից (ուր նրան թաքցրել էր Մելիքը) և քեռիների հետ վերադառնում Սասուն (տե՛ս միջադեպ 13): Այստեղ գործում են վիպական հայտնի մոտիվներ (տե՛ս վիպական ուրվագծի 6 և 7 կետերը), որոնք իրենց վիպական կատարյալ ձևի մեջ են այլ պատումներում: Այն, որ այստեղ քրդերն են սպառնում Սասունին, հետագա ժամանակների պատմական իրադարձությունների հիշողություն է: Այս իրադարձությունն իր հերթին պատմականորեն դուրկ չէ ընդհանուր հիմքից. բայց վեպում, հատկապես երրորդ ճյուղում Մելիք-Դավիթ հիմնական հակամարտության ընդհանուր տեսադաշտի վրա ավելորդ հավելում է: Սվբնական է, որ հիշյալ երկու միջադեպերը հանդիպում են միայն երկու պատումում (№ 32՝ Խլաթ և 47՝ Մուշ): Դրանք հենց այդ երկու պատումների ներսում անգամ նկատելիորեն դուրս են մնում վիպական ներքին կառուցվածքից, այսինքն՝ դրանց ավելորդությունը զգացվում է ոչ միայն բոլոր պատումների ընդհանուր տեսադաշտի վրա, այլև հենց իրենց՝ № 32 և 47 պատումների ներսում:

երրորդ ճյուղում առաջին թեմայի առումով պատմական հետազա խավավորումներ չկան: Բոլոր պատումներում առաջին թեմայի այս կարգի կայուն, անփոփոխ վիճակը ցույց է տալիս, որ.

ա. այն երրորդ ճյուղում ըստ ամենայնի հիմնական է և առանցքային.

բ. գաղափարական ընդհանրացման ուժի հիմունքով մասնակի շեղումները և հավելումները բացասում է:

Առաջին թեմայի հետ կապված բոլոր միջադեպերը՝ կովի իրադրության նախապատրաստում, հարաբերությունների լարվածության սրում, բախում և լուծում, բոլոր պատումներում գրեթե տողացի նույնն են: Նկատվող տարբերությունները գերազանցապես արտաքին բնույթի են՝ ոճական, արտահայտչամիջոցների և այլն: Արտաքին տարբերությունները վիպական հիմնական ուրվագծի հետ չեն առնչվում, չեն թուլացնում նրա կառուցվածքը, ընդհակառակը, երբեմն նույնիսկ հարստացնում են դրա դրսևորման ձևերն ու միջոցները:

Ավելի կարևոր են ներքին տարբերությունները, որոնք անմիջականորեն կապ ունեն վիպական ուրվագծի հետ, խախտում և թուլացնում են այն:

Այսպիսի մի տարբերություն է նկատվում Ալաշկերտի № 33 պատումում (ասացող՝ Մանուկ Թորոյան): Միայն այս մի պատումում է, որ Դավիթը Մելիքին չի սպանում, այսինքն՝ Դավիթը չի կատարում իր հիմնական դերը: Մարա Մելիքը կովի ժամանակ փախչում է Մսրը, իսկ զորքը կոտորվում է: Բայց, վեպի պահանջով Մելիքը շապանվել չէր կարող. և ահա, նրան սպանում է Փոքր Մհերը:

Ալաշկերտի № 33 պատումը լավագույններից է. ընդգրկում է բոլոր շորս ճյուղերը, ընդարձակ է, հարուստ վի-

Նման ավելորդության վիճակում է նաև № 31 միջադեպը՝ Դավիթը հարկ է պահանջում Մելիքի ցեղակից-հպատակներից և նրանց ունեցվածքը քշում-բերում է Սասուն (պատումներ № 27՝ Մուշ, 42՝ Ալաշկերտ, 36՝ Բալազետ):

պական վեհ հանդարտությամբ պատմված անթերի միջադեպերով, հատկապես Մեծ և Փոքր Մհերների ճյուղերում ունի բոլորովին նոր և այլ պատումներում շահագիպող հատվածներ: Սա այն պատումներից է, որտեղ շեղումները և աղավաղումները ընդհանուր խաթարման արդյունք են. կան որոշ թույլ պատումներ, որոնք արդյունք են վեպի քայքայման ու տարրալուծման, և դրանց համար աղավաղումները, մի տեսակ, բնական են: Սակայն, № 33 պատումն այդպիսիներից է, այն լավագույնս պահպանել է վիպական սյուժետային ու պատմողական ավանդները: Եվ ահա, նման մի շեղում՝ Դավթի կռիվը Մսրա Մելիքի հետ անցնում է աննշան ու անգույն պատերազմական իրադրության մեջ, և Դավթ-Մելիք հակամարտությունն ստանում է իր ամենաթույլ լուծումը՝ Մելիքը փախչում է կռվի դաշտից, Դավթն ու Քեռի Թորոսը կոտորում են նրա զորքը: Այսինքն՝ չկա հաղթական ավարտ: Սա ոչ միայն հակառակ է վիպական սկզբունքին, այլև բնականոն չէ հենց այդ նույն պատումում մենամարտին նախորդող միջադեպերին:

Ամենաուժեղ թափով նախապատրաստվում է պատերազմական իրադրությունը՝ սկսած հարկահանների մուտքից Սասուն: Քեռի Թորոսը հարբեցնում է Դավթին, որ կասեցնի ընդհարումը Դավթի և հարկահանների միջև (այս միջադեպն էլ, ի դեպ, չկա մյուս պատումներում, բացի նորից Ալաշկերտի № 34 պատումից, որի ասացող կարապետ Թամոյանը Մանուկ Թորոսյանի համադյուղացին է, խաստուրցի): Այսուհանդերձ, տեղի է ունենում Դավթ—հարկահանների հանդիպումը, և Քեռի Թորոսի զգուշավորությունն ու դիվանագիտական հեռատեսությունն ավելի են շեշտում երկու թշնամական ուժերի բախման անխուսափելիությունը և թափը: Ծայրահեղ լարումը հասնում է իր գագաթնակետին, երբ Մելիքը տեսնում է իր անպատվված մեծավորներին և, թեև ճշելով, իր արյունով զորակոչ է գրում աշխարհի շորս կողմերին Դավթի դեմ կռիվ դնալու համար: Քեռի Թորոսը նորից է հարբեցնում Դավթին, նրան կռվից հեռու պահելու

և դրան ավելի խաղաղ ընթացք տալու համար: Խաղաղ բանակցություններն արդեն անհնար են, և Քեռի Թորոսը Սասնա տան մյուս տղաների հետ դնում է կռիվ: Դավիթը հարբած, քնած է: Քայլ առ քայլ նախապատրաստվում է այն միտքը, թե սև պիտի կապի Մելիքի մայրը, եթե Դավիթն արթնանա: Արթնանում է Դավիթն իր սգավոր Մամիկի տրցունքից. սուգ է պատել Սասունին, և ինքը քնած: Սրան հաջորդում են այն ավանդական միջադեպերը, ուր Դավիթը Մամիկից իմանում է հոր զենք-զրահի, ձիու տեղը, հաղնում, զրահավորվում, բարոյական հզորությանն ու վճռականությանը ավելանում է և ֆիզիկական հզորությունը, որ ձեռք է բերում Դավիթը Մարաթուկում քնելով: Կատարելապես պատրաստ է Դավիթը իսկական դյուցազնական մենամարտի: Եվ այդ մենամարտը տեղի չի ունենում: Հենց այնտեղ, որտեղ վիպական բնականոնությամբ պիտի նկարագրվեր Դավիթ-Մելիքի մենամարտը, տրված է մի այլ մենամարտի նկարագրություն՝ Դավիթ-Քեռի Թորոս: Հերոսի և իր հարազատներից մեկի մենամարտն իրար շճանաչելու վիպական պատճառով նույնպես ուրվագծի պարտադիր պահանջներից է (տե՛ս ուրվագիծ, 21ա): Դավիթ-Քեռի Թորոս մենամարտը լրացնում է այդ պահանջը, թերևս, այստեղ նաև իր տեղում է, մանավանդ, նրանց հանդիպման ողջ նկարագրությունը տարվում է վարպետ պատմելաձևով, բայց, այս բոլորով հանդերձ, այն չի կարող փոխարինել և չպե՛տք է փոխարինի Դավիթ-Մելիք մենամարտին, լցնել դրա բացը հիշյալ պատումում և ընդհանրապես:

Մսրա Մելիքի հետ մենամարտի նկարագրությունն այս պատումում կա, բայց՝ մի այլ տեղում, մի այլ կերպարի հետ: Մսրա Մելիքը փախչում է Մսրը, այլևս նրան չի մտահոգում Դավթի ու Սասունի հզորությունը, և միայն այն ժամանակ, երբ Դավթի տղան՝ Փոքր Մհերը, հանդես է գալիս որպես Գոհարի ուզնկան, նա էլ ստիպված է պաշտպանել իր անձնական պատիվը որպես Գոհարի փեսացու: Փաստորեն, տեղի է ունենում մենամարտ Գոհարի ուզնկանի (Փոքր Մհեր)

և նշանածի (Մսրա Մելիք) միջև։ Այստեղ Մսր-Սասուն հակամարտություն չկա։ Մենամարտի նկարագրությունը բառացիորեն նույնն է, ինչ մյուս պատումներում Դավիթ-Մելիք մենամարտինը։ Բայց սա արդեն նույն արժեքը չունի, ինչ Դավթի ճյուղի դեպքում, որովհետև ոչ մի կապ չունի առաջին թեմայի՝ կռապաշտ-խաշապաշտ հակամարտության հետ։ Այս պատումում առաջին թեման մնում է կիսատ, չլուծված. նսեմանում է Դավթի դերը և չի շահում Փոքր Մհերը, որովհետև այս դեպքում ոչ մի նշանակություն չունի, թե Գոհարի նշանածը Մսրա Մելիքն է, թե՛ որևէ այլ մեկը։ Այլ պատումներում Գոհարի նշանածները շատ են և հանդես են գալիս զանազան անունների տակ։

Ուրեմն, եթե այս միակ պատումում Մսրա Մելիքն ազատվում է Դավթի ձեռքից և սպանվում նրա որդու՝ Փոքր Մհերի ձեռքով, սա չի նշանակում, որ Մհերի կոնվը Դավթի կոնվի բնական շարունակությունն ու ավարտն է։ Փոքր Մհերի կոնվը Մսրա Մելիքի հետ չի լրացնում Դավթի ճյուղում այդ կոնվի թերին։ Այս դեպքում մնում է ասել, որ Փոքր Մհերի հետ կոնվի մեջ մտած Գոհարի նշանածի անունը Մսրա Մելիք չպիտի լիներ. դա արտաքին շփոթ է՝ ըստ վիպական տրամաբանության։

Այս հարցի լուսաբանմանը մեծապես կօգնեն մի հանգամանք՝ համագյուղացի ասացողների պատումների համեմատական ուսումնասիրությունը։ № 33 և 34 պատումների ասացողներ Մանուկ Թորոյանը և Կարապետ Թամոյանը, ինչպես նշել ենք տարբեր առիթներով, համագյուղացիներ են՝ Ալաշկերտի խաստուր գյուղից։ Երկուսն էլ վեպը լսել և սովորել են խաստուրցի վիպասաց Ռես Գսպոյից։ Գուցե և միմյանց են լսել։ Միևնույն աղբյուրից սովորելու, համագյուղացի լինելու հետևանքով այս երկու ասացողների պատումները տողացի նույնն են։ Միակ տարբերությունը վերը նշած շեղումն է։ № 34 պատումում, Կարապետ Թամոյանի մոտ Դավթի ու Մելիքի մենամարտն իր տեղում է, այն նույն տեղում, ինչ մյուս պատումներում, այսինքն՝ Դավիթը կոտորում է Մելիքի զորքը, ալևորի խրատով դադարեցնում

կոտորածը, մենամարտում Մելիքի հետ և սպանում նրան։ Սրան անմիջապես հաջորդում է Դավթի ու Քեռի Թորոսի մենամարտը, որը բացարձակապես համընկնում է № 33 պատումի նույն միջադեպին։

Դժբախտաբար, № 34 պատումը շունի Փոքր Մհերի ճյուղը, ավարտվում է Դավթի մահով և Խանդուկի ինքնասպանությամբ։ Հետաքրքիր էր իմանալ՝ ինչպե՞ս կպատմեր նույն այդ Կարապետ Թամոյանը շորրորդ ճյուղը, ո՞վ կլիներ այնտեղ Գոհարի նշանածը։ Մի բան պարզ է, որ Մսրա Մելիքը չէր լինի։ Չորրորդ ճյուղի գոյությունը Կարապետ Թամոյանի պատումում թերևս պարզաբանում մտցնելը Մանուկ Թորոսյանի պատումի այդ միակ շեղման հարցում։ Վիպական ավանդական կառուցվածքային սկզբունքի համաձայն՝ Կարապետ Թամոյանի պատումը ճիշտ է, Մանուկ Թորոսյանին՝ շեղում վիպական սկզբունքից։ Դժվարանում ենք այդ շեղման պատճառը գտնել։ Մնում է ենթադրել. կամ՝ Խատուրի վիպական դպրոցից է գալիս այդ շեղումը (այդ դեպքում, ինչո՞ւ նույն շեղումը չի հանդիպում Ռես Գսպոյի մյուս աշակերտի՝ Կարապետ Թամոյանի պատումում), կամ՝ անհատական է (այս դեպքում էլ այն մեծ վերապահությամբ, որ Մանուկ Թորոսյանը վարպետ վիպասաց է և ունի խիստ ավանդական ու ավանդապահ վերաբերմունք իր պատմածի նկատմամբ. «Մարդ որ մի բան սովորավ, էդպես էլ պետք ա պատմի. բան չի կարելի փոխել։ Մարդիկ կան, որ ասում են, թե մոռացել են, բան կը փոխեն։ Էդ լավ չէ», — ասում է Մանուկ Թորոսյանը¹)։ Բնավորության այս գծին և նման վերաբերմունքին չհավատալու իրավունք չունենք. այդ ապացուցվում է նրա պատումի ավանդականությամբ։

Այս շեղումը չի կարելի բացատրել նաև այն հանգամանքով, որ վեպում ընդհանրապես շատ են թափառիկ միջադեպերը, որոնք կապվում են մերթ այս, մերթ այն հերոսի հետ։ Դավթ-Մելիք մենամարտը չէր կարող պատկանել թափառիկ միջադեպերի թվին. նրա տեղն ու դերը շատ որոշակի է և կայուն։

¹ «Մասնա ծոեր», հատ. Բ, մաս Ա, էջ 250։

Դավիթ-Մելիք մենամարտի հետ կապված այլ կարգի շեզումներ են նկատվում որոշ պատումներում (տե՛ս միջադեպ 73)։ Հայոց ձորի № 24 և Վանա № 41 պատումներում մենամարտը փոքր-ինչ թափից ընկած է նկարագրված, որովհետև հենց մենամարտի ժամանակ, երբ Մելիքը վիրավոր էր և ուժասպառ, Մելիքի մայրը Դավթին խաբեությամբ շղթայել է տալիս կամ գցում հորը։ Սրան հաջորդում է Հովանի երազը, օգնությունը Դավթին, ազատվելը, և շարունակվում է ընդհատված մենամարտը։ Այս ընդհատումը թուլացնում է վիպական նկարագրության թափը. այդ պահի վիպական ամբողջականությունը չպետք է կիսել։ Ահա թե ինչու, այնքան կարևոր է ոչ միայն միջադեպերի ավանդականությունը, այլև՝ դրանց ավանդական հաջորդականությունը։ Դավթին խաբելը և Հովանի օգնությունը իրենց տեղում են, երբ նախորդում են մենամարտին և ոչ թե ընդմիջում մենամարտը։ № 35 և 37 (Ալաշկերտ) պատումներում մենամարտն ընդմիջվում է մի այլ միջադեպով։ Առաջին անգամ չի հաղթում Դավիթը Մելիքին, ընդհակառակը, մարտը գնում է Մելիքի գերազանցությամբ։ Հետո ուժասպառ Դավիթը աղոթում է Մարաթուկում, նշաններից իմանում է, որ ինքը պիտի հաղթի Մելիքին։ Այս պատումների ասացողների նախորդ վիպասաց սերնդի հայրենիքը նույնպես Ալաշկերտի խաստուր գյուղն է։ Մանուկ Թորոյանի և Կարապետ Թամոյանի պատումներում Դավիթը քնում է Մարաթուկում և հզորանում (տե՛ս միջադեպ 51)։ Բայց այս միջադեպը նախորդում է մենամարտի միջադեպին, այսինքն՝ սա նույնն է, ինչ մյուս պատումներում՝ Դավիթը խմում է Կաթնաղբյուրի ջուրը և հզորանում։ Մարաթուկում քնելու և հզորանալու միջադեպը ավանդաբար. անցել է նաև № 35 և 37 պատումների ասացողներ Հակոբ Նրգեյանին և Սարգիս Հակոբյանին։ Բայց այստեղ փոխվել է միջադեպի ավանդական տեղը. այն ընդմիջարկել է մենամարտի հատվածը։ Ոչ միայն այս

ընդմիջարկումն է անհարկի, այլև միջադեպի ներքին էութ-
յունն ստացել է այլ երանգ: Այն դարձել է այստեղ անհար-
կի տուրք Մարաթուկի զորութեանը, որովհետև թուլացրել է
Դավթի դերը, նսեմացրել նրա հաղթանակը:

Վերը նշած շեղումները բոլոր պատումների ծանրակշիռ
նույնութեան ու նմանութեան համեմատութեամբ մեծ դեր
շունեն, որովհետև դրանք կրում են մասնակի բնույթ և
առարկայական պատճառներ շունեն իրենց հիմքում: Պա-
տումների մեծագույն մասը համախոս է երրորդ ճյուղում
առաջին թեմայի առանցքային լինելու հարցում: Շեղում-
ներն ու մասնակի տարբերություններն անգամ ապացույց
են վիպական կառուցվածքային ուրվագծի ուժեղութեան:

Զորորդ թեմա.—(շինարարություն)

Սա երրորդ ճյուղում հանդես է գալիս առաջին թեմայի
հետ սերտ կապի մեջ: Այստեղ շինարարության թեմայի
արտահայտած գաղափարը փոքր-ինչ տարբեր է առաջին և
երկրորդ ճյուղերում նույն թեմայի դրսևորումներից: Առաջին
ճյուղում այն մարմնավորում էր հայրենիքի հիմնադրման
գաղափարը, երկրորդում՝ հայրենիքի հաստատման, պաշտ-
պանության, երրորդում այն խորհրդանիշ է կորցրած պետա-
կանության և իրավունքների վերականգնման, վերահաս-
տատման: Դավթի վերաշինում է իր հոր վանքերը, որ ա-
վերել էր Մսրա Մելիքը: Եվ իզուր չէ, որ հենց այստեղ Դավթ-
Մելիք թշնամական լարվածությունը հասնում է իր գագաթ-
նակետին: Առաջին թեման իր զորության հիմունքով ձգել,
իրեն է միացրել շորրորդ թեման: Այս իսկ պատճառով
Դավթի հետ են կապվում այն միջադեպերը, որոնք կարող
էին նաև Մեծ Մհերինը լինել: Մեծ Մհերը շինում է վանք,
որսասար, ամրոց. բայց պատումներում դրանց հիշատա-
կությունը կա միայն, առանձին և ամբողջական միջադեպեր
չկան: Անշուշտ, Մհերն էլ իր վանքերը շինելիս կանչել է
տվիլ:

«Խինգ խարիր խամար խազար քար կտրող,
 Խինգ խարիր խամար խազար քար տաշող,
 Խինգ խարիր խամար խազար խող մաղող,
 Խինգ խարիր խամար խազար խիճ տվող» և այլն. վանքի

մեջ. կարգել.

«Քառսուն վարտապիտ, քառսուն հրեց,
 Քառսուն սարկավադ» և այլն:

Բայց այս բոլորը ոչ մի անգամ Մեծ Մհերի վրա այսպիսի վիպական ամբողջականությամբ չի պատմվում, իսկ Դավթի վրա՝ գրեթե բոլոր պատումներում, ոճական ու վիպական բազում տարբերակներով:

Սա ապացույց է այն բանի, որ վիպական-ավանդական բոլոր միջադեպերը հավաքվում են կենտրոնական թեմայի և կենտրոնական հերոսի շուրջը:

Երկրորդ թեմա. — (ամուսնություն):

Դավթի ամուսնության հետ կապված միջադեպերն իրենց ուրվագծային հիմքով գրեթե նույնանում են Սանասարի ամուսնության միջադեպերին, միայն այն մեծ տարբերությամբ, որ Դավթի ճյուղում այդ միջադեպերը վիպական են, Սանասարի դեպքում՝ մեծ մասամբ առասպելական հիմքով հեքիաթային: Ե՛վ նույնությունը, և՛ տարբերությունը երևան է գալիս միջադեպերի պարզագույն համադրությունից անգամ:

Առաջին ճյուղ

1. Սանասարի համբավը տարածվում է աշխարհով մեկ. Պղնձե քաղաքի թագավորի աղջիկը՝ Քառսուն Դեղձուն ճուղ-ծամը, թռչուն-աղջիկների ձեռքով նամակ է ուղարկում Սանասարին:

Երրորդ ճյուղ

1. Դավթի համբավը տարածվում է աշխարհով մեկ. Կաղզվանի թագավորի աղջիկը՝ Խանդութը, աշուղ է ուղարկում Դավթի մոտ՝ իրեն գովելու:

2. Թուշուն-աղջիկները սը-
խալվում, նամակը գցում
են Բաղդասարի անկող-
նու վրա. խոսվություն
և դրայրների միջև:
3. Սանասարը գնում է աղ-
ջրկա մոտ:
4. Ճանապարհին հովիվը
կաթ է կերցնում Սանա-
սարին՝ փորձելու համար
նրա ուժը:
5. Սանասարի հանդիպումը
դոնապան Համդուլի հետ.
Սանասարը սեղմում է
Համդուլի ձեռքը. արյուն
է կաթում նրա եղունգնե-
րից:
6. Աղջկա քաղաքների պա-
րիսպների տակ հանդի-
պում է կախարդված փե-
սացուներին: Սանասարի
և փեսացունների զրույցը:
7. Սանասարը չի կռվում
փեսացունների հետ:
8. Սանասարն ինչ-որ մե-
կից իմանում է աղջկան
տիրանալու գաղտնիքնե-
րը և կատարում բոլոր
պահանջները:
9. Սանասարը կռվում է
աղջկա հոր զորքի հետ և
հաղթում այդ կռվում:
Բաղդասարը գալիս է
Սանասարին օգնության:

2. Աշուղները սխալվում
և պատահում են Ձենով
Հովանին. Ձենով Հովա-
նը ծեծում է աշուղներին:
3. Դավիթը գնում է աղջկա
մոտ:
4. Ճանապարհին Դավիթը
ուտում է գութանավոր-
ների հացը և վարում ար-
տը:
5. Դավթի հանդիպումը
դոնապան Համդուլի հետ.
Համդուլի և Դավթի փո-
խադարձ վախը միմյան-
ցից. նրանք վախից բա-
րեվում են իրար:
6. Դավիթը խանդութի տա-
նը հանդիպում է նրա
փեսացուններին: Դավթի
և փեսացունների քեֆը,
փեսացունների խարդա-
վանքը:
7. Դավիթը կռվում է փե-
սացունների հետ:
8. Խանդութն ինքն է նախ-
ընտրում Դավթին մյուս
փեսացուններից և հրավի-
րում իր մոտ:
9. Դավիթը կռվում է խան-
դութի հոր թշնամիների
հետ և հաղթում այդ կռ-
վում: Հովանը (Թորոսը)
գալիս է Դավթին օգնու-
թյան:

10. Բաղդասարը մենամարտում է տղամարդու շորերով ծպտված : մի աղջկա հետ, հաղթում նրան, ամուսնանում նրա հետ :

10. Դավիթը մենամարտում է տղամարդու շորերով ծպտված Խանդութի հետ, հաղթում նրան, ամուսնանում նրա հետ :

Սրանք այն մոտիվներն են, որոնք իրենց ուրվագծային հիմքով լրիվ համընկնում են, բայց իրենց դրսևորման արտաքին ձևով՝ տարբերվում : Սանասարի ամուսնության միջադեպերում շարունակում է արտահայտվել նրա կերպարի առասպելական կողմերը : Դավթի ամուսնության միջադեպերում գերիշխում է իրական սիրո ու ամուսնության տարրը՝ վիպական գեղեցիկ պատկերավորմամբ : Իսկ Խանդութի դուքր բացահայտորեն հիշեցնում է միջնադարյան սիրո հայրենները, միայն թե այդ քնարական հատվածն անգամ ներծրծված է հանդիսավոր վիպականությամբ, համահնչուն Խանդութի դյուցազնական կերպարին, նախորդող և հաջորդող միջադեպերի վիպական ոգուն :

Սանասարի ամուսնության միջադեպերի խտության աստիճանը պատումներում այնքան էլ մեծ չէ, այնինչ՝ Դավթի դեպքում դրանք հանդիպում են գրեթե բոլոր պատումներում և բառացի նույնությամբ : Իսկ շատ պատումներում, հատկապես Մշո թևի, Սանասարի ամուսնության միջադեպերը բոլորովին չկան : Հակառակ դրան, այդ նույն պատումներում Դավթի ամուսնությունը պատմվում է ընդարձակ վիպական միջադեպերով : Սա նույնպես ցույց է տալիս, որ կենտրոնական կերպարն իրեն է ձգում ավանդական միջադեպերը և հարստանում մյուսների հաշվին :

Երրորդ թեմա.—(հզոր ժառանգ) :

Ժառանգ թեման երրորդում ունի նույն լուծումը, ինչ նախորդող ճյուղերում, այսինքն՝ Դավթին հաջորդում է հզոր

ժառանգը: Տարբերությունը վեպի վերաբերմունքի մեջ է՝
 հանդեպ այդ ժառանգի ծնունդը: Առաջին ճյուղում Սանա-
 սարի և Բաղդասարի ծննդի հանդեպ վեպի վերաբերմունքի
 մեջ մի փոքր անհանգստություն կա՝ կապված աղջկա հղիու-
 թյան անբնականության հետ: Իսկ այն պատումներում (Մշո
 թե), որտեղ աղջկա հղիությունը բնական է, այդ անհանգս-
 տությունը չկա: Երկվորյակ եղբայրների ծնվելուց հետո ան-
 հանգստությունը գնում է կրոնական հակադրության երան-
 դով՝ նրանց հայրը կռապաշտ, մայրը խաշապաշտ: Նույն այդ
 ճյուղում Մեծ Մհերի ծնունդը ունի տրամաբանական հետե-
 յալ իմաստը՝ «դյուցազնից դյուցազուն ու կես պիտի ծնվեր»:
 Բոլորովին այլ է վեպի վերաբերմունքը Մեծ Մհերի ժառան-
 գի ծննդի նկատմամբ: Այստեղ տագնապ կա, մեծ սպասում՝
 կծնվի՞ Մեծ Մհերին հզոր ժառանգ,—պիտի ծնվի նա, նրա
 ծնունդը քաղաքական տեսակետից անհրաժեշտություն է:
 Դրա համար էլ, ինչպես արդեն նշել ենք, երկրորդ ճյուղում
 կենտրոնական թեման ժառանգն է: Երրորդ ճյուղում ժա-
 ռանգ թեման այդպիսի սրություն չունի, մեծ հանգստություն
 կա վեպի վերաբերմունքի մեջ: Բայց ահա, Դավթի ժառան-
 գի հետ կապվում է մի բան, որ չկա մյուս ժառանգների
 դեպքում՝ Փոքր Մհերը ծնվում է նշանով, որը մեծ խորհուրդ
 ունի—ձեռքը փակ է, և փակված ափի մեջ՝ մի պուտ արյուն:
 Վանա № 39 և 40 պատումներում այս բանը պատմվում է
 Դավթի վրա: Սրանք այն պատումներն են, որոնք չունեն
 առաջին և չորրորդ ճյուղերը, բայց պահել են որոշ հիշո-
 ղություններ դրանցից: Սա այդ հիշողություններից մեկն է:
 Դավթի գուշակությունն իր որդու փակ ափի մասին արդեն
 ինչ-որ շարագուշակ բան ունի իր մեջ, որը խորանում է մի-
 ջադեպից-միջադեպ:

Պատումների միջև եղած տարբերությունները տարբեր
 հիմք ունեն. որոշ դեպքերում դրանց հիմքը պատմական է,
 որոշ դեպքերում՝ վիպական: Երկրորդ ճյուղում այդ տարբե-
 րություններն առաջացել են դերազանցապես պատմական
 հիմքով, առաջին և երրորդ ճյուղերում՝ վիպական: Պատմա-

կան հիմքով առաջացած տարբերությունները պատճառ են դառնում պատումներում նկատվող անաքրոնիզմների, իսկ վիպական հիմքով տարբերությունները նման անաքրոնիզմներ չեն առաջացնում, մեծ մասամբ չեն հակադրվում վիպական ուրվագծին, հակառակը՝ հարստացնում են այն:

Օրինակ. հերոսն օրորոցում մոտիվը տարբեր պատումներում ունի վիպական տարբեր դրսևորումներ, որոնք երբեմն առնչվում են որևէ հիմնական գաղափարի հետ, լրացնում կամ բացահայտում այն, երբեմն էլ՝ ոչ մի գաղափարի հետ չեն կապվում և ծառայում են լոկ կերպավորման միջոց:

Նորածին Դավիթը մնում է հորից և մորից որբ: Նրան ուղարկում են Մսրը, որ Մսրա խանումը կերակրի, մեծացնի: Դավիթը չի ընդունում Մսրա խանումի կուրծքը (տե՛ս միջադեպ 2): Հերոսի՝ իր շրջապատին հակադրվելու գաղափարն սկսվում է այստեղից: Նա սնվում է միայն Սասունից քերած մեղր ու կարագով: Այստեղից էլ սկսվում է հայրենի հողի հետ հերոսի մշտական կապի գաղափարը: Սրանց կողքին գործում է նաև վիպական մեկ այլ մոտիվ՝ նորածին Դավիթն ուտում է օրական մի փուխ մեղր, մի փուխ կարագ: Վիպական այս շափաղանցություն-պատկերը պարզապես կերպավորման միջոց է և ամբողջացնում է կերպարի մանկության շրջանը: Իսկ նույն միջադեպի մի այլ տարբերակ (տե՛ս միջադեպ 4)՝ Դավիթը կուրծք ուտելիս սպանում է ստնտուներին, ոչ մի գաղափարի հետ չի կապվում, բայց և ինքնանպատակ չէ, կերպավորման միջոց է, սեղմ և արտահայտիչ պատկեր, որի միջոցով ցույց է տրվում մանուկ Դավթի դյուցազնական ուժը: Կա նաև՝ ոչ մի ծծմոր չի ընդունում տարբերակը (տե՛ս միջադեպ 5): Սրանց մեջ ամենաթույլ տարբերակն այն է, որ Դավիթն ուտում է Մսրա խանումի կուրծքը (տե՛ս միջադեպ 3): Սա վերը նշված գաղափարական ու պատկերավորման միջոցներից ոչ մեկին չի հարում:

Ահա վիպական հիմքի վրա առաջացած տարբերությունների մի այլ օրինակ՝ կապված հերոսի զինավառման հետ: Թե ինչպես է հերոսը ձեռք բերում իր ձին, զենք-զրահը,

պատումների ճնշող մասում հանդիպում է № 42 միջադեպի՝ ձևով՝ Դավիթը Պառավի խորհրդով հորեղբորից առնում է իր հոր ձին, զենք ու զրահը։ Այս միջադեպը գրեթե տողացի նույնությամբ պատմվում է քսանութ պատումներում, որոնք ընդգրկում են բոլոր շրջանները։ Տարածվածությամբ նման աստիճանը ցույց է տալիս, որ այդ միջադեպն ավանդական է և ամբողջական, կատարելապես բավարարում է վիպական ուրվագծի պահանջներին, այն, որ.

- ա. ձին, զենք-զրահը, կախարդական որևէ զորություն անցնում է սերնդից-սերունդ որպես ժառանգություն, այսինքն՝ Դավիթը պիտի կրի այն, ինչ մի ժամանակ իր դյուցազն հորն էր։
- բ. Անցած ժառանգությամբ՝ ձի, զենք-զրահ, փորձվում է, թե արդյո՞ք հերոսն իր հոր արժանի հետնորդն է, այսինքն՝ նախապատրաստվում է ուրվագծի մի այլ պահանջ՝ զավակը հզոր հորից։
- գ. Շրջապատը դեռևս հերոսի մեջ չի տեսնում իր ազատարարին, չի վստահում նրա ուժին, այսինքն՝ հերոսը որպես կերպար պատրաստի չի հանդես գալիս, նրա կերպարը որպես այդպիսին կերտվում է քայլ առ քայլ, միջադեպից-միջադեպ, բնական ու բանական հետևողականությամբ։

Այս միջադեպն ավանդական ու կատարյալ է նաև այնու, որ Դավիթին ուղղված Պառավի ուղղակի խոսքի մեջ, թե.

«Քո խեր ուներ՝
Քուռկիկ Ջալալին,
Թուր Կեծակին,
Գլխու Գոտին,
Կապեն Խաբուկին,
Քամարն ի Մեջքին,
Մարութա Բանձրիկ Աստվարածին,
Խաչ Պատրազին, ինչ վար տջ թեին»։

(հատ. Ա, էջ 18, տող 270—280)

որ նույն հանգով կրկնում է Դավիթն իր հորեղբորը որպես
սլահանջ.

«Ասաց. — Խրոզբեր, կ'ուզեմ քենե՝
Մարութա Բանձրիկ Աստվարածին,
Իմ խոր Խաչ Պատրազին, ինչ վար աջ թևին,
Քուռիկ Զալալին,
Թուր Կեծակին,
Գլխու Գոտին,
Քամարն ի Մեջքին,
Կապեն Խաբուկին»:

(նույն տեղում, էջ 19, տող 290—300)

Պահպանված է զենք-զրահի, ձիու անուններն ու դրանց
հնաբույր նկարագիրը: Այս հանգավորված վիպական հատ-
վածքը կրկնվում է մի քանի անգամ՝ երբ Դավիթը հագնում է,
վրան մեծ են զգեստները և փոքր, երբ խմում է Կաթնաղբյու-
րի ջուրը, Հովանի ափսոսանքի մեջ, Դավթի աղոթք-երգման
մեջ և այլուր: Այս կրկնություններն ստեղծում են պատմո-
ղական կատարյալ ընթացք, վիպական շունչ ու թափ հա-
ղորդելով դրան:

Զենք-զրահին տիրանալու միջադեպի մեկ այլ տարբե-
րակ հանդիպում է Ալաշկերտի № 33 և 34 պատումներում:
Այստեղ Դավիթն իր տատ Արմաղանին ստիպելով իմանում
է հոր ձիու և զենք-զրահի տեղը: Սա նախորդից տարբերվում
է միայն պատմելու իր ուրույն ձևերով, մի երկու այլ մոտի-
վի օգտագործմամբ, եթե նկատի չունենանք այն հիմնական
տարբերությունը, որ այս երկու պատումներում Արմաղանի
կերպարն ընդհանրապես նորություն է, չնայած մեծ մասամբ
իր դերով ու գործով նույնանում է այլ պատումների արտա-
տեր Պառավի կերպարի հետ:

Այս նույն զինավառման № 43 միջադեպ-տարբերակը
կառուցված է հավատալիքային հիմքի վրա՝ Դավիթը հգնում
է Մարաթուկում և ձեռք բերում ձին, զենք-զրահը: Այստեղ
գործում է բոլորովին մի նոր մոտիվ, որն այլ պատումնե-
րում հանդիպում է այլ միջադեպերի մեջ՝ Դավիթը Պառավի

խորհրդով ուխտ է դնում Աստվածածին և մատաղ անում, այնտեղ քնելով ու աղոթելով՝ դառնում հզոր (տե՛ս միջադեպ 50, 51)։ Այս միջադեպերում և այլուր կրոնա-հավատալիքային տարրի ուժեղությունը փոխել է դրանց ավանդական տեսքն ու բովանդակությունը, երբեմն էլ՝ ուղղակիորեն փոխարինել հեթանոսական նույնատիպ հավատալիքներին։ Պատումների մեծ մասում Դավիթը հզորանում է Կաթնաղբյուրի ջուրը խմելով, այսինքն՝ ջրի զորության հեթանոսական պաշտամունք, որը մեծ տեղ է գրավում բոլոր շորս ճյուղերում՝ սկսած երկվորյակ եղբայրների ջրային ծննդից։ Ջրի հետ մշտական կապի այս զորությունն է նաև, որ որպես ժառանգություն փոխանցվում է սերնդից-սերունդ։ Որևէ մատուռում, վանքում աղոթելու, քնելու, Աստվածածնա հրաշք երազի, զոհաբերության քրիստոնեական նոր մեկնաբանություններն ուղեկցում են հեթանոսական այս պաշտամունքին՝ դարձյալ առաջին ճյուղից սկսած։

Այնպես որ, եթե որոշ միջադեպերում մեկը փոխարինում է մյուսին անգամ ամբողջապես, նույնպես բնական է վեպի բանավոր գոյատևման բազմադարյան ընթացքի համար։

Հատուկ ուշադրության ու բացատրությունների հարկ չունեն այն տարբերությունները, թե՛ ո՞վ խորհուրդ տվեց Դավիթին Կաթնաղբյուրի ու Պողպատե սյան մասին (Ձենով Հովան, Քեռի Թորոս, Սգավոր Մամիկ, Քուռկիկ Ջալալին. տե՛ս միջադեպ 47, 48, 49)։ Վիպական այս տարբերությունները չեն հակասում միմյանց, այլ միայն հարստացնում են վեպի կառուցվածքային հենքը։ Այս և նույնանման տարբերություններին չենք անդրադառնում. դրանք արդեն արտացոլված են միջադեպերի տախտակի վրա։

Քննական առանձին համեմատության հնարավորություն չեն տալիս նաև այն տարբերությունները, որոնք կապվում են «կա-չկա» հասկացություններին, այսինքն՝ ինչո՞ւ այսինչ միջադեպն այս պատումներում կա, մյուսներում՝ ոչ. ինչո՞ւ վիպական մի անզուգական միջադեպ հանդիպում է միայն մեկ պատումում և այլն։

Բայց եթե այդ տարբերությունները տալիս են մի այնպիսի որակ, որն արտացոլում է ազգագրական շրջանների միջև եղած տարբերություններ և դառնում օրինաչափություն, հենց այստեղ է բացվում բանադիտական համեմատական ուսումնասիրության հնարավորությունը:

Երրորդ ճյուղում Մոկս և Մուշ խմբավորումներն այնպես շեշտված չեն, ինչպես մյուս ճյուղերում: Սրա պատճառը երրորդ ճյուղի կայուն ավանդականությունն է: Կարելի է ասել նաև հակառակը, այսինքն՝ երրորդ ճյուղի համասեռ, համանման պատկերը ապացույց է նրա ավանդականության: Բոլոր հիմնական միջադեպերը առկա են անխտիր բոլոր պատումներում՝ թե՛ Մոկաց, թե՛ Մշո թևի: Այնուամենայնիվ, երրորդ ճյուղում ևս Մոկաց պատումները որոշ կետերում զգալիորեն տարբերվում են Մշո պատումներից: Ամենից առաջ այդ տարբերությունը կապվում է երկու հիմնական կերպարների՝ Չենով Հովանի և Քեռի Թորոսի հետ: Այս տարբերությունը միայն երրորդ ճյուղինը չէ, սկսվում է առաջին ճյուղից, վերջանում չորրորդով: Այս երկու կերպարների հիմքը մեկն է, մեկ կերպար միայն՝ Սասնա տան նահապետը, միտքը, փորձը, հեռատեսությունը, սերունդների մշտական ուղեկիցը, հերոսների արարքների բարոյաչափը, սատարը, նեցուկը: Վիպական ուրվագծի բազում կետեր անմիջականորեն առնչվում են այս կերպարի հետ, որովհետև սա է, որ ստեղծում է հերոսի և նրա շրջապատի փոխհարաբերությունը, պահում է հավասարակշիռ վիճակ այդ հարաբերության մեջ: Այս կերպարի հետ ունեցած մրշտական կապի և հանդեպ հերոսն ունեցած նրա վերաբերմունքի միջոցով է արտահայտվում հերոսի աստիճանական լաճը, այլ խոսքով, այս կերպարի աչքի առջև և նրա օգնությամբ է հերոսը հերոս դառնում: Եվ ահա, այս մեկ կերպարը վիպի պատումներում դարձել է երկուս—Մոկսում՝ Չենով Հովան, Մուշում՝ Քեռի Թորոս: Հիմքում նույնը լինելով հանդերձ, այս երկու կերպարներն իրենց նկարագրով տարբերվում են, չնայած նույն հիմքը ենթադրում է նույն դերը: Այս տարբերությունները միայն խառնվածքային չեն, թեև խառնվածքը

նույնպէս արտահայտում է ազգագրական շրջանի պատկերը։ Այդ երկու կերպարների միջև եղած տարբերութիւններն, ավելի հետաքրքիր են իրենց վիպական և պատմական հիմքերով։

Հերոսը մեծանում է օտար միջավայրում. սա վիպական ուրվագծի կետերից մեկն է։ Համաձայն այս կետի, Մեծ Մհերի որդիները գերի են Մսրա Մելիքի մոտ։ Այս մոտիվը, գործում է և՛ Մոկաց, և՛ Մշո պատումներում։ Բայց ահա, Մշո թեում կա մի այսպիսի միջադեպ, որ չկա Մոկսում։ Քեռի Թորոսը շատ է վշտացած Սասնա տան ժառանգների նման վիճակով և որոշում է ամեն գնով նրանց վերադարձնել հայրենի Սասուն։ Նրա այս վիշտն ու մտահոգութիւնն անմիջականորեն հարում է ժառանգ-օջախ թեմային։ Քեռի Թորոսը գնում է Մսր։ Մսրա Մելիքն առաջարկում է իր պայմանները, որոնք նույնպէս բխում են այդ գաղափարից, այսպիսինքն, նա էլ իր օջախի՝ Մսրա տերութեան անվտանգութիւնն ապահովելու համար Սասնա ժառանգներից պահանջում է ցմահ հնազանդութիւն—նրանք պիտի անցնեն իր թրի տակով։ Քեռի Թորոսն ունի մեծ փորձառութիւն, նա այդ իրադրութեան մեջ մեծ կարևորութիւն չի տալիս Մելիքի պահանջին և պատրաստ է կատարելու այն։ Այս միջադեպի հիմքում ընկած է թրի տակով անցնելու վիպական հայտնի մոտիվը, որին կարելի է բերել բազում զուգահեռներ պատմութիւնից՝ բռնի գերութիւն, պատանդ, հնազանդութեան պահանջ, առերես հնազանդութիւն կամ անհնազանդութիւն։ Անընդհատ կրկնվող այդ պատմութիւնը հայ բանահյուսութեան մեջ դարձել է սիրված վիպական մոտիվ և լայն տարածում գտել։ Այն, ըստ վեպի, ավելի մեծ նստվածք է տվել Սասուն-Մուշ հատվածում և մտել է վեպ՝ նորոգվելով Դավթի կերպարի միջոցով։ Մոկաց պատումներում այդ մոտիվը կորել է, կամ վեպ չի մտել, և դրանք զրկվել են վիպական մի գեղեցիկ միջադեպից և կատարելութեան հասած հետևյալ պատկերից։

«Դավիթ չգնաց թրի տըկով, կշտով ընցավ.
Ուր ճոշ բոթ քիսավ ի ջարդու քար՝
Կրակ կլավ մոտեն»:

(Հատ. Բ, մաս Ա, էջ 19, տող 390)

Այս միջադեպերում առանց ճիգ ու ջանքի մի նոր աստի-
ճանի են բարձրանում Քեռի Թորոսի և Դավթի կերպարները:

«— Հե՛յ, շան որդի,
Ես նստիմ հողա, կերուխում էնիմ,
Մսրամեկիք իդա, տանի զմբբ ճժեր,
ԶԱբամեկիքի տղեկներ գըրթըփե,
Ես նստիմ հողա, կերուխում էնիմ,
Ամոթ չէ՞ մըզի...
Հաց գինի ու տեր կենդանի,
Քըն զըդ կըթխեն եվել խմած չեղնիմ.
Ելնեմ էրթամ իմ ճժերուն էրեվան»:

(Նույն տեղում, էջ 13, տող 360)

Սա Քեռի Թորոսի խոսքն է, որն ինքնին տալիս է այդ
կերպարի բնորոշումը: Այսպիսի վիշտ ու մտահոգությունն ոչ
մի պատումում չի ապրում Զենով Հովանը, որովհետև չկա
այդ ամբողջ միջադեպը, չկա թրի տակով անցնելու վիպա-
կան մոտիվը: Եվ առաջանում են Քեռի Թորոսի ու Զենով
Հովանի կերպարների նաև խառնվածքային տարբերություն-
ները: Այս և մյուս բոլոր միջադեպերում Քեռի Թորոսի կեր-
պարը շարունակում է դրսևորվել որպես ամենախսկական
Սասնա ծռռ, Սասնա տան մեծ ծռռ, որը շատ հաճախ ան-
միջապես մոռանում է և՛ իր տարիքը, և՛ հեռատեսությունը,
և՛ զգուշավորությունը: Սրան հակառակ, Զենով Հովանը
Սասնա ծռռ չէ. նա ծռերի խելամիտ հորեղբայրն է:

Մի այլ միջադեպ, ուր պատմվում է Դավթի ու նրա նախ-
որդ ընկերոջ, ցասման ժամի հարիսայի, դեերի հետ Դավ-
թի հաշվեհարդարի, քարայրի մեծ գանձի մասին, նույնպես
ճնշող գերակշռությամբ Մշո պատումներինն է (տե՛ս միջա-
դեպ 20, 21, 22), Մոկսից միայն չորս պատում ունեն այդ
միջադեպերը (պատումներ՝ № 5, 10, 11, 38): Դավթի՝ Մըս-

րա Մելիքի բանակում ծառայած հյուրասիրվելու (տե՛ս միջադեպ 63), նրա դուժան անելու ու շատակերության (տե՛ս միջադեպ 83) միջադեպերը նույնպես կա՛մ բացառապես Մշո պատումներինն են, կա՛մ ավելի սիրված ու տարածված են այդ թևում:

Ջրի հեթանոսական պաշտամունքի հետ կապված առասպելական տարրի դերակշռությունը այս ճյուղում ևս, ինչպես առաջինում, մնում է Մոկաց պատումների կողմը. մի բան, որ համեմատաբար թույլ է պահպանվել Մշո կողմերում: Մոկաց թևը հետևողականորեն զարգացնում է ջուրը ոռպես Սասնա դյուցազունների հզորության աղբյուր վիպական մոտիվը: Այս իմաստով, Հովանի խորհուրդը Դավթին Կաթնաղբյուրի մասին, Դավթի ու Քուռկիկ Զալալու այնտեղ լողանալու ու հզորանալու միջադեպերը Մոկաց պատումների մենաշնորհն է, Մշո թևում դրանք քիչ են պատմվում: Սա բնական շարունակությունն է Մոկո-Մուշ խմբերի այն հիմնական տարբերության, որ նկատվում է առաջին ճյուղում՝ կապված երկվորյակ եղբայրների ծննդի հետ:

Ամբողջ վիպականությամբ հանդերձ, շատ տեղերում զգացվում է, որ Մոկաց պատումներն առանձնապես հակված են առասպելական ու հեքիաթային մոտիվների կողմը: Մշո կողմերում ավելի սիրված են վիպական ու իրապատում մոտիվները:

Այս հողի վրա պատումների մեջ կան նաև մանր տարբերություններ, որոնք մասնակի համեմատությունների հնարավորություն տալիս են, բայց քանի որ դրանք առանձնապես մեծ սկզբունքների ու համակարգման հետ չեն կապվում և արդեն ինքնին արտացոլվում են միջադեպերի տախտակի վրա, դրանց չենք անդրադառնում:

Սա Փոքր Մհերի ճյուղն է, որով և փակվում է «Սասնա ծռերի» վիպական ցիկլը: Փոքր Մհերը Սասնա տան դյուցազնական վերջին սերունդն է:

Զորրորդ ճյուղն իր կառուցվածքով մի փոքր տարբերվում է նախորդներից: Հիմնական թեմաներն այստեղ նույն դերը չունեն, ինչ առաջին երեք ճյուղերում: Դրանք այստեղ ևս այս կամ այն չափով գործում են, բայց վիպական այլ դրսևորումներով:

Առաջին թեմա. — (կռապաշտ և խաչապաշտ երկրների, մշտական հակամարտություն նրանց միջև, կովի իրադրություն):

Կռապաշտ-խաչապաշտ թեման Դավթի ճյուղում արդեն ավարտվել էր. այն իր վիպական բնականոն լուծումն ստացել էր՝ Դավթին սպանել էր Մսրա Մելիքին, վերջ դրել բռնությանը, կռապաշտ-խաչապաշտ հակամարտությանը:

Նման լուծումից հետո այդ թեմայի շարունակվող դրսևորումները նույն նպատակը և նույն մեկնաբանությունը ունենալ չեն կարող: Ահա թե ինչու, առաջին թեման շորրորդ ճյուղում հանդես է գալիս շատ թույլ: Փոքր Մհերի բոլոր կռիվները զանազան թշնամիների հետ, տեղի են ունենում նրա թափառումների ճանապարհին. այդ կռիվներից ոչ մեկը Սասունի ներսում չէ և Սասունի համար չէ: Եթե նույնիսկ այդ կռիվների միտումն ու գաղափարն այն է, թե Մհերն ուզում է աշխարհի երեսից վերացնել կռապաշտությունը, դա դարձյալ կապ չունի կռապաշտ-խաչապաշտ թեմայի հիմնական գաղափարի հետ: Եթե նույնիսկ Մսրա Մելիք — Սասնա ծռու գիծը Դավթով չի ավարտվում և հասնում է մինչև Փոքր Մհեր, նույնիսկ այս դեպքում Մելիքի և Փոքր Մհերի կռիվն այլ կերպարանք ունի: Խոսքը Ալաշկերտի № 33 պատումի մասին է. այս հակամարտության բնույթը մենք արդեն բացահայտել ենք Դավթի ճյուղի առնչությամբ. Մսրա Մելիքն այստեղ բռնություն մարմնավորող ուժ չէ, այլ՝ Գոհարի

նշանած (տե՛ս Տախտակ 9, միջադեպ 18): Իսկ Սաս-
նա ո՞ր հերոսը չի կռվում իր ընտրած աղջկա փեսացուների
հետ: Սա վիպական ուրվագծի այլ կես է և կռապաշտ-խա-
շապաշտ թեմայի հետ կապ չունի:

Միայն մեկ պատումում պահպանվել է Սասնա վրա
բռնության և Փոքր Մհերի կողմից այդ բռնության վերաց-
ման գաղափարը. դա Մոկաց № 5 պատումն է: Այստեղ
պատմվում է, որ Կողբադնի թոռները հարձակվում են Սա-
սունի վրա, Մհերը կոտորում է նրանց (տե՛ս միջադեպ 13):
Կողբադնի դիժն ուղղակիորեն շարունակվել է շորրորդ ճյու-
ղում: Բայց, արդյո՞ք սա բնորոշ է այդ ճյուղին: Մյուս պա-
տումներում չկա այս միջադեպը: Թեմայի մեքենայորեն
կրկնվող դրսևորումն ավելորդ է վեպում. թեման պիտի մի-
ջադեպից-միջադեպ, ճյուղից-ճյուղ զարգացում ապրի: Եթե
չկա այդ զարգացումը, միջադեպը դառնում է թույլ կրկնու-
թյուն, և բնական է, որ մնում է եզակի պատումի սահման-
ներում:

Առաջին թեմայի հետ կապ չունեն կռվի նաև այն մի-
ջադեպերը, երբ Փոքր Մհերը լուծում է Դավթի վրեժը (տե՛ս
միջադեպ 8): Սրանց հիմքում ընկած է այլ մոտիվ՝ վրիժա-
ռությունը:

Երկրորդ թեմա.—(ամուսնություն):

Փոքր Մհերի ամուսնությունը նույնպես հիմնված է սիրո
և հավասար պայմանների վրա, բռնության հիմքը չկա: Մի-
ջադեպերը փոքր-ինչ տարբեր են, որովհետև հիմնված են
տարբեր մոտիվների վրա: Էությունը նույնն է, ինչ Սանասա-
րի և Դեղձուն Մամի, Դավթի և Խանդութի ամուսնության
դեպքում:

Ասվել է արդեն, որ վեպում ամուսնությունը ինքնին
նպատակ չէ, նպատակը ժառանգն է: Հենց այստեղ է Փոքր
Մհերի ճյուղի տարբերությունը մյուսներից:

Ե Ր Ր Ո Ր Դ Թ Ե Մ Ա. — (Հզոր ժառանգ):

Փոքր Մհերը ժառանգ շունի և հոր անեծքով մնալու է անժառանգ: Սա ժառանգ Թեմայի նոր լուծում է վեպում: Գաղափարը նույն հարցադրումն է՝ ժառանգ կլինի՞, Թե՞ չի լինի. տարբերությունը պատասխանի մեջ է — ո՛չ, չի լինի:

Վեպի միասնությունը և շարունակական ընթացքը սերունդների հաջորդափոխությունից է: Փոքր Մհերը փոխարինող սերունդ շունի, և վեպը, բնականաբար, պիտի ավարտվեր:

Ալաշկերտի № 33 պատումը միակն է, որ պատմում է, թե Փոքր Մհերը ժառանգ ունեցավ, իր ձեռքով սպանեց իր որդուն և որդեսպանությունից ու կսկծից փակվեց քարի մեջ (տե՛ս միջադեպ 30):

Մհերի որդու ծնունդը հիմնված է մի մոտիվի վրա, որը կրկնվում է վեպի բոլոր շորս ճյուղերում, կապված բոլոր շորս սերունդների՝ Սանասարի, Մեծ Մհերի, Դավթի և Փոքր Մհերի հետ: Այդ մոտիվը հետևյալն է. հերոսը ապօրինի կապի մեջ է մտնում մի ալազգի կնոջ հետ, այդ կապից ծնված ժառանգի ձեռքով էլ տեղի է ունենում հերոսի մահը (տե՛ս Տախտակ 6, միջադեպ 27, Տախտակ 7, միջադեպ 30, Տախտակ 8, միջադեպ 87 և 117, Տախտակ 9, միջադեպ 28):

№ 26 պատումի (Մուշ) առաջին ճյուղում Աբամելիքը (այսինքն՝ Սանասարը) ապօրինի կապի մեջ է մտնում մի որբեայրի կնոջ հետ, ծնվում է Մսրամելիքը, որը և սպանում է Աբամելիքին՝ իր հորը (տե՛ս Տախտակ 6, միջադեպ 27):

Մեծ Մհերը № 27 (Մուշ) և № 42 (Ալաշկերտ) պատումներում մտնում է ապօրինի կապի մեջ մի որբեայրի կնոջ հետ, ծնվում է Մսրամելիքը: Չկա երկրորդ մասը՝ Մելիքը չի սպանում Մհերին (տե՛ս Տախտակ 7, միջադեպ 30), բայց այդ նույն Մելիքն է, որ դառնում է պատուհաս Սասնա գրվիսին:

Դավիթը նույնպես ապօրինի կապի մեջ է մտնում մի կնոջ հետ. որոշ պատումներում դա Չմշկիկ Սուլթանն է (տե՛ս Տախտակ 8, միջադեպ 87), և այդ կապից ծնված աղ-

շիկը (կամ տղան՝ № 43 պատում) սպանում է Դավթին (տե՛ս Տախտակ 8, միջադեպ 117):

Այս մոտիվներին երբեմն միանում է նաև մեկ ուրիշը՝ հերոսը գնում է օտարություն և մի որևէ նշան է տալիս (ապարանջան, իր թաշկինակը) կնոջը, իրենց ապագա զավակի համար. այդ նշանով վերջում ճանաչում են իրար հայր ու որդի (մեծ մասամբ մենամարտի ժամանակ):

Այս բոլոր մոտիվները գրեթե նույնանման միջադեպերով կրկնվում են նաև Փոքր Մհերի ճյուղում (տե՛ս Տախտակ 9, միջադեպ 28, 29, 30): Միայն այստեղ հոր և որդու կռիվն ունի այլ լուծում: Եթե մյուս դեպքերում որդին էր սպանում հորը (Սանասարին, Դավթին), կամ մենամարտում որդին հաղթում էր հորը, և հայրն անիծում էր որդուն (Դավիթը Փոքր Մհերին), ապա այստեղ հայրն է (Փոքր Մհեր) սպանում իր որդուն: Այսպիսի լուծումն իր հիմքում անկախ մոտիվ է, բայց երբ Փոքր Մհերի դեպքում միացել է հոր և որդու կռիվի վիպական մոտիվին, դարձել է Մհերի Ազնավուքարում փակվելու մեկնություն՝ Մհերն սպանեց իր որդուն և, զգալով իր մեղքի ծանրությունը, ճեղքեց ապառաժ քարը, փակվեց քարի մեջ:

Բոլոր դեպքերում, Մհերի քարում փակվելը հետևանք է հոր և որդու կռիվի, անկախ այդ կռիվի լուծումից. մի դեպքում՝ պարտված հայրը (Դավիթ) անիծում է որդուն (Փոքր Մհերին) մնալ անժառանգ, անմահ, և հողը չի վերցնում Մհերին, փակվում է քարում. մյուս դեպքում՝ հաղթանակած և որդեսպան հայրը (Փոքր Մհեր) իր մեղքի ծանրության հետ փակվում է քարում:

Ժայռերին դամված կամ քարում փակված հերոսների առասպելը, միանալով նոր վեպին, պիտի ինչ-որ ձևով ենթարկվեր վեպի ընդհանուր կառուցվածքին, ձուլվեր նրա հետ՝ մի ամբողջություն կազմելու համար: Զուլվելով հանդերձ, սակայն, այս առասպելն իր հիմքով ավելի անկախ է մնացել, քան վեպի մյուս ճյուղերը և նրանցում հանդես եկող առանձին առասպելները: Մյուսները համեմատաբար ավելի լավ են ձուլվել միմյանց, քան Փոքր Մհերի ճյուղը:

Նախորդ երեք ճյուղերի այդքան լավ միանալու և սերտաճման հիմքը հիմնական թեմաների զորությունն է և դրանց ընձեռած հնարավորությունները: Մհերի ճյուղում այդ թեմաների դերը թույլ է, որովհետև նախ՝ այդ թեմաները հարատև չեն և մի տեղ ստանում են իրենց լուծումը, սպառում իրենց հնարավորությունների դրսևորումները. երկրորդ՝ Փոքր Մհերի ճյուղում ուժեղ է բոլորովին մի նոր թեմա, իր անկախ հիմքով՝ քարոսում փակված հերոսի թեման: Այս թեմայի միացումը հայ ժողովրդական վեպին նոր չէր: Այդ հնագույն առասպելը մի անգամ արդեն հազել էր պատմական որոշակիության զգեստ, կապվել Արտաշեսի որդի Արտավազդի անվան հետ և միացել «Վիպասանքին»: Երկրորդ անգամ այն կապվում է առասպելական մի այլ կերպարի՝ Մհերի անվան հետ, դառնում Դավթի որդի և մտնում «Սասնա ծռեր» վեպի մեջ: Ուրեմն քարոսում փակված հերոսն երի թեմայի միացումը ժողովրդական վեպին՝ նույնպես ավանդույթ ունի, նույնպես բնական է վեպի կառուցվածքին:

Զորքի թեմա. — (շինարարություն):

Շինարարության թեմայի միայն հետքեր կարելի է գրտնել Փոքր Մհերի ճյուղում, այն էլ՝ ոչ բոլոր պատումներում:

Մհերը կամուրջ է կապում գետի վրա, կամրջով անցնողին ծեծում, որ շանցնեն իր կամրջով, շանցնողին ծեծում, որ անցնեն կամրջով, գետով շանցնեն (տե՛ս Տախտակ 9, միջադեպ 4): Այս միջադեպը Մհերի կերպարին հատուկ երկվության (չար ու բարի) դրսևորման մի բնորոշ օրինակ է¹:

№ 5 պատումում շինարարության թեմայի հետ կապված միջադեպերն այսպիսին են. Մհերը հեղեղումից ազատում է Զզիրու քաղաքը (տե՛ս միջադեպ 5) և Բաղդադում եկեղեցի

¹ Վիպասաց Զատիկ հապոյանը վկայում է, որ այդ միջադեպը վեպի հետ գործ չունի և վերցված է այլ հեքիաթներից:

կառուցում իր պապ Բաղդասարի գերեզմանի վրա (տե՛ս միջադեպ 27):

Այս հատուկենտ միջադեպերը հնարավորություն չեն տալիս շորրորդ թեմայի մասին ավելին ասելու:

Այս բոլորի բնական հետևանքով, Փոքր Մհերի ճյուղն ունի մյուսներից բոլորովին տարբեր ավարտ:

Ինչպե՞ս են ավարտվում վեպի այն պատումները, որոնք շունեն Փոքր Մհերի ճյուղը (թվով 17 պատում): Նախ՝ այն հինգ պատումները, որոնք պատմում են միայն Սանասարի և Բաղդասարի մասին: Դրանցից հրեքը՝ № 3, 4 և 44 վերջանում են Սանասարի և Բաղդասարի ամուսնությամբ: № 7 պատումը նույնպես ունի այսպիսի ավարտ, բայց և նշվում է, որ.

«Սանասարին՝ Աստված էտու, լաճ րմ էլավ.

Անուն դրին Մհեր»:

(հատ. Ա, էջ 325, տող 580)

Այս պատումի ասացող Մոկացի Սախոն եթե նշում է, որ Սանասարին Մհեր անունով որդի եղավ, ուրեմն, նա լսել է նաև Մհերի մասին. չէ՞ որ Սախոյի իսկ վկայությամբ, վեպը լսել է իր պապ վիպասաց Պողոսից, որն իմացել է վեպի «յոթ ճյուղը»: Սախոն կարող էր Սանասարից և Բաղդասարից հետո անցնել Մեծ Մհերի ճյուղին, որովհետև նրա պատումից հրեքում է, որ շատ լավ ասացող է, արտակարգ հիշողության ու հարուստ պատմելաոճի տեր, ասացողների սերնդից և քանիցս լսել է վեպն ամբողջությամբ: Այս իմաստով, Սախոյի պատումի ավարտը նույնը չէ, ինչ № 3, 4 և 44 պատումներինը: Սա ինչ-որ պատճառով ընդհատված պատում է:

Ընդհատվածի տպավորություն է թողնում նաև № 20 պատումը: Այն վերջանում է երկվորյակ եղբայրների բերդաշինության միջադեպով: Այս ավարտը նույնպես մեզ թվում է անբնական: Կարող է ասացողը պատմել կամ լսած լինել միայն այսքանը, բայց սա չի նշանակում վիպական ավարտ:

Մնացած տասներկու պատումները, որոնք ունեն ճյուղային տարբեր ընդգրկում, ունեն երեք կարգի ավարտ, վերջանում են.

ա. Մելիքի դեմ Դավթի տարած հաղթանակով.—ՆՆ 14, 16, 18, 22, 31, 46:

բ. Դավթի և Խանդուխի ամուսնությամբ.—ՆՆ 15, 39, 40:

գ. Դավթի և Խանդուխի մահով.—ՆՆ 34, 43:

Փոքր Մհերի ճյուղն այս ավարտներից և ոչ մեկը չունի: Մհերը փակվում է Ագուավու քարում: Միայն մեկ պատում (Ն 9՝ Մոկս) Մհերի այլ վախճան է տալիս. Մհերն սպանում է իր հորը՝ Դավթին, և անհայտանում: Սա էլ առնչվում է վերը բացահայտված հոր և որդու կռիվը վիպական մոտիվին:

Փոքր Մհերի ճյուղի վիպական ավարտը թելադրված է նրա հիմնական թեմայի զորությամբ՝ ժայռերին դամված կամ քարում փակված թեմայի պահանջով: Այս թեման գործում է միայն Փոքր Մհերի ճյուղում և, բնականաբար, միայն սրա ավարտն է պայմանավորում: Որը այս և վերը նշած մյուս պատճառներով նախորդող երեք ճյուղերի ավարտ լինել չէր կարող:

* * *

Այժմ, երբ արդեն տրված է «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի կառուցվածքային վերլուծությունը, հարկ է կրկին անդրադառնալ նախորդ երեք խնդիրներին՝ վեպի գրառման ժամանակին և հասարակական պայմաններին, տարածմանն ու տեղայնացմանը և ճյուղերի քանակային հարաբերությանը: Այդ անհրաժեշտությունը բխում է խնդիրները և դրանց լուծումներն ամբողջացնելու պահանջից:

Առաջադիր խնդիրներից յուրաքանչյուրը կարելի է լուծել հարցադրման իր իսկ շրջանակներում, ինչպես և դա արված է աշխատանքի առանձին գլուխներում: Սակայն, ինչպես հարցադրումն ինքը, այնպես էլ վեպի կառուցվածքաքանական հիմքի բացահայտումը, ենթադրում է ավելի լայն և ամփոփ հետևությունների հնարավորություն:

ԴԵ ԿԵ	ՄԻԱՅԻՆՈՒԹՅԱՆ	ՔԱՆՈՒՄՆԵՐ																																																			
		ՄԱՌՈՒ										ՔԱՆՈՒ										ՔԱՆՈՒ							ՔԱՆՈՒ							ՔԱՆՈՒ																	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	43	44	45	46	47					
1	Մեր ծնունդի և մահվան արժեքը												+					+	+			++		+	++																									8			
2	Մեր ծնունդի և մահվան արժեքը	++																																																4			
3	Մեր ապրումը և իրենցինքն						+	++													++	+																												9			
4	Մեր կոմունիստական հասարակություն	+																																																2			
5	Մեր կոմունիստական հասարակություն				+																																														1		
6	Մեր կոմունիստական հասարակություն												+																																					1			
7	Մեր կոմունիստական հասարակություն	+	+										+									++	++					+	++	++																				14			
8	Մեր կոմունիստական հասարակություն	+	++									++									+	++	++				++		+	+																				16			
9	Մեր կոմունիստական հասարակություն	+			+	+	++	+				+									+	++																												11			
10	Մեր կոմունիստական հասարակություն	++			++	+	++	+				+									+	++																												13			
11	Մեր կոմունիստական հասարակություն	++																			+																													3			
12	Մեր կոմունիստական հասարակություն				+																																													2			
13	Մեր կոմունիստական հասարակություն				+																																														1		
14	Մեր կոմունիստական հասարակություն	+																			+							+	+	+																				6			
15	Մեր կոմունիստական հասարակություն																				+							+																						2			
16	Մեր կոմունիստական հասարակություն	++																										+	+	+																				5			
17	Մեր կոմունիստական հասարակություն																											+	+	+																				3			
18	Մեր կոմունիստական հասարակություն	++			+																+							+	+	+																				8			
19	Մեր կոմունիստական հասարակություն	++																																																2			
20	Մեր կոմունիստական հասարակություն	++																																																2			
21	Մեր կոմունիստական հասարակություն	++																			+							+	+	++																				8			
22	Մեր կոմունիստական հասարակություն																												+	+	+																				3		
23	Մեր կոմունիստական հասարակություն																												+																							1	
24	Մեր կոմունիստական հասարակություն																											+																								1	
25	Մեր կոմունիստական հասարակություն																																																		2		
26	Մեր կոմունիստական հասարակություն																																																		2		
27	Մեր կոմունիստական հասարակություն						+																																												1		
28	Մեր կոմունիստական հասարակություն																												+																							1	
29	Մեր կոմունիստական հասարակություն																												+																							1	
30	Մեր կոմունիստական հասարակություն																												+																							2	
31	Մեր կոմունիստական հասարակություն											+																																								1	
32	Մեր կոմունիստական հասարակություն						+																																													1	
33	Մեր կոմունիստական հասարակություն	++			++	+	++	+	++	+	++	+									+	++	++	++	++	++	++	++	++	++																					24		
34	Մեր կոմունիստական հասարակություն																												+																								1
35	Մեր կոմունիստական հասարակություն	+			+																							+																								4	
ԸՆԴՀԱՆՈՒՄ		10	14		11	5	4	2	3	3	2	7									1	6	1	5	7	2	5	8		4	3	16	9	5	11	8		3	8		2		1										

1. Վեպի ժամանակագրությունը և ասացողների հասարակական կազմի բնույթն ու էությունը բացահայտված է առաջին գլխում ինքնին, անկախ վեպի բովանդակությունից և կառուցվածքից: Վեպի կառուցվածաբանական օրինաչափությունների պարզաբանումն առաջ է քաշում խնդրի լուծման նաև այսպիսի պահանջ: Վեպի հիմքում, ինչպես ասվեց վերևում, ընկած է վիպական կառուցվածքի հետևյալ անհրաժեշտ պայմանը.

ա. հերոսական կովի իրադրություն.

բ. կովի հաղթական ավարտ.

գ. պետության հաստատում կամ կորցրած պետականության վերականգնում:

Այսպիսի իրադրության ընկալումը կարող է միայն համաժողովրդական լինել և ոչ ժողովրդի ունի խավի մեկնաշնորհ: Այս ընկալման ներշնչանքը միայն կարող է վեպ կերտել, և վիպակերտման այդ ընթացքին կարող են մասնակցություն բերել ժողովրդական բոլոր զանգվածները, ժողովուրդ բառի սմեկայն իմաստով:

Այս իսկ պատճառով էլ, վեպի ասացողների հասարակական կազմի վերլուծությունն առաջին գլխում բարձրացված է միայն ու միայն գրառման ժամանակաշրջանի (XIX դարավերջ և XX դար) պատմա-հասարակական պայմանների տեսադաշտի վրա և այդ պայմանների հետ կապի մեջ: Այսինքն՝ դա վեպի գոյատևման և պահպանման միայն մեկ ժամանակաշրջանի պատկերն է, և վեպի ստեղծման ու փոխանցման ողջ ընթացքի վրա տարածել չի կարելի:

2. Վեպի կառուցվածաբանական վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել վեպի ժանրային այն առանձնահատկությունը, թե ինչու վեպը ոչ միայն իր ստեղծմամբ, այլև գոյատևմամբ կարող է չկրել համազգային բնույթ և մնալ պատմա-աշխարհագրական որոշակի տարածքի սահմաններում: «Սասնա ծռերը» որպես ավանդական-վիպական մի ամբողջ ցիկլի օղակներից մեկը, պիտի ստեղծվեր հենց այնտեղ, ուր պատմական և վիպական

ամուր ավանդներ ունեին նախորդ վեպերը: Վիպական այդ բնօրրանն իր աշխարհագրական ընդգրկմամբ համընկնում է պատմական այն բնօրրանին, ուր առաջացել են հայկական առաջին ցեղերն ու պետությունները, այն տարածքն է, որ մշտապես եղել է այլազգիների դեմ հայերի մղած կռիվների կենտրոններից մեկը: Ազգապահպանման համար մղված կռիվների պատմական որոշակի իրադարձությունները ժամանակ առ ժամանակ նյութ են դարձել հանգունանման վիպական զրույցների և կերտվել որպես ն ո Ր Վ Ե Ս Ի Վ Ե Ս Ի հ ի ն հ ա յ Ր Ե ն ի ք ու մ:

Վեպի այդ հին հայրենիքն իր տարածքով մեծ մասամբ համընկնում է Տուրուբերան—Վասպուրական աշխարհին: Այդ աշխարհն էլ պահել է վեպը և հասցրել XIX դար:

Տեղայնացման իմաստով վեպը լայն, համահայկական բնույթ չի կրել, որովհետև նախ՝ վեպն իր ժանրային առանձնահատկությամբ կապվում է պատմական որոշակի տեղավայրերի հետ, այսինքն՝ վեպն ունի որոշակի հայրենիք: Երկրորդ. վեպը երկար դարեր կապված է եղել իր հայրենիքի հետ և շատ ուշ է դուրս եկել նրա սահմաններից. ըստ մեզ հասած վկայությունների, միայն XIX դարի առաջին կեսին այն արևմտահայ հատվածի հետ անցավ Արևելահայաստան: Այդ անցման բնույթն արդեն քննարկված է երկրորդ գլխում:

3. Վեպի կառուցվածքային հիմքի հետ է կապված նաև ճյուղերի քանակային հարաբերությունը: Եթե պարզվում է, որ բոլոր ճյուղերի հիմքում ընկած է վիպական կառուցվածքային միևնույն ուրվագիծը, և դա պատճառ է նրանց միանալու կամ անջատվելու, ապա վեպի ճյուղային տարբեր ընդգրկումը լրիվ բնական է: Եթե ճյուղերի միացությունը մեքենայական չէ, այլ ներքին հարաբերակցության հիման վրա, և այդ հարաբերության մեջ ճյուղերը համազոր չեն, բնականաբար, ամենից շատ տարածում պետք է ունենա կենտրոնական, հիմնական ճյուղը, որպես առանձին վեպ: Այս դեպքում, այդ կենտրոնականին նախորդող կամ հա-

ջորդող ճյուղերը կորցնում են իրենց ինքնուրույն, անկախ գոյությունը և միանում նրան. նախորդը, որպես կենտրոնական հերոսի ծնող, հաջորդը՝ ժառանգ: Ահա թե ինչու, այն պատումներում, որոնք անում են Դավթի պատմությունը որպես առանձին վեպ, Մեծ և Փոքր Մհերներն ունեն ընդամենը մի երկու միջադեպ: Այդ ընդգրկմամբ նրանք երբեք առանձին պատմվել չեն կարող: Դավթի հետ միասին էլ նրանք ընկալվում են ոչ որպես առանձին ճյուղեր, այլ՝ առաջինը Դավթի հայր, երկրորդը՝ Դավթի որդի: Վեպի այսպիսի տեսքը գերակշռող է Մոկաց թևում:

Իսկ այնտեղ, ուր այդ երկու ճյուղերն ավելի մեծ ընդարձակություն ունեն (հատկապես Մեծ Մհերը՝ Մշո թևում), խոսում է վիպական կառուցվածքի մի այլ առանձնահատկություն. հնարավոր է, որ բոլոր ճյուղերում ևս վիպական ուրվագիծը հանդես գա իր ամբողջությամբ, այսինքն՝ բոլոր կերպարների նկատմամբ կիրառվեն ուրվագծի բոլոր կետերը (ծնող, ծնունդ, մանկություն, պատանեկություն, գործեր, ամուսնություն, ժառանգ, մահ): Ընդարձակության դեպքում անգամ երկու Մհերները չեն առանձնանում՝ դարձյալ վեպում իրենց դրաված դիրքի պատճառով, նախորդում կամ հաջորդում են Դավթի ճյուղին, չեն կարողանում պոկվել Դավթի ձգողական մեծ ուժից: Մինչդեռ Դավիթը կարողանում է առանց նրանց գոյություն ունենալ, նրանք առանց Դավթի՝ չեն կարողանում: Դավթի անկախությունն ապահովվում է հերոսական կռվի իրադրությամբ և լուծմամբ: Երկու Մհերների դեպքում այս պայմանը չի գործում կամ գործում է շատ թույլ: Օրինակ. որոշ պատումներում պատմվում է Մեծ Մելիքի կամ Մեծ Մհերի կռիվների և հաղթանակների մասին: Բայց այդ պատմությունները ոչ թե առանձին միջադեպեր են, այլ՝ թուցիկ հիշողություններ, որովհետև եթե դրանք երկու ճյուղում էլ ունենային վիպական նույն ընթացքը, ճյուղերից մեկն ու մեկը վեպում կդառնար կրկնություն: Ուրեմն, ճյուղերի ներքին հարաբերությունն այս դեպքում նույնպես բնական է, որովհետև կռվի իրադրությունը երկու ճյուղում վիպական նույն ընթացքն ունենալ չէր կարող:

Երբ բոլոր ճյուղերում կիրառվում է վիպական ուրվագիծն իր բոլոր մասերով, ճյուղերի միանալու դեպքում սյուժետային գծի մեջ առաջանում են կրկնություններ, կրկնվող միջադեպեր, որոնք պատմվում են մի քանի սերունդների վրա:

Չնայած, ուրվագծի նույնության պատճառով կրկնվող միջադեպերը կարող են բնական և բնորոշ լինել յուրաքանչյուր կերպարի, այնուամենայնիվ, դրանք բոլոր պատումների և շորս ճյուղերի ընդհանուր համեմատության մեջ դրտնում են իրենց տեղը: Եթե անգամ միևնույն միջադեպը կապվում է երկու-երեք կերպարի հետ, հակասություն չի առաջանում, բայց նայած ինչ միջադեպ, որ կերպարի հետ, որտեղ:

Վիպական-ավանդական կառուցվածքային ուրվագիծը, գործելով բոլոր շորս ճյուղերում, պատճառ է դառնում կրկնվող միջադեպերի առաջանալուն, բայց և կարգավորում է դրանց տեղն ու արտահայտման ձևերը:

Երբ մաս առ մաս համադրվում ու համեմատվում են վեպի բոլոր ճյուղերն ըստ վիպական ուրվագծի և հիմնական թեմաների, բացահայտվում է այն մեծ ճշմարտությունը, որ նույն հիմքի վրա, բանահյուսական նույն նյութով ու շաղախով կառուցվում են վիպական տարբեր ճյուղեր, որոնք վեպի ամբողջության մեջ ոչ թե կրկնում են իրար, այլ շարունակում, լրացնում են միմյանց, դառնում մի ողջ ժողովրդի «բանաստեղծական պատմություն կամ պատմական բանաստեղծություն»:

ՎԵՊԻ ՊԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ՆԿԱՐԱԳԻՐ-ՑԱՆԿ՝

Պատում 1

1. Էջմիածնում, Մոկաց Գինեկաց գյուղից, 1886 թվին.
2. Մանուկ Աբեղյանը, մոկացի նախո Քեռուց (35 տարեկան, գյուղացի, անգրագետ).
3. «Դավիթ և Մհեր», 2 ճյուղ՝ Դավիթ-Մհեր, 1350 տող, տողատաժ (Մ. Աբեղյան և խմբագրություն).
4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 9—54 էջերը, Ա պատում.
5. «Դավիթ և Մհեր», Շուշի, 1889, տողատաժ է մեծ մասամբ (Աբեղյան):

Պատում 2

1. Էջմիածնում, Մոկաց Գինեկաց գյուղից, 1898 թվին.
2. Բագրատ Խալաթյան, մոկացի Խապոյենց Զատիկից (50 տարեկան, հողագործ, կտավագործ գյուղացի, անգրագետ).
3. «Սասնա փահլիվաններ կամ Թըլոթ Դավիթ և Մհեր», 3 ճյուղ՝ (Մհեր)-Դավիթ-Մհեր, 1820 տող, տողատաժ (Բ. Խալաթյան և խմբագր.).

¹ Պատումների համակարգված նկարագիր-ցանկը յուրաքանչյուր պատումի համար տալիս է.

1. Պատումի գրառման վայրը, ասացողի ծննդավայրը, գրառման ժամանակը (որտե՞ղ, որտեղի՞ց, ե՞րբ).
2. Գրառողը, ասացողը՝ տարիք, զբաղմունք, գրագիտություն (ո՞վ, ումի՞ց).
3. Պատումի վերնագիրը ժողովածուի մեջ, ճյուղերի քանակը, ծավալը, տեսքը (տողատաժ, արձակ).

4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 59—118 էջերը, Բ պատում.
5. «Սասմա փահլիվաններ կամ Թըլոյր Դավիթ և Մհեր», էջմիածին, 1899, տողատած (Բ. Խալաթյան):

Պատում 3

1. ..., Մոկացի, ..., 1891 թվին.
2. Գարեգին Հովսեփյան, Մի Մոկացուց, ...
3. «Սանասար և Բաղդասար», 1 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար, 270 տող, տողատած (խմբագրություն).
4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 127—136 էջերը, Գ պատում.
5. «Սանասարի և Բաղդասարի ծնունդը», «Սասմա ծռեր», Թիֆլիս, 1892, տողատած չէ:

Պատում 4

1. ..., Մոկացի, ..., 1891 թվին.
2. Գարեգին Հովսեփյանը, Մի ուրիշ Մոկացուց, ...
3. «Բաղդասարի ամուսնությունը», 1 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար, 480 տող, տողատած (խմբագրություն).
4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 141—156 էջերը, Դ պատում.
5. «Բաղդասար», «Սասմա ծռեր», Թիֆլիս, 1892, տողատած չէ:

Պատում 5

1. ..., Մոկացի, ..., 1891 թվին.
2. Գարեգին Հովսեփյանը, Մոկացի Հովանից, ...
3. «Դավիթ և Մհեր», 3 ճյուղ՝ (Մհեր)-Դավիթ-Մհեր, 2600 տող, տողատած (խմբագրություն).

4. Ժողովածուի հասցեն, պատումի էջը, տառային համարը.

5. Նախորդ հրատարակության վերնագիրը, հասցեն, տեսքը:

4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 161—245, էջերը, Ե պատում.
5. «Դավիթ», «Սասնա ծռեր», Թիֆլիս, 1892, տողատաժ չէ:

Պատում 6

1. էջմիածնում, Մոկաց Առինջ գյուղից, 1899 թվին.
2. Արտաշես Աբեղյանը, մոկացի Հովակիմենց Ղազարից (60 տարեկան, հողագործ, արհեստավոր գյուղացի, անգրագետ).
3. «Թվատ Դավիթ և Մհեր», 3 ճյուղ՝ (Մհեր)-Դավիթ-Մհեր, 1610 տող, տողատաժ (Ա. Աբեղյան և խմբագրություն).
4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 251—300 էջերը, Զ պատում.
5. «Թվատ Դավիթ», «Ազգագրական հանդես», Զ գիրք, Թիֆլիս, 1900, տողատաժ (Ա. Աբեղյան):

Պատում 7

1. ..., Մոկաց Առինջ գյուղից, 1901 թվին (տպագրված).
2. Սարգիս Հայկունին, մոկացի Սախոյից, (... , հողագործ, արհեստավոր, կիսագրագետ).
3. «Սանասար և Բաղդասար», 1 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար, 580 տող, տողատաժ (խմբագրություն).
4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 307—325 էջերը, Է պատում.
5. «Սանասար և Բաղդասար», «էմինյան ազգագրական ժողովածու», Մոսկվա—Վաղարշապատ, 1901, տողատաժ չէ:

Պատում 8

1. ..., Մոկացի ..., 1901 թվին (տպագրված).
2. Սարգիս Հայկունին, մոկացի Վարդանից (... , հողագործ, անգրագետ).

3. «Դավիթ և Մհեր», 3 ճյուղ՝ (Մհեր)-Դավիթ-Մհեր, 1540 տող, տողատաժ (խմբագրություն)։
4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 331—378 էջերը, Հ պատում։
5. «Դավիթ և Մհեր», «էմինյան ազգագրական ժողովածու», Մոսկվա—Վաղարշապատ, 1901, տողատաժ չէ։

Պատում 9

1. ..., Մոկաց Հաղին գյուղից, 1909 թվին (տպագրված)։
2. Սարգիս Հայկունին, մոկացի Թումաս Պետրոսյանից (65 տարեկան, ...)
3. «Ջոջանց տուն», 3 ճյուղ՝ (Մհեր)-Դավիթ-Մհեր, 2950 տող, տողատաժ (Ս. Հայկունիի և խմբագրություն)։
4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 383—470 էջերը, Թ պատում։
5. «Թլուլ Դավիթ», «Արարատ» ամսագիր, 1909, մայիս-հունիս-հուլիս-օգոստոս-սեպտեմբեր ամիսների համարներում, տողատաժ է մասամբ։ «Ջոջանց տուն», «Ջոջանց տուն կամ Սասնա ծռեր վեպի երեք փոփոխակ», խմբագրեց և հրատարակեց Ստ. Կանայանց, Վաղարշապատ, 1910, տողատաժ չէ։

Պատում 10

1. Մոկսում, Մոկս ավանից, 1911 թվին։
2. Հարություն Գիլանյանը, մոկացի Վարդան Մուխսի-Բազիկյանց (50 տարեկան, հողագործ, արհեստավոր, կիսագրագետ)։
3. «Սասնա փահլեաններ», 4 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար (Մհեր)-Դավիթ-Մհեր, 1570 տող, տողատաժ (խմբագրություն)։
4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 475—524 էջերը, Ժ պատում։

Պատում 11

1. Մուղանջուղ գյուղում (էջմիածնի շրջան), Մոկս ավանից, 1916 թվին.
2. Սենեքերիմ Տեր-Հակոբյանը, մոկացի Վարդան Մուխսի-Բազիկյանից (55 տարեկան, հողագործ, արհեստավոր, կիսագրագետ).
3. «Սասնա ծռեր», 4 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար-(Մհեր)-Դավիթ-Մհեր, 1570 տող, տողատաժ (խմբագրություն).
4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 529—600 էջերը, ԺԱ պատում:

Պատում 12

1. Աշտարակում, Մոկս ավանից, 1933 թվին.
2. Կարապետ Մելիք-Օհանջանյանը, մոկացի Մանուկ Հարությունյանից (60 տարեկան, հողագործ, արհեստավոր, անգրագետ).
3. «Սասնա ծռեր», 4 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար-(Մհեր)-Դավիթ-Մհեր, 1310 տող, տողատաժ (Կ. Մելիք-Օհանջանյան և խմբագրություն).
4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 607—648 էջերը, ԺԲ պատում:

Պատում 13

1. էջմիածնում, Շատախի Ավետի Մեղրե գյուղից, 1902 թվին (տպագրված).
2. Սարգիս Հայկունին, շատախցի Մկրտիչ Հարությունյանից (30 տարեկան, հողագործ, անգրագետ).
3. «Դավիթ և Մհեր», 3 ճյուղ՝ (Մհեր)-Դավիթ-Մհեր, 1550 տող, տողատաժ (խմբագրություն և Հայկունի).
4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 653—700 էջերը, ԺԳ պատում.

5. «Դավիթ և Ահեր», «Էմինյան ազգագրական ժողովածու»,
Մոսկվա-Վաղարշապատ, 1902, տողատած չէ, բացի մի
երկու էջից:

Պատում 14

1. Երևանում, Շատախի Հինենց գյուղից, 1915 թվին.
2. Շահեն Կուծիկյանը, շատախցի Մանուշակ Զադոյանից
(45 տարեկան, հողագործ, անգրագետ).
3. «Դավիթ և Վհաբի կոիվը», 2 ճյուղ՝ (Մհեր)-Դավիթ, 460
տող, տողատած (խմբագրություն).
4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 705—720 էջերը,
ԺԴ պատում:

Պատում 15

1. ..., Շատախցի Հինենց գյուղից, 1916 թվին.
2. Սենեքերիմ Տեր-Հակոբյանը, շատախցի Գրիգորից (60
տարեկան, հողագործ, անգրագետ).
3. «Սասունցի Դավիթ», 2 ճյուղ՝ (Մհեր)-Դավիթ, 910 տող,
տողատած (խմբագրություն).
4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 725—752 էջերը,
ԺԵ պատում:

Պատում 16

1. Շահաբյուզ գյուղում (Վեդու շրջան), Շատախի Կաճետ
գյուղից և Շատախի Հինենց գյուղից, 1933 թվին.
2. Կարապետ Մելիք-Օհանջանյանը, շատախցի Ռաշո Մու-
րադյանից և շատախցի Ավո Զադոյանից (50 տարեկան
և 40 տարեկան, հողագործ, անգրագետ).
3. «Սասնա Տավթի խեքաթ», 2 ճյուղ՝ (Մհեր)-Դավիթ, 790
տող, տողատած (Կ. Մելիք-Օհանջանյան և խմբագրու-
թյուն).

4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 759—784 էջերը, ժԶ պատում:

Պատում 17

1. Ագարակում (Աշտարակի շրջան), Շատախի Հինենց գյուղից, 1933 թվին.
2. Կարապետ Մելիք-Օհանջանյանը, շատախցի Ազիզ Ղարիբյանից (65 տարեկան, հողագործ, անգրագետ).
3. «Դավթի կոիվը Մսրա Մելիքի հետ», 2 ճյուղ՝ (Մհեր)-Դավիթ, 810 տող, տողատաժ (Կ. Մելիք-Օհանջանյան և խմբագրություն).
4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 789—814 էջերը, ժԷ պատում:

Պատում 18

1. Երևանում, Սպարկերտի Բազինց գյուղից, 1933 թվին.
2. Արամ Ղանալանյանը, սպարկերտցի Փառիկից (80 տարեկան, հողագործ, անգրագետ).
3. «Թլուլ Դավիթ», 2 ճյուղ՝ (Մհեր)-Դավիթ, 340 տող, տողատաժ (խմբագրություն).
4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 819—830 էջերը, ժԸ պատում:

Պատում 19

1. ..., էջմիածնում, Գավաշի Տեշող գյուղից, 1909 թվին (տպագրված) և 1932 թվին.
2. ... և Հարություն Ավչյանը, գավաշցի Եղիազար Հակոբյանից (25 և 46 տարեկան, ...).
3. «Ջոջանց տուն կամ Սասնա ծռեր», 4 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար-(Մհեր)-Դավիթ-(Մհեր), 1100 տող, տողատաժ և արձակ (խմբագրություն).
4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 835—869 էջերը, ժԹ պատում.

5. «Թլոթ Դավիթ», «Արարատ» ամսագիր, 1909, հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներ. «Զոջանց տուն կամ Սասնա ծռեր» վեպի երեք փոփոխակ, խմբագրեց և հրատարակեց Ստ. Կանայանցը, Վաղարշապատ, 1910, տողատաժ չէ:

Պատում 20

1. ..., Գավաշի նարեկ գյուղից, 1915 թվին.
2. Արտաշես Բարսեղյանը, գավաշցի Զարդար Տեր-Մխիթարյանից (50 տարեկան, հողագործ, անգրագետ).
3. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 875—885 էջերը, ի պատում:

Պատում 21

1. էջմիածնում, Գավաշից ..., 1916 թվին.
2. Սենեքերիմ Տեր-Հակոբյանը, գավաշցի Մարգարիտ Սարգսյանից (40 տարեկան, հողագործ, անգրագետ).
3. «Թլոլ Դավիթ և Մհեր», 3 ճյուղ՝ (Մհեր)-Դավիթ-Մհեր, 1330 տող, տողատաժ (խմբագրություն).
4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 891—933 էջերը, իԱ պատում:

Պատում 22

1. էջմիածնում և Երևանում, Գավաշի Հարբերդ գյուղից, 1916 և 1933 թվականներին.
2. Սենեքերիմ Տեր-Հակոբյանը, գավաշցի Գրիգոր Փոխան Եղիազարյանից (45 տարեկան, հողագործ, անգրագետ).
3. «Սասնա ծռեր», 3 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար-(Մհեր)-Դավիթ, 1250 տող, տողատաժ (խմբագրություն).
4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 939—977 էջերը, իԲ պատում:

Պատում 23

1. Ադարակում (Աշտարակի շրջան), Գավաշի Բողնիս գյուղից, 1916 և 1933 թվականներին.
2. Սենեքերիմ Տեր-Հակոբյանը, գավաշցի Համբարձում-Խապո Գրիգորյանից (56 տարեկան, հողագործ, անգրագետ).
3. «Սասնա ծռեր», 4 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար-(Մհեր)-Դավիթ-Մհեր, 1230 տող, տողատաժ (խմբագրություն).
4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 983—1022 էջերը, ԻԳ պատում:

Պատում 24

1. ..., Հայոց Ջորի Անկշտան գյուղից, ...
2. ..., հայոցձորցի Թառո Կաղարյանից, ...
3. «Ջոջանց տուն կամ Սասնա ծռեր», 4 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար-(Մհեր)-Դավիթ-Մհեր, 1890 տող, տողատաժ (խմբագրություն).
4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 1077—1086 էջերը, ԻԴ պատում:
5. «Արարատ» ամսագիր, 1909, մարտ-մայիս-հունիս ամիսներին. «Ջոջանց տուն կամ Սասնա ծռեր» վեպի երեք նոր փոփոխակ, խմբագրեց և հրատարակեց Ստ. Կանայանց, Վաղարշապատ, 1910, տողատաժ չէ:

Պատում 25

1. Երևանում, Շատախի Կաճետ գյուղից, 1934 թվին.
2. Կարապետ Մելիք-Օհանջանյանը, Հովան Ջոհրաբյանից (70 տարեկան, հողագործ, կիսագրագետ).
3. «Սասնա ծռեր», 4 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար-Մհեր-Դավիթ-Մհեր, 1120 տող, տողատաժ (Կ. Մելիք-Օհանջանյան և խմբագրություն).

4. «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, 1091—1126 էջերը, ԻՆ պատում:

Պատում 26

1. ..., Մշո Առնիստ գյուղից, 1878 թվին.
2. Գարեգին Սրվանձտյանը, Տարոնցի Կրպոյից (... երեսփոխան, գրագետ).
3. «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ», 3 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար-Դավիթ-Մհեր, 1200 տող, տողատաժ (Գ. Սրվանձտյան և խմբագրություն).
4. «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Ա, Երևան, 1944, 7—44 էջերը, Ա պատում:
5. «Գրոց ու Բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ», Կ. Պոլիս, 1874, շատ քիչ է տողատաժ:

Պատում 27

1. Զամբուլու գյուղում (Ապարանի շրջան), 1892 թվին (տպագրված).
2. Գարեգին Հովսեփյանը, ապարանցի Մուրադից (... ժամհար, գրագետ).
3. «Սասնա ծռեր», 4 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար-Մհեր-Դավիթ-Մհեր, 1520 տող, տողատաժ (խմբագրություն).
4. «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Ա, Երևան, 1944, 49—102 էջերը, Բ պատում.
5. «Սասունցի Դավիթ», «Սասնա ծռեր», Թիֆլիս, 1892, տողատաժ չէ:

Պատում 28

1. Մուշում, Դատկու Մոճկոնց գյուղից, 1912 թվին.
2. Հայրապետ Համամճյանը, Ավետիս Մարտիրոսյանից, ...
3. «Դավիթ և Մհեր», 4 ճյուղ՝ (Սանասար և Բաղդասար)- (Մհեր)-Դավիթ-(Մհեր), 600 տող, տողատաժ չէ.

4. «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Ա, Երևան, 1944, 107—129 էջերը, Գ պատում:

Պատում 29

1. Զուլախաշում (Քավառի շրջան), 1892 թվին (տպագրված).
2. Վահան ք. Տեր-Գրիգորյանը, Դանիել Ղազարյանից, ...
3. «Սասնու թագավորներ», 3 հյուղ՝ Սանասար և Բաղդասար-Մհեր-Դավիթ, 490 տող, տողատաժ չէ.
4. «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Ա, Երևան, 1944, 135—159 էջերը, Դ պատում:

Պատում 30

1. Իրինդում (Թալինի շրջան), Սասունի Ճախրկան գյուղից, 1932 թվին.
2. Կարապետ Մելիք-Օհանջանյանը, Թամո Դավթյանից (85 տարեկան, հողագործ, ջրաղացպան, անգրագետ).
3. «Սասնա Տուն», 4 հյուղ՝ Սանասար և Բաղդասար-Մհեր-Դավիթ-Մհեր, 1210 տող, տողատաժ (Կ. Մելիք-Օհանջանյան և խմբագրություն).
4. «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Ա, Երևան, 1944, 159—197 էջերը, Ե պատում:

Պատում 31

1. Աշնակում (Թալինի շրջան), Սասունի Գոմրդեր գյուղից, 1932 թվին.
2. Կարապետ Մելիք-Օհանջանյանը, Առաքել Սարուխանյանից (44 տարեկան, հողագործ, անգրագետ).
3. «Սասնու Դավիթ», 2 հյուղ՝ (Մհեր)-Դավիթ, 680 տող, տողատաժ (Կ. Մելիք-Օհանջանյան և խմբագրություն).
4. «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Ա, Երևան, 1944, 203—223 էջերը, Զ պատում:

Պատում 32

1. ..., ..., 1898 թվին (տպագրված).
2. (Սարգիս Հակոբյան(ը), Անհատ ոմն, ...
3. «Սասունա Դավիթ», 3 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար-Դավիթ-Մհեր, 490 տող, տողատած չէ:
4. «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Ա, Երևան, 1944, 229—246 էջերը, է պատում.
5. «Սասունա Դավիթ», «Արարատ» ամսագիր, 1898, նոյեմբեր-դեկտեմբեր ամիսները, տողատած չէ:

Պատում 33

1. Երևանում, Ալաշկերտի հաստուր գյուղից, 1932 թվին.
2. Կարապետ Մելիք-Օհանջանյանը, Մանուկ Թորոյանից (66 տարեկան, հողագործ, անգրագետ).
3. «Սասունա ծռեր», 4 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար-Մհեր-Դավիթ-Մհեր, 3360 տող, տողատած (Կ. Մելիք-Օհանջանյան և խմբագրութուն).
4. «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Ա, Երևան, 1944, 253—338 էջերը, Ը պատում:

Պատում 34

1. Արալըղում (Թալինի շրջան), Ալաշկերտի հաստուր գյուղից, 1932 թ.
2. Կարապետ Մելիք-Օհանջանյանը, Կարապետ Թամոյանից (55 տարեկան, հողագործ, գրագետ).
3. «Սասունա ծռեր», 3 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար-Մհեր-Դավիթ, 1460 տող, տողատած (Կ. Մելիք-Օհանջանյան և խմբագրութուն).
4. «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Ա, Երևան, 1944, 359—404 էջերը, Թ պատում:

Պատում 35

1. Երանոսում (Մարտունու շրջան), 1926 թվին.
2. Խաչատուր Մնացականյանը, Հակոբ Նրգեյանից (85 տարեկան, տիրացու, գրագետ).
3. «Սասնա տուն», 3 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար-Դավիթ-Մհեր, 2090 տող, տողատաժ չէ.
4. «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Բ, Երևան, 1951, 13—88 էջերը, Ժ պատում:

Պատում 36

1. Ղըշլաղում (Նոր-Բայազետի շրջան), 1905 թվին.
2. Երվանդ Լալայանը, Առաքել Շակոյանից (60 տարեկան, հողագործ, անգրագետ).
3. «Սասնա ծռեր», 4 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար-Մհեր-Դավիթ-Մհեր, 2660 տող, տողատաժ (խմբագրութուն).
4. «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Բ, Երևան, 1951, 93—172 էջերը, ԺԱ պատում:

Պատում 37

1. Երանոսում (Մարտունու շրջան), 1903 թվին.
2. ..., Սարգիս Հակոբյանից (50 տարեկան, տիրացու, գրագետ).
3. «Դավիթ և Մհեր կամ Սասունա ծռեր», 3 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար-Դավիթ-Մհեր, 1530 տող, տողատաժ չէ.
4. «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Բ, Երևան, 1952, 177—230 էջերը, ԺԲ պատում:

Պատում 38

1. Մուղանջըղում (Էջմիածնի շրջան), Մոկաց Գոմանից գյուղից, 1902 թ.

2. Սարգիս Հայկունին, Մուրադ Հովսեփյանից (58 տարեկան, արհեստավոր գյուղացի, անգրագետ)։
3. «Սասնա ծռեր», 4 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար-(Մհեր)-Դավիթ-Մհեր, 2600 տող, տողատաժ (Ս. Հայկունի և խմբագրություն)։
4. «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Բ, Երևան, 1951, 235—318 էջերը, ԺԳ պատում։
5. «Դավիթ և Մհեր», «էմինյան ազգագրական ժողովածու», Մոսկվա—Վաղարշապատ, 1902։

Պատում 39

1. Թադեոս Առաքյալի վանքի գյուղում (Մակվա շրջան), 1895 թվին։
2. Խաչիկ վ. Դադյանը, Դավթից (50 տարեկան, հյուսն, գյուղացի, անգրագետ)։
3. «Տղա Դավիթ», 2 ճյուղ՝ (Մհեր)-Դավիթ, 910 տող, տողատաժ (Խ. վ. Դադյան և խմբագրություն)։
4. «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Բ, Երևան, 1951, 323—350 էջերը, ԺԴ պատում։
5. «Տղա Դավթի և աղջիկ Խանդուկի հեքիաթը», «Արարատ» ամսագիր, 1895, նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, տողատաժ (Խ. վ. Դադյան)։

Պատում 40

1. Թադեոս Առաքյալի վանքի գյուղում (Մակվա շրջան), 1913 թվին։
2. ..., Ալո Դավթյանից (30 տարեկան, հյուսն, անգրագետ)։
3. «Տղա Դավիթ», 2 ճյուղ՝ (Մհեր)-Դավիթ, 1110 տող, տողատաժ (խմբագրություն)։
4. «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Բ, Երևան, 1951, 355—386 էջերը, ԺԵ պատում։

Պատում 41

1. ...
2. ...
3. «Սասնա տուն», 4 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար-Մհեր-Դավիթ-Մհեր, 3560 տող, տողատաժ և արձակ (խմբագրություն)։
4. «Սասնա տուն», յոթը ճյուղ (Վանա գավառաբարբառով), «Ազգագրական հանդես», 20-րդ և 21-րդ գրքեր, 1910 և 1911 թ., Թիֆլիս, տողատաժ չէ։
5. «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Բ, 392—480 էջերը, ԺԶ պատում։

Պատում 42

1. Բազարճուղում (Ապարանի շրջան), 1912 թվին.
2. Երվանդ լալայանը, Բարսեղ Սահակյանից (50 տարեկան, հողագործ, անգրագետ)։
3. «Սասնա ծռեր», 4 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար-(Մհեր)-Դավիթ-Մհեր, 1550 տող, տողատաժ (խմբագրություն)։
4. «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Բ, Երևան, 1951, 485—531 էջերը, ԺԷ պատում։
5. «Սենեքերիմ թագավոր», «Մարգարիտներ հայ բանահյուսության», էջմիածին։

Պատում 43

1. Վանի գյուղերից մեկում, 1915 թվին.
2. ..., Մի Վանեցուց ...
3. «Դավիթի կռիվը Մսրա Մելիքի հետ», 2 ճյուղ՝ (Մհեր)—Դավիթ, 320 տող, տողատաժ չէ։
4. «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Բ, Երևան, 1951, 539—550 էջերը, ԺԸ պատում։

Պատում 44

1. Երևանում, Վանից, 1915 թվին.

2. Երվանդ Լալայանը, Դավիթ Գալստյանից (35 տարեկան, մանրավաճառ, կիսազրազետ)։
3. «Սանասար և Բաղդասար», 1 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար, 180 տող, տողատաժ չէ։
4. «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Բ, Երևան, 1951, 555—560 էջերը, ԺԹ պատում։

Պատում 45

1. ..., Մուշի Շողգոմ գյուղից, 1915 թվին։
2. ..., Հարություն Դավթյանից (39 տարեկան, ..., գրագետ)։
3. «Սասունա Դավիթ», 3 ճյուղ՝ Մհեր-Դավիթ-Մհեր, 1510 տող, տողատաժ չէ։
4. «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Բ, Երևան, 1951, 565—616 էջերը, Ի պատում։

Պատում 46

1. Երևանում, Խոշաբի շրջանի Քոել գյուղից (Վանի նահանգ), 1936 թվին։
2. Արամ Ղանալանյանը, Վարդան Վարդանյանից (52 տարեկան, հողագործ, կիսազրազետ)։
3. «Սասունա Տավիթ», 1 ճյուղ՝ Դավիթ, 490 տող, տողատաժ չէ։
4. «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Բ, Երևան, 1951, 623—640 էջերը, ԻԱ պատում։

Պատում 47¹

1. Սարալանջում (Ապարանի շրջան), 1946 թվին։

¹ «Սասնա ծռերի» Բ հատորի Բ մասում առանձին համարի տակ տեղադրված է մի անտիպ պատումի ուրվագծային թերի նկարագիրը, որպես հավելված։ Չնայած դա գրադեցրել է առանձին համար (Ժէ պատում), ինչպես խմբագրությունը, այնպես էլ մենք դա ամբողջական պատում չենք դիտում։

2. Վարդ Բդոյանը, Մկրտիչ Պետրոսյանից (81 տարեկան, հողագործ, անգրագետ)։
3. «Սասունա ծռեր», 3 ճյուղ՝ Սանասար և Բաղդասար-Դավիթ-Մհեր, 1970 տող, տողատաժ (խմբագրություն)։
4. «Սասնա ծռեր», հատ. Բ, մաս Բ, Երևան, 1951, 645—703 էջերը, ԻԲ պատում։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ծրկու խոսք	5
Վեպի գրառման ժամանակը և հասարակական պայմանները	7
Վեպի գրառման վայրը, տարածում, տեղայնացում	30
Վեպի նյութերը	61
Վեպի կառուցվածքը	80
Առաջին հյուղ	86
Երկրորդ հյուղ	112
Երրորդ հյուղ	133
Չորրորդ հյուղ	162
Վեպի պատումների համակարգված նկարագիր-ցանկ	173



«ՍԱՍՆԱ ԾՌԵՐԻ» ՊԱՏՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱԿԱՆ
ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր
Ս. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Նկարիչ Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ
Տեխնիկական խմբագիր Ս. Կ. ԶԱՔԱՐՅԱՆ
Սրբագրիչ Մ .Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՎՖ 03549

Հրատ. 4094

Պատվեր 701

Տպաքանակ 3000

Հանձնված է շարվածքի 18/X 1974 թ., ստորագրված է տպագրության 25/II-1975 թ.,
տպագր. 12,0 մամուլ + 8 ներդիր, հրատ. 10,35 մամուլ, պայմ. 11,8 մամուլ
թուղթ № 1, $84 \times 108 \frac{1}{32}$: Գինը 1 ռ. 22 կ.:

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն. Երևան, 19 Բարեկամության 24.

Издательство АН Арм, ССР, Ереван, 19. Барекамутян 24.

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության էջմիածնի տպարան



Գ ի ն ը 1 ռ. 22 կ ո ս.

A 54673

ԳԱՄ Հիմնադրար Գիտ. Գրադ.



220054673